ԿԱՐՅՈՒՆ,

Ե ԴԱՐ

ՎԱՂՁ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ»
1994

ՄԱՏԵՆԱՇԱՐԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
1700 ԱՄՅԱԿԻՆ

Հրատարակվում է
պետական հովանավորությամբ

ԳՄԴ 63.3 (2Հ) 42
Կ-783

Աշխատությամբ՝ ձեռագրագետ ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ

Կորյուն
Կ 783—Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի/աշխատությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, նկարչական ձևավորումը Խ. Ջ. Հակոբյանի.— Եր.։ Հայաստան, 1994.— 176 էջ։

«Հայոց մատենագիրներ» մատենաշարի այս գիրքը բովանդակում է V դարի հայ պատմիչ Կորյունի «Վարք Մեսրոպ Մաշտոցի» երկը և նրա տարբերակները։

Կ $\frac{0503020913}{701(01)-93}$ 94

ԳՄԴ 63.3 (2Հ) 42

ISBN 5-540-01325-5

© *«Հայաստան» հրատարակչություն, թարգմանության, առաջաբանի, նախագրի, ծանոթագրությունների, անվանացանկի, հավելվածի, կազմելու և նկարչական ձևավորման համար, 1994*

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Հայոց մատենագիրներ» շարք հրատարակելու գաղափարը նոր չէ. հայագիտական տարբեր կենտրոններ «Մատենագրութիւնք նախնեաց» (Վենետիկ), «Նշխարք հայ մատենագրութեան» (Երուսաղեմ) և այլ նույնաբնույթ անուններով տարբեր ժամանակներում սկսել են մեր հին գրականության հուշարձանների հրապարակումներ, որոնք միշտ ունեցել են նախնյաց գրական մշակույթն ամբողջությամբ ժողովրդին հասու դարձնելու սուրբ և ազնիվ նպատակը: Անկատար մնացած այս շարքերը ստեղծվել են իրենց ժամանակների (մեր օրերի համար հնացած) պահանջների համաձայն: Լիովին նոր սկզբունքների վրա էր հիմնված «Պատմագիրք Հայոց» շարքը, որ երախտաշատ հայագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանը, Ստեփանոս Մալխասյանցը և Մեծի տանն Կիլիկիո ապագա կաթողիկոս Գարեգին Հովսեփյանցը 1902 թ. նոյեմբերին ձեռնարկեցին Մանուկ Աբեղյանի, Ստեփան Կանայանի, Սեթ Հարությունյանի, Կարապետ արք. Տեր-Մկրտչյանի, Կարապետ Կոստանյանի, Սահակ վ. Ամատունու և Հակոբ Մանանդյանի աշխատակցությամբ: Ցավոք, ազգային պետականության, պետական հրատարակչությունների և կանոնային կարգի հայագիտական հաստատությունների չգոյությունը, ինչպես նաև ձեռագրական հավաքածուների աշխարհով մեկ ցրված լինելն ու նրանցից շատերի գիտական նկարագրությունների պակասը մեծապես արգելակեցին և, ի վերջո, խափանեցին հիշյալ նվիրյալների ձեռնարկումը: Այդուամենայնիվ, լույս տեսած հատորներով (Ղազար Փարպեցի՝ 1904 թ., Ագաթանգեղոս՝ 1909 թ. և Մովսես Խորենացի՝ 1913 թ.) ոչ միայն ընդգծվեց խնդրի ազգային ու գիտական կարևորությունը, այլև մշակվեցին քննական բնագրեր կազմելու գիտական սկզբունքներ, որոնք դարձան հետագա նմանաբնույթ հայագիտական հրատարակությունների հիմնական ուղենիշները:

Վերջին յոթանասնամյակի ընթացքում, որոշ ընդհատումներով և խոչընդոտող մտայնությունների առկայությամբ հանդերձ, հայագիտության զարգացման պայմաններն ավելի նպաստավոր էին. դրա շնորհիվ լույս են տեսել բազմաթիվ նոր սկզբնաղբյուրներ, ուրիշ այլ հուշարձանների նոր, գիտական հրատարակություններ: Սակայն արվածը կատարյալ լինելուց շատ է հեռու. կարևորագույն բնագրերի զգալի մասը հրատարակված է անցյալ դարի 20—30-ական թվականներին, անգամ ավելի վաղ, որ նշանակում է, թե նրանք չեն կարող բավարա-

րել ներկայիս գիտության և ընդհանրապես ընթերցողի պահանջմունքները, այսինքն՝ էական լրացումների և սրբագրումների կարիք ունեն:

Մեկ-երկու տասնամյակ առաջ սկսված «Հայ մատենագիրներ» շարքն իր անկանոն պարբերականությամբ, համեստ տպաքանակով, անհամակարգ հերթագայությամբ, ինչ-որ չափով նաև ընդգրկմամբ, թեև ի վիճակի չեղավ գոհացնելու հայ ընթերցողի օրավուր աճող պահանջները, սակայն Ոսկանի համալսարանի հրատարակչության՝ «Ուսանողի գրադարան» մատենաշարի որոշ հատորների հետ միասին, որոշակիորեն նպաստեց սույն գործին՝ նախապատրաստելով այս նոր և ընդգրկուն մատենաշարի սկզբնավորումը թե՛ հրատարակչական և թե՛ գիտական-թարգմանական սկզբունքների մշակման առումով:

Այսօր մեր մշակութային կյանքն ազատվել է կապանքներից և կեղծ ու արհեստական արժեքներ կերտելու հարկադրանքից, սկսվել է զարթոնքի, ինքնաճանաչման և ազգային ամեն ինչի նկատմամբ հետաքրքրության աննախընթաց մեծացում. մեր բոլոր կարգի դպրոցներից հանվում են կեղծ գաղափարախոսությամբ հագեցված դասընթացները, նրանց փոխարինում է Հայոց իրական պատմության, գրաբարի, արևմտահայերենի, օտար լեզուների և գործնական գիտելիքների ուսուցումը, որի կատարելագործմանն ու նպատակամղվածությանը պետք է նպաստի նաև Հայաստանի գրահրատարակչական համակարգը:

«Հայոց մատենագիրներ» շարքը համարելով այս ուղղությամբ ձեռնարկվող կարևորագույն գործերից մեկը, «Հայաստան» հրատարակչությունը միավորել է մեր լավագույն պատմաբան և բանասեր գիտնականներին, նրանց օգնությամբ մշակել մատենաշարի հրատարակության՝ մեր օրերի և մեր ժողովրդի պահանջմունքներին համապատասխանող այնպիսի սկզբունքներ, որոնք պետք է բավարարեն թե՛ մասնագետ և թե՛ ոչ մասնագետ ընթերցողին: Շարքը նպատակ ունի ընդգրկելու Ե—ԺԸ դարերի ամբողջ հայ մատենագրությունը, այսինքն՝ հայ հին գրականության տարաբնույթ բոլոր հուշարձանները: Հատորներ կազմելու են թե՛ առանձին հուշարձանները, թե՛ առանձին հեղինակների երկերի և թե՛ նույնաբնույթ նյութերի ժողովածուները, որոնց մի մասը ստեղծվել է դեռևս միջնադարում («Կանոնգիրք Հայոց», «Գիրք թղթոց» և այլն):

Սկզբնաղբյուրները տպագրվելու են աշխարհաբար թարգմանությամբ (բացառություն կկազմի հայ առաջին պատմիչ Կորյունի՝ «Վարք Մեսրոպ Մաշտոցի» երկը, որը ընթերցողին կներկայացվի նաև գրաբար բնագրով): Ինչպես ասացինք, մեր մատենագրության հուշարձանների մեծ մասի հրատարակություններն անկատար և սրբագրելի են, մի այլ

մասն էլ, ցավոք, անտիպ է, շատ ավելի մեծ մասը դեռևս աշխարհաբարի վերածված չէ: Գոյություն ունեցող և մեր օրերի պահանջմունքները բավարարող բոլոր բնագրերն ու թարգմանություններն օգտագործվելու են՝ ըստ հարկի սրբագրվելով և վերանայվելով՝ համաձայն նորահայտ նյութերի և հայագիտական գրականության մեջ առաջադրված ընդունելի դիտողությունների: Մնացած դեպքերում պատրաստվելու են նոր բնագրեր (երբեմն սրանք լինելու են աղբյուրների առաջին հրատարակությունները) և նոր թարգմանություններ: Այս իսկ պատճառով հատորների համարակալումը և ժամանակագրական կամ այլ սկզբունքի հետքագայության պահպանումը հնարավոր չէ:

Բոլոր հատորներն օժտվելու են պատշաճ առաջաբանով, հեղինակներին և նրանց երկերին վերաբերող մատենագիտությամբ և ծանոթագրություններով: Այս բաժինների մեջ պետք է ներկայացվեն մատենագիրներն ու նրանց երկերը, վերջիններիս գրական-պատմագիտական արժանիքները և ուսումնասիրվածությունը. ի վերջո՝ ծանոթագրությունները պետք է հնարավոր չափով մատչելի և հասկանալի դարձնեն աղբյուրները՝ այն հաշվով, որ նրանք ներկայացվեն հայագիտության վերջին ձեռքբերումների հաշվառմամբ:

Այսպիսով, ամփոփանաբար ընթերցող հասարակայնությանը մատուցվելիք ներկա մատենաշարը, իր մեջ ներառելով ամբողջ հայ մատենագրությունը, պետք է լիակատար լինի և դրանով իսկ ծառայի մեր մշակութային և ուսումնական կյանքի հայացմանն ու առողջացմանը: Հուսանք, որ ընթերցողների անշահախնդիր նկատողություններն ու առաջարկությունները կօգնեն հրատարակչությանը՝ լիակատար ու լիարժեք դարձնելով այս կարևոր շարքը:

2001 թվականին լրանում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու հազար յոթհարյուր ամյակը, 2005 թվականին՝ Հայ գրի ու դպրության հազար վեցհարյուր ամյակը: Քրիստոնյա Հայաստանի կյանքի ու պայքարի, մաքառումի ու հաղթանակի արդյունքներից, գենքերից ու փառքերից մեկն է Հայ մատենագրությունը, որի մեջ մարմնավորված է Հայ ժողովրդի հազարամյակների պատմությունն ու մտածողությունը, լեզուն ու հավատը:

«Հայոց մատենագիրներ» մատենաշարը, որի հրատարակությունը սկսվում է մեր դարի վերջին և ավարտվելու է հաջորդ դարի սկզբին, նվիրվում է Համազգային սրբազան հոբելյաններին.

«Ջքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»

Ն Ա Խ Ա Գ Ի Ր

«Հայոց մատենագիրներ» մատենաշարը սկսվում է Կորյունի «Վարք Մեսրոպ Մաշտոցի» երկով, որը ստեղծվել է հազար հինգ հարյուր հիսուն տարի առաջ (443 թ.)։ Այս փոքրիկ Մատյանին վիճակված էր դառնալու Հայոց հարուստ մատենագրության անդրանիկը, այն ոսկյա օղակը, որին դարերի հոլովույթում պետք է ագուցվեին նորանոր հրաշազան հորինվածքներ և ամբողջացնեին Հայոց հզոր ու բազմադիմի պատմագրքերի ոսկե շղթան։

Կորյունը իր երկը նվիրել է հայոց գրի ստեղծող ու դպրության հիմնադիր Մեծն Մեսրոպ Մաշտոցի կյանքին, գործին և լուսավոր վարդապետությանը։ Մեսրոպյան դպրոցի առաջին աշակերտներից էր նա և դարձավ առաջին մատենագիրը՝ ինքնուրույն գործ հեղինակելով իր ուսուցիչների մասին։ Կորյունի երկը ճշմարտապատում է։ Նա իր ուսուցչի մասին գրել է ոչ թե հին զրույցներից, այլ ժամանակակցի իրավունքով. ականատեսը նրանց հոգևոր գործերի, ուսմանը՝ լսող, արբանյակ-գործակից՝ ըստ ավետարանական հրամանների։ Եվ իր երկը գրել է «ոչ ի պատիվ Աստծո Սրբերին (Սահակին ու Մեսրոպին—Ա. Մ.), որոնք ամենապայծառ հավատով ու վարքով ճանաչված հարգվեցին, այլ ի քաջալերիչ օրինակ իրենց հոգևոր զավակներին և այն ամենքին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդեսերունդ»։

Կորյունը կատարում է Մեծ ուսուցչի պատգամը՝ մեծերի քաջալերիչ օրինակով սերունդներ դաստիարակել, «իմանալ զբանս հանճարոյ», և կտակում նորընծա հայ մատենագրությանը՝ «աշակերտելու սերնդեսերունդ»։

Խորենացին Կորյունից երեսուն տարի անց շարադրում է իր Պատմությունը՝ «անմահ հիշատակ թողնելով այն» պատվիրատուին և նրան «հաջորդող սերունդներին»։ Նույնը անում է Շիրակացին՝ իր համայնագիտարան «Քննիկոնը» անմահ ուսուցիչ թողնելով իրենից հետո աշխարհ եկողներին»։ Եվ, հիրավի, Հայոց մատենագիրների մոտ գրավոր

այս պատգամը շարունակվում է սերնդեսերունդ, արդեն հազար հինգ հարյուր հիսուն տարի, սկիզբ առնելով Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունի գրքից։

Սույն հրատարակությունը նվիրվում է Կորյունի երկի ստեղծման 1550-ամյակին։ Ի տարբերություն նախորդների, այստեղ բնագիրը սրբագրված և ճշգրտված է ձեռագրերից տպագրին անցած անպատեհ մի քյուրիմացությունից ու վրիպումից։

* * *

«Հայ պատմագիրներ» մատենաշարով 1941 թ. լույս տեսավ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, աշխարհաբար թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի։ Քառասուն տարի անց գիրքը հրատարակվեց առանց գրաբար բնագրի և տարընթերցվածների, բայց օժտված Մ. Աբեղյանի «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի և գրականության սկիզբը» ուսումնասիրությամբ։ 1971 թ. այն վերահրատարակվեց առանց վերջին ուսումնասիրության, իսկ 1981 թ. 1941 թ. ծավալով՝ ավելացրած Մ. Աբեղյանի ներածական ուսումնասիրությունը, կից՝ ամբողջի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները։

Ներկա, հինգերորդ հրատարակությունը կատարվում է 1941 թ. Մ. Աբեղյանի պատրաստած օրինակի հիման վրա, միայն առանց ձեռագրական տարընթերցվածների։ Սրա հետ միասին, առաջին անգամ Հայաստանում, տպագրվում է նաև «Փոքր Կորյունը» (դրսում ունեցել է մի քանի տպագրություն). «Ի հիշատակի պատմութեան վարուց երանելւոյ Սուրբ վարդապետին Մեսրովբայ, զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեանն» (Գ) վերնագրով, որը համառոտված է «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» (Ա) ընդարձակ օրինակից։ Ձեռագիրն այժմ պահվում է Փարիզի Ազգային գրադարանում, որի մանրաժապավենից կատարվել է վերծանությունը (Ա. Ս. Մաթևոսյան) և թարգմանությունը (Ա. Ս. Ձեյթունյան)։ Առաջին անգամ է տպագրվում ընդարձակ Կորյունից կատարված մի այլ, ավելի համառոտ տարբերակ, որը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող երկու ձեռագիր Տոնականներում։ Տարբերակն ունի «Ի հիշատակի սրբոյն Մեսրոպայ վարդապետի զոր արարեալ է Կորեան սրբոյ, յաղագս վարուց նորա, թէ ուստի էր» խորագիրը (Բ), որից և կատարված է վերծանությունը ու թարգմանությունը (Ա. Ս. Մաթևոսյան)։

***

Կորյունի երկը ներկայացվում է Մ. Աբեղյանի կազմած գիտահամեմատական բնագրով (առանց տարրնթերցվածների), աշխարհաբար թարգմանությամբ և առաջաբանով։ Սրանց հաջորդում են տոնականյան երկու տարբերակները, դարձյալ գրաբար և աշխարհաբար։ Ընդարձակ բնագրից հետո (Ա) տեղադրում ենք տոնականյան 1347 թ. բնագիրը (Բ), որովհետև այն ավելի անխառն է, ապա՝ փարիզյան բնագիրը (Գ), որոնց հաջորդում են Մ. Աբեղյանի ծանոթագրությունները։ Քանի որ վերջին երկու բնագրերը սերում են առաջինից, ուստի սրանց համապատասխան բառերն ու անունները կրում են ծանոթագրության նույն թվահամարը, իսկ այն ծանոթագրությունները, որոնք վերաբերում են միայն վերջին բնագրերին, շարունակվում են վերջին ծանոթագրություններից (177) հաջորդական համարներով (178 և այլն)։

***

Կորյունի երկի ընդարձակ խորագիրը համառոտում ենք «Վարք Մեսրոպ Մաշտոցի», որովհետև և՛ ընդարձակ, և՛ համառոտված տարբերակների խորագրերում հիշատակված է Մեսրոպ անունը, իսկ համառոտված բնագրերում՝ և՛ Մեսրոպ, և՛ Մաշտոց անունները։ Նշանակում է՝ ընդարձակ բնագրում էլ է եղել այդպես։ Այդպես են հիշատակվում նաև Կորյունից առաջ գրված թղթերում, նրանից հետո՝ Մովսես Խորենացու Հայոց Պատմության մեջ, ուր Մեսրոպ անունը հիշվում է 64, իսկ Մաշտոց անունը՝ մեկ անգամ։ Տարբեր են նաև տպագիրների խորագրերը։

***

Բերված է ընդարձակ բնագրում մեր կողմից կատարված երկու հատվածների տեղափոխության պատճառաբանությունն ու հիմնավորումը։ Ջ հատվածի 5 և 6-րդ պարբերությունների միջև եղած «Ապա առեալ»-ով սկսվող պարբերությունը տեղափոխված է ԺԹ հատվածի տակ։ ԺԹ հատվածի տեղում եղած «Յայնժամ վաղվաղակի» սկսվածքով պարբերությունը, բացառությամբ վերջին նախադասության (որով ավարտվում է հատվածը), տեղափոխված է ԺԴ հատվածի տակ։

Մատենագիտության բաժնում ներկայացվել են հրատարակվող բնագրերը պարունակող ձեռագրերի համառոտ նկարագրությունը գրչության հանգամանքների պարզաբանմամբ և տպագրությունները (հայերեն և օտար լեզուներով)։

Ձեռագրեր

Բնագիր Ա

Կորյունի Մեսրոպ Մաշտոցի վարքը մեզ է հասել ամբողջական և համառոտված շարադրությամբ։ Ամբողջական հնագույն օրինակը պահպանվել է պատմագրքերի ձեռագիր մի ժողովածուի մեջ, արտագրված 1672 թվականին, Բաղեշում, տեղի համալսարանի ռաբունապետ Վարդան Բաղիշեցու հանձնարարությամբ, որից էլ սերում են հետագա բոլոր ընդօրինակությունները։ Հիշյալ ձեռագիրը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 2639 համարի տակ։ Գրված է Ամրդոլու վանքում։ Գրիչներ՝ Պողոս Գավըռեցի, Գրիգոր Երեց։ Ծաղկող՝ Սահակ Վանեցի։ Ունի 560 թղթյա թերթ, երկսյուն գրությամբ։ Գիրը՝ բոլորգիր է 31—33 տողերով։ Մանրանկարներ՝ 6։ Պահպանակ՝ 1 (մագաղաթ)։ Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ։ Կազմատառ՝ դրոշմազարդ կտավ։ Հիշատակարաններ՝ բազմաթիվ։

Բովանդակություն. պարունակում է՝ Ագաթանգեղոս, Դաշանց Թուղթ, Մովսես Խորենացի, Վարք Ս. Ներսեսի, Եղիշե։ Այս հատվածի գրիչը Պողոս Գավըռեցին է, ընդգրկում է 4բ—356բ էջերը և ավարտվում է հիշատակարանով, որը թերի է։ 357—358 թերթերը լրացումներ են, որոնք կատարվել են հետագայում Պողոս գրչի գրավոր ցանկության համաձայն։

341ա—548ա էջերը Ղազար Փարպեցու և Սեբեոսի պատմություններն են, որոնց գրիչը Գրիգորն է։ Սա էլ իր հիշատակագրությունն է թողել վերջին էջի ստորին լուսանցքում։ Այստեղ, ըստ էության, ավարտվում է Վարդան Բաղիշեցու պատվիրած պատմագիրքը։

Վարդան Բաղիշեցու «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրդոլու՝ համարով անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետի» ցուցակում ԺԲ համարի տակ արձանագրված է. «Մէջ

Մովսէս պատմագիրք, որ կայ ի մէջ է (7) պատմագիրք»[1]։ Վերջին միաւորը՝ Սեբեոսի պատմութիւնն է, որով ավարտվում է Մատենադարանի № 2639 ձեռագիրը, կրկնում ենք, գրված 1672 թ. Պողոս Գավրեցու և Գրիգորի ձեռքով։

Ինչպես տեսնում ենք, ցուցակը կազմելիս Կորյունի գործը չի եղել ձեռագրում։ Այդ նշանակում է, որ 1672 թ. ձեռագիրը գրելու և կազմելու ժամանակ էլ Կորյունի երկը չի եղել նրա մեջ։

Ե՞րբ է այն մուծվել սույն ձեռագրի մեջ։ Տրամաբանական է. ցուցակը գրելուց հետո։ Իսկ ցուցակը կազմվել է 1674 թվականից հետո, որովհետև այդտեղ գրանցված են այդ նույն թվականին Հռոմում տպագրված գրքեր[2]։ Ուրեմն, 1675 թվականը կարող է լինել Ամրդոլու վանքի մատենադարանի վարդապետական գրքերի Վարդան Բաղիշեցու կազմած ցուցակի հավանական թվականը։ Եվ այդ թվականին կամ հետո միայն կարող էր Կորյունի երկը մուծվել Պատմագրքի սույն ժողովածուի մեջ։

549ա—562ա էջի ա սյունակը զբաղեցնում է Կորյունի երկը. խորագիրը՝ «Յիշատակ սրբոյն Մեսրովբայ արարեալ երանելոյն (Կորիւն վարդապետի, հետագայում շղագրված)։ Գիրը ավելի կանոնավոր է և գեղեցիկ, քան Գրիգորինը։ Երկսյուն, լուսանցագծերը կարմիր, ձախակողմյանները՝ զույգ, աջակողմյանները՝ կենտ գծեր, որ նախորդ գրիչները չունեն։ Նախորդների 31, 33 տողի փոխարեն, այստեղ 38 տող ունի սյունակը, նաև՝ գեղեցիկ զարդագիր և լուսանցազարդ։ Թերթի մեծությունը՝ երկարությամբ ավելի փոքր է, իսկ լայնությամբ՝ ավելի լայն, ուստի և կտրվել է։ Մյուսների 12 թերթանոց պրակների դիմաց, սա կազմված է 14 թերթից։ Թանաքը ավելի մուգ է նախորդներից։

Մինչև սույն պատմագրքին միացնելը, այս պրակը մաս է կազմել մի այլ ձեռագրի։ Ապացույց՝ կազմին միանալու երեք տեղ կա, երկուական անցքերով (իրարից մեկ սմ հեռավորությամբ)։ Բուն ձեռագրից անջատվելուց հետո, պրակը միացվել է այս ձեռագրին հինգ անցքերով, ուստի պրակի վրա հինգ նոր անցքեր են բաց արել և միացրել ձեռագրի կազմին։ Հին երեք անցքերը և բուն ձեռագրի թելերից նոր թելերի ունեցած տարբերությունը ցույց է տալիս, որ այս պրակը կազմվել է երկրորդ անգամ։

562ա էջի ա սյունակում կա այսպիսի հիշատակագրություն. «Յիշեցէք զքաջ րաբունապետն Վարդան վարդապետն առ Քրիստոս և լի բերանով Աստուած ողորմի ասեք նաև եղկելի գրիչս, ամէն»։ Սա նշանակում է, որ այս ամենը կատարվել է Վարդանի հանձնարարությամբ։ Այսպիսով, Կորյունի երկը Վարդանի ձեռքով միացել է պատմագրքին 1675 թ. հետո, մինչև նրա մահը (1703 թ.)։

[1] «Արարատ» Վաղարշապատ, 1903, էջ 179։

[2] Ռ. Իշխանյան, Հայ մատենագրության պատմություն, պր. Ա., եր., 1964, էջ 133։

Բնագիր Բ

Երկրորդ բնագիրը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանում 3787 և 3797 Տոնականներում, որոնք օգտագործել է Մ. Աբեղյանը Կորյունի համեմատական բնագիրը կազմելիս, տողատակերում բերելով առանձին բառեր։ Սրանից էլ քաղել է Ն. Ակինյանը։ Մ. Աբեղյանը № 3787 ձեռագրի գրիչներ է համարում Գրիգորին, Սոսթենեսին և տեր Ավագին, ժամանակը՝ ԺԴ-ԺԵ դարեր, իսկ գրչության վայրը՝ անհայտ, № 3797 ձեռագրի ժամանակը՝ ԺԴ դար, տեղն անհայտ[1]։ Այսպես է նաև Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակում[2]։ Առաջին ձեռագրի մասին Ն. Ակինյանը գտնում է, որ կարող է «գրված ըլլայ 1330—1340 տարիներու մեջ», իսկ մյուսը՝ «հավանորեն, 1347-են, ոչ շատ վերջ», Սուրղաթ քաղաքում[3]։

Այս տարակարծություններն արդյունք են երկու ձեռագրերում էլ գլխավոր հիշատակարանի բացակայության։ Սակայն հիշատակագրությունների քննությունը որոշ տեղեկություններ բացահայտելու կամ էլ դրանք ավելի որոշակի դարձնելու հնարավորություն է տալիս։

Պետրոսի և Ճուհարի որդի Սոսթենեսը 1347 թ. Ղրիմի Սուրղաթ քաղաքում, հայր Պետրոսի հիմնարկած Երաշխավորի վանքում ավարտում է մի ճաշոց և «ի թուականութեան Հայոց ՉՂԹ (1350) յունուարի Զ (6), որ է Յայտնութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ», նվիրում նույն վանքին։ Շատ չանցած մահանում է Սոսթենեսը։ Ձեռագիրը կազմում են Վարդան երեց Լորեցու որդիներ Մելքիսեդեկ գրիչն ու իր Հովհաննես եղբայրը՝ թողնելով այդ մասին հետևյալ հիշատակարանը. «Ձյիշատակարանս յուլիս ԺԱ (11) գրեցի»[4]։ Ուրեմն, Սոսթենես գրիչը մահացել է

[1] Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, եր., 1981, էջ 68։

[2] Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, եր., 1965, էջ 1084, 1086։ Վերջինում վերնագիրը նշանակված է «Վարք Սրբոց»։

[3] Տե՛ս Կորյուն, Պատմութիւն վարուց Ս. Մաշտոցի, Վիեննա, 1952, էջ ԼԸ, ծթ. 70, ԼԹ, ծթ. 71։

[4] Տե՛ս Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղեմ, 1960, էջ 114—115։

1350 թ. հունվարի 6—հուլիսի 11-ն ընկած ժամանակում։ Վարդանին դեռևս 1332 թ. իր որդի Մելքիսեդեկի հետ հանդիպում ենք «ի ձորս Խաղտեաց, ի բնակատեղս Լորի», Ավետարան ընդօրինակելիս (ձեռ. 7630) և նույն գավառի՝ Վահնաշենում՝ 1334 թ., ճաշոց ընդօրինակելիս, ուր հիշվում է «զհռետոր յարահրուն տելէտին զնատեր կնքաւորն»[1]։ Նատերը 1341 թ. թողնում է Խաղտիքը կամ Տայոց աշխարհը, իսկ 1346 թ. նա արդեն Ղրիմի Սուրղաթ քաղաքում էր։

Սուրղաթի Գամճակ գյուղի երաշխավորի վանքում էր նաև Վարդան Լորեցին իր որդու հետ։ Այստեղ էր նաև Սոսթենեան այդ ժամանակ, որն ապրեց մինչև 1350 թ.։ Ուրեմն, Սոսթենեսը և Վարդանը Մատենադարանի № 3878 ձեռագիրը կարող էին գրել 1347 թ. հետո, մինչև 1350 թ. Ղրիմի Սուրղաթի մոտ գտնվող Գամճակ կամ Քեմճակ գյուղում, որովհետև ձեռագրում հիշել էին նաև «քահանայից գեղչն և տա



Սայ սիրեաց զմիայնաւորութեան վարս, որպէս ասաց ոմն. Ի նաւահանգիստ փութայ նաւ խոովեալ, և անձն ժուժկալ խնդրէ զանապատ, նոյնպէս և նորա փախուցեալ յաշխարհական զբաղմանց և ընկեցեալ յետս զմարմնական պատիւն, ղհետ երթայր երկնաւորին» (Ձեռ. № 3787, էջ 107ա)[1]*։*

Բնագիր Գ

Փարիզի Ազգային Մատենադարանի հայերեն ձեռագրերի № 178 մատյանը Տոնական ժողովածու է։ Այժմ ունի 643 բամբակյա, մեծադիր, հաստ թերթ։ Գրված է ԺԲ դարում, գրիչը՝ Պողոսն է։ Ունի երկսյուն գրություն, տողաքանակը՝ 39։ Պրակը՝ 10 թերթանոց է, պահպանված վերջին պրականիշը Կէ (67)։ Նոթ սրանով ավարտվեր ձեռագիրը, կունենար 670 թերթ և պակասը կկազմեր 27 թերթ։ Վկայություններից վերջինի համարը ՃԿէ (167)։ Ունի լուսանցազարդեր և զարդագրեր, հազվադեպ նաև լուսանցանկարներ։ Առաջին կազմողը Խաչատուրն է։

Ձեռագիրը սկզբից և վերջից թերի է, բացակայում է գլխավոր հիշատակարանը։ Հիշատակագրություններից երևում է, որ գրիչ Պողոսը ձեռագիրը գրել է իր համար և նպատակ է ունեցել ստեղծելու հարուստ

[1] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 316։ Հմմտ. «Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն... զի զհետ ընթանայր երկնաւորին»։ Անմիջապես հարում է Կորյունի «իակ երանելւոյն Մեսրովպայ... սկավածքով հատվածը» (Իվ, էջ 138—1)։

Բնագիրը կազմված է ընդարձակի հետևյալ հատվածներից.

(Արդ սկիզբն արասցուք պատմելոյ)

— Զառնն զոր նախակարգ բանից... ի լեռնէն իջանէր։

— Իսկ այսր երանելւոյ... զյաւժարութիւն ընդունելեացն։

— Ապա յետ դարձեալ այնպիսի... հաւատոցն ճշմարտութիւն։

— Եւ այնպէս յամենայն... զարտացեալ լինիմ։

— Անդ էր այնուհետև... յաւգնականութիւն շնորհաւքն։

— Եւ անփակ բերանով... Յիսուս առնել եւ ուսուցանել։

— Քանզի եւ առաւել ազատակար... զաւանդելոցն պատիւ։

— Յայնմ ժամանակի բերեալ... ընկալ զհոգի իմ։

— Իսկ երանելի... պաշարեալ դնէր։

— Բայց թէպէտ եւ... պակասութեան տանէր։

— Եւ զցայգ եւ զցերեկ... զհոգևոր եռանդն ածէր։

— Անդեն ի նմին ամի... Քրիստոսի պատրաստեալ։

— Խաչակրաւն վկայն... եւ պատիւ, ամէն։

բովանդակությամբ Տոնական, ուսոի բազմաթիվ վարքեր ու վկայաբանություններ է փնտրել և ներմուծել ձեռագրում: Նա հաճախ առանձին-առանձին հիշում է Պապանուն հայրապետին, Հուսիկին, Խաշատուրին, Հայրապետին, որոնք նրան այս կամ այն միավորն են տվել օրինակելու համար: Հետագայում, որպես ստացող, հիշվում է միաբանության հայրապետ Հովհաննեսը, որը փափագել է ունենալ սույն ձեռագիրը, և «փոխանակ ընչից ստացաւ ինչք իւր հոգևոր փարթամութեան»[1]:

Սույն Տոնականի 467ա—472ա էջերում Կորյունի Մեսրոպ Մաշտոցի Պատմության համառոտ շարադրանքն է, և ունի «Ի հիշատակի պատմութեան վարուց հրանելոյն սուրբ վարդապետին Մեսրոբայ, զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան» խորագիրը: Որոշ հատվածներ ներհյուսված են Մովսես Խորենացու Հայոց Պատմության Մեսրոպին նվիրված գլուխներից:

Տոնական ժողովածուն ստեղծվել է 747 թվականին Սյունյաց աշխարհի Մաքենոցած ուխտում, առաջնորդ Սողոմոն վարդապետի ջանքերով, որի համար էլ նա կոչվում է «Հարանց Հայր», քանի որ իր ժողովածուի մեջ հավաքել էր եկեղեցու հայրերի վարքերն ու վկայաբանությունները, ճառերն ու ներբողները:

Սույն խմբագրությունը կատարվել է «Տոնական» եկեղեցական ժողովածուի մեջ մուծվելու նպատակով, որը և ընթերցվել է Մեսրոպ Մաշտոցին ու հայ գրերի գյուտին նվիրված տոներին: Ժողովածուում: Պահպանվել են նաև Շուշանիկի, Վահան Գորբենեցու, Հռիփսիմեանց և այլոց վարքերն ու վկայաբանությունները:

* * *

Կորյունի երկը պարունակող այլ ձեռագրեր

Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր.

№ 131, ժողովածու, 1781-ից հետո, գրիչ՝ Համբարձում դպիր:

№ 1891, ժողովածու, 1774 թ., էջմիածին:

№ 2682, ժողովածու, 1823—25 թթ., Կ. Պոլիս:

№ 3143, ժողովածու, 1827—28 թթ. Տփղիս, գրիչ՝ Հովհաննես Բժշկյան:

№ 8843, ժողովածու, 1830 թ., էջմիածին, գրիչ՝ Մսուր Գրիգորյան:

[1] Ա. Մաթեոսյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, ե-ժթ դդ., Եր., 1988, էջ 127—129:



Փոքր Կորյուն

Մատենադարանի № 3791 ձեռագիր Տոնականում (1453 թ. գրիչ Կարապետ) նույնպես պահպանվել է Փոքր Կորյուն. «Յիշատակարան պատմութեան սրբոյ վարդապետի Մեսրոպայ, զոր, ասացեալ է նորին աշակերտի Կորեան» վերնագրով (էջ 196ա—201բ)։ Մատենադարանի Ձեռագրացուցակում այն դրվել է «Հատուածք ի պատմութեանց եղիշէի, Մովս. Խորենացւոյ, Կորիւնի» ենթավերնագրի տակ[1]։ Այսպիսով մեզ հայտնի է դառնում Փոքր Կորյունի մի օրինակ ևս։

Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռագիր

№ 297, ժողովածու, 1781 թ.

№ 1088, ժողովածու, XIX դար, գրիչ՝ Գևորգ տիրացու

Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռագիր

№ 1817, քաղուածոյ, 1850-ից առաջ, Վիեննա։

Փարիզի Ազգային գրադարան, ձեռագիր

*Լատիներեն, № 2083 (*Supplarm. 85*).* Vita Mesropa. Vita beati Magistri Mesrop qui primus caracteras Armeniacae invenit co(m)posite a discipolo illus nomine Coriun. *1644 թ. առաջ, գրիչ և թարգմանիչ Ոսկան վարդապետ։*

Տպագիր հրատարակություններ

1 Կորիւն վարդապետի, Մամբրէի վերծանողի եւ Դաւիթ Անյաղթի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833։

2 Կորիւն վարդապետի Պատմութիւն վարուց եւ մահուան Ս. Մեսրոպայ, Զմիւռնիա, 1847։

3 Կորիւն, Պատմութիւն վարուց եւ մահուան Ս. Մեսրոպայ վարդապետի, մերոյ թարգմանչի, Վենետիկ, 1894։

4 Կորիւն, Պատմութիւն վարուց եւ մահուան Ս. Մեսրոպայ վարդապետի, մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913։

5 Կորիւն, Վարք Մաշտոցի, ուղղեալ եւ լուսաբանեալ Գ. Ֆնտգլյանի, Երուսաղեմ, 1930։

6 Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիր ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանութեամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մ. Աբեղյանի, Երևան, 1941։

[1] *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Ջեյրունյան, Փ. Անթաբյան, Եր., 1965, էջ 1085։*

7 Կորիւն, Պատմութիւն վարուց ս. Մաշտոցի, Վիեննա, 1949 (Մխիթարյան տարեգիրք)։

8 Կորիւն, Պատմութիւն վարուց ս. Մաշտոցի, հրատարակեց Ն. Ակինյան, Վիեննա, 1952։

9 Վարք Մեսրոբայ հարազատ բնագրաւն Կորեան և թարգմանութիւն ի յաշխարհիկ, բարբառ, Ս. Բանեան, Բոստոն, 1951։

10 Կորյուն, Վարք Մաշտոցի (աշխարհաբար), Երևան, 1962։

11 Կորյուն, Վարք Մաշտոցի (աշխարհաբար), Երևան, 1979։

12 Կորյուն, Վարք Մաշտոցի (գրաբար և աշխարհաբար, նաև ռուսերեն և անգլերեն), Երևան, 1981։

13 Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյ առն երանելւոյ Մաշտոցի վարդապետի մերոյ թարգմանչի, արարեալ ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին (աշխ. Նորայր Բյուզանդացու), «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1992, էջ 65—138։

Համառոտ Կորյուն

14 Կորիւն վարդապետի Պատմութիւն սրբոյն Մեսրոբայ, Վենետիկ, 1854 (Սուփերք Հայկականք, ԺԱ)։

15 Կորիւն վարդապետի Պատմութիւն սրբոյն Մեսրոբայ, Վենետիկ, 1894։

16 Կորիւն վարդապետի Պատմութիւն սրբոյն Մեսրոբայ, Թիֆլիս, 1913։

Օտար լեզուներով

16. **Goriuns,** Zebensbeschreibung des h. l. Mesrop. Tübingen, 1841.
17. **Koriun,** Beschreibung des Zebens und Sterbens des h. l. Zehrers Mesrop. München, 1927.
18. **Корюн,** Житие Маштоца, Ереван, 1962.
19. **Корюн,** Житие Маштоца, Ереван, 1981.
20. **Koryun,** The liffe of Mashtots, *Երևան, 1981.*
21. **Goriun,** Biographie du bienheureux et saint docteyr Mesrop, Paris, 1869.
22. Leben des heiligen Masctotz von selinem Schüler Koriun Ausbreiter des Claubens im Altertum Zusammengestelt und eingeleitet von Wilhelm Schamoni, Patmos — Verlag Düsseldorf, 1963.
23. **Koriun,** The lifeof Mashtots, Translated by Bedros Norehad, Neu-Iork, 1964.

ԱՌԱՋԱԲԱՆ

1

Կորյուն վարդապետը Մաշտոցի աշակերտն է։ Նա իր ուսուցչի մահից հետո մտածում է գրել հայոց գրի ծագման մասին և դրա հորինողի կենսագրությունը։ Այդ գործը դեռ չսկսած՝ նա, ինչպես իր գրքի առաջաբանից իմանում ենք, այդ անելու համար հրաման է ստանում Մաշտոցի աշակերտ Հովսեփից, որ կաթողիկոսական տեղապահն էր, այլև այդ մասին քաջալերություն՝ Մաշտոցի ուրիշ աշակերտներից։ Ինչպես երևում է, նրանցից շատերը միաժամանակ մտածել են գրով անմահացնել իրենց «վարդապետի», այսինքն ուսուցչի կատարած մեծ գործի պատմությունը և իրենց ուսուցչին։

Եվ Կորյունը գրում է մի գովաբանական կենսագրություն, որի մեջ չի մոռանում և ուրիշներին, որոնք աշխատել են հայերեն դպրության համար։ Նրա գրվածքը հայկական տառերով հորինված առաջին ինքնուրույն պատմական երկն է, որ իրավամբ նվիրված է հենց այդ տառերի գյուտին և դրանց սկզբնահորը։

Կորյունի այդ երկի գրության ճիշտ տարեթիվը մեզ հայտնի չէ։ Դա հորինված է 443—451 թվականների մեջ։ Կաթողիկոսական տեղապահ Հովսեփը, որ հրամայել է Կորյունին գրել Մաշտոցի կենսագրությունը, Ավարայրի ճակատամարտից (451 թ.) քիչ հետո բռնվել տարվել է Պարսկաստան և այնտեղ նահատակվել, այսինքն քրիստոնեության համար սպանվել։ Դարձյալ՝ եթե 451 թվականից հետո գրված լիներ, դժվար թե Կորյունն այնքան մեծ գովեստներ տար Վասակ Սյունի «ուխտադրուժ» իշխանին, որ Վարդանանց պատերազմի ժամանակ անցել էր պարսիկների կողմը։ Նա չէր անվանի նրան «քաջն Սիսականն Վասակ. այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն աստուծոյ»—քաջ Սիսական Վասակը խելացի ու հանճարեղ և կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ (հատվ. ԺԵ)։ Մյուս կողմից՝ այդ երկը գրված է Մաշտոցի մահից ոչ անմիջապես հետո, քանի որ Սահակի համար ասում է. «Ամի ամի գումարելովք ի նոյնամսեան զնոյն յիշատակն տօնախմբեն»—

տարեցտարի հավաքվելով նույն ամսին՝ նրա հիշատակի տոնախմբությունն են անում (հատվ. ԻԵ)։ Մի երեք-չորս տարի պետք է այդ հիշատակը կատարված լիներ Սահակի մահից (439 թ.) հետո, որպեսզի այդպես գրել կարելի լիներ, ուրեմն 439+4=443։ Ապա՝ նա գրում է, թե Մաշտոցի մահից երեք տարի հետո, ուրեմն 440+3=443 թ., Վահան Ամատունին տաճար է կանգնել տվել Մաշտոցի գերեզմանի վրա։ Հետևաբար, եթե Կորյունն առաջ էլ սկսած լիներ իր աշխատությունը, նա այդ վերջացրել է ոչ վաղ քան 443 թվականը։

Այս է Կորյունի երկի գրության ստույգ ժամանակը։ Հարկ եմ համարում հիշել, որ 19-րդ դարի վերջերից ի վեր եղան բանասերներ, որոնք մի ընդհանուր մարմաջով բռնված՝ սկսեցին մեր մատենագիրների ժամանակն իջեցնել դեսը՝ դեպի մեզ, հաճախ առանց որևէ հիմքի, լոկ խոսքով։ Այդպիսիների գրչից զերծ չի մնացել և Կորյունը, ինչպես կարծում եմ, երբեմն Կորյունի բնագիրը լավ չհասկանալուց (տե՛ս ծան. 165, 166)։

2

Կորյունի մասին մի քանի կենսագրական տեղեկություններ միայն ունենք հենց իր գրքույկից։ Նա, ինչպես ինքը գրում է առաջաբանի մեջ, բախտ է ունեցել լինելու Մաշտոցի մասնավոր աշակերտը—իր աշակերտակիցների մեջ եղել է կրտսերագույնը։

Գրքի վերջաբանի մեջ (հատվ. ԻԲ) նա հայտնում է, թե ինքն ականատես է եղել իր պատմածին, ընթերակա է եղել նրանց, Մաշտոցի ու Սահակի գործերին, այլև եղել է «արբանեակ», այսինքն փոքրավոր գործակից։ Գրել է ոչ միայն իր իմացածները, այլև նշանավոր գիտակ անձերից քաղելով։

Նա պատմվածքի ընթացքում էլ երկու անգամ հիշում է իրեն։ Երբ Հայաստանի զանազան կողմերից Վաղարշապատում հավաքած աշակերտներն ուսման մեջ կատարյալ են դառնում, այն ժամանակ նրանց խումբ-խումբ ուղարկում են գավառները սովորեցնելու։ Կորյունն իրեն էլ մեկն է ասում այդ ուղարկվածներից՝ այսպես գրելով. «Սկսան... գումարել ի կողմանս, ի գաւառս... զհասուցելոցս ի կատարումն գիտութեան [ղաւասս], բաւականս և առ ի զայլսն զեկուցանելոյ»—սկսեցին գիտության մեջ կատարելության հասածներիս (բառացի՝ հասցվածներիս) խմբերն ուղարկել զանազան կողմեր, գավառները՝ կարող համարելով՝ ուրիշներին էլ սովորեցնելու (հատվ. ԺԲ)։

Մի ուրիշ տեղ (հատվ. ԺԻ) նա պատմում է, թե մի քանի «եղ-

բայրներ» գնում են Կոստանդնուպոլիս։ Նրանցից առաջինն էր Ղևոնդես, երկրորդն ինքը՝ Կորյունը, որոնք մոտենում, հարում են Եզնիկին, իբրև ընտանեգույն սննդակից,— «մատուցեալ յարէին յեզնիկն, իբրև առ ընտանեգոյն սննդակից»։ Նրանք Կոստանդնուպոլսում հոգևոր պիտույքի խնդիրը կատարելուց, այսինքն թարգմանություններ անելուց հետո վերադառնում են՝ հետները բերելով ձեռագիրներ, որոնց թվում և Եփեսոսի ժողովի կանոնները։ Այդ ժողովը տեղի է ունեցել 431 թ.։ Ուրեմն Կորյունն իր ընկերների հետ վերադարձել է ոչ վաղ քան 431 թ.։

Եզնիկը, ինչպես ինքը Կորյունը գրում է, Այրարատյան գավառի Կողբ գյուղից էր. նա շատ հայտնի Եզնիկ Կողբացին է։ Որ նա եղել է Կորյունի «ընտանեգոյն սննդակիցը», պետք է ընդունել, որ Կորյունը մանկության ժամանակ սնված, մեծացած է եղել Եզնիկի հետ։ Այսպես և Ղազար Փարպեցին իրեն անվանում է Վահան Մամիկոնյանի «սնընդակից», զի վերջինիս մայրը նրան իր որդու հետ «սնուցել» է, այսինքն մեծացրել, կրթել է։

Էլ ուրիշ կենսագրական տեղեկություններ չունենք մեր այս հեղինակի մասին*։ Հետագայում նրան միայն գովում են, անվանելով՝ «այրն ցանկալի Կորիւն», «այրն հոգևոր Կորիւն», «երանելի այրն Կորիւն», «երանելի Կորիւն», «սքանչելի այրն Կորիւն» և նույնիսկ «սուրբն Կորիւն»։ Այս գովեստները ցույց են տալիս, որ նա բարի համբավ է թողել իր մասին։

Կորյունն իբրև «վարդապետ»՝ անշուշտ պարապել է ուսուցչությամբ ու քարոզչությամբ, ինչպես իր ուսուցիչ Մաշտոցը, նա պարապել է նաև թարգմանություններ անելով։ Գուցե նա գրքեր էլ է գրել. բայց ոչ մի երկ հայտնի չէ նրա անունով, բացի Մաշտոցի «Վարքի և մահվան պատմությունից»։ Ձեռագիրների մեջ կա հետևյալը. «Ապաշխարող կարգել և արձակել ի մեծի հինգշաբաթին՝ երանելւոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ գրեալ... և Արձան և Կորիւն թարգմանիչք բերին ի Հայս»։ Այս երկի թարգմանությունը վերագրում են Կորյունին։ Գործածված բառերի ու դարձվածքների վրա հիմնվելով՝ Նորայր Բյուզանդացին նրանն է համարում և ուրիշ թարգմանություններ** բայց այդ երկբայելի է, մասամբ և բոլորովին մերժելի։

* Տե՛ս ծան. 102, Կորյունն իբր եպիսկոպոս է եղել Վրաստանում։ Մի կարծիք, որ առաջ է եկել բնագրի աղճատման հետևանքով և գրվածքն իր ամբողջությամբ լավ չուսումնասիրելուց։

** Տե՛ս Նորայր Բյուզանդացի, «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», էջ 6 և հտ.։

Ի՞նչ արժեք ունի Կորյունի այդ փոքր գիրքը։

Այս տիպի որևէ գրվածք գնահատելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ հեղինակի ծրագիրը, այսինքն՝ թե ի՛նչ է ուզեցել գրել, և գրելու ժամանակը, դարը։ Արդ, Կորյունը հենց սկզբից հայտնում է, թե ինքը մտածել է գրել հայկական «գրի մասին, թե ե՛րբ և ո՛ր ժամանակ բաշխվեց և ինչպիսի մարդու ձեռով տրվեց այդ աստվածային նոր շնորհքը, այլև այդ մարդու լուսավոր վարդապետության (ուսման) և հրեշտականման առաքինի կրոնավորության մասին»։ Մի անգամ որ այս է եղել նրա ծրագիրը և որ նա հայոց պատմություն չի գրել, բնական է, որ այժմ մենք նրանից ուրիշ բաներ պահանջել չենք կարող։ Նա շատ լավ գործադրել է այն, ինչ որ ծրագրել է։

Միծաղելի է, երբ 19-րդ դարի վերջում Եվրոպայում նստող մեկը ծաղրում է մեր այս հեղինակին՝ գրելով, թե Կորյունը «առաւել քան զկար իւր կը համարի պատմել զվարս Մաշտոցի և կը փութայ խնդրել ի սատարութիւն զաղօթս ուսումնակցաց, որպէս թէ քանի մի էջ բան գրելն ատուգիւ մարդկային կարողութենէ վեր ըլլար և աստուածեղէն շնորհաց օգնականութեան կարօտ»*։ Հնումն այդպես մտածում և վարվում էին և ուրիշները, ինչպես Ղազար Փարպեցին։ Դա ժամանակի կրոնական ոգու արտահայտություններից մեկն էր։ Մյուս կողմից՝ դա նաև մի համեստության խոսք է Մաշտոցի ավագ և մեծ դիրք ունեցող աշակերտի, կաթողիկոսական տեղակալ Հովսեփի նկատմամբ։

Բայց որ նա իրեն դիմող ընկերների աղոթքն էլ խնդրում է, ասելով, «զի կամակարագոյնս և ուղղագոյնս նաւիցեմք զհամատարած ալեօքն վարդապետական ծովուն»—որպեսզի աջողությամբ և ուղիղ նավենք վարդապետական ծովի համատարած ալիքների վրայով, դա լոկ մի քաղաքավարական խոսք չէ, կամ լոկ մի արտահայտություն այն ժամանակի կրոնական ոգու, ըստ որի ամեն բան կատարվում է աստվածային շնորհքով։ Կա և մի ուրիշ կողմ։

Պետք է իմանալ, որ Կորյունն իր ընկերների հետ սովորել և աշխատել է Կ. Պոլսում այն ժամանակ, երբ հուզվում էին աստվածաբանական մեծ վեճերը և տեղի էր ունենում Եփեսոսի ժողովը նեստորականության դեմ։ Նա իր ընկերների հետ Հայաստան բերել է այդ և նիկիո ժողովների կանոնները. նա ինքը պատմում է, որ Սահակն ու Մաշտոցն էլ մաքառել են Հայաստան թափանցած աղանդների դեմ, ինչպես՝ տոցն էլ մաքառել են Հայաստան թափանցած աղանդների դեմ, ինչպես՝

* Տե՛ս Նորայր Բյուզանդացի, «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», էջ 7։

բարբարիանոս կոչված աղանդի, այլև Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու ուսման դեմ։ Այսպիսի դրության ժամանակ նա՝ իբրև մի բարեպաշտ մարդ՝ աստվածային շնորհքին պիտի դիմեր՝ «վարդապետական ծովի համատարած ալիքների վրայով ուղիղ նավելու» համար, այսինքն դավանաբանական սայթաքում չանելու։

4

Առաջին կարճ ու անհրաժեշտ առաջաբանից հետո Մաշտոցի վարքագիրը գրում է մի երկրորդ ձիգ ու երկայն նախաբան էլ (հատվ. Բ)՝ պատասխանելու համար այս հարցին, թե արդյոք թույլատրելի՞ է «կատարեալ» մարդկանց վարքը գրել թե ոչ,— «ինչ՞ համարձակությունն գրով նշանակել զվարս արանց կատարելոց»։

Աստվածաշնչից չափազանց շատ ցիտատներ բերելով՝ նա ցույց է տալիս, որ այդ ոչ միայն թույլատրելի է, այլև հարկավոր է՝ ուրիշներին իբրև օրինակ ծառայելու համար։ Եվ վերջը եզրակացնում է, թե ինքն ևս կարող է համարձակվել գրի առնելու «արդար մարդու», այսինքն Մաշտոցի վարքը։

Երկրորդ անգամ մեր այս հեղինակն Աստվածաշնչից շատ ցիտատներ է բերում այն ժամանակ, երբ պատմում է, թե սկսում են «թարգմանել, գրել և ուսուցանել»։ Նա իր բերած օրինակներով ցույց է տալիս, որ «երանելի հարցն մերոց համարձակությունն առեալ»— մեր երանելի հայրերն այդ անելու համարձակություն, թույլտվություն են առել ոչ միայն մարգարեներից, այլև նույնիսկ Հիսուսից (հատվ. ԺԱ)։

Եվ վերջապես երրորդ անգամ նա վկայություններ է բերում Սուրբ Գրքից, երբ վերջում նորից խոսում է Մաշտոցի կրոնավորական, միաբանական կյանքի և քարոզչության մասին։ Նա այդ անում է իր ուսուցչին մեծացնելու համար և ցույց տալու, որ նա մեծ հետևող է եղել ոչ միայն առաքյալներին և ուրիշներին, այլև նույնիսկ Հիսուսին (հատվ. ԻԳ)։

Ինչի՞ համար է այդ ամենը։

Քննադատել, թե հիշված երկրորդ առաջաբանը շատ երկայն է և թե դա իբր ավելորդ է, կամ եղել է «զարմանալի երկյուղածությամբ», և թե զուր են Աստվածաշնչից բերված բազմաթիվ ցիտատները, այդ նշանակում է չհասկանալ Կորյունին և նրա ժամանակը։

Նա, ինչպես և Մաշտոցի մյուս աշակերտները, որոնք մտածում էին իրենց ուսուցչի վարքը գրելու մասին, շատ լավ գիտեին, որ թույլատրված է այդ անել։ Նրանք, որ վաղուց թարգմանություններով էին

զբաղված, շատ լավ և այն և այն գիտեին, որ թույլատրված է Ս. Գիրքը թարգմանել և գրել հայերեն։ Նրանք ծանոթ էին և Մաշտոցի կրոնավորական կյանքին, գիտեին այն ցիտատները, որ Կորյունը բերում է։ Այդ ամենը նրանց համար չէր, ոչ էլ մեզ համար է, մեր ժամանակի մարդկանց։ Այլ այդ ուղղված է Մաշտոցի և նրա աշակերտների հակառակորդներին։

Մաշտոցն իր ճգնավորական և «առաքելական» մեծ հեղինակությամբ կարող էր հակառակորդներին զսպել և զսպել է. «Իւրով աւետարանական և ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց և անընդդիմակաց ի հակառակորդաց զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին» (հատվ. ԻԲ),— իր ավետարանական և ողջապատում վարքով՝ նա ամենափրկիչ Հիսուսի անունը կրեց իր անձի վրա թագավորների և իշխանների ու բոլոր հեթանոսների առաջ և առանց ընդդիմության հակառակորդների կողմից։ Բայց այդ հակառակորդներն արդեն գլուխ էին բարձրացրել, և նրանց կռիվն ընդդեմ Սահակի և Մաշտոցի ջանքերով առաջ եկած նոր սերնդի՝ շատ զգալի էր եղել, և այդպես նույնիսկ մինչև 5-րդ դարի վերջերում։

Այս տեսակետով մոտենալով խնդրին՝ Կորյունի երկրորդ առաջաբանը և նրա մեջբերած բազմաթիվ ցիտատները մեզ համար էլ կարևորություն են ստանում այն ժամանակի ոգին ու դրությունը պատկերացնելու համար։ Ժամանակն էր այդ պահանջել։

Այդ բոլորովին նոր գործը, Մաշտոցի կենսագրությունը, ըստ ինքյան էլ կարող էր բամբասանքի դուռ բանալ ոչ միայն հակառակորդների, այլև քնդհանրապես տգետների համար, քանի որ ամեն նորություն անհասկացողների համար անընդունելի է, ո՞ւր մնաց Մաշտոցի կենսագրությունը հայերի մեջ 440-ական թվականներին։

Այդ ժամանակներում չկար այլևս հայոց թագավորությունը։ Պարսկական իշխանության հովանավորությամբ չափազանց զորացած էր ասորի հոգևորականության ազդեցությունը Հայաստանում։ 430-ական թվականներին աթոռից զրկված էր Սահակ կաթողիկոսը, և նույնիսկ ասորի կաթողիկոսներ էին իշխում։ Սահակի ու Մաշտոցի և նրանց աշակերտների թարգմանչական գործունեությունն ուղղված էր հենց այդ ասորական ազդեցության, ասորերեն լեզվի դեմ։ Այս պարագաներում հասկանալի է, թե ինչո՞ւ Կորյունն այնքան երկայն և Ս. Գրքից ցիտատներով լի առաջաբան է գրում՝ ցույց տալու համար, որ թույլատրելի է գրել Մաշտոցի վարքը, և կամ ավելի ուշադրություն է դարձնում Մաշտոցի միաբանակեցությանն ու առաքելական գործունեությանը, որ ճանաչված էր նաև ասորոց եպիսկոպոսներից, ինչպես նաև բյուզան-

դացոց կողմից, որ և ուրանալ չէին կարող հակառակորդները։ Այսպես ուրեմն, որ նա Մաշտոցին իբրև կրոնավորի բարձրացնում է, այդ միայն իրականությունից և աշակերտական ակնածությունից չի բխում։ Նա դրանով ջանացել է լռեցնել հակառակորդներին։

Այս վերջիններին չզայրացնելու համար՝ նա չի շոշափում ժամանակի քաղաքական, եկեղեցական գործերը, նա մի խոսք անգամ չի ասում այն մասին, որ Հայոց եկեղեցում լեզուն եղել է ասորերեն, դրպրոցներում սովորում էին ասորերեն, և որ շնորհիվ Սահակի ու Մաշտոցի՝ այդ ասորերենին փոխարինում է հայերենը։ Առհասարակ զգուշությամբ «ասորի» անունն էլ նա չի գործածում, բացի երկու դեպքից։ Մեկն այն է, թե ասորի Դանիել եպիսկոպոսի մոտ գտնվել են հայերեն լեզվի համար ալփաբետներ,— կարծես Հայաստանի ասորի հոգևորականներին ցույց տալու համար, թե Մաշտոցից առաջ մի ասորի եպիսկոպոս է մտածել հայերեն դպրության մասին։ Մյուս դեպքն էլ այն է, թե Եդեսիայի և Ամիդի ասորի եպիսկոպոսները մեծ պատվով ընդունում են Մաշտոցին ու նրա մարդկանց և հոգում նրանց համար, և թե նրանք ուրախանում են հայերեն նշանագրերի և դպրության համար։ Այս էլ, կարծես ասելու համար, որ եթե ասորոց այդ հռչակավոր եպիսկոպոսները, Ռաբուլասը և Ակակիոսը, այդ վերաբերմունքն են ցույց տվել հայ դպրության նկատմամբ, Հայաստանի ասորի հոգևորականներն էլ պիտի նույնպես վարվեն։

Եվ, վերջապես, ժամանակի պարագաներով է բացատրվում և այն, թե ինչու Կորյունը՝ 440-ական թվականներին, ուրեմն Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից առնվազն երեսունհինգ տարի հետո, այդ գրքից բերած ցիտատներով ապացուցում է, որ Մաշտոցն ու Սահակն իրավունք են ունեցել Ս. Գիրքը թարգմանելու, և թե նրանք այդ արել են՝ «հայեցեալ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւն»,— աչքի առաջ ունենալով տիրոջ (աստուծու) տված բարձր հրամանները— Կորյունը ստիպված է եղել այդ անելու։

5

Թե իմ այս տեսակետը ճիշտ է, այդ երևում է նույնիսկ Կորյունի հետևյալ խոսքերից, որոնց վրա ուշադրություն չեն դարձրել։ Նա իր գրքի վերջաբանի մեջ (հատվ. ԻԹ) հայտնում է, թե Մաշտոցի կենսագրությունը համառոտ է գրել. «զյաճախագոյնն թողեալ՝ ... զհամառօտս կարգեցաք»— շատը թողնելով՝ այս համառոտը գրեցինք։ Եվ իսկույն նա իր վարմունքը պատճառաբանում է այսպես. «Քանզի չէաք իսկ

հանդուրժողք՝ զամենայն արարեալսն կտակաւ նշանակել զիւրաքանչիւրն (Սուտ-Կորյուն՝ «քանզի և ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոցն գրով նշանակել զիւրաքանչիւրն»), այլ ի դիւրագոյնս և ի հեշտագոյնս — յառաքելական անդր զանձինս պատրաստարեցաք»։

Ի՞նչ է ասում Կորյունն այս խոսքով։

«Հանդուրժել» բառը նշանակում է «դիմանալ»։ Բերենք երկու օրինակ դրա համար։ Ղազար Փարպեցին պատմում է, թե Սյունիքի հզոր իշխան Վասակը թշնամանալով իր փեսա Վարազվաղանի հետ՝ ուզում էր նրան սպանել։ Այդ ժամանում է Վարազվաղանը «և դի ոչ կարէր հանդուրժել սաստիկ բռնութեան աներոյն... փախուցեալ յերկիրն Պարսից»— և որովհետև չէր կարող դիմանալ իր աների սաստիկ բռնությանը՝ ուստի փախավ Պարսից երկիրը։ Բերենք մի ուրիշ բոլորովին համապատասխան կազմությամբ օրինակ։ Մովսես Խորենացին (Բ. լե) պատմում է, թե Աբգար Թագավորի կին Հեղինեն, որ քրիստոնյա էր, «ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտից, այլ չոգաւ յերուսաղէմ»,— չդիմացավ կռապաշտների մեջ բնակվելուն, [ուստի նրանց մեջ չբնակվեց], այլ գնաց Երուսաղեմ։ Այսպես և Կորյունը վերևում բերված խոսքի մեջ ասում է. «Որովհետև իսկապես չէինք դիմանալ նրանց յուրաքանչյուրի բոլոր արածները գրելուն, [ուստի գրեցինք ոչ բոլորը], այլ ապավինեցինք այս ավելի հեշտ ու դյուրինին— առաքելականին», բառացի թարգմանությամբ՝ «մեզ պատսպարեցինք = պատսպարվեցինք այս ավելի հեշտ ու դյուրինով— առաքելականով»։

Հիմա հարց։ Ինչո՞ւ Հեղինեն չդիմացավ կռապաշտների մեջ բնակվելուն։— Անշուշտ նրա համար, որ նրանց մեջ բնակվելը որևէ նեղություն էր պատճառում նրան։ Այսպես և երբ Կորյունն ասում է, թե «չէինք դիմանալ նրանց (Սահակի և Մաշտոցի) բոլոր արածները գրելուն», անշուշտ նրա համար, որ այդ բոլորը գրելը նրան որևէ նեղություն կպատճառեր։ Կնշանակե՝ Կորյունն զգուշացել է, չասենք թե վախեցել է, Սահակի ու Մաշտոցի բոլոր արածները գրելու։ Եվ ոչ միայն այդ։ Նա պաշտպանվելու համար դիմել է «առաքելականին», այսինքն Մաշտոցի «առաքելական» գործունեությանը, քրիստոնեություն քարոզելուն։ Այդ շատ պարզ երևում է նաև նրա գործածած «պատսպարվել» բառից, որ նշանակում է ապավինել, ապաստանել, պաշտպանվել մի բանից, մի բանով։ Կորյունն, ուրեմն, պատսպարվել է իր բերած բազմաթիվ ցիտատների հետևում։

Մի անգամ, որ նա թողնում է շատ բան, ինչպես ինքն ասում է,

սրբերի «բազմախոտն արգասիքները»— վաստակները, բնականաբար նպատակ է դնում իր գրած «կարևորագույն հանգամանքները» մանրամասն, «մանրակրկիտ» պատմելու։

6

Կորյունն անշուշտ պատրաստված չի եղել պատմություն կամ կենսագրություն գրելու։ Նրա ուսումը լոկ կրոնական է եղել։ Մի մարդ, որ պարապել է զանազան կրոնական գրքերի թարգմանությամբ, ունի լավ ծանոթություն Ս. Գրքի, որից դենը չի անցնում իր հայացքով։ Բայց չնայելով դրան, չնայելով նրա լռումներին՝ կարելի չէ ասել, թե նրա այդ փոքր գրքույկը, ինչպես գրում են, «իբրև պատմական գրվածք չունի մեծ արժեք»։ Ընդհակառակը։ Դա հայ պատմական կյանքի նոր դարաշրջանի սկզբնավորության հետ ծանոթանալու նկատմամբ՝ ունեցել է և ունի շատ մեծ արժեք։ Բավական է միայն ասել, որ եթե չլիներ այդ գրքույկը, մենք չափազանց քիչ բան, այն էլ կասկածելի, կիմանայինք այնպիսի կարևոր եղելության մասին, ինչպիսին է հայ գրի ու գրականության սկզբնավորությունը։ Հետագա գրողները Կորյունից են օգտվում։

Նա բավարար չափով տեղեկություններ է տալիս իր առաջադրած խնդրի վերաբերմամբ և սովորաբար շատ որոշ կերպով։ Նրա գրածով մենք պատկերացնում ենք մի խելոք կերպով ծրագրած ու կատարած գործունեություն, իսկ գլխավոր գործիչը, Մաշտոցը, հանդես է գալիս իբրև անսպառ եռանդի տեր, շնորհալի և ազդեցիկ տղամարդ, որ մտածում և հոգում է ամբողջ հայության, այլև հարևան ժողովուրդների համար, որ շարունակ շրջում է և իր տեսչական այցելություններով հաստատուն հիմքերի վրա դնում իր սկսած գործը։

Անշուշտ, ոչ միայն Կորյունը, այլև ամեն մի հին հեղինակ չի կարող բավարարել հետագայի հարցասեր մարդկանց պահանջներին, որոնք հաճախ ծագել են կա՛մ Կորյունի գրածը չհասկանալուց, կա՛մ որևէ ուրիշ թյուրիմացություններից։ Այդպես են հետևյալները. Մաշտոցը քանի՞ նշանագիր է հորինել՝ «երեսուն և վե՞ց, թե տասնուչորս, թե՞ յոթն»։ Արդյոք հայերը քրիստոնեությունից առաջ չե՞ն ունեցել գրի գործածություն։ Արդյոք «Դանիելյան ալփաբետը» չի՞ եղել «հայոց հին այբուբենը», որ «մոռացվել էր՝ տեղի տալով այլոց դպրությանց, այսինքն այլոց գրերին, և ապա կրկին հայտնվել»։ Ի՞նչ են եղել «Դանիելյան» նշանագրերը, և Մաշտոցն ինչո՞վ է լրացրել դրանք։— Կարծես,

Կորյունը պարտավոր էր դուշակել, թե դարեր հետո ինչեր կհարցնեն, և դրանց պատասխանը պիտի տար առաջուց։

Կորյունն առանձին ուշադրություն է դարձրել նաև ժամանակաբանությանը. նա հիշել է ուրիշ աղբյուրներից ստուգվող ճիշտ թվականներ, հարկավ, թագավորների տարիներով, քանի որ այն ժամանակ չկար թվականության կիրառություն։ Նրա հիշած, երբեմն երկրորդ և երրորդ անգամ մի ուրիշ ձևով կրկնած թվականները վերաբերում են հայերեն նշանագրերին, Մաշտոցի կրոնավորությանը և Սահակի ու Մաշտոցի մահվանը։ Այստեղ էլ ուրեմն, նա հետևում է իր առաջադրած ծրագրին։ Անշուշտ, լավ կլիներ, որ նա հայտնած լիներ Մաշտոցի գործունեության մի քանի ուրիշ թվականներ ևս, եթե միայն գիտեր։

Կանգ առնենք և հետևյալի վրա։ Ասում են, թե Կորյունն իբր չի հայտնել, թե Մաշտոցն «ո՛ւր է հնարել իր նշանագրերը»։ Կորյունն այդ մասին գրել է, ինչպես կարելի է տեսնել իր աշխատության հատվածից։ Դա Եդեսիա քաղաքն է, բայց քաղաքի անունը ձեռագիրներից դուրս է ընկել։

7

Եվ նրա աշխատությունն ընդհանրապես, մանավանդ վերջին մասում, շատ աղճատված է արտագրողների ձեռքով։ Դրան հաճախ ուշադրություն չեն դարձրել այդ գրքույկից օգտվողները։

Վերջիններիս համար մի դժվարության հանգամանք էլ եղել է նաև Կորյունի գրության ոճը։ Նա հորինում է շատ ճոռում, ավելորդ զարդերով ու կրկնություններով. ինչպես ինքն ասում է, «ծաղկեցնում է»։ Նրա գրածը հաճախ մութն է նաև անկանոն լեզվի պատճառով, պակասում են անհրաժեշտ բառեր, կամ շատ կան ամբողջ նախադասությունների փոխարինող յուրահատուկ նորահնար բարդ բառեր, այլև բառերի կիրառություն ոչ մեզ ծանոթ սովորական նշանակությամբ։ Վրան ավելացրեք և բնագրի մասամբ աղճատված լինելը, և հասկանալի կլինի, թե ինչո՛ւ այդ փոքրիկ գիրքը շատերի համար դժվար հասկանալի է եղել։

Դժվար մատչելի է եղել այդ գրվածքը նաև միջին դարերում, ուստի առաջ է եկել մի նոր խմբագրություն, Կորյունի գրքից քաղվածոռեն կազմված, հետը միացրած նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» տեղեկություններ, նույնիսկ փոխանակ Կորյունի հաղորդումների։ Դա հայտնի է Փոքր Կորյուն անունով։ Դրա վերնագիրն է. «Ի

յիշատակի պատմութեան վարուց երանելւոյ սուրբ վարդապետին Մեսրովբայ, զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան»։

8

Մի քանի խոսք էլ իմ այս աշխատության մասին, որ կատարել եմ Հայպետհրատի հանձնարարությամբ Մաշտոցի մահվան 1500-ամյակի առթիվ։

Ինչպես կարելի է նկատել, գրքի վերնագրի մեջ է Մեսրովպ *անունը, իսկ համառոտ վերնագրի մեջ է՝* Մեսրոպ *(«Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի»), մինչդեռ բնագրի մեջ այդ անունը չկա, այլ միայն* Մաշքոց։ *Այս անունն էլ բնականաբար այսպես պահվում է այստեղ թարգմանության մեջ. և վերնագրի մեջ էլ փոխում, դարձնում են Մաշքոց։ Ղազար Փարպեցին ունի միայն* Մաշտոց, *իսկ Մովսես Խորենացին, երբ գրերի և դպրության մասին է գրում, ունի բազմաթիվ անգամներ Մեսրոպ, Մեսրովպ, մեկ անգամ միայն նա գործ է ածել Մաշտոց անունը (Բ., ժ.) գրելով, թե Եվսեբիոս Կեսարացու «Էկլէսիաստէ» գիրքը «ետ թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու»։ Այժմ ընդհանրացած է և՛ Մեսրոպ, և՛ Մաշտոց, այլև միասին՝ Մեսրոպ Մաշտոց։ Իմ հոդվածների մեջ պահված է ընդհանրացած Մաշտոց գրությունը։*

Թարգմանության ժամանակ արել եմ կետադրության և բնագրի բազմաթիվ ուղղումներ, որոնք, ոչ բոլորը, ցույց են տրված և բացատրված են ծանոթությունների մեջ։

Ցանկալի էր թարգմանության մեջ ճշմարտությամբ պահել Կորյունի առանձնահատուկ ոճը՝ իր բառերով և մտածության ձևերով։ Բայց այդ անհնարին էր աշխարհաբարում լիովին կատարել՝ առանց մթնեցնելու թարգմանությունը և դժվար հասկանալի դարձնելու այն, ինչպես եթե գրվեր՝ «մատենաճշան հիշատակարաններ ծաղկեցնել», «մտքիս խորհրդանոցում միայնագործ հագում էի» և նմանները։ Տեղ-տեղ պարզության համար ավելացրել եմ բառեր անկյունավոր փակագծերի մեջ։ Սակավաթիվ բառերի համար ներքևի լուսանցքներում դրված են բացատրություններ, որովհետև այդ բառերը, որ պահված են բնագրից, աշխարհաբարում տարբեր նշանակությամբ են գործածվում։

Բնագիրը մասեր կամ գլուխներ չունի, այլ ընթանում է միապաղաղ։ Ընթերցողների դյուրության համար՝ ես այն բաժանել եմ ըստ բովանդակության քսան և ինը հատվածների, որոնք միմյանցից անջատվում են անկյունավոր փակագծերի մեջ դրված հայկական թվանշաններով։

Բնագիրը լավ հասկանալու համար՝ գրքի վերջում դրել եմ բազմաթիվ ծանոթություններ. սրանց մեջ նաև հեղինակի բերած ցիտատներ Ս. Գրքի մեջ եղած ձևով։ Այդ կարևոր է ավելի բնագրի հրատարակության համար՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության ուսումնասիրման և այլ տեսակետներով։

** [ԺԴ] հատվածը զբաղեցնում էր [Ժ] հատվածի տեղը, որտեղ այժմ այլ հատված է գետեղված։ [ԺԴ]-ից սկսած հատվածումների համարները մեկ միավորով մեծացել են, և երկն այժմ ունի երեսուն հատված։*

Տե՛ս «Հավելվածը»։ (Ա. Մ.)

9

Այս աշխատությունը Հայպետհրատին հանձնելուց հետո՝ Ժողկոմսովետին կից «Ձեռագրերի ուսումնասիրության գիտական Ինստիտուտից» (Մատենադարանից) ստացա Մատենադարանի վեց ձեռագրերի տարբեր ընթերցվածները, որ Մատենադարանի գիտ. աշխատողներից մեկը նշանակել էր իմ խնդրանքով՝ բաղդատությամբ Վենետիկի 1894 թ. հրատարակության հետ։

Այդ տարբեր ընթերցվածներն ըստ բաղդատական հրատարակության համար ընդունված ձևի դասավորելուց, ուսումնասիրելուց և մի քանիսն անձամբ ձեռագրերի վրա վերստուգելուց հետո՝ տեսա, որ դրանցով մեծ մասամբ ճշտվում են իմ կատարած ուղղումները և մի քանի նոր ուղղումներ են մտցվում Կորյունի բնագրի մեջ։ Ուստի ես հարկ համարեցի իմ ուսումնասիրությունը ետ ստանալ Հայպետհրատից և վերանայել։ Միաժամանակ և կազմեցի Կորյունի բնագիրն ստացած տարբեր ընթերցվածներով հանդերձ, որովհետև Հայպետհրատի վարչությունը որոշեց գրաբար բնագիրն ևս հրատարակել աշխարհաբար թարգմանության և տարբեր ընթերցվածների հետ միասին։ Այս դեպքում կարելի էր գրքի վերջում դրված ծանոթություններից մի քանիսը դուրս գցել, բայց այդ չարի՝ խուսափելով դրանց թվահամարները փոխելուց, որ կարող էր սխալների ու շփոթությունների դուռ բանալ։*

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

(Ա. Մ.)

** Այս ձևով «Բաղդատությամբ ձեռագրաց» արդեն հրատարակված են Ագաթանգեղոս, Տփխիս, 1909, Մ. Խորենացի, Տփխիս, 1913, վերջինս «աշխատութեամբ Մ. Աբեղեանի, և Ս. Յարութիւնեան, իսկ առաջինը «աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց»։*

ԿՈՐՅՈՒՆ

ՎԱՐԴ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

(աշխարհաբար, գրաբար)



Ա.

ԵՐԱՆԵԼԻ ՄԱՐԴՈՒ, ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ[1] ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՐՔԻ* ԵՎ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏ ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ

[Ա]

Ասքանազյան[2] ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարգև գրի մասին, թե ե՛րբ ու ո՛ր ժամանակ բաշխվեց և ինչպիսի՛ մարդու ձեռով եղավ այդ աստվածային նոր տրված շնորհքը, այլև այդ մարդու լուսավոր ուսման և հրեշտականման առաքինի կրոնավորության մասին մտածում էի մի առանձին մատյանի մեջ գրված հիշատակարաններ ծաղկեցնել։ Եվ մինչդեռ ես իմ մտքի մեջ մենակ հոգում էի[3] [իրողությունները] հիշելու, [ահա] եկավ, հասավ ինձ Հովսեփ[4] կոչված մի պատվական մարդու, նրա աշակերտի հրամանն [այդ անելու համար], դրա հետ նաև ուրիշների, մեր ուսման աշակերտակիցների քաջալերությունը։ Ուստի և ես, որ բախտ էի ունեցել [նրա] մասնավոր աշակերտը լինելու, թեպետև կրտսերագույնն էի [նրա աշակերտների մեջ], և այդ մեր ուժից վեր էր, [բայց ևայնպես] բռնադատվելով [ինձ] հասած անաչառ հրամանից, [սկսեցի] շտապով և անհապաղ գրի անցընել առաջադրանքը։ Եվ մենք նրանց ամենքին աղաչում ենք, որ աղոթքով մասնակից լինեն մեր աշխատությանը՝ հանձնարարելով [մեզ] աստվածային շնորհքին, որպեսզի աջողությամբ և ուղիղ նավենք վարդապետական ծովի համատարած ալիքների վրայով։

[Բ]

*Բայց արդ՝ նախ մի առաջաբան անենք, թե թուլլատրելի՞ է արդյոք կատարյալ մարդկանց վարքի մասին գրել։ Ոչ թե մեր կողմից, մեր կարծիքով վիճաբանելով կճարտարախոսենք, այլ տրված օրինակներով պարզ կերպով կապացուցենք հակառակը**)։ Որովհետև բարերար աստ-*

*) Վարք-կյանք, կյանքի ընթացք՝ առանձնապես քրիստոնեական «սրբերի»։ «Վարք սրբոց»—սրբերի կյանք, կենսագրություն։ «Վարքագրություն»—կենսագրություն (սրբերի)։

**) Այսինքն՝ հակառակն այն մարդկանց կարծիքի, որոնք ասում են, թե թուլատրելի չէ։

վածն այնպես է բարի կամեցել իր սիրելիներին, որ ոչ միայն արժանի համարի [տալ նրանց] ըստ [իրենց] առաքինի վարքի չքնաղ և բարձրագույն հատուցումն անսպառ հավիտենականության մեջ, այլև, որ հենց այստեղ, այս աշխարհում, առաջուց այս անցավոր կյանքում մատյանի մեջ պատմել տալով [նրանց մասին]՝ երկնաբարձ կերպով պայծառացնի [նրանց], որպեսզի [նրանք] ընդհանրապես և՛ հոգևոր, և՛ մարմնավոր փայլով փայլեն։

Եվ Մովսիսական պատմության մեջ[5] հայտնի է երանելի մարդկանց ազնվությունը, [նրանց] ճշմարիտ հավատքի հաստատությունը, աստվածամերձ, աստվածամոտ կյանքի վայելչությունը), սքանչելի կյանքի պայծառությունը։ Որովհետև մեկն ընդունելի զոհաբերությամբ արդար է կոչվել[6]. մեկ ուրիշն [իր] հաճելի գործով, չնայելով ամենակուլ մահվան, կենդանի է մնացել[7], մի երրորդն էլ [իր] կատարյալ արդարությամբ՝ համատարած լեռնացած, աստվածապատիժ ծովի վրա՝ բոլոր շնչավորների հետ միասին՝ մեկ տարի ժամանակով նավի մեջ մնալով՝ պահվել է[8]։ Մի չորրորդն էլ [իր] հանկարծագյուտ հավատով արդարացել է, դարձել է աստվածամերձ, աստվածախոս, դաշնակից և ժառանգել է գալիք բարիքների խոստումը[9]։ Շատ բաներով աստվածածանոթ են գտնվել և ուրիշ այսպիսիները, որոնց ազնվությունների մասին պատմում են բոլոր աստվածային գրքերը։*

*Ասածներիս նման՝ երանելի Պողոս[10] «Առ Եբրայեցիսն» [թղթի մեջ] անունները տալով՝ գովում է այդպիսիների ճշմարիտ հավատքը, որով՝ յուրաքանչյուրն իր առաջադիմության համեմատ՝ վարձատրական մխիթարություն է ընդունել ամեն ինչ պարգևող աստծուց։ Նա օրինակ է բերում նաև չարագործ Րահաբի[11] հյուրընկալությունը [որ սա արել էր] լրտեսներին։ Իսկ երբ [նա] տեսնում է [այդպիսիների] խուռն բազմությունը, իսկապես քչերի անուններն է հայտնում, ուրիշներինը զանց է անում, ժամանակն անբավական [համարելով ամենը] կարգով պատմելու համար։ Այնուհետև [նա] ընդհանուր կերպով նշանակում է [այդպիսիների] գլխին եկած փորձություններն և նրանց նահատակություններն** առանց դիմադրելու, որ և ավելի պատվական է համարում, քան աշխարհիս ապրանքները։*

Այսպես և բոլոր հոգեպատում գրքերը նշանակած ունեն բոլոր գործակալների քաջությունները. ոմանց բարեհաղթությունն ըստ աստվածային կրոնքի, և ոմանց արիությունները մարտերի ու պատերազմների

*) Այսինքն՝ վայելուչ կյանքը։

**) Նահատակություն— մարտիրոսություն։

մեջ ըստ աշխարհական կարգի, ինչպես Ներսովթինը[12], Սամսոնինը[13] և Դավթինը[14]։ Մի քանիսին էլ գովում են բնական իմաստությունն աստվածային իմաստությամբ հանդերձ, ինչպես Հովսեփինը՝[15] Եգիպտոսում և Դանիելինը՝[16] Բաբելոնում[17]։ Նրանց մեջ կային և հզոր թագավորների խրատատուներ, [որոնք] աշխարհական կյանքի հանգամանքներն էին ցույց տալիս, միաժամանակ և ծանոթություն էին տալիս ամենքի իշխան աստծու մասին։ Մարգարեն հենց այդպիսիների իմաստությունը գովելով՝ ասում է մեկին այսպես. «Մի՞թե ավելի իմաստուն ես, քան Դանիելը. կամ իմաստուն խրատատուննե՞ր են խրատել քեզ իրենց խելքով»[18]։ Եվ ոչ այսչափ միայն, այլև գովում է սրբերի զորությունը՝ պատգամավոր ուղարկելով հրեշտակներին, որոնք հայտարարելով Դանիելին ցանկալի էին կոչում, և սուրբ Տիրամորը Գալիլեայում՝ կանանց մեջ օրհնյալ[19]։

Բայց ի՞նչ ասենք այն գովասանքի համար, որով միմյանց պատմում էին ընկերները, որոնց ազնվությունների մասին ամենի Տերն ինքը բերանալիր գոչում էր, հրեշտակների և մարդկանց առաջ ցույց տալիս ոչ միայն նրանց հայտնի գործերի, այլև ծածուկ սրտերի լուսավորությունները*։ Ինչպես՝ եկած հրեշտակների միջոցով հայտնեց հյուրամեծար Աբրահամի[20] ծառայական սրտակցությունը, ստացած խոստումներից հետո պատմեց նրան՝ ինչ որ Սոդոմում[21] գործվելու էր։ Նույնպես և քաջ նահատակ Հոբի գովքն է անում նախքան պատերազմելը՝ պատերազմականի** առաջ ասելով. «Ճշմարիտ, արդար մարդ, աստվածապաշտ և ամեն չար գործերից հեռու»[22]։ Իսկ մեծ Մովսեսի աստվածամուխ մերձավորությունը հռչակել է ամեն եկեղեցական գրքերով. աստվածային ավանդությունը նրա մանկական կայտառությունն էլ է հայտնել. նաև այլազգի Հոբորի[23] խրատն էլ չգրած չի թողել։

Եվ այսպես աստվածագիր ավանդությամբ փայլում են բարեգործությունները բոլոր բարեպաշտ ճարտարների, որոնց ամենքի երանելի անունները ոչ որ չի կարող հիշատակել։ Եվ ոչ միայն առաջագուններին, այլև աստծու միածին[24] որդուց, ամենքի փրկչից հետո եկողների ազնվությունները ծաղկեցնում է, նույնիսկ երանությամբ[25] պսակում է իր լուսաբեր ավետարանի մեջ ոչ միայն սեփական աստաներկուսին[26] և կամ առաջընթաց Կարապետին[27], այլև գովում է ուրիշ մոտեցողների հա-

*) Երևի, նշանակում է՝ մտքերի գաղտնի խորհուրդները, գաղտնի մտածությունները։

**) Սատանայի առաջ։

վատքի ճշմարտությունը։ Այսպես՝ Նաթանայելի մասին հայտնում է, թե առանց նենգության է[28], և թագավորազնի հավատքի մեծությունն, ասում է, չի գտնվիլ Իսրայելի մեջ[29]։ Բայց ոչ միայն մեծամեծ բաները, այլ ավելի ևս փոքրները բարձր կերպով [գովում է] անարգամեծար Քրիստոսը, որ հարգում է յուղի մի փիչ բանեցնելը և [ասում է, թե] բանեցնողների հիշատակը կպատմեն ամեն տեղ երկնքի տակ[30]։ Եվ քանանացի կնոջ հավատքի մասին ասում է, թե մեծ է[31]. նաև ընծայած երկու դանկի ձգողների հոժարությունն ավելի է գովում, քան մեծերինը[32]։

Իսկ Պողոսին, որ մտքումը դրել էր շրջեցնել քրիստոսագիր կարգերի պայծառությունը, անվանում է ընտիր անոթ և դարձնում է իր սքանչելի անվան կրողն աշխարհում[33]։ Ուստի երանելին նայելով իր և բոլոր սրբերի հավատքի համար [տրված] շնորհքի բարձրությանը՝ բարձրաձայն փառավորել է սկսում [ասելով], թե «Աստծու շնորհքը, որ ամեն բանի մեջ հռչակում է մեր մասին Քրիստոսով և իր գիտության հոտն ամեն տեղ հայտնում է մեզնով»[34]։ Ապա վրա է բերում ավելի համարձակ, թե «Ո՞վ կարող է բիծ դնել աստծու ընտրյալներին»[35]։ Եվ երանելի առաքյալները Տիրոջից էին ստացել այս թույլտվությունը՝ իրենց բոլոր գործակիցների առաքինությունները գրով նշանակելու։ [Նրանցից] մի քանիսինը [կարելի է] տեսնել սուրբ Ավետարանի մեջ, մի քանիսինն էլ երանելի Ղուկասի գրած «Գործք Առաքելոց»[36] մատյանի մեջ. կան էլ, որ առաքյալների «Կաթուղիկե»[37] [թղթերի] մեջ են ավելի լավ երևում։

Իսկ սուրբ Պողոսը տասնուչորս թղթերով պատմում է իր առաքելակիցների ու գործակիցների մասին և իր ուրախակիցներն է դարձնում [նրանց], և թղթերի վերջում յուրաքանչյուրին ողջույն է տալիս, անվանե—անուն հարցնում է [նրանց մասին], մեկի գովասանքն էլ Ավետարանից է անում։ Բայց ոչ միայն երանելիի օգնություններն է հարգում, այլև իր քրիստոսամեծար հյուրընկալներին՝ [նրանց արած] մեծարանքի համար՝ շատ գովեստներ է տալիս, որա համար, աղաչանքով դիմելով աստծուն՝ խնդրում է [արած] բարիքների փոխարենը հատուցել [նրանց]։ Եվ բոլոր ժողովարաններում հնչեցնում է ընտրյալների ազնվությունը, ոչ միայն տղամարդկանց, այլև աշակերտած կանանց, որոնք Ավետարանի ճշմարտությունն են քարոզում։

Եվ այս ամենը [նա] հռչակել է ոչ թե գովքի ու պարծանքի համար, այլ որպեսզի օրինակ ու կանոն ծառայի հետո եկողներին։ Որպեսզի ամենքը նախանձավոր լինեն նման բարի գործերի[38], ստիպում է ասելով, թե «Հետևեցեք սիրո, և ամենքը պիտի նախանձավոր լինեն հոգևոր

բաների»[39]։ Աքայեցիների հոժարությունը սրբերին ծառայելու՝ Մակեդոնիայում պատմելով՝ նախանձեցնելով հորդորում է.[40] այլև նույնիսկ թույլ է տալիս անխափան [նախանձել] բարիքների առաքինությանն՝ ասելով, թե «լավ է ամեն ժամանակ նախանձել բարիներին»[41]։ Այլև ստիպում է նմանող լինել իրեն և Տիրոջը։

Դարձյալ՝ ամենքի հետ միասին չանում է Քրիստոսի օրինակով կյանք վարել։ «Նայեցե՛ք, ասում է, հավատքի զորագլխին և կատարիչ Քրիստոսին»[42]։ Եվ դարձյալ, թե՝ «Հիշեցեք ձեր առաջնորդներին, որոնք աստծու խոսքը խոսեցին. նրանց վարք ու բարքին նայելով՝ նմանող եղեք [նրանց] հավատքին»[43]։ Եվ ընդհանրապես, թե՝ «Այս պիտի խորհի ձեզնից ամեն մեկը, որ [հավատում է] Քրիստոս Հիսուսին»[44]։ Այսպես և Ղուկասն է դնում «Առաքյալների գործք» մատյանի սկզբում։ Իսկ Տիրոջ եղբայր ցանկալի Հակոբոսը, սրբերի նույնիսկ ամբողջ գունդը սրբասեր Տիրոջ հետ միասին օրինակ առնելով, ասում է իր թղթի մեջ՝ թե «Չարչարանքի և երկայնմտության օրինակ առեք մարգարեներին, որոնք Տիրոջ անունով խոսեցին. Հորի համբերությունը լսեցիք և Տիրոջ վախճանը տեսաք»[45]։

Ասածներիցս այսուհետև հայտնի է, որ Տիրոջից է բոլոր աստվածասեր ընտրյալների գովքը. ո՛րը հրեշտակներից, ո՛րը միմյանցից, ոչ թե նրանց պարծանքի համար, այլ իրար նախանձ շարժելու, որպեսզի միմյանցով քաջալերված՝ հասնենք բարիքների կատարման, երանելի Պողոսի նշանակած նպատակին, թե՝ «Պիտի միասին հասնել Քրիստոսի հասակի չափին», որի ազատությունը երկնքումն է, սպասել փրկչին[46], մեծ աստծուն։

Ունենք նաև առաքյալներից հետո եկող կանոնական[47], շնորհապատում գրվածքները, թե ի՞նչպես՝ իրենց ճշմարիտ հավատքի և ավետարանական կենցաղավարության համար՝ միմյանցից մեծարվում ու գովվում էին, [և] մինչև այսօրվա օրը նույն սովորությամբ են վարվում։

Եվ այսպես ուրեմն՝ երկուսից էլ[48] թույլտվություն ենք ստացել նաև արդար մարդու*) վարքը գրի առնելու։

Արդ, այսուհետև և [մեր] խոստացածն առաջ կբերվի, և մեր կարողացած չափով՝ կգրվի, մեծարվելով գլուխ կգա հոր [վարքը][49], և նրանց**) տված քաղցր հրամանը զարդարուն կերպով կկատարվի։

*) Այսինքն՝ Մաշթոցի։

**) Այսինքն՝ կաթողիկոսական տեղակալ Հովսեփի և Մաշտոցի մյուս աշակերտների, որոնց մասին հիշում է սկզբում [Ա] հատվածի մեջ։

[Գ]

Մաշթոց էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու։ Նա Տարոն[50] գավառից էր, Հացեկաց գյուղից[51], Վարդան անունով երանելի մարդու որդին։ Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, [ապա] եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը[52], կացել էր արքունի դիվանատունը, դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության[53] ժամանակ։ Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին։ Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում։

[Դ]

Եվ դրանից հետո նա՝ ըստ ավետարանական կանոնի, դարձավ մարդասեր աստծու ծառայությանը, այնուհետև մերկացավ [իրենից] իշխանական ցանկությունները և պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկավ ամենակեցույց խաչվածի հետևից։ Եվ [հավատքի] հրամաններին հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ։ Շատ և տեսակ-տեսակ վշտակեցություններ կրեց ըստ Ավետարանին ամեն բանով. իրեն տալիս էր ամեն հոգևոր վարժությունների — միաձնության, լեռնակեցության, քաղցի ու ծարավի և բանջարաճաշակության, անլույս արգելարանների, խարազնագնաստ ու գետնատարած անկողինների։ Շատ անգամ էլ գիշերվա հեշտալի հանգիստն ու քնի հարկը ոտի վրա տքնությամբ վերջացնում էր մի ակնթարթում։ Եվ այս ամենն անում էր նա ոչ սակավ ժամանակ։ Եվ մի քանիսին ևս գտել, հարեցրել էր իրեն՝ աշակերտ դարձնելով նույն սովորական ավետարանությանը*)։

Եվ այսպես նա կամայական քաջությամբ տանելով բոլոր վրա հասած փորձությունները և պայծառանալով՝ ծանոթ և հաճելի էր դարձել աստծուն և մարդկանց։

*) Ավետարանություն—ավետարանի քարոզություն, ավետարանի ուսում։

[Ը]

Երանելին այնուհետև իր հավատացյալներին) առավ, գնաց իջավ Գողթնի[54] անկարգ ու անխնամ [թողած] տեղերը։ Նրա առաջ դուրս եկավ նաև Գողթնի իշխանը, մի աստվածավախ և աստվածասեր մարդ, որի անունը Շարիթ էր և հյուրամեծար ասպնջական**) հանդիսանալով՝ բարեպաշտությամբ սպասավորում էր [նրան] Քրիստոսի հավատքի աշակերտների [կարգի] համաձայն։ Իսկ երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց [քարոզել] գավառում. ամենքին իրենց հայրենական ավանդություններից ու սատանայական դիվապաշտ ծառայություններից գերեց, շուռ տվեց Քրիստոսի հնազանդությանը։*

*Եվ երբ նրանց մեջ սերմանեց կյանքի խոսքը, հայտնապես մեծամեծ հրաշքներ երևացին գավառի բնակիչներին. դևերը զանազան կերպարանքներով փախան, ընկան Մարերի կողմերը[55]։ Նա մտքում դրեց ավելի հոգալ նույնպես համայն աշխարհի***) ժողովրդին մխիթարելու մասին, [ուստի] և ավելացրեց մշտամռունչ աղոթքն ու բազկատարած պաղատանքն առ աստված և անդադար արտասուքը, մտաբերելով առաքյալի խոսքը. և ասում էր հոգալով. «Տրտմություն է ինձ համար, և անպակաս են իմ սրտի ցավերն իմ եղբայրների և ազգակիցների համար»[56]։*

Եվ այնպես տրտմական հոգսերով պաշարված ու թակարդապատված և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի՞ ելք գտնի այդ բանի համար։

[Չ]

Եվ շատ օրեր հենց այնտեղ նույն [խնդրով] զբաղվելուց հետո՝ վեր կացավ այնուհետև [եկավ], հասավ Մեծ Հայաստանի սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը Սահակ[57] էր, որին և պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ։ Եվ նրանք միասին սիրով մեկտեղ գալով՝ առավոտը կանուխ մեծ աղոթքներով աստծուն [էին դիմում], որպեսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկությունը։ Եվ այդ անում էին շատ օրեր։

---

* *Այսինքն՝ իր հավատացյալ աշակերտներին։*

**) *Ասպնջական—հյուրընկալ։*

***) *Հասկանալի է Հայոց աշխարհի, Հայաստանի։*

Ապա ամենաբարի աստծուց պարգևվեց նրանց՝ երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհուրդը ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել։*

Շատ հարցուփորձով ու որոնումով պարապեցին և շատ նեղություններ կրեցին. հետո և իրենց առաջուց ուզած բանի մասին իմաց տվին Հայոց թագավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում։

Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու, Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գրել է հայերեն լեզվի այփաբետներ — նշանագրեր։ Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գրածի[58] մասին, արքային հոժարեցրին, որ հոգ տանի այն պիտույքի համար։ Նա էլ Վահրիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր։

Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքային Հայոց երկիրը։ Նրա թագավորության հինգերորդ[59] տարում հասցրեց նրան [նշանագրերը], իսկ արքան՝ սուրբ Սահակի և Մաշթոցի հետ միասին՝ նշանագրերն ստանալով Հաբելից՝ ուրախացան։

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբանները — կապերն ամբողջությամբ արտահայտելու համար,— մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից քաղված և հարություն առած հանդիպեցին,— ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան։

[Է]

Դրա համար երանելի Մաշթոցը՝ արքայի հրամանով և սուրբ Սահակի համաձայնությամբ՝ մի խումբ մանուկներ առավ հետը և, սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո, ճանապարհ ընկավ, գնաց Հայոց արքա Վռամշապուհի հինգերորդ տարում. և գնաց, հասավ Արամի[60] կողմերը, ասորոց երկու քաղաքները, որոնց առաջինը Եդեսիա[61] է կոչվում և երկրորդի անունն է Ամիդ[62]։ Ներկայացավ սուրբ եպիսկոպոսներին, որոնց առաջինի անունը Բարիլաս[63] էր և երկրորդինը՝ Ակակիոս։ [Նրանք] կղերականների և քաղաքների) իշխանների հետ միասին հանդիպեցին և շատ մեծարանքներ ցույց տալով հասնողնե-*

---

*) *Այսինքն՝ վանական, կրոնավոր դարձած միաբաններին։*

րին՝ ընդունեցին հոգ տանելով [նրանց համար] քրիստոնյաների կարգի համաձայն։

Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին երկու (խմբի) բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց [Եդեսիա քաղաքում][64] և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ այնտեղից ուղարկեց Սամոսատական քաղաքը[65]։

[Ը]

Եվ նա իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքներն ու տրքնությունները և արտասվալից պաղատանքները, խստամբերությունները, աշխարհահեծ հոգսերը, հիշելով մարգարեի ասածը, թե՝ «երբ որ հեծեծես, այն ժամանակ կապրես»[66]։

Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար։ Ամեն բան շնորհող աստծուց իսկապես պարգևվեց նրան [այդ] բախտը. նա իր սուրբ աչով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ—հայերեն լեզվի նշանագրեր։ Եվ այնտեղ**) շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց[67], հորինեց սիղոբաներով—կապերով[68]։

Եվ ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսին[69], իր օգնականների հետ միասին իջավ Սամոսատ քաղաքը, ուր մեծապատիվ կերպով մեծարվեց եպիսկոպոսից և եկեղեցուց։

Եվ հենց այնտեղ, նույն քաղաքում գտավ հելլենական դպրության մի գրագիր, Հռոփանոս անունով, որի ձեռով նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը[70], կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո՝[71] ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու, իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հովհան էր, Եկեղյաց գավառից[72] և երկրորդինը՝ Հովսեփ, Պաղանական տնից[73]։ Եվ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից[74], որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության, ասելով, թե՝ «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»***), որ և գրվեց այն գրագրի ձեռով. միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրագիրներ [պատրաստելով] նույն դպրության համար։

*) Հասկանալի է՝ յուրաքանչյուրն իր քաղաքի, քանի որ եպիսկոպոսներից մեկն Ամիդում է հանդիպել, մյուսը՝ Եդեսիայում։

**) Այսինքն՝ Եդեսիայում։

***) «Ճանաչել իմաստություն ու խրատ, իմանալ հանճարի խոսքերը»։

[Թ]

Ապա դրանից հետո թղթեր առավ քաղաքի եպիսկոպոսից և, բոլոր իրայիններով հրաժեշտ տալով նրանց, բերեց ասորոց եպիսկոպոսին։ Աստվածատուր նշանագրերը ներկայացրեց նրանց, որոնցից սկզբում ընդունվել էր։ Դրա համար սուրբ եպիսկոպոսներից և բոլոր եկեղեցիներից շատ գովաբանություններ բարձրացան ի փառս աստուծո և ի մխիթարություն աշակերտածների։ Նրանցից բաժանվեց այնուհետև և ավետագրեր առնելով շնորհատուր* պարգևներով և բոլոր իրայիններով աստուծո շնորհիվ ճանապարհ ընկավ, օթևաններ անցավ, աջողությամբ ու հոգելից ուրախությամբ եկավ, հասավ Հայաստան աշխարհը, Այրարատյան գավառի կողմերը, Նոր Քաղաքի[75] սահմանների մոտ, Մեծ Հայաստանի արքա Վռամշապուհի վեցերորդ տարում[76]։

Մեծ Մովսեսն էլ այնպես ուրախ չէր Սինա լեռնից[77] իջնելու ժամանակ. չենք ասում, թե ավելի (ուրախ էր, այլ նույնիսկ) շատ պակաս [ուրախ էր]։ Որովհետև աստվածատես մարդն աստվածագիր հրամանն աստծուց առած և իր բազուկների վրա [բռնած] իջնում էր լեռնից, բայց նա [տխուր էր] չարագործ ժողովրդի պատճառով, որ թիկունքը դեպի տերունիքը**) [դարձրած] և գետին կործանված, տիրադրուժներ [եղած] իրենց ձուլածո կուռքին էին երկրպագում և նրա***) հրամանաբերին, սիրտը կոտրելով, սրտառուչ լացացրին.— որովհետև տախտակները ջարդելուց ակնհայտ երևում է բերողի թախծությունը։ Իսկ այս երանելին, որի մասին են հորինվում իմ այս ճառերը, չեղավ այնպես, ինչպես այնտեղ կատարվեց. այլ նա ինքն իր հոգևոր մխիթարությամբ լցված՝ գիտեր ընդունողների հոժարությունը, և ընդունողների ուրախության հուսով [լցված լինելուց] ճանապարհների կայաններն ավետաբեր էին [նրա համար][78]։

Բայց ոչ ոք թող մեզ հանդուգն չհամարի ասածներիս համար, թե ինչպես մի շատ խոնարհ մարդու նմանեցնելով հավասարեցրեց մեծ Մովսեսին, աստվածախոսին, սքանչելագործին. որով թերևս մեղա-

*) Աստուծու շնորհքով տրված պարգևներով, այսինքն նշանագրերով։

**) Տիրունիք—տիրոջը, այսինքն աստծուն վերաբերյալ սրբազան բաները։

***) Այսինքն՝ աստծուն։

դրվենք։ Բայց կարող ենք [այդ անել] ավելի ևս հավատով, որովհետև ոչ մի հարկ էլ չկա՝ հայտնի և անհայտ բաներով խոտել աստվածայինը, քանի որ մեկ ամենազոր աստծու շնորհքն է մատակարարվում բոլոր հողածին մարդկանց։

Եվ արդ, երբ հիշելին*) եկավ, մոտեցավ թագավորական քաղաքին, իմաց տվեցին թագավորին և սուրբ եպիսկոպոսին։ Նրանք նախարարագունդ ավագանու բոլոր բազմությունն առնելով՝ քաղաքից դուրս եկան, Ռահ[79] գետի ափին դիմավորեցին երանելիին։ Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո՝ այնտեղից ցնծության ձայներով և հոգևոր երգերով ու բարձրաձայն օրհնություններով ետ դարձան քաղաքը, և տոնական ուրախությամբ անց կացրին օրերը։

[Ժ]

Ապա երանելի հոգաբարձուներն [իրենց] հանկարծագյուտ ուզածն առնելով՝ նախ խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել։ Եվ երբ նրանցից շատերը սովորեցին, ապա [թագավորը՝] հրամայեց ամեն տեղ նույն [նշանագրերով] կրթել, որով և երանելին*) հասավ նույնիսկ վարդապետական**) գեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ։

Եվ այնպես հանգամանորեն խորամուխ եղան նրանք օրենքների ու պատգամների մեջ, որ մինչև անգամ բոլորովին դուրս եկան իրենց ազգակցությունից***)։

[ԺԱ]

Եվ այնուհետև աստվածային գործի մշակությունն անելով՝ սկսեցին ավետարանական արվեստը — թարգմանել, գրել****) և սովորեցնել. մանավանդ որ աչքի առաջ ունեին Տիրոջ տված բարձր հրամանները, ավանդված աստվածային բարձր պատգամները, որը տրվել էին երանելի Մովսեսին բոլոր եղած բաների մասին — մատյանի մեջ գրել գալիք հավիտենականությանը պահելու համար, այլև ուրիշ մարգարեներին տրված նույնպիսի հրամանները։ «Ա՛ռ, ասում է, նոր մեծ քարտ և նրա վրա գրի՛ր դպրի*) գրչով»[80]։ Եվ ուրիշ տեղ, թե՝ «Գրի՛ր այդ տեսիլը տախտակի վրա և հաստատի՛ր գրքի մեջ»[81]։ Իսկ Դավիթն ավելի ևս հայտնի կերպով ցույց է տալիս, որ աստվածատուր օրենքը պիտի վիճակվի բոլոր ազգերին, ասելով, թե՝ «Պիտի գրվի ուրիշ ազգի համար»[82], և թե՝ «Տերը գրքով պիտի պատմի ժողովուրդներին»[83]. որ եկավ, լրացրեց ամենափրկիչ Քրիստոսն իր շնորհատուր հրամանով, թե՝ «Ելե՛ք բոլոր ազգերի մեջ»[84], և թե՝ «Այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ տիեզերքում»[85]։ Ուստի և մեր երանելի հայրերը**) թույլտվություն ստանալով՝ իրենց մշակությունը հուսալից ջանքով դարձրին երևելի և արդյունաբեր ըստ Ավետարանին։

Այն ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ, մթանգամից եկան հասան, հայաբարբառ, հայերենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին։

Ի՜նչ սրտալիր ուրախություն էր այնտեղ այնուհետև, և ի՜նչ հաճելի տեսարան աչքի համար։ Որովհետև մի երկիր, որ անունն անգամ չէր լսել այն կողմերի, ուր բոլոր աստվածային սքանչելի գործերը կատարվեցին, շատ շուտով, իսկույն իմացավ բոլոր եղած բաները, ոչ միայն ժամանակով կատարվածները, այլև առաջագույն հավիտենականությունը***), և հետո եկածները, սկիզբը և վերջը, և բոլոր աստվածային ավանդությունները[86]։

[ԺԲ]

Իսկ երբ իրերի հաստատությունը փորձեցին, ապա ավելի համարձակ և ավելի շատ էին ժողովում նորագյուտ ուսման համար աշակերտներ՝ սովորեցնելու, կրթելու և անգետ մարդկանց քարոզելու համար պատրաստելու։ Նրանք իրենք էլ հենց Հայաստան աշխարհի զանազան կողմերից ու գավառներից բազմությամբ վեր կենում, գալիս հասնում էին աստվածային գիտության բացված աղբյուրը։ Որովհետև Այրարատ-

*) Հիշելին—հիշվելու արժանին, այսինքն Մաշտոցը։

**) Այսինքն՝ ուսուցչական։ Վարդապետ—ուսուցիչ։ Վարդապետություն—ուսում, ուսուցչություն, այլ և՝ քարոզություն։

***) Այսինքն՝ այլևս նման չէին իրենց բնիկ ազգակիցներին։

****) Այսինքն՝ արտագրել՝ թարգմանած գրքերը բազմացնելու համար։

*) Դպիր—գրել-կարդալ իմացող, գրագիր։ Դրանից՝ դպրություն—գրագիտություն, գիր ու գրականություն։

**) Սահակն ու Մաշտոցը։

***) Այսինքն՝ աշխարհարարությունից առաջ եղածը, դրանից հետո եղած բաները, աշխարհի սկիզբը և վերջն [ըստ Աստվածաշնչի]։

յան գավառում, թագավորների ու քահանայապետերի նստավայրում*) բխեց հայերի համար աստծու պատվիրանների շնորհքը։ Այստեղ պետք է հիշել և մարգարեի խոսքը, թե՝ «Աղբյուր կբխի այնտեղ, Դավթի տանը»[87]։

Եվ իսկապես՝ եկեղեցու սյուներն**) սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկել ճշմարտության աշակերտներին, գիտության մեջ կատարելության հասցվածներիս [խմբերը]՝ կարող [համարելով] ուրիշներին էլ սովորեցնելու։ Նրանց համար կանոն և օրինակ դրեցին իրենց վաստակը և պատվիրեցին նույն կանոնի մեջ մնալ։

Եվ իրենք աստվածային իմաստությամբ կրթեցին հենց այնտեղ իրենց մոտ եղած արքունիքը բոլոր ազատագունդ բանակի[88] հետ։ Երանելի Սահակն ուսման վարժությամբ զբաղեցնում էր ավելի Մամիկոնյան մարդկանց, որոնց առաջինի անունն էր Վարդան[89], որ և Վարդկան էր կոչվում։ Նույնպես և ամեն մարդու աշխատում էր նա կրթել, հասկացնել ճշմարտության գիտությունը։

[ԺԳ]

Դրանից հետո երանելի Մաշթոցը համաձայնություն ստացավ, որ տեր Եպիսկոպոսը[90] կայենականների[91] մեջ***), իսկ ինքը հեթանոսների սփյուռքում[92] սերմանեն կյանքի խոսքը։ Եվ բաժանվեց նրանցից****) իր օգնականների հետ, որոնց առաջինի անունը Տիրայր էր, Խորձենական գավառից[93], և երկրորդի անունը՝ Մուշե, Տարոնի նահանգից, որոնք սուրբ և աչքաբաց [մարդիկ] էին, այլև Ավետարանի ուրիշ սպասավորների հետ, որ չեմ կարող անուններով նշանակել։ Երանելին նրանց հետ միասին հանձնվելով աստծու շնորհքին՝ գնաց իջավ Գողթնի Ռոտաստակը[94], իր առաջվա դաստակերտը։ Եվ իր մշտական սովորությամբ իր վարդապետությունը բանեցնելով այնտեղ՝ բարեպաշտ Շաբաթի ընկերությամբ գավառը լիացրեց Քրիստոսի ավետարանի ողջույնով և գավառի բոլոր գյուղերում կարգեց սուրբ վանականների դասեր։ Նրա մոտ եկավ հասավ և հայրաբարո Գիտը, քրիստոսասեր մարդ Շաբաթի որդին, [որ] ինչպես մի որդի, մի որդու հավասար, շատ ծառայություն էր անում վարդապետին։

*) Նոր քաղաքում, Վաղարշապատում։
**) Սահակն ու Մաշթոցը։
***) Այսինքն՝ արքունի ղորակայաններում եղողների մեջ։
****) Այսինքն՝ Սահակ կաթողիկոսից, Վռամշապուհ թագավորից։

[ԺԴ]

Այն ժամանակ թագավորից շուտով հրաման առավ՝ սկսելու [սովորեցնել] Մարաց[95] խուժադուժ կողմերը, որոնք դժվար մատչելի էին ոչ միայն իրենց դիվական, սատանայակիր, ճիվաղական քարքի, այլև խեցբեկագույն և կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով։ Ջեռք զարնելով և նրանց շատ տարիների ծնունդներին կոկելու՝ դարձրին [նրանց] պարզախոս, հռետորաբան, կրթված, աստվածատուր իմաստությանը ծանոթ[96]։

[ԺԵ]

Ապա դրանից հետո ելավ սահմանակից Սյունական աշխարհը[97]։ Այնտեղ էլ աստվածասեր հնազանդությամբ ընդունեց նրան Սյունիքի իշխանը, որի անունը Վաղինակ էր։ [Մաշթոցն] իր առաջադրած գործի համար շատ օգնություն գտավ նրանից, այնպես որ պտտեց, վերահասու եղավ Սյունիքի բոլոր կողմերում։ Եվ սովորեցնելու համար մանուկներ ժողովեց, ավելի գազանամիտ, վայրենի, ճիվաղաբարո կողմերինը, և այնքան հոգ տարավ, դաստիարակի պես կրթեց, խրատեց, որ մինչև անգամ հենց այն վայրենիներից կարգեցին Սյունիքի եկեղեցու համար եպիսկոպոս-տեսուչ[98], որի անունն էր Անանիաս, մի սուրբ ու երևելի [և] եկեղեցու ժառանգավորների[99] համար հայրաբարո մարդ։ Ապա Սյունյաց երկիրն էլ լցրեց վանականների դասերով։

Այն ժամանակ առտված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը[100], խելացի ու հանճարեղ և կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ։ Նա շատ նպաստեց Ավետարանի քարոզության գործին։ Նա ինչպես որդին հորը՝ հնազանդություն ցույց տալով և Ավետարանին վայել կերպով ծառայելով՝ մինչև վերջը գործադրում էր նրա հրամայածները։

[ԺԶ]

Դարձյալ՝ մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո՝ Քրիստոսի սիրելին մտածեց հոգ տանել նաև բարբարոսական կողմի համար։ Եվ սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրա-

ցերեն լեզվի համար։ Գրեց, դասավորեց և օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագուններին հետն առավ, վեր կացավ գնաց, իջավ Վրաց կողմերը։ Եվ գնաց, ներկայացավ թագավորին, որի անունը Բակուր էր, և աշխարհի եպիսկոպոսին, [անունը]՝ Մովսես։ Եվ թագավորն ու ազնվականները, բոլոր գավառներով միասին, շատ անսացին նրան ըստ աստվածային օրենքի։

Եվ նա իր արվեստն առաջարկելով՝ խրատեց, հորդորեց նրանց, և այն ժամանակ ամենքը հանձն առան նրա ուզածը կատարել։ Եվ վրացերեն լեզվի մի թարգմանիչ գտավ, որ անվանվում էր Ջաղա, մի գրագետ և ճշմարտահավատ մարդ. այնուհետև Վրաց արքան հրամայեց իր իշխանության զանազան կողմերից և խառնաղանջ գավառներից մանուկներ ժողովել և տալ վարդապետի ձեռքը։ [Նա էլ] նրան առավ, ուսման բովի մեջ ձգեց և հոգևոր սիրով ու եռանդով ի բաց քերեց [նրանցից] դևերի ու սնոտի կուռքերի պաշտամունքի շարավահոտ աղտն ու ժանգը, այնքան անջատեց հեռացրեց [նրանց] իրենց հայրենի [ավանդություններից] և անհիշող դարձրեց, որ մինչև անգամ ասում էին, թե՝ «Մոռացա իմ ժողովուրդն և իմ հոր տունը»[101]։

Եվ արդ՝ նրանց, որ այնքան առանձին և բաժանված լեզուներից ժողովվեցին, մեկ աստվածային պատգամներով կապեց, դարձրեց մե՛կ ազգ, մե՛կ աստծու փառաբանիչներ։ Նրանցից գտնվեցին և եպիսկոպոսական կարգին, վիճակին բարձրացած արժանավորներ[102], որոնց առաջինը, Սամուել անունով մի սուրբ և բարեպաշտ մարդ, եղավ արքունի տան եպիսկոպոս։

Իսկ երբ Վրաստանի բոլոր կողմերում կարգի դրեց աստվածապաշտության գործը, այնուհետև բաժանվելով նրանցից՝ վերադարձավ Հայոց երկիրը և հանդիպելով Հայոց Սահակ կաթողիկոսին՝ պատմեց նրան բոլոր հաղելությունների մասին, [և] միասին փառավորեցին աստծուն, մեծանուն Քրիստոսին։

[ԺԷ]

Ապա դարձյալ դուրս եկավ, շրջեց [իր] կարգած տեղերը և Հայոց աշխարհի աշակերտած գավառները՝ ղորացնելու, նորոգելու և հաստատելու համար։ Եվ երբ բոլոր տեղերն այնպես լիացրեց Տիրոջ սուրբ ավետարանով և ամենքին զգուշացրեց, որ կենաց ճանապարհով ընթանան, այնուհետև մտածեց Հայոց կես ազգի համար, որ Հռոմների թագավորի իշխանության տակ էր[103]։

Եվ շտապեց, շատ աշակերտների հետ գնաց Հունական կողմերն

անցնելու։ Եվ իր բարի գործերի մեծ համբավի համար, որ առաջուց այնտեղ նրա մասին հռչակված էր հյուսիսային կողմերից[104], [նա այնտեղ] մտնելու ճանապարհի հենց սկզբից մեծ մտերմությամբ ընտանեբար պատիվ ստացավ աշխարհի եպիսկոպոսներից և իշխաններից ու գավառացիներից, մանավանդ աշխարհի սպարապետից, որ անվանվում էր Անատոլիոս։ Սա [Մաշթոցի] մտադրած բանը գրով հայտնեց կայսրին, որի անունը Թեոդոս էր[105] կոչվում, Արկադ[106] կայսրի որդին, որից և հրաման դուրս եկավ, որ վայել մեծարանքով Ակումիտ*) անունով կոչեն սրբին։

Իսկ նա իր աշակերտների բազմությունը տարավ Մելիտինե քաղաքը[107], հանձնեց քաղաքի սուրբ եպիսկոպոսին, որ Ակակիոս էր կոչվում, և աշակերտների համար գլխավոր թողեց նրան, որ Ղևոնդեոս էին կոչում, մի հավատարիմ և ճշմարտապաշտ մարդու։ Եվ [ապա] երանելին հետն առավ Դերջանի[108] պատվական եպիսկոպոսին, որի անունը Գինթ էր, և այնտեղի աշակերտներից քչերին, և նստելով հանրային անդրուարը**) և շատ պատիվ գտնելով՝ հասան թագավորանիստ Կոստանդինական***) քաղաքը։ Նրա մասին իսկույն պատմեցին արքունիքում, և նա պատվական աթոռի առաջ մտնելով՝ ներկայացավ աստվածակարգ թագավորներին****) և աշխարհամուտ դռան հայրապետ սուրբ կաթողիկոսին, որի անունն Ատտիկոս էր, և շնորհք գտավ նրանցից*****)։ Հրամայվեց՝ մի որոշ ժամանակ այնտեղ, տիեզերական քաղաքում մեծարել [նրանց] եկեղեցուց, արքունիքից և քաղաքի պատվական իշխաններից կարգված ապրուստով։

Եվ ապա զատիկն անելուց հետո՝ կայսրին բացատրեց նա պիտույքի հանգամանքները և անընդդիմանալի հրաման առավ՝ կայսերագիր դրոշմած սակերներով[110] հայոց կես ազգից սովորեցնելու նպատակով մանուկներ ժողովելու համար, բարբարիանոսների[111] ժանտագործ ազանդի վերաբերյալ ու եկեղեցու հաստատության, ինչպես և մեծամեծ պարգևներով [նրան] պատվելու մասին։ Արդարև այդ մասին համաձայնեցրեց պալատականներին, ինքը ոչ մի բան չառնելով՝ [ամեն ինչ] թողեց։ Եվ երկրպագեց ծիրանափառ օգոստականներին[112] ու սուրբ կաթողիկոսին, [հրաժեշտի] ողջերի ընդունեց եկեղեցուց ու քաղաքի

*) Տքնող, անքուն հսկող, ինչպիսին էր Մաշթոցն իրև ճգնող։
**) Անդրուար, անդրուվար—սալլակաոք, պատգարակ։
***) Կոստանդնուպոլիս։
****) Այսինքն՝ թագավորին (կայսրին) և թագուհուն (կայսրուհուն)։
*****) Հաճելի եղավ նրանց։

երևելի իշխաններից, և բոլոր իրայիններով աջողությամբ նստեցին արքունիքից տրված դեսպակների ու կառքերի մեջ, և մեծ փառքով ու պատվով բռնեցին թագավորական ճանապարհները։ Եվ բոլոր քաղաքները դիմավորում էին, [և ամեն] քաղաքում երևելի էին հանդիսանում։

Եվ մեծամեծ պարգևներ ստանալով եկան, հասան ժամադիր կողմերը։ Եվ իսկույն լեթ հանդիպեցին Հայաստանի սպարապետին, կայսրի սակերներով ներկայացան [նրան]։ Եվ երբ նա ստացավ կայսերական դրոշմներով սակերները, շտապեց իսկույն հրամանը կատարելու։ Եվ այնուհետև պատգամավորներ ուղարկեց կայսրի իշխանության մեջ եղած հայոց կես ազգի գավառները՝ բազմաթիվ մանուկներ ժողովելու և նրանց թոշակ նշանակելու հարմարավոր տեղերում, ուր և երանելին իր ուսուցչությունը գործադրում և քաղցրացնում էր ժողովածներին։

Ապա դրանից հետո ձեռնարկեց նա անպատշաճ ու ծուռ բարբարիանոս աղանդը քննել։ Եվ երբ ոչ մի հնար չգտավ ուղղության բերելու, սկսեց թվշառացնող գավազանը գործադրել խիստ ծանր պատուհասներով — բանտերով, տանջանքներով, գելարաններով։ Իսկ երբ դրանով էլ փրկությունից զուրկ մնացին, [այն ժամանակ] ջարդ տվին, ապա խանձեցին, մրեցին ու պես-պես ձևերով խայտառակեցին և աշխարհից տուրս քշեցին։

Իսկ երանելին իր ուսուցչական գործն անելով՝ կարգի դրեց ու վերջացրեց։ Եվ եկեղեցու հայրերի[113] շատ շնորհագիր մատյաններ ձեռք բերելով՝ իր վարդապետության խորությունը ծովացնում էր և լիքը լցվում էր ամեն բարությունների։

Այն ժամանակ եկավ, հանդիպեց նրան մի երեց մարդ, ազգով՝ աղվան[114], անունը՝ Բենիամին։ Եվ նա*) հարցրեց ու քննեց աղվաներեն լեզվի բարբարոս խոսքերը, ապա վերուստ պարգևված իր սովորական կորովամտությամբ նշանագրեր հորինեց և Քրիստոսի շնորհքի աջողությամբ՝ կշռադատեց, կարգավորեց, հաստատեց։

Դրանից հետո բաժանվեց եպիսկոպոսներից, աշխարհի իշխաններից և բոլոր եկեղեցիներից։ Նրանց մոտ հավատացյալների համար վերակացուներ թողեց իր աշակերտներից երկուսին, որոնց առաջինի անունը Ենովք էր, և երկրորդինը՝ Դանան, կրոնավոր և ավետարանական սպասավորության մեջ առաջադեմ մարդիկ, որոնց հանձնարարելով աստուծու շնորհքին՝ հենց այնտեղ տեղավորեց։ Եվ ինքը շատ աշակերտներով եկավ, անցավ Մեծ Հայաստանի կողմերը և Նոր Քաղաքը

*) Մաշթոցը։

հասնելով՝ ներկայացավ սուրբ եպիսկոպոս Սահակին և հայոց թագավորին, որի անունն Արտաշես[115] էր, և բոլոր բանակին. և պատմեց նրանց այն կողմերում աստուծու շնորհքի աջողությամբ [կատարած] գործերը, մի քանի օր մնաց այնտեղ, հորդորեց [նրանց]՝ հոգևոր սեր սփռելու համար։

[ԺԸ]

Եվ ապա դրանից հետո մնաք բարով ասաց՝ Աղվանքի կողմերը գնալու համար։ Եվ գնաց, իջավ նրանց աշխարհը և հասնելով թագավորական տեղերը՝ տեսավ Աղվանների սուրբ եպիսկոպոսին, որի անունը Երեմիա էին ասում, և նրանց թագավորին, որի անունն Արսվաղ էր, որոնք և բոլոր ազատականներով հանդերձ մեծ հնազանդությամբ ընդունեցին [նրան] Քրիստոսի անվան համար։ Ապա երբ հարցրին, նա բացատրեց իր գալու նպատակը։ Եվ նրանք, երկու զուգակիցները, եպիսկոպոսն ու թագավորը, հանձն առան ընդունել դպրությունը և հրամայեցին իրենց իշխանության գավառներից ու տեղերից դպրության արվեստի համար բազմաթիվ մանուկներ բերել, ժողովել, արժանավոր ու հարմարավոր տեղերում դասատներ — դպրոցներ [կազմել] և [նրանց] ապրուստի համար թոշակ նշանակել։

Իսկ երբ հրամանն իսկապես գործով գլուխ եկավ, ապա այնուհետև երանելի Երեմիա եպիսկոպոսն սկսեց շուտով աստվածային գրքերի թարգմանություն անել, որով իսկույն մի ակնթարթում Աղվանքի վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարո մարդիկ մարգարեագետ և առաքելածանոթ և ավետարանի ժառանգներ դարձան և բոլոր աստվածային ավանդություններին ոչ մի բանով անտեղյակ [չմնացին]։ Դարձյալ՝ Աղվանքի աստվածավախ թագավորն ավելի ևս հավատարիմ հոգացողությամբ սաստիկ հրամայեց սատանայակիր և դիվամոլ ժողովրդին՝ ձեռք քաշել, ազատվել հնացած դատարկ բաներից և հնազանդվել Քրիստոսի ամենահեշտ լծին։

Եվ երբ այդ արին հավասարապես և կատարեցին՝ ինչ որ իրենց պետք էր և ինչ որ ուզում էր, նրան իր սրբամատույց վարդապետության համար Բաղասական[116] կողմերում օգնեց նաև սուրբ եպիսկոպոսը, որի անունն էր Մուշեղ, ապա նա բաժանվեց և Աղվանքի թագավորից և եպիսկոպոսներից ու բոլոր եկեղեցուց։ Եվ իր աշակերտներից մի քանիսին նրանց վրա վերակացու կարգեց, արքունական դռան մի քահանայի հետ, որի անունը Հովնաթան էր, որ և մեծ հոժարություն էր ցույց տվել նրա վարդապետության համար։

Եվ նրանց ու ինքն իրեն հանձնելով աստծու ամենապահ շնորհքին՝ ճանապարհ ընկավ, Աղվանքի կողմերից եկավ Վրաց աշխարհն անցնելու համար։

[ԺԹ]

Եվ եկավ հասավ Գարդմանական ձորի[117] դիմաց։ Նրա առաջ դուրս եկավ Գարդմանքի իշխանը, որին Խուրս էին անվանում, և աստվածասեր երկյուղածությամբ հյուրընկալելով նրան՝ ինքն իրեն, իր իշխանությամբ հանդերձ, տրամադրեց վարդապետին։ Նրա վարդապետության հյութին ու պարարտությունը շատ վայելելուց հետո՝ [իշխանը] երանելիին ճանապարհ դրեց դեպի ուր որ գնալու էր, իսկ նա անցավ, դիմեց այն կողմերը։

Այն ժամանակները Վրաստանի թագավոր եղավ Արձլուղ անունով [մեկը], որ շատ պայծառացրեց, ծաղկեցրեց ուսումը, և նա*) շրջեց բոլոր աշակերտների մոտ, պատվիրեց, որ ճշմարտության մեջ մնան։

Այն ժամանակ Տաշրացիների[118] իշխանը, մի պատվական և աստվածասեր մարդ, որ անվանվում էր Աշուշա, նրա տրամադրության տակ դրեց ինքն իրեն իր ամբողջ գավառով, և նրա**) ամենասփյուռ վարդապետությունը, առանց որևէ պակասության, գերազանցեց, քան բոլոր գավառներինը։

Եվ հանձնարարելով նրանց սուրբ եպիսկոպոս Սամուելին, այն, որ վերևում նշանակեցինք, ինքը ետ դարձավ Մեծ Հայաստանի կողմերը. եկավ սովորական տեղերը, մաերմական ողջույնը տվեց սուրբ Սահակին և բոլոր պատահողներին, պատմեց նրանց այն նոր գործերի մասին ևս։ Նրանք որ այդ լսեցին, ավելի գոհություն տվին աստծուն [իր] պարգևների համար։

[Ի]

Դրանից հետո երկու երանելիներն էլ ուշադրություն դարձրին, որ իրենց ազգի դպրությունն ավելի զարգացնեն և հեշտացնեն։ Մեծ Իսահակն սկսեց թարգմանել և գրել իր առաջվա սովորությամբ։

Պատահեց դարձյալ, որ նրանք իրենց աշակերտներից երկու եղ-

*) Մաշթոցը։
**) Մաշթոցի։

քայրների*, [առաջինը] Հովսեփին[119], որ վերևում հիշեցինք, և երկրորդը՝ [մեկին] Եզնիկ[120] անունով, Այրարատյան գավառից, Կողբ գյուղից, ուղարկեցին Ասորոց կողմերը, Եդեսիա քաղաքը, որպեսզի նրանց սուրբ հայրերի ավանդությունները ասորերեն լեզվից հայերենի դարձնեն ու գրեն։

Իսկ թարգմանիչները հասան այնտեղ, ուր ուղարկվեցին և նրանց պատվերը կատարեցին և [թարգմանություններն] ուղարկեցին պատվական հայրերին, [իսկ իրենք] անցան գնացին հունական կողմերը, ուր և ուսանելով և հմտանալով՝ կարգվեցին հելլենական լեզվից թարգմանիչներ։

Ապա մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո՝ պատահեց, որ մեր Հայաստան աշխարհից դիմեցին, իջան հունական կողմերը մի քանի եղբայրներ, որոնց առաջինի անունը Ղեվոնդես էր, և երկրորդը Եսա Կորյունս [էի], և Կոստանդնուպոլսական քաղաքում մոտեցան, հարեցին Եզնիկին, իրրև ընտանեգույն սննդակցի, և այնտեղ միասին կատարեցին հոգևոր պիտույքի խնդիրը**)։ Հետո նրանք աստվածատուր գրքերի***) հաստատուն օրինակներով և շատ շնորհագիր հայրերի հետագա ավանդություններով և Նիկիական[121] ու Եփեսոսական[122] կանոններով՝ եկան, երևացին Հայոց աշխարհում և հայրերի առաջ դրեցին սուրբ եկեղեցու կտակարանները[123], որ բերել էին իրենք։

Իսկ երանելի Սահակն առաջ հունարեն լեզվից հայերեն էր դարձրել եկեղեցական գրքերի[124] ամբողջությունը և շատ սուրբ հայրապետների իմաստությունը[125]։ Դրանից հետո դարձյալ նա Եզնիկի[126] հետ միասին սկսեց [և] առաջվա հանկարծագյուտ շտապովի թարգմանությունները****) հաստատեց բերված ստույգ օրինակներով։ Եվ Գրքի*****) շատ էլ մեկնություն[127] թարգմանեցին։

Եվ այսպես՝ հայրերն իրենց բոլոր ժամանակը, օր ու գիշեր, գրքերի ընթերցանությամբ էին անցկացնում և դրանով ծաղկած ու շահված՝ բարի օրինակ էին դառնում [իրենց] ուսումնասեր ընթերականերին, մանավանդ որ զգուշացուցիչ պատվիրաններ ունեին աստծու կարգած պատգամավորներից[128], որոնց առաջինը հրամայում է, թե՝

*) Եկեղեցական իմաստով եղբայր—կրոնավոր։
**) Այսինքն՝ թարգմանության գործը։
***) Աստվածաշնչի։
****) Ս. Գրքի թարգմանությունները։
*****) Աստվածաշնչի, Ս. Գրքի, որ հին հեղինակները կոչում են նաև պարզապես Գիր կամ Գիրք։

«Տիրոջ օրենքի մասին պիտի խորհես գիշեր ցերեկ»[129], և երկրորդը նմանապես պատվիրում է. «Ուշադրություն դարձրու ընթերցանության, մխիթարության, վարդապետության. անփույթ չպիտի լինես շնորհքիդ վերաբերմամբ, որ կա քեզնում. այդ մասին խորհիր. և դրանով անցրու ժամանակդ. եթե այդ անես, կազատես և՛ քեզ, և՛ նրանց, որ քեզ կլսեն»[130]։

[ԻԱ]

Ապա դրանից հետո դարձյալ՝ երանելի Մաշթոցն իր այսպիսի շատ ու բարձրագույն ուսումով սկսեց կարգել և հորինել հաճախագույն[131] դյուրապատում, շնորհագիր, բազմադիմի ճառեր մարգարեական գրքերի լուսավորությունից ու հյութից, ավետարանական ճշմարիտ հավատքի ամեն ճաշակներով լիքը։ Դրանց մեջ՝ ավելի հանդերձյալ կյանքի հարութենական հույսի վերաբերյալ՝ շատ նմանություններ և օրինակներ հերյուրեց*, կազմեց աշխարհիս անցավոր բաներից. որպեսզի տխմարներին ու մարմնական բաներով զբաղվածներին հեշտ ընդունելի և հեշտ հասկանալի լինին՝ [նրանց] սթափեցնելու ու զարթեցնելու խոստացված պարգևների նկատմամբ հիմնովին քաջալերելու համար։

[ԻԲ]

Եվ այսպես՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի բոլոր կողմերում իր ամբողջ կյանքի ընթացքում ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, անվեհեր և առանց բնավ հապաղելու, իր իսկ ավետարանական և ողջապատում վարքով ամենափրկիչ Հիսուսի անունը կրեց իր անձի վրա թագավորների, իշխանների ու բոլոր հեթանոսների առաջ և առանց ընդդիմության հակառակորդների կողմից։ Եվ ամեն մարդու զարդարեց Քրիստոսի զգեստով և հոգեպես, և շատ բանտարկյալներ ու կալանավորներ և նեղյալներ ազատեց՝ Քրիստոսի ահավոր զորությամբ կորզելով նրանց բռնակալների ձեռքից։ Եվ շատ անիրավ մուրհակներ պատռեց, և շատ սգավորների ու նեղսրտածների իր մխիթարական վարդապետությամբ ակնկալություն ու հույս տվեց մեծ աստծու, մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնության[132] ժամանակի համար, և ամենքին ընդհանրապես՝ փոխեց, աստվածապաշտության կարգ ու կանոնի մեջ դրեց։

[ԻԳ]

Եվ դարձյալ շեն ու անշեն տեղերում բնակեցնելով հաստատեց վանականների շատ ու անհամար խմբեր, դաշտական ու լեռնական, անձավամուտ ու արդելական[133]։ Ժամանակ առ ժամանակ իր անձով հենց՝ օրինակ էր ցույց տալիս նրանց. ամեն մենաստաններից հետո առնում էր աշակերտներից մի քանիսին, և գնում, լեռնակյաց, սորամուտ, ծակախիթ*) էր դառնում, իրենց օրական սնունդը խոտեղեն ուտելով էին վերջացնում։ Եվ այսպես վշտակյաց տկարության էին անձնատուր լինում, մանավանդ որ աչքի առաջ ունեին առաքելական խոսքերի մխիթարությունը, թե՝ «Երբ տկար եմ Քրիստոսի համար, այն ժամանակ զորացած եմ լինում»[134], և թե՝ «Ավելի լավ է պարծենամ տկարությամբս, որպեսզի ինձնում բնակվի Քրիստոսի զորությունը»[135]։

Այնտեղ այնուհետև չէին հարբում գինով, այլ լցվում էին հոգով և սրտերը հոգևոր երգերով[136] պատրաստում ի փառս և ի գովություն աստծու։ Այնտեղ վարժվում էին հոգեպատում գրքերի քաղցրուսույց ընթերցանությամբ։ Այնտեղ՝ վարդապետի քաջալերությունն ու հորդորը, որ ընտրյալներն առաջ դիմելով հասնեն Քրիստոսի դրած պսակահաս կետին**)։ Այնտեղ հոգով եռում էին աստվածապաշտական ծառայությամբ։ Այնտեղ՝ աղերսալի աղոթքներ և ամենքի կյանքի համար հաշտեցուցիչ խնդրվածքներ մարդասեր աստծուց։

Եվ նա այս միևնույն հոգեկրոն արվեստով շատ օրեր անց էր կացնում անապատ տեղերում, մինչև որ երեցներից իմաց էր տրվում [նրան], որ այն կողմերի եկեղեցիներին մի որևէ օգտակար բանի համար օգնության հասներ Քրիստոսի շնորհքով։ Եվ նա առանց բնավ դանդաղելու՝ իր գործակիցների հետ իջնում էր պատահած դեպքին օգնելու, և աստծու զորությամբ վերջացնում էր, և անփակ բերանով ավելի հորդ ու առատ էր ծավալեցնում վարդապետության վտակները լսողների սրտերի մեջ։

Եվ այս անում էր նա իր ամբողջ կյանքում իր անձի և աշխարհի համար։ Որովհետև ճշմարիտ ուսուցիչներն իսկապես սովոր են իրենց առաքինություններն աշակերտների համար օրինակ դարձնելու, մանավանդ որ մտաբերում էր տերունականը, միմիայն իմաստուն աստծունը. «Որովհետև սկսեց Հիսուս գործել և սովորեցնել»[137]։ Նա***)

*) Սորամուտ լինել—ծակերի, խոռոչների մեջ մտնել։

**) «Պսակահաս կետ»—այն տեղը, ուր դրված է լինում պսակ՝ մրցության մեջ հաղթողին տալու համար։

***) Հիսուս։

շատ անգամ իր աշակերտներին առնում մի կողմ է տանում և իր անկարոտ անձով օրինակ էր դառնում կարոտյալների համար, երբ Բարսրաևան[138] լեռան վրա տալիս էր խոստացած երանությունը և երբ նույն լեռան վրա կանոնական[139] աղոթքն էր անում, մինչդեռ աշակերտները նավում էին Տիբերիական[140] ծովի վրա։ Եվ դարձյալ բաղարջակերաց[141] օրերում, օրինական տոնին, Ձիթենյաց լեռան[142] վրա առանձնացած գիշերվա աղոթքն էր անում։ Ուստի և առանց քննելու էլ իսկապես հայտնի է, որ ամենատերը ոչ թե իր անձի համար, այլ համայն աշխարհին սովորեցնելու համար էր այն գործում, ինչ որ օրինակ է բոլոր հնազանդվածներին, որի համար ասում էլ էր. «Արթուն կացեք, որ փորձության մեջ չմտնեք»[143]։

Իսկ արդ՝ եթե հողածին մարդիկը թեթև արվեստների վերաբերմամբ գիտությունից պակաս են, մարդս ո՛րչափ ևս [գիտությունից պակաս], նույնիսկ տգետ պիտի համարվի այն արվեստի նկատմամբ, որով աստուծու հետ է խոսում։ Ուստի երանելի Պողոսն ասում է, որ ամենքը տգետ են. դրա համար նա գիտե, որ ամենակեցույց Հոգին օգնության հասնելով՝ անմռունչ հեծությամբ բարեխոս է[144]։

Իսկ արդ՝ երբ լսում ենք, թե՝ «Սկսեց Հիսուս գործել և սովորեցնել»[145], ապաքեն նա գործում և սովորեցնում է, և ոչ թե [այդ այնպես] պիտի հասկանալ, [թե] որպեսզի պարգևի։ Եվ նրա բարեխոսելը սրբերի համար, [և] Սուրբ Հոգու բարեխոսելը, [այդ] մեզ սովորեցնելու նպատակով է, որովհետև պետք է հասկանալ միմյանց փոխանակ բարեխոսել. քանի որ աստվածականը միապատիվ է և ոչ թե բազմապիսի [պատվով][146]։

Իսկ երանելի առաքյալները ճշմարտությամբ վարդապետից ընդունելով [օրինակը]՝ նախ [իրենց] կարոտ անձերին մատակարարեցին, ապա [այդ] վերցրին, տարան աշակերտներին։ Նրանք երբեմն հավաքված ժողովուրդների հետ*), շատ ու շատ[147] բարձրացնում էին Քրիստոսի փառքը, երբեմն էլ՝ առանձին։ Որովհետև իսկապես ավելի օգտակար է բոլոր աշխարհային զբաղմունքներից մի կողմ քաշվել, առանձնանալ և միայն աստվածապաշտությամբ պարապել, ինչ որ անում էին մարգարեներն էլ, որոնք լեռներում և անապատներում ու քարերի փապարներում**) աստվածային կրոնքի ***) ծառայությունն էին անում։

*) Այսինքն ժողովարաններում։

**) Քարերի ճեղքերում, քարայրերում։

***) Կրոնք—աստվածապաշտական կյանք, կրոնավորական առաքինի կենցաղավարություն։

Նույնպես և բոլոր հայրերը, որոնք առաքելական կանոններից հետո են եկել, անձամբ ունենալով բարեպաշտությունը՝ մեզ, վերջիններիս, օրինակ ցույց տվին. ուստի այս երանելին, իր վրա վերցրած ուներ ավանդածների պատիվը, և նույնը պատվիրելով՝ ազդարարում էր ամեն իրեն մոտեցողներին։ Եվ այսպես հետո էլ բոլոր աստվածային գանձերի վայելչությամբ լցված, պարարտացած, կենցաղավարում էին շատ ժամանակներ՝ նույնով նույնի համար, առավոտը կանուխ վեր կենալով և նույնի մեջ ամեն օր հարատևելով։

[ԻԴ]

Այն ժամանակ բերվեցին, երևացին Հայաստան աշխարհում Թեոդորոս[148] անունով մի հոռոմ մարդու աստվածպատում գրքերը, դատարկաբան ավանդություններ։ Սուրբ եկեղեցիների սինհոդոսական հայրապետներն[149] այդ մասին գրելով իմաց տվին ճշմարտահավատ փառաբանիչներ Սահակին և Մաշտոցին։ Եվ նրանք ճշմարտասեր ջանքով մեջտեղից վերացրին այն, աշխարհից հալածելով՝ իրենց սահմաններից դուրս վանեցին, որպեսզի ոչ մի սատանայական ծուխ չխառնվի լուսավոր ուսմանը։

[ԻԵ]

Դրանից հետո պատահեց, որ երանելի Սահակը նույն ճշմարտությամբ, օրերով ու շատ տարիներով լցված և աստուծու տված պտուղների բարիքներով վայելչացած, Վռամի որդու, Պարսից աշխարհին թագավոր դարձած Հազկերտի առաջին տարում Բագրավանդ[150] գավառում, Բլրոցաց գյուղում (էր) նավասարդ[151] ամսի վերջում, երբ և երանելիի ծննդյան օրն էին հիշում. ծերունին օրվա երկրորդ ժամին, անուշահոտ յուղի պաշտամունքի[152] ժամանակ աստվածահաճո աղոթքներով [Հոգին] Քրիստոսին ավանդեց, հետևելով մարգարեի խոսքին, որ ասում էր. «Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»[153] և երանելի Ստեփանոսին, որ ասում էր. «Տե՛ր Հիսուս, ընդունիր իմ հոգին»[154]։ Նույնպես և նա իրեն և մնացածներին հանձնարարեց աստուծու ամենապահ շնորհքին։

Շուտով ամենայն պատրաստությամբ վերցրին նրան իր ձեռնասուն աստվածասեր պաշտոնյաները, որոնց գլխավորի անունը Երեմիա էր, մի սուրբ և բարեպաշտ մարդ,— Դուստր[155] անունով իր աստվածասեր իշխանակնոջ հետ, որ վերևում հիշածս Վարդանի կինն էր, այլև

ժողովված սրբերի*) մեծ բազմությունը։ Վերջին սրբին սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր երգերով, օր ու գիշեր [գնալով] քիչ օրերից հետո հասցրին Տարոն, մինչև բուն իսկ Աշտիշատ[156] գյուղը։ Եվ այնտեղ մարտիրոսական խորանում**) դրին [նրան] սրբի տապանի մեջ ամեն անուշահոտ խնկերով ու կնքեցին քրիստոսական կնքով***) և օրինավոր հիշատակը վրան կատարեցին, այնուհետև դարձան յուրաքանչյուրն իր տեղը։ Նրանք տարեցտարի էլ հավաքվելով նույն ամսին՝ նրա հիշատակի տոնախմբությունն են անում։

[Իզ]

Իսկ երանելի զուգականն****) [այդ] լսելով,— Մաշտոցի մասին եմ ասում,— շատ կարոտով այրված՝ ընկել էր տրտմության և արտասվալի, գթաշարժ ողբերի ու ծանրաթախիծ սուգի մեջ. որովհետև եթե սուրբ առաքյալը մի առժամանակ [իր մոտ] չգտնելով իր ընտելակից*****) Տիմոթեոսին[157] ասում է, թե իր հոգին անհանգիստ է, ո՛րչափ ավելի ևս պետք է կարծել՝ թե [աշխարհից] բոլորովին հրաժարվողների համար սաստիկ վիշտ կկրեն մնացողները։ Բայց թեպետ և մենակ մնալու տրտմությունը չէր թողնում, որ ղվարթանա, սակայն ավետարանական ընթացքն ու սուրբ եկեղեցու վերակացությունը աստուծու շնորհքով առանց պակասության առաջ էր տանում և ավելի ևս հոգում, ջանք էր թափում, ամենքին հորդորում, որ լավ ու բարի լինեն։ Եվ գիշեր-ցերեկ պահքով ու աղոթքով և ուժգին խնդրվածքներով ու բարձր ձայնով հիշեցնելով աստվածադիր պատվիրաններն ու հրամանները՝ զգուշացնում էր ամեն մարդու, [կատարում էր ճգնական] վարքի նույնիսկ բազմատեսակ և դժվարագույն կրթանքները. մանավանդ որ ծերունական[158] հասակի պատճառով մտաբերում էր իր վերջին օրը, քուն չէր տալիս աչքերին և ոչ արտևանունքներին նիրհ՝ մինչև Տիրոջ հանդստին հասնելը։

[Իէ]

Եվ մինչդեռ այնպես իր մոտին եղող մերձավորների հոգևոր եռանդը շարժում էր և շատ խրատական ու զգուշացուցիչ թղթեր էր ուղարկում

*) Այսինքն՝ վանականների և միայնակյացների։

**) Մարտիրոսական խորան—մատուռ։

***) Խաչով։

****) Զուգական—երկու հավասար ընկերներից մեկը, ամոլակից։

*****) Ընտելակից—ընկեր, որին վարժված, ընտելացած է մարդ։

բոլոր գավառները, հենց միևնույն տարում, երանելի Սահակի մահից վեց ամիս անցնելուց հետո, Հայոց բանակը սուրբ Վարդապետի հետ միասին գտնվում էր Այրարատյան Նոր Քաղաքում, և միևնույն հոգեկրոն վարքով հասավ սրբի քրիստոսակոչ վախճանը մի քանի օրվա հիվանդությունից հետո, մեհեկան ամսի տասներեքին[159]։ Եվ երբ պիտի ձեռնասուն աշակերտների միջից զատվեր և Քրիստոսի գնդին խառնվեր, ցավերից թեթևանալով և սթափվելով՝ վեր կացավ նստեց ժողովի մեջ և ձեռքերը հանապազատարած երկինք բարձրացրած՝ բոլոր մնացողներին հանձնարարեց աստուծու շնորհքին, նրանց համար օգնություն խնդրեց։

Եվ [այնտեղ] ժողովված գլխավոր աշակերտների անուններն այս են. առաջինինը՝ Հովսեփ, որ և սկզբում գրեցինք. երկրորդինը՝ Թադիկ, զգաստ [ու] Վարդապետի հրամանների նկատմամբ շատ զգույշ մարդիկ։ Ջինվորական կողմից առաջինի անունը՝ Վահան, Ամատունի ցեղից, որ Մեծ Հայաստանի հազարապետն էր, և երկրորդինը՝ Համայակ[160], Մամիկոնյան տոհմից,— պատվական, երկյուղած [ու] Վարդապետի հրամանները կատարող մարդիկ։

Եվ մինչդեռ սրբի ձեռները կարկառված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր շողավոր ձևով սքանչելի տեսիլ*) երևաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երանելին. և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց։ Եվ նա սրբերին սեր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակեց և հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով՝ հանգավ։

Վահանն ու Համայակը, աշխարհական բազմության հետ, վերջին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կանթեղներով ու բորբոքած ջահերով և բուրող խնկերով, և ամբողջ լուսաճաճանչ աշտանակով, և այն լուսավոր առաջախաղաց խաչանշանով, բարձրացան Օշական[161] և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, օրինավոր հիշատակը կատարեցին, ապա նշանն աներևույթ եղավ, և նրանք ետ դարձան յուրաքանչյուրն իր տեղը։

Իսկ երեք տարի անցնելուց հետո Վահան Ամատունուն հաջողվեց քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար[162] կանգնել տալած, քանդակած քարերով, և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը։ Նա Քրիստոսի կենդանարար մարմնի և արյան սեղանի համար վայելուչ, գույնզգույն, ոսկով և արծաթով ու թանկագին քարերով պայծառափայլ

*) Աչքի երևացած պատկեր, տեսած բան։

անոթներ պատրաստեց ի հիշատակ, և մի տեղ հավաքված բոլոր սըրբերի*) հետ Քրիստոսի խաչակրոն վկայի, երանելի Մաշթոցի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը։ Եվ նրա թադիկ անունով աշակերտին, մի զգաստ ու բարեպաշտ մարդու, եղբայրների հետ**), երանության հասած Սրբի համար***) սպասավոր կարգեցին ի փառս աստծու։

[ԻԸ]

Եվ վախճանված հայրերը հայտարարեցին գլխավորներ, վերակացուներ, տեղապահներ, որոնց առաջինն էր Հովսեփը[163], ժողովի գլխավորը, և երկրորդը՝ մի ուրիշ աշակերտ Հովհան անունով,— մի իսկական սուրբ, վարդապետասեր և ճշմարտապատում մարդ։ Պատահեց, որ սա Սրբի մահից հետո Տիզբոն[164] քաղաքում Քրիստոսի համար հաղթությամբ տարավ, դիմացավ շատ և պես-պես փորձությունների, շղթայակապ վշտերի, մենամարտիկ [լինելով] ընդդեմ երկպատիկ****) բռնության, ուստի և խոստովանողական[165] անուն ժառանգեց, վերադարձավ Հայոց երկիրն ի նույն վերակացություն։

Իսկ բարեացապատ*****) Վահանին[166], որ հանկարծ [օգնության] էր հասնում ամենքի կյանքին՝ աշխարհածնունդ հայրերի******) սեփական որդին*******) հանդիսանալով մեր աստված Քրիստոսի շնորհիվ, վայել էր մերձավոր մասնակից [լինել նրանց] կյանքին[167]։

[ԻԹ]

Եվ որ հայրերը մեր գրածի համեմատ կատարումն********) ունեցան, այդ ոչ թե հին զրույցներից տեղեկացանք և մատենագրերով կարգեցինք, այլ մենք հենց ականատես եղանք նրանց կերպարանքներին, և ընթերական՝ [նրանց] հոգևոր գործերին և լսող՝ նրանց շնորհապատում ուսման, և նրանց արբանյակն*********) ըստ ավետարանական հրաման-

*) Այսինքն՝ վանականների, մենակյացների հետ։
**) Այսինքն՝ հոգևոր եղբայրների, կրոնավորների հետ։
***) Այսինքն՝ Մաշթոցի համար։
****) Այսինքն՝ կրկնակի, երկու կերպ բռնության, «ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ»։
*****) «Բարեացապարտ»—բարիքի պատճառ, երախտավոր։
******) Այսինքն՝ աշխարհը վերածնող հայրերի—Սահակի և Մաշթոցի։
*******) Հարազատ որդին իբրև հոգևոր ծնունդ։
********) Կյանքի վախճան։
*********) Գործակից փոքրավոր, սպասավոր։

րի։ Ոչ թե սուտապատում ճարտարախոս լինելով մեր խոսքերով՝ իմ հոր մասին կարգեցինք [այս], այլ շատը թողնելով և նշանավոր գիտակներից[168] քաղելով*)՝ այս համառոտը գրեցինք, որ ոչ միայն մեզ, այլև այս մասյանը[169] կարդացողներին հայտնի է։ Որովհետև՝ իսկապես չէինք դիմանա նրանց յուրաքանչյուրի բոլոր արածները գրքի մեջ նշանակելուն[170], ուստի պատսպարվեցինք[171] այս ավելի հեշտ ու դյուրինով — առաքելականով։ Սրբերի բազմախուռն վաստակները թողեցինք, որպեսզի մանրամասնորեն պատմենք կարևորագույն հանգամանքները**)։ [Եվ այս] պատմեցինք ոչ ի պատիվ աստուծու սրբերին, որոնք ամենապածառ հավատով ու վարքով[172] ճանաչված՝ հարգվեցին, այլ ի քաջալերիչ օրինակ իրենց հոգևոր զավակներին և այն ամենքին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդեսերունդ։

[Լ]

Եվ արդ՝ երանելիի հավատքի***) տարիների հաշիվը լինում է քառասուն և հինգ տարի, և հայոց դպրությունից մինչև Սրբի վախճանը՝ երեսուն և հինգ տարի, որ այսպես են համարվում. Պարսից արքա Կրմանք[173] թագավորել է վեց տարի և Հազկերտ****) քսան և մեկ տարի [և Վռամ տասնութ տարի][174] և Վռամի որդի երկրորդ Հազկերտի առաջին տարում վախճանվեց երանելին[175]։

Եվ արդ՝ սուրբ հավատքի տարիների հաշիվն սկսվում է Կրմանարքայի չորրորդ տարուց մինչև Վռամի որդի երկրորդ Հազկերտի առաջին տարին[176], և հայոց դպրությունն սկսվել է Հազկերտի ութերորդ տարուց[177]։

Եվ մարդասեր Քրիստոսին փառք հավիտյանս. ամեն։

*) «Քաղել»—ժողովել, հարկավ հարց ու փորձ անելով։
**) Բառացի՝ մանրակրկիտ անելու, կարևորագույն հանգամանքները պատմելու համար։
***) Կրոնավորության։
****) Սա Հազկերտ Առաջինն է։

Բ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՐԱՐԵԼ Է ՍՈՒՐԲ ԿՈՐՅՈՒՆԸ

Արդ, սկսենք պատմել այն մարդու մասին, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու։ Մաշդոց էր անունը, Տարոն[50] գավառից, Հացեկաց[51] գյուղից, Վարդան անունով երևելի մարդու որդին էր։ Մանկությունից կրթվելով հելլենական դպրությամբ, եկել հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը[52]։ Կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ոմն Առավանի՝ Հայոց աշխարհի հազարապետու-*

* Կորյունի երկը և՛ ընդարձակ, և՛ համառոտված տարբերակներում կոչվում է «Յիշատակ Սրբոյն Մեսրովբայ...» (№ 2639, էջ 549 ա), «Ի յիշատակի պատմութեան վարուց...» (Փարիզի օրինակ, նաև ձ. № 3787, էջ 104 ա», «Ի յիշատակի սրբոյն Մեսրովպայ...»), «Յիշատակարան պատմութեան սրբոյ վարդապետի Մեսրոպայ...» (ձ. № 3791, էջ 196 ա)։ «Յիշատակ» բառը գալիս է Կորյունից։ Բանն այն է, որ իր երկի սկզբում նա «յիշատակարան» է անվանում այն. «զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան (մյուսում՝ «մատնանշան») ծաղկեցուցանել...»։

Կորյունի նպատակը իր ուսուցչի կյանքի լիակատար պատմությունը գրելը չէր, այլ առանձին համառոտ դրվագներ նրա կյանքից, «եթե ե՞րբ և յորում ժամանակի մատակարարեցաւ աստուածապարգև» գիրքը, և այն «որպիսի՞ արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհ երևեցաւ», ցույց տալ նրա «լուսաւոր վարդապետութիւնը», և «հրեշտակաբար կրօնիցն առաքինութիւնը»։ Ուստի, «զյաճախագոյնն թողեալ, և ի նշանաւոր գիտակցն քաշելով զհամառօտս կարգեցաք»,— գրում է Կորյունը։

«Յիշատակարան» նշանակում է «ընդունարան յիշատակաց՝ մատեան, դիւան, պատմական մասն սուրբ գրոց, յիշատակագրութիւն. և «վերջարան մատենագրի և գրչի»։ (ՆՀՔ, Բ, էջ 359)։ Մեզ այն ծանոթ է վերջին նշանակությամբ. ձեռագրերի հիշատակարաններ, ժողովածուներ, որոնց մեջ հավաքված են գրիչների հիշատակարանները կամ ձեռագրերի ստեղծման պատմությունը։ Ուրեմն, հիշատակարանը նաև պատմություն է նշանակում։ Այդ պատճառով Կորյունի երկի առաջին հրատարակությունը այդպես էլ վերնագրում են՝ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյ սրբոյն Մեսրովպայ վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» (Վենետիկ, 1834 թ.)։ Ուստի, «Յիշատակ», «Յիշատակարան», «Ի յիշատակի» փոխարեն գրում են «Պատմութիւն»։

թյան[53] ժամանակ։ Նա տեղյակ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել։ Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությունը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց աստվածային հրամանների, հանգամանքների մեջ և ամեն պատրաստությամբ հարդարելով իրեն, իշխանների ծառայությունն էր կատարում։

Եվ դրանից հետո նա՝ ըստ ավետարանական կանոնի՝ դարձավ մարդասեր Աստծու ծառայությանը. սրանից հետո մերժեց աշխարհակիր ցանկությունները և պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկավ ամենակեցույց խաչվածի հետևից։ Եվ հավատքի հրամաններին հավանելով՝ խառնվեց Քրիստոսի աշակերտների խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ։ Բազում և տեսակ-տեսակ վշտակցություններ կրեց ըստ Ավետարանի և ամեն բանով իրեն տալիս էր ամեն հոգևոր վարժությունների՝ միաձնության, լռնակեցության, քաղցի ու ծարավի և բանջարաճաշակության, անլույս արգելարանների խառնազգեստ ու գետնատարած անկողնու։ Շատ անգամ էլ գիշերվա հեշտալի հանգիստն ու քնի հարկը ոտի վրա տքնությամբ վերջացնում էր մի ակնթարթում։ Եվ այս ամենն անում էր նա ոչ սակավ ժամանակ։ Եվ մի քանիսին ևս գտել, հարեցրել էր իրեն՝ աշակերտելու նույն ավետարանական սպասավորությանը։

Եվ այսպես, նա, կամայական քաջությամբ տանելով բոլոր վրա հասած փորձությունները և նրանով լուսավորվելով ու պայծառանալով, ծանոթ և հաճելի էր դարձել Աստծուն և մարդկանց։

Երանելին այնուհետև իր հավատացյալներին առավ գնաց, իջավ Գողթնի[54] անկարգ ու անխնամ տեղերը։ Նրա առաջ դուրս եկավ Գողթնի իշխանը՝ մի երկյուղած և աստվածասեր մարդ, որի անունը Շաբիթ էր, և հյուրամեծար ասպնջական հանդիսանալով՝ բարեպաշտությամբ սպասավորում էր՝ Քրիստոսի հավատքի աշակերտների կարգի համաձայն։ Իսկ երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց քարոզել գավառում. ամենքին իրենց հայրենական ավանդություններից ու սատանեական դիվապաշտ ծառայությունից գերեց, շուռ տվեց Քրիստոսի հնազանդությանը։

Եվ երբ նրանց մեջ սերմանեց կյանքի խոսքը և բոլորին աստվածապաշտության վարժեցրեց, հայտնապես մեծամեծ հրաշքներ երևացին գավառի բնակիչներին. դևերը զանազան կերպարանքներով փախան ընկան Մարերի կողմերը[55]։ Նա մտքում դրեց ավելի հոգալ նույնպես համայն աշխարհի ժողովրդին մխիթարելու մասին և ավելացրեց մշտամռունչ աղոթքն ու բազկատարած պաղատանքն առ Աստված և

անդադար արտասուքը, մտաբերելով առաքյալի խոսքը. և ասում էր հոգալով. «Տրտմություն է ինձ համար, և անպակաս են իմ սրտի ցավերն իմ եղբայրների և ազգակիցների համար»[56]։

Եվ այնպես տրտմական հոգսերով պաշարված և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի ելք գտնի այդ բաների համար։

Եվ շատ օրեր հենց այնտեղ նույն խնդրով զբաղվելուց հետո վեր կացավ, այնուհետև եկավ հասավ Մեծ Հայաստանի սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը Սահակ էր[57], որին պատրաստ ու հավան գտավ նույն առահոգսի վերաբերմամբ։ Եվ նրանք միասին սիրով մեկտեղ գալով՝ վոտ կանուխ մեծ աղոթքներով Աստծուն էին դիմում, որպեսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկությունը։ Եվ այդ անում էին շատ օրեր։

Ապա ամենաբարի Աստծուց պարգևվեց նրանց սկիզբը՝ երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհուրդները ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել։

Շատ հարցուփորձով ու որոնումով պարապեցին և շատ նեղություններ կրեցին. հետո և իրենց առաջուց ուզած բանի մասին իմաց տվին իրենց Հայոց թագավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում։

Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու՝ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գրել է[68] հայերեն լեզվի ալփաբետներ-նշանագրեր։ Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գրածի[58] մասին, արքային հորդորեցին, որ հոգ տանի նրանց պիտույքի համար։ Նա էլ Վահրիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ Դանիել եպիսկոպոսի մերձավորն էր։

Իսկ Աբելն այն, այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին, և հետո նրանից առնելով հասցրեց Հայոց երկրի արքային՝ նրա թագավորության հինգերորդ տարում[59]։ Իսկ արքան սուրբ Սահակի և Մաշտոցի հետ միասին նշանագրերն ստանալով Աբելից՝ ուրախացան[178]։

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները և կապերն[68] ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից քաղված և հարություն առած հանդիպեցին, դրանից հետո դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան։

Դրա համար երանելի Մեսրոպը արքունի հրամանով և սուրբ Սահակի համաձայնությամբ մի խումբ մանուկներ առավ հետը և, սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո ճանապարհ ընկավ, գնաց Հայոց արքա Վռամշապուհի հինգերորդ[59] տարում. և գնաց, հասավ Արամի[60] կողմերը, Ասորոց երկու քաղաքները, որոնց առաջինը Եդեսիա[61] է կոչվում և երկրորդի անունն է Ամիդ[62]։ Ներկայացավ սուրբ երանելի եպիսկոպոսներին, որոնց առաջինի անունը Բաբիղաս[63] էր և երկրորդինը՝ Ակակիոս, կղերականների և քաղաքների իշխանների հետ միասին հանդիպեցին և շատ մեծարանքներ ցույց տալով հասնողներին, ընդունեցին՝ հոգ տանելով քրիստոնյաների կարգի համաձայն։ Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին երկուսի բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց [Եդեսիա քաղաքում][64] և ոմանց հունական՝ այնտեղից Սամոսատական քաղաքում խմբելով։

Եվ նա իր ընկերների հետ սկսեց սովորական պասերն ու աղոթքները, տքնությունները և արտասվալից պաղատանքները, խստամբերությունները, աշխարհահեծ հոգսերը, հիշելով մարգարեի ասածը, թե՝ «Երբ որ հեծեծես, այն ժամանակ կերջես»[66]։

Եվ այսպես, նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար։ Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես և պարգևվեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր։ Եվ այնտեղ նշանագրեց, անվանագրեց ու դասավորեց[67] սիղոբաներով, հորինեց կապերով[68] և ձայնատուր նշաններով։

Եվ ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսներին[69]՝ իր ազգակիցների հետ միասին իջավ Սամոսատ քաղաքը, ուր մեծապատիվ կերպով մեծարվեց եպիսկոպոսից և եկեղեցուց։

Եվ հենց այնտեղ՝ նույն քաղաքում գտավ հելլենական դպրության մի գրիչ, Հռոփանոս անունով, որի ձեռքով նշանագրի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը[70], կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնահարը ամբողջապես հորինելուց հետո[71] ձեռնարկեցին թարգմանության երկու մարդու՝ իր աշակերտների հետ, որոնց առաջինին Հովհան անուն էին կոչում, Եկեղեցական գավառից[72], և երկրորդին՝ Հովսեփ, Պաղնական տնից։ Եվ սկսեց թարգմանել Սողոմոնի Առակների[74] գիրքը, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության, ասելով, թե՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», որ և գրվեց այն գրչի ձեռքով. միաժամանակ սովորեցնում էին մանուկներին նույն դպրության գրիչներ պատրաստելով։

Ապա դրանից հետո թուղթ առավ քաղաքի եպիսկոպոսից և բոլոր

իրայիններով հրաժեշտ տալով նրանց, բերեց ասորոց եպիսկոպոսին, որոնցից սկզբում ընդունվել էր։ Աստվածատուր նշանագրերը ներկայացրեց նրանց, որի համար և սուրբ եպիսկոպոսներից և բոլոր եկեղեցիներից շատ գովաբանություններ բարձրացան ի փառս Աստծո և, ոչ սակավ՝ ի մխիթարություն աշխատողների։ Որոնցից բաժանվեց այնուհետև և ավետագիր թղթեր առնելով շնորհատուր պարգևներով հանդերձ՝ ավանդված Քրիստոսի շնորհներով, ճանապարհ ընկավ։ Եվ այսպես, բազում օթևաններ անցավ աջողությամբ ու հոգելից ուրախությամբ, եկավ հառավ Հայաստան աշխարհը, Այրարատյան գավառի կողմերը, Նոր քաղաքի[75] սահմաններին մոտ, Մեծ Հայաստանի արքա Վռամշապուհի վեցերորդ տարում[76]։

Մեծ Մովսեսն էլ այնպես ուրախ չէր Սինա լեռնից[77] իջնելու ժամանակ. չենք ասում, թե ավելի [ուրախ էր, այլ նույնիսկ] շատ պակաս [ուրախ]։ Որովհետև աստվածատես մարդն, աստվածակիր հրամանն Աստծուց առած իջնում էր լեռնից։ Իսկ այս երանելիին, որի մասին ես հորինվում իմ այս ճառերը, չեղավ այնպես, ինչպես այնտեղ կատարվեց. այլ նա ինքն իր հոգևոր ուրախությամբ լցված՝ գիտեր ընդունողների հոժարությունը[78]։

Ապա դրանից հետո երանելի Մեսրովպը իր այնպիսի առավել ևս բարձրագույն ուսումով սկսեց կարգել և հորինել հաճախագույն[131], դյուրապատում, շնորհագյուտ, բազմադիմի ճառեր մարգարեական գրքերի զորությունից ու հյութից, ավետարանական ճշմարիտ հավատքի ամեն ճաշակներով լիքը։

Եվ այսպես՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի բոլոր կողմերում, իր ամբողջ կյանքի ընթացքում, ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, անվեհեր ու առանց հապաղելու, իր իսկ ավետարանական ու ողջապատում վարքով ամենափրկիչ Հիսուսի անունը կրեց իր անձի վրա թագավորների, իշխանների ու բոլոր հեթանոսների առաջ և առանց ընդդիմության հակառակորդների կողմից։ Եվ ամեն մարդու զարդարեց Քրիստոսի զգեստով ու հոգեպես, և շատ բանտարկյալներ, կալանավորներ և նեղյալներ ազատեց՝ Քրիստոսի ահավոր զորությամբ կորզելով նրանց բռնակալների ձեռքից։ Եվ շատ անիրավ մուրհակներ պատռեց, և շատ սգավորների ու նեղսրտածների իր մխիթարական վարդապետությամբ ակնկալություն ու հույս տվեց և մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի [հավատքին] նվաճեց[132] և ամենքին ընդհանրապես փոխեց, աստվածապաշտության կարգի մեջ դրեց։

Եվ դարձյալ շեն ու անշեն տեղերում բնակեցնելով հաստատեց վանականների շատ ու անհամար խմբեր. դաշտական ու լեռնական,

անձավամուտ ու արգելական[133]։ Ժամանակ առ ժամանակ իր անձով հենց օրինակ էր ցույց տալիս նրանց. ամեն մենաստաններից հետո առնում էր աշակերտներից մի քանիսին և գնում լեռնակյաց, սորամուտ, ծակախիտ էին դառնում, իրենց օրական սնունդը խոտեղեն ուտելով էին վերջացնում։ Եվ այսպես, վշտակյաց տկարության էին անձնատուր լինում, մանավանդ որ աչքի առաջ ունեին առաքելական խոսքերի մխիթարությունը, թե՝ «Երբ տկար եմ Քրիստոսի համար, այն ժամանակ զորացած եմ լինում»[134]։

Այնտեղ այնուհետև չէին հարբում գինով, այլ լցվում էին հոգով և սրտերը հոգևոր երգերով[136] պատրաստում ի փառս և ի գովութիւն Աստծու։ Այնտեղ վարժվում էին հոգեպատում գրքերի քաղցրությույց ընթերցանությամբ։ Այնտեղ՝ վարդապետի քաջալերությունն ու հորդորը, որ ընտրյալներն առաջ դիմելով հասնեին Քրիստոսի դրած պսակահամբար կետին։ Այնտեղ հոգով եռում էին աստվածապաշտական ծառայությամբ։ Այնտեղ՝ աղերսական աղոթքներ, պաղատանք սրտառուչ և ամենքի կյանքի համար հաշտեցուցիչ խնդրանքներ մարդասեր Աստծուց։

Եվ նա այս միևնույն հոգեկրոն արվեստով շատ օրեր անց էր կացնում անապատ տեղերում, մինչև որ երեցներից իմաց էր տրվում, որ այն կողմերի եկեղեցիներին մի որևէ օգտակար բանի համար օգնության հասներ Աստծու շնորհքով։ Եվ անփակ բերանով ավելի էր ծավալեցնում վարդապետության վտակները լսողների սրտերի մեջ։

Եվ այս անում էր նա իր ամբողջ կյանքում, իր անձի և աշխարհի համար։ Որովհետև ճշմարիտ ուսուցիչները իսկապես սովոր են իրենց առաքինություններն աշակերտների համար օրինակ դարձնելու, մանավանդ որ մտաբերում էր Տիրոջ հրամանը, «Որովհետև սկսեց Հիսուսը գործել և սովորեցնել»[137]։ Որովհետև իսկապես ավելի օգտակար է բոլոր աշխարհային զբաղմունքներից մի կողմ քաշվել, առանձնանալ և միայն աստվածապաշտությամբ պարապել, ինչ որ անում էին մարգարեներն էլ, որոնք լեռներում ու անապատներում և այրերում ու քարերի փապարներում աստվածեղեն կրոնքի ծառայություն էին անում։ Նույնպես և բոլոր հայերը, որոնք առաքելական կանոններից հետո են եկել, անձամբ ունենալով բարեպաշտությունը, մեզ՝ վերջիններիս, օրինակ ցույց տվին, ուստի այս երանելին իր վրա վերցրած ուներ ավանդածների պատիվը։

Այն ժամանակ բերվեցին, երևացին Հայաստան աշխարհում Թեոդորոս[148] անունով մի հոռոմ մարդու սուտապատում գրքերը, դատարկաբան ավանդությունները։ Սուրբ եկեղեցիների սինհոդոսական հայրապետներն[149] այդ մասին գրելով իմաց տվին ճշմարտահավատ փառաբանիչներ Սահակին ու Մեսրոպին։ Եվ նրանք ճշմարտասեր ջանքով

մեջտեղից վերացրին այն, աշխարհից հալածելով՝ իրենց սահմաններից դուրս վանեցին, որպեսզի ոչ մի սատանայական ծուխ չխառնվի լուսավոր ուսմանը։

Դրանից հետո պատահեց, որ երանելի Սահակը նույն ճշմարտությամբ, օրերով ու շատ տարիներով լցված և Աստծու տված պտուղներով բարիքներով վայելչացած Վռամի որդու Պարսից աշխարհին թագավոր դարձած Հազկերտի առաջին տարում, Բագրեւանդ[150] գավառում, Բլրացվոց գյուղում, նավասարդ ամսի[151] վերջում, երբ և երանելիի ծննդյան օրն էին հիշում, ծերունին օրվա երկրորդ ժամին, անուշահոտ յուղի պաշտամունքի[152] ժամանակ աստվածահաճո աղոթքներով հոգին Քրիստոսին ավանդեց, հետևելով մարգարեին, որ ասում էր. «Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»[153]։

ԵՎ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ[179]

Իսկ երանելի Մեսրոպը շատ կարոտով այրված՝ ընկել էր տրտմության և արտասվակաթ ողբերի և ծանրաթախիծ սուգի մեջ։ Բայց թեպետ և մենակ մնալու տրտմությունը չէր թողնում, որ զվարթանա, սակայն ավետարանական ընթացքն ու սուրբ եկեղեցու վերակացությունը Աստծու շնորհքով առանց պակասության առաջ էր տանում։ Եվ գիշեր ցերեկ պահքով ու աղոթքով և ուժգին խնդրվածքներով ու բարձր ձայնով հիշեցնելով աստվածակիր հրամանը՝ զգուշացնում էր ամեն մարդու, կատարում ճգնական վարքի նույնիսկ բազմատեսակ և դժվարագույն վարժանքները. մանավանդ որ ծերունական[158] հասակի պատճառով մտաբերում էր իր վերջին օրը, քուն չէր տալիս աչքերին և աչ արտևանունքներին նիրհ՝ մինչև Տիրոջ հանգստին հասնելը։

Եվ մինչդեռ այնպես իր մոտին եղող մերձավորների հոգևոր եռանդը շարժվում էր, հենց միևնույն տարում, երանելի Սահակի մահից վեց ամիս անցնելուց հետո Հայոց բանակը սուրբ վարդապետի հետ միասին գտնվում էր Այրարատյան Նոր Քաղաքում, և միևնույն հոգեկրոն վարքով հասավ սրբի քրիստոսակոչ վախճանը մի քանի օրվա հիվանդությունից հետո՝ Մեհեկան ամսի տասներեքին[159]։ Եվ երբ պիտի ձեռնասուն աշակերտների միջից զատվեր և Քրիստոսի գնդին խառնվեր, ցավերից բեթհանալով և սթափվելով՝ վեր կացավ նստեց ժողովի մեջ և ձեռքերը հանապազատարած երկինք բարձրացրած՝ բոլոր մնացողներին հանձնարարեց Աստծու շնորհքին, նրանց համար օգնություն խնդրեց։

Եվ ժողովված գլխավոր աշակերտների անուններն այս են. առաջինը՝ Հովսեփ, երկրորդինը՝ Թադիկ, զգաստ ու վարդապետի հրամանների նկատմամբ շատ զգույշ մարդիկ։ Զինվորականներից առաջինը՝ Վահան, Ամատունի ցեղից, որ Մեծ Հայաստանի հազարապետն էր, և երկրորդինը՝ Համայակ[160], Մամիկոնյան տոհմից՝ պատվական, երկյուղած ու վարդապետի հրամանները կատարող մարդիկ։

Եվ մինչդեռ սրբի ձեռները կարկառված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր շողավոր ձևով սքանչելի տեսիլ երևաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երանելին. և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց։ Եվ նա սրբերին սեր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին և հեռավորներին օրհնությամբ պսակեց և հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով՝ հանգյավ։

Վահանն ու Համայակը աշխարհական բազմության հետ վերցրին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կանթեղներով ու բորբոքած ջահերով և բուրող խնկերով և ամբողջ լուսաճաճանչ աշտանակով և այն լուսավոր առաջախաղաց խաչանշանով, բարձրացան Օշական[161] և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, և երանելու օրինավոր հիշատակը կատարեցին, ապա նշանն աներևույթ եղավ, և նրանք ետ դարձան յուրաքանչյուրն իր տեղը։

Իսկ երեք տարի անցնելուց հետո Վահան Ամատունուն հաջողվեց՝ քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար[162] կանգնել տաշած քանդակած քարերով և տաճարի ներսում շինել սրբի գերեզմանը։ Նա Քրիստոսի կենդանարար մարմնի և արյան սեղանի վայելուչ, գույնզգույն, ոսկով և արծաթով ու թանկագին քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց ի հիշատակ, և մի տեղ հավաքված բոլոր սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի, երանելի Մեսրոպի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը։ Եվ նրա Թադիկ անունով աշակերտին՝ մի զգաստ ու բարեպաշտ մարդու, եղբայրների հետ երանության հասած սրբի համար սպասավոր կարգեցին ի փառս Աստծու, զի նրան վայել է փառք, իշխանություն և պատիվ. ամեն։

Գ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՆԵԼԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵՍՐՈՊԻ ԿՅԱՆՔԻ, ՈՐ ԳՐԵԼ Է ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏ ԿՈՐՅՈՒՆԸ

Մենք ձեզ կպատմենք ասքանազյան[2] ազգի, Հայաստան աշխարհի[180], գրի աստվածատուր շնորհք հանդիսացող գյուտի, Տիրոջ պարգևած վարդապետության, այդ լուսաշող վարդապետության [տարածման] ժամանակի ու հեղինակի, ինչպես նաև նրա հրեշտակակրոն, առաքինի վարքի մասին։

Այս այր Մեսրովբը Տարոն[50] գավառից էր, Հացեկաց[51] գյուղից։ Նա վարդանի որդին էր, որը մանկությունից սկսած[181] կրթվելով հելլենական դպրությամբ՝ եկել հասել էր Հայոց Արշակունի թագավորների դուռն[52] ու արքունական դիվանում ծառայելով՝ արքայատուր հրամանի սպասավոր էր դարձել։ Հմուտ և առաջադեմ լինելով աշխարհական կարգերում՝ զինվորական կյանքում սիրելի էր դարձել բոլորին՝ մեծամեծերին ու փոքրավորներին, որովհետև բոլոր իրավունքները իմաստությամբ էր գործադրում։

Դրանից հետո մարդասեր Աստծու սպասավորությանը նվիրվելով, ձերբազատվելով ամեն [տեսակի] պարտականություններից, (ձեռքն) առավ պարծանքի [արժանի] խաչը և, ինչպես հրամայում էր Ավետարանը, հետևեց խաչված ու ամենակեցույց Քրիստոսին։ Հրամանների, օրենքների պայմաններն ընդունելով[182]՝ նա խառնվեց Քրիստոսի աշակերտների խաչակիր գնդին և, մտնելով միայնակյացների դասի մեջ՝ միշտ ճգնությամբ զբաղվեց։ Հանձն առնելով հոգևոր բոլոր վարժությունները, ճգնեց իրեն քաղցի ու ծարավի, ցրտի ու մերկության մատնելով։ Բուսակեր, խարազնազգեստ դառնալով և գետնատարած անկողիններում [պառկելով], գիշերվա հանգիստ քնի փոխարեն շատ անգամ ոտքի վրա [կանգնած] մի ակնթարթի պես տքնությամբ անցկացրեց։ Եվ դա կատարեց շատ անգամ։ Մի քանի ուսումնասեր [աշակերտներ] գտնելով՝ նա նրանց հարեց իր կողմը, որպեսզի նույն ավետարանական կրոնն ուսուցանի։

Վրա հասած բոլոր փորձությունները[183] կամավոր քաջությամբ

տարավ, ճգնավորների շրջանում դրանով լուսավորվելով ու պայծառանալով՝ հաճելի դարձավ Աստծուն և մարդկանց։

Երանելին այնուհետև առնելով իրեն աշակերտողներին՝ գնաց Գողթն[54]։ Այստեղ նրան ընդառաջ ելավ Շամբիթ իշխանը, որը նրան սիրով ընդունեց իբրև բարձրյալ Աստծու ծառայի և բարեպաշտությամբ սպասավորեց նրան, ինչպես պատշաճ է Քրիստոսին հավատացող աշակերտներին։ Երանելին իր վարդապետական շնորհն անմիջապես ի գործ դնելով, իշխանի կամոք ու հոգացողությամբ ուսուցանեց քաղաքի ու գավառի բնակիչներին։ Եվ քանի որ նրանց մեջ [դեռևս] կային հեթանոսական սովորություններ [հետքեր], ուստի նրանց վերադարձրեց դեպի ճշմարիտ իմացությունը և բոլորին լուսավորեց հոգեշահ խոսքով։ Նրա ձեռքով մեծամեծ սքանչելիքներ, հրաշքներ կատարվեցին. դևերը զանազան կերպարանքներ ընդունելով ու բոլորին լսելի աղաղակ բարձրացնելով մատնեցին, իրենց փախուստը և ընկան Մարաց[55] կողմերը։ Այդ պատճառով էլ աշակերտները ավելի շատ էին լսում իրենց հոգեկրոն վարդապետի [այն խոսքերը], որ Սուրբ գրքով նրանց էր ավանդում Քրիստոսին մերձավոր սուրբ հայրերի հավատքի ու վարքերի մասին։

Բայց քանի որ հայոց լեզուն իր գրերը չուներ, աշակերտները մեծ դժվարություններ էին կրում ճշմարտության ավանդները յուրացնելիս։ Դրա համար երանելի վարդապետը տարակուսելով իր առաքելության մեջ՝ ամենակարող Աստծուն ապավինեց, որ նա հայոց լեզվի գրեր հայտնագործի, և գրեր ունենալով էլ թերությունը առավելության վերածվի։ Այնուհետև նա նշանագրերի համար գնաց Հայոց հայրապետ Սուրբ Սահակի[57] մոտ և տեսավ,որ սա [նշանագրերի համար][184] ավելի շատ է անհանգստացած։ Երբ նրանք բազում ջանքերից ու աշխատանքից հետո ոչ մի արդյունքի չհասան, դարձյալ աղոթքներին ապավինելով՝ Աստծուց խնդրեցին այն, ինչ ցանկանում էին։ Իրարից բաժանվելով ու իրենց խստամբերության մատնելով՝ նրանք ավելի շատ աշխատեցին։

Այսքան բաներից հետո այս հարցում նույնպես նախանձախնդիր և այդ հարցին տեղյակ Վռամշապուհ թագավորը Մեսրովբին իր աշակերտների հետ ուղարկեց ասորվոց Միջագետք։ Մեսրովբը տարբեր տեղեր գնալով գիտուն մարդկանց որոնեց, գիտություն տարածեց։ Նա հանդիպեց ասորվոց առաքինի եպիսկոպոս Դանիելին, որը խոստացավ նրան ցույց տալ նրա ցանկացած նշանագրերը։ Բազում տանջանքներ [կրելուց], քննության [ենթարկելուց] և ուսուցումից հետո ունայն դուրս եկավ [այդ տառերը], քանի որ դրանք հայոց լեզվի բառերին ու այբուբենի հնչյուններին չէին համապատասխանում։

Այնժամ նա ապավինեց Աստծու նկատմամբ [ունեցած] հավատքին, Աստծուն աղոթեց արտասվալից [աչքերով], բոլորի տեր Աստծուց գիշեր ու ցերեկ խնդրեց իրեն ցույց տալ փափագելի նշանագրերը։ Եվ [ահա] ոչ այն է քնի մեջ՝ երազում, ոչ այն է արթմնի, այլ սրտում՝ հոգու աչքերով երևացող մի տեսիլք տեսավ. աջ ձեռքը վեմի վրա [գրեր] էր գրում՝ կարծես գծի հետքեր էր թողնում մագաղաթի վրա։ Նա ոչ միայն դրանք տեսավ, այլև բոլոր մանրամասնությունները որպես ամբողջություն իր մտքում կուտակվեցին։ Աղոթք անելուց հետո վեր կենալով՝ նա Եպիփանոսի աշակերտ, Սամոսում միաչնակեցություն անող Ռուփինոսի հետ ստեղծեց[185] մեր նշանագրերը։ Երանելի Մեսրովբ վարդապետի խորհրդի համաձայն գրերը ձև ստացան և հելլենացվող սիղոբաների՝ կապերի նմանողությամբ հայերեն տառակապակցությունները կատարյալ դարձան։

[Դրանից] անմիջապես հետո նա ձեռնարկեց քսաներկու հայտնի [գրքերը] պարունակող Հին կտակարանը հայերեն թարգմանելուն՝ [հատուկ] դիտավորությամբ սկսելով Սողոմոն Իմաստունի Առակներից, իսկ նրա աշակերտներ Հովհաննն ու Հովսեփը նրան օգնեցին նույն այդ գործում։ Նա փոքրահասակ աշակերտներին գրչության արվեստն ուսուցանեց։

Այդ ժամանակ Թագավորում էր Թեոդոսիոս Փոքրը։ Երբ Հայոց երանելի վարդապետ Մեսրովբը Հայոց [կաթողիկոս] սուրբ Սահակի և Հայոց Թագավոր Վռամշապուհի մոտ բերեց մեր լեզվի նշանագրերը, սրանք շատ ուրախացան. կարծես Աստծու [ձեռքով] գրված տախտակներն էին ընդունում։ Նրանք իրենց գոհությունն ու փառքը մատուցեցին բոլորին [ստեղծած] Արարչին այն նոր պարգևների համար, որ նրանց էր տրվում ի վերուստ։ Սուրբ Հայրապետի ու Թագավորի հրամանով ուշիմ, ընդունակ, փափկաձայն ու երկարաշունչ երեխաներ հավաքեցին, և բոլոր գավառներում ու գյուղերում դպրոցներ բացելով՝ նա ուսուցանեց Հայոց ողջ աշխարհի [մարդկանց]։

Աստծու երանելի այրը Վրաց աշխարհ գալով՝ ի վերուստ նրան տրված Աստծու շնորհով նրանց համար էլ նշանագրեր ստեղծեց և տարբեր քաղաքներում վարդապետներ թողեց, որ նրանց մանուկներին էլ ուսուցանեն։ [Այնուհետև] ինքը Աղվանք գնալով այդտեղ նույն ձևով ստեղծեց նշանագրեր և [հիմք դրեց] գիր ու գրականության նկատմամբ սիրո ավանդությանը։ [Այստեղ էլ] վարդապետներ թողեց և, վերադառնալով Հայաստան, տեսավ, որ սուրբ Սահակ Հայրապետը Քրիստոսի շնորհիվ զբաղված է [Սուրբ գիրքը հայերեն] թարգմանելով աստերեհնից, քանի որ դրա հունարեն բնագիրը չկար. ամբողջ աշխարհի հունա-

րեն գրքերը այրել էր Մերուժանը, իսկ երբ Հայոց աշխարհը բաժանված էր [երկու մասի], պարսիկ վերակացուները թույլ չէին տալիս, որ իրենց մասում հունարեն դպրություն ուսանեն, այլ՝ միայն ասորերեն։ Դրա համար է, որ շատ տարակուսած էին սուրբ հայրապետ Սահակն ու երանելի Մեսրովբը, ուստի գնացին իրենց հունաց վիճակի արևմտյան կողմերը։

Սուրբ Սահակը Մեսրովբին հանձնելով նամակ ու իր թոռ Վարդանին՝ նրան ուղարկեց Թեոդոսիոս կայսեր և Ատտիկոս հայրապետի մոտ, տեղյակ պահեց նրանց գալստյան մասին, որ երկրի բնակիչներն ընդունեն հայերի կրոնի նոր ուսմունքը։ Ջորավար Անատոլիոսը ընդունելով նրանց, մեծ պատվի արժանացրեց, որովհետև նախօրոք տեղյակ էր երանելի Սահակի և Մեսրովբի առաքինության համբավի մասին։ Նա նամակով նախապես [այդ մասին] իմաց տալով կայսրին՝ հրաման ստացավ արժանի կերպով ճանապարհ դնել ու փառավոր կերպով ուղարկել Բյուզանդիա։ Թագավորն ու հայրապետը դիմավորեցին նրանց, Մեսրովբին եկեղեսիկտիկոս[186] ձեռնադրեցին ու նրան առաջին երանելի վարդապետների շարքը դասեցին։

Նրանք, նամակներ ունենալով, եկան հանդիպեցին Սուրբ Սահակին ու զորավար Անատոլիոսին։ Սրանք նամակներն ու հրամանները ընդունելով շատ ուրախացան և փառք տվեցին բոլորի Տիրոջն ու Աստծուն։ Նա շտապեց անմիջապես կատարել հրամանները և [մարդիկ] ուղարկեց կայսեր իշխանության ներքո գտնվող հայկական գավառներն ու քաղաքները, որ տարբեր տեղերում հավաքեն բազում մանուկներ, արքունուստ [հատկացվող] ապրուստ ու ոճիկ սահմաններ, որպեսզի մանուկները սովորեն առանց հոգս ունենալու։ Երանելի Մեսրովբը լուսաշող վարդապետությունը գործի դնելով, հավաքված մանուկներին ուսուցանեց նշանագրերը։ Նա իրեն աշակերտածներին, ուսուցիչներ կարգեց, որպեսզի վաղ հասակից նրանց ուսուցման գործին լծեն։

Այնուհետև նա ձեռնարկեց բորբորիանոսների[111] ժպիրհ ու քմահաճ աղանդը հետաքննելու գործը։ Երբ սրանք չընդունեցին ճիշտ խոսքի վարդապետությունը, բանտում շղթայակապ սաստիկ տանջանքների ենթարկեց տարբեր ձևերով, իսկ երբ Աստծուն ատողները դրանից հետո էլ հրաժարվեցին [իրենց հոգու] փրկությունից, այնժամ խանձեցին, մրեցին ու պեսպես ձևերով խայտառակության ենթարկելով վտարեցին երկրից։

Երանելին իր ուսուցչական գործն առաջ տարավ՝ սկսեց ու ավարտի հասցրեց այն։ Եկեղեցու հայրերի բազմաթիվ շնորհագիր մատյաններ ստանալով ու ձեռք բերելով, նա հարստացրեց [իր] վարդապետության

խորութիւնը և ի փառս ամենասուրբ Երրորդութեան, երկրի բնակիչներին լիացրեց հոգևոր ամեն վայելչութեամբ։ Բոլորին Աստծու ամենապահ շնորհները պատգամելով՝ ինքր վերադարձավ Հայոց կողմերը և շրջելով բոլորի հետ՝ իրեն աշակերտողներին բերեց ճշմարիտ հավատի։ Գալով այստեղ՝ նա հանդիպեց սուրբ Սահակին։ Սա ներանից տեղեկացավ եղած դեպքերի մասին, և նրանք միաբան օրհնեցին Աստծուն, որն իրենց նորատուր պարգև էր տվել ի վերուստ։

Դրանից հետո երկու երանելիները հոգ տարան, որ որքան Աստված հաջողություն կտա, թարգմանություններ կատարելով և գրելով հարըստացնեն ու զարգացնեն իրենց ազգի գրականությունը։ Դրա համար աշակերտներից երկուսին՝ Եզնիկին[120] ու Հովսեփին[119] ուղարկեցին Եդեսիա քաղաքը, որ ասորերենից հայերեն թարգմանեն Նոր Սուրբ գիրքը[187] և գրի առած բերեն իրենց երկիրը։ Սրանք [Եդեսիա] գալով կատարեցին այն, ինչ հրամայված էր իրենց, և հավատարիմ եղբայրների միջոցով այդ գրքերն ուղարկելով իրենց պատվական հայրերին՝ իրենք անցան գնացին Հունաց կողմերը՝ Բյուզանդիոն քաղաքը, որ իմաստասիրություն ուսումնասիրեն։ Նրանք ուսում ստանալով ու հմտանալով՝ հելլեներեն լեզվից հայերենի թարգմանիչներ դարձան։

Որոշ ժամանակ անց Հայաստան աշխարհի մի քանի [հոգևոր] եղբայրներ գնացին Հունաց կողմերը՝ Կոստանդնուպոլիս քաղաք։ Դրանցից մեկի անունը Ղևոնդ էր, իսկ մյուսինը՝ Կորյուն։ Սրանք գնացին միացան Եզնիկին, որը նրանց մտերիմն ու սննդակիցն էր։ Նրանք սուրբ հայրերի առաջ դրեցին սուրբ եկեղեցու իրենց բերած կտակարանները։

Երանելի սուրբ Սահակն ու Մեսրովբը մինչ այդ հունարենից հայերեն էին թարգմանել բոլոր եկեղեցական գրքերը[124] և հայոց լեզվով շարադրել բազմաթիվ սուրբ հայրապետների ճշմարիտ իմաստությունը[125]։ Դրանից հետո Եզնիկն[126] առավ մինչ այդ պատահաբար ձեռքի տակ ունեցած բնագրի հապճեպ թարգմանությունները, և Եզնիկի հետ դրանք ստուգվեցին բերված ճշգրիտ օրինակների հետ։ Նրանք հայերեն տառերով գրի առնելով թարգմանեցին նաև Սուրբ գրքի բազմաթիվ մեկնություններ[127]։ Երանելի սուրբ հայրերն այսպես գիշեր ու ցերեկ՝ անընդհատ զբաղված էին Սուրբ գրքի ընթերցանությամբ և դրանով իսկ զարգանալով ու շահելով [իրենց] ուսումնասեր ընթերակաների համար բարի օրինակ դարձան, մանավանդ որ Աստծուց նշանակված պատգամավորների զգուշացնող պատվիրաններ ունեին, որոնցից առաջինն ասում էր. «Տիրոջ օրենքների մասին խորհել գիշեր ու ցերեկ»[129], իսկ երկրորդը՝ «Ուշադրություն դարձրու մխիթարության, վարդապետության գրքերի ընթերցանությանը։ Անտարբեր մի՛ լինիր քո ունեցած շնորհների նկատմամբ։ Մտածի՛ր այդ մասին, այդ [մասին մտածելով] վեր կաց, որ քո գերազանցությունը հայտնի լինի բոլորին։ Զգուշությամբ վերաբերվիր քո անձի ու քո վարդապետության նկատմամբ և դրանով անցկացրու ժամանակդ։ Եթե այս կատարես, ապա կփրկես և՛ քո անձը, և՛ նրանց, ովքեր քեզ կլսեն»[130]։

Այսպիսի համապարփակ և լուսավոր վարդապետություն քարոզելուց հետո երանելի Մեսրովբն սկսեց կարգել և շարադրել հաճախագույն[131], դյուրամատչելի, շնորհագիր, բազմաբովանդակ ճառեր, որոնք բխում էին մարգարեական ու առաքելական գրքերի ազդեցությունից ու էությունից։ Դրանք լի էին ճշմարիտ հավատի ավետարանական ամեն տեսակի ճաշակով, այստեղ այս անցավոր [աշխարհից] բազմաթիվ իրական նմանություններ ու օրինակներ բերելով՝ ավելի շատ խոսվում է հանգուցյալների հարության հույսի մասին, որպեսզի տխմար դյուրահավատներին, պարզամիտներին ու մարմնական գործով տարվածներին ստիպեն սթափվել, զգաստանալ և հիմնավորապես հուսադրվել խոստացված շնորհների համար։

Եվ այսպես, Հայոց, Վրաց և Աղվանից բոլոր կողմերում, իր ամբողջ կյանքի ընթացքում՝ ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, առանց վախենալու և հապաղելու նա նորահայտ վարդապետությունն ուսուցանեց։ Ճանապարհորդելով, հավատի ու [սրբերի] վարքերի մասին ավետարանական ու ստուգապատում խոսքով նա ի փառս և ի գովութիւն, Աստծու, թագավորների, իշխանների, ռամիկների առաջ, հակառակորդների առարկությունների չհանդիպելով, ի վերուստ տրված պարգևի շնորհիվ սովորեցրեց, քրիստոսասեր ու անձը զինող ոգին բորբոքեց, բազմաթիվ բանտարկյալներին, կալանավորներին ու տարբեր պատուհասներով տագնապյալներին փրկություն պարգևեց ի շահ ավետարանական փրկության, Քրիստոսի փառքի հեղ զորությամբ տարակուսյալներ փրկեց, բազմաթիվ անարդար մուրհակներ ոչնչացրեց, [իր] վարդապետությամբ բազմաթիվ սգավորներ ու նեղսրտածներ մխիթարեց, մեծ Աստծո և փրկիչ Հիսուս Քրիստոսի[132] փառքի հայտնության հույսի ակնկալությամբ նվաճեց [նրանց] համբերությունը, բոլոր հավատացողներին՝ տղամարդկանց ու կանանց, աստվածապաշտության կարգ ու կանոնի բերեց։

Բացի այդ, ի փառս և ի գովեստ ամենասուրբ Երրորդության, շեն և անշեն տեղերում բազմաթիվ խմբեր սուրբ հայրերի ճշմարիտ հավատքի դարձրեց։ Նա դաշտաբնակներին ու լեռնաբնակներին, անձավաբնակներին, լեռնականներին ու ճգնավորներին[133] բարեպաշտ կրոնավորության դարձրեց։ Նա ոչ միայն խոսքով ու քարոզչությամբ, այլև գործով,

ամենօրյա պահքերով ու աղոթքներով, տքնելով ու արտասվելով, խոնարհությամբ ու հեզությամբ, իրեն կուսության դատապարտելով միաբաններին անձնական օրինակ տվեց։ Նա քաջաբար դիմադրեց հանապազօրյա թշնամուն։ Պատվից ու փառքից խուսափելով գնաց ծվարեց անձավներում և իր օրը բանջար ուտելով անցկացրեց։ Եվ այսպես, նա իր անձը ջանադրաբար վշտակցություն հարուցող տկարության մատնելով ապավինեց առաքելական այն խրատին, ըստ որի «երբ Քրիստոսի համար եմ տկարանում, այնժամ զորանում եմ»[134], կամ «Ավելի լավ է տկար մնամ, որ իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը»[135]։

Հոգով զվարճանում էին այնտեղ, ուր նա կանգ էր առնում։ Նա պայծառացավ ոչ թե գինով, այլ ի փառս և ի գովություն Աստծուն [առաքված] հոգևոր երգերով։ Նա ճգնավորներին կրթեց հոգեպատում գրքերի միշտ քաղցրուսույց ընթերցանություններով, լուսավոր կարգերի ու տոների քաջալերող հորդորներով, ամենազոր վարդապետությամբ, որպեսզի Քրիստոսի դրած պարգևի տեզը հասնելու համար ընտրյալները առաջադիմեն։

Վերին կոչման համար մաքառող այդ մարդը եռում էր աստվածպաշտության ոգով, աղերսալի աղոթքներով, սրտառուչ պաղատանքներով ու հեզ խնդրանքներով բոլորի տեր [Աստծուց խնդրում էր], որ բոլորն արժանանան սրբերի հավիտենական կյանքի լույսին։ Նույն այս հոգեկրոն վարքով էլ ապրեց անապատում, ուր և տեղեկանում էր տարբեր տեղերում աշակերտներից [նշանակված] եկեղեցականների օգտակար գործերի մասին։ Նա օգնության էր հասնում այնտեղ, ուր հոգևոր գործերի պակասություն էր նկատվում, և Քրիստոսի շնորհքով անում էր այն, ինչ անհրաժեշտ էր, անփակ բերանով ու հանճարեղ իմաստնությամբ ավելի առատ ու հանգամանորեն վարդապետության ակունքներն էր սփռում ծարավ սրտերի մեջ։ Եվ Հայոց երանելի վարդապետ Մեսրովբը դա կատարեց իր ամբողջ կյանքում, քանզի ճշմարիտ վարդապետները սովոր են իրենց անձնական առաքինությունը աշակերտների համար կանոնի վերածել, ինչպես որ մեր Քրիստոս ու Աստված ըստ տնօրինության ուսուցանում են. «Հիսուս սկսեց գործել ու սովորեցնել[137]»,— ասում է [Նոր կտակարանը] կամ «Նայենք Հիսուսին՝ հավատի առաջնորդին, այն կատարյալ դարձնողին, որն իր առաջ դրված ուրախության փոխարեն հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը»։

Եվ վիշտ ունեցող ու Հիսուս Քրիստոսին հավատացող ո՞ր մարդը կարող է հատուցման ակնկալություն ունենալ։ «Նստեց,— ասում է,— մեծության աջ կողմում, երկնքում»[187]։

Հապա մտածեք, թե ինչի՜ համբերություն ցուցաբերեց մեզ համար, որպեսզի մենք չլարշարվենք ու առաքինի վարքից չզրկվենք։ Ամենատերն այս անում էր ոչ թե իր անձի, այլ ողջ աշխարհի փրկության համար, աստվածասեր այն մարդկանց կրթության համար, որոնք նույն հանդերձյալ [աշխարհ տանող] ճանապարհն են անցնելու, և որոնք Քրիստոսին հավատացող բոլոր մարդկանց համար օրինակ են ծառայում, ինչպես քարոզում են Ավետարանի խոսքերը։

Անտեսենք թեթև արվեստներն ու ուղղամիտ իմաստնությունը, որ աստվածախոսների միջոցով[188] շնորհք է ներարկում, որոնց բոլորին երանելի Պողոսն անվանում է տգետ, նաև հիշեցնում էր կենաց խոսքի առաջնորդներին. «Նայեցեք,— ասում է,— նրանց կենցաղն ընդօրինակեցեք և, տարբեր ու օտարոտի ուսմունքների մեջ մի՛ խարխափեք»[144], այլ հետևեցեք առաքյալների, մարգարեների ու երանելի սուրբ հայրերի ավանդած ճշմարտությանը, որ նրանք անսայթաք կերպով ճանապարհ բացեցին դեպի երկնքի արքայություն և աշակերտներին հավատքն ու վարքերը իբրև օրինակ ներկայացրեցին սուրբ գրքերով։ Երբեմն ոմանց օգտից ելնելով առանձին խրատելով, երբեմն բազմամբոխ հավաքույթներում Տիրոջ շնորհքով ու մարդասիրությամբ Քրիստոսին էին փառաբանում, իրենց զրկում էին աշխարհիկ բոլոր հաճույքներից, միայն աստվածպաշտությամբ էին զբաղվում, մի բան, որ մարգարեներն ու առաքյալներն էին մինչ այդ գուշակել, ինչպես Պողոսն է վկայում. «Թափառեցին,— ասում է,— [ոչխարի] ու այծի մորթիներով, կարիքի, նեղության մեջ, չարչարվելով երկրի անապատներում, քարայրներում ու կիրճերում մոլորված։ Սրանք բոլորը՝ հավատքի այս վկաները[189] ստուգեցին աշակերտների արդարության ճանապարհը, որ տանում է դեպի հավիտենական կյանք։

Այս երանելի Մեսրովբը, ի փառս ամենքի Տիրոջ, հանձն առավ [տերունական խոսքը այլոց] հաղորդելու պատիվը և իր բոլոր աշակերտներին նույն բանը հորդորեց։ Եվ [նրանք] այսպես առաջադիմելով, աստվածահաճո ողջ վարքով ու հավատի երջանկությամբ լցված, պատրաստված ու հարստացած, երկար ժամանակ աշակերտելով նրան, նրա նման վաղ էին վեր կենում և հարատև աշխատում ի փառս ամենասուրբ Երրորդության։

Այդ ժամանակ էր, որ Եփեսոսի ժողովից հալածված մի քանի հոգի, որոնցից մեկի անունը Թեոդորոս[148] էր, Պողոս Սամոսատացու և Նեստոր հերձվածողի ոգով գրված պարզամիտ ու դյուրահավաս գրքեր բերեցին և մեր երկիրը գալով ուզեցին տարածել [իրենց այդ] չար աղանդը։ Նրանք այդ մասին իմաց տվեցին՝ նամակ գրելով և ուղարկելով սուրբ ժողովին[149], ճշմարիտ հավատքի տեր լուսավորիչներ Սահակին ու Մես-

րովքին, իսկ սրանք մոլորված հերձվածողներին անմիջապես հալածեցին իրենց երկրից, որպեսզի լուսաշող վարդապետությունը սատանայական ինչ-որ մի ծխով չպարուրվի։

Այս դեպքերից հետո այս աշխարհից հեռացավ, վախճանվեց երանելի սուրբը՝ Հայոց Սահակ հայրապետը։ Նա արդար կյանքով և ուղղափառ հավատով, երկար օրեր ու տարիներ, ապրեց՝ ողջ Հայոց աշխարհը հարստացնելով լուսավոր վարդապետությամբ, և այդպես էլ Պարսից թագավոր Վռամի որդի Հազկերտ երկրորդի [թագավորության] առաջին տարում, Բագրևանդ գավառի[150] Բլուր գյուղում, Նավասարդ[151] ամսի վերջում, պաշտաման օրվա, այսինքն իր ծննդյան նույն օրվա երրորդ ժամին հանգավ ի Քրիստոս։ Մեռունին այդպես էլ սաղմոսերգությամբ ու աղոթքներով անբիծ հոգին ավանդեց Քրիստոսին՝ ասելով. «Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»[153],— ինչպես [Ստեփանոս] նախավկան էր ասել։

Նույն ձևով նա իր անձն ու իր հավանած սրտին մոտ մնացած ամեն ինչ վստահորեն հանձնեց Աստծու ամենապահ շնորհքին ու վերացավ այս աշխարհից։ Շուտով, քահանայապետական թաղման կանոնի համաձայն, նրան հանդերձներ հագցրեցին իր իսկ ձեռնասուն աշակերտները, որոնցից առաջինի անունը Երեմիա էր՝ մի սուրբ ու Աստծուց երկյուղած մարդ, ինչպես նաև նրա հետ այլ մարդիկ, և Վարդան Մամիկոնյանի կնոջ[155], մեծաթիվ մարդկանց, եպիսկոպոսների ու քահանաների, սարկավագների ու դպիրների հետ, սաղմոսներ, օրհնություններ ու հոգևոր երգեր երգելով բերեցին Տարոն գավառի Հաշտիշատ[156] գյուղը, այնտեղ ամեն պատիվներ տալով Աստծու սուրբ մարդու մարմինը մարտիրոսական մատուռում տեղավորեցին սրբերի տապանի մեջ և քրիստոսանշան կնիքով կնքելով՝ ի փառս և ի գովություն Աստծու կատարեցին սրբի հիշատակի ծեսը, որից հետո ամեն մեկը վերադարձավ [իր տեղը]։ Այս սրբի հիշատակի տոնը կատարում են Նավասարդ ամսի երեսունին, մի մեծ բազմության ներկայությամբ, և սուրբ հայրապետի բարեխոսությամբ ամեն մեկը բոլորի Տիրոջից իրենց վարձն է ստանում։

Երբ նրա երանելի գործակիցը (Մեսրովբ վարդապետը) լսեց այս, տրտմեց, ու տխրեց, արտասուք թափելով մտահոգ դարձավ, որովհետև Աստծու այրից բաժանվելն ու նրա մահը սուրբ Գրիգորի սերնդի վերացում էր նշանակում։ Այսպիսի աղետը նրա հոգին տարակուսյալ պարուրեց, մանավանդ որ բարեպաշտության ջանք [թափելու], լուսաշող վարդապետությունը [տարածելու] և վերակացություն [անելու] շնորհք ունեցող որևէ մեկին չէր տեսնում, որն իրեն նախորդած հայրերից ավելի բարձր արժանիքներ ունենար։ Այս մասին մտածելով

ու ողբեր կարդալով տանջվում էր։ Ոչ մի համախոհ չուներ, որ սրտացավ կերպով հոգ տանի Հայաստանի մասին։ Այս բանների համար Աստծուն էր հիշում և [ինքն իրեն] մխիթարում՝ հիշելով Սաղմոսերգուի այն խոսքը, թե՝ «Ով ստեղծել է ամեն ինչ, նա էլ անհաս իմաստնությամբ ու տնօրինությամբ կփոխի դրանք»։ Նա իրեն ավելի շատ նվիրեց կրոնավորության կարգի, ամբողջությամբ վեր կանգնեց [մյուս] կրոնավորներից, որպեսզի երկնային կոչման համաձայն, առանց ծուլանալու, Աստծու շնորհքով ավելի բարձրանա։ Նա իր բոլոր աշակերտներին հորդորեց, որ բարիք [գործելու] քաջություն ունենան, բոլորին կյանքում և կենցաղում խոհեմ և իմաստուն խոսքերով հուշեց, որ զգուշանան [պատահական] մարդկանցից, թեև շատերը խիստ դժվար ու ծանր էին տանում կենցաղային այդ դասերը։ Նա, սակայն, այս վերջիններին մոռացավ և ծեր տարիքում[158] ապագան էր աչքի առաջ ունենում։ Մոտավոր վախճանը՝ հիշելով՝ մինչև այս աշխարհից նրա փոխադրվելու օրը ո՛չ աչքերը քուն տեսան, ո՛չ արտևանունքները փակվեցին։

Մինչ իրեն մոտիկ գտնվող մարդկանց հոգևոր եռանդն էր այսպես բորբոքում դեպի աստվածասիրություն ու բազմաթիվ խրատական նամակներ առաքում բոլոր գավառները, սուրբ Սահակի նույն տարում, սուրբ Սահակի մահվանից վեց ամիս հետո՝ մեհեկան ամսի տասներեքին[159], Այրարատ գավառի Նոր քաղաքում վրա հասավ Հայոց սուրբ վարդապետի մահը նույն հոգեկիր կրոնին [որդեգրված], ինչպես վերն ենք ասել։ Սրբի քրիստոսակոչ վախճանը տեղի ունեցավ մի քանի օր հիվանդանալուց հետո։ Երբ Աստված կամեցավ սրբին տանել իր ձեռնասուն աշակերտների միջից և սրբերի գնդերին միացնել, [Մեսրովբն] իր ցավերից ազատվելով ու սթափվելով եկավ կանգնեց հավաքված մարդկանց մեջ և ձեռքերը մեկնելով դեպի հանապազատարած երկինք՝ օրհնեց ամենասուրբ երրորդությունը, իր աշակերտներին հանձնեց Աստծու ամենապահ շնորհքին, որ նրանք հաստատ մնան իրենց հավատքին ու արդար կյանքին, և նրանք առանց գայթակղվելու պաշտպանեն Քրիստոսին մերձավոր սուրբ հայրերի արդարությունը։

Նրա մոտ հավաքված աշակերտների մեջ գլխավորները հետևյալներն էին. առաջինը [անունը] Հովսեփ էր, երկրորդինը՝ Թոդիկ՝ զգաստ և ուշադիր մարդիկ, իսկ զինվորականներից առաջինի [անունը] Համայակ[160] էր, Մամիկոնյան տոհմից, երկրորդի անունը՝ Վահան, Ամատունյաց ցեղից։ Սա Մեծ Հայաստանի հազարապետն էր։ Բոլորն էլ աստվածասեր ու աստվածավախ մարդիկ էին։ Քանի դեռ սուրբ վարդապետի ձեռքերը դեպի երկինք էին կարկառած, սքանչելի մի տեսիլ

ու լուսավոր, շողաձև խաչանշան երևաց այն ապարանքի վրա, ուր երանելին էր վախճանվում։ Այս բանը ամենքն իրենց աչքերով տեսան և ոչ թե ուրիշից լսեցին։ Սուրբը սիրո և միաբանության պատվիրան, հեռու և մոտիկ մարդկանց օրհնություն տալով, Տիրոջը հաճոյական աղոթք մատուցելով ի փառս ամենասուրբ Երրորդության՝ շուտով ավանդեց հոգին։

Հմայակն ու Վահանը հանգուցյալին վերցնելով, աշխարհական բազմության հետ, սաղմոսներ, օրհնություններ ու հոգևոր երգեր երգելով, վառվող մոմերով, բորբոքված ջահերով, անուշահոտ խունկերով և առաջից գնացող նույն այդ լուսավոր խաչանշանով մտան Օշական[161], այնտեղ Աստծու սուրբ մարդուն իջեցրեցին մարտիրոսական մատուռը և երանելու հիշատակի ծեսը կատարեցին ըստ օրենքի։ Դրանից հետո նշանն աներևութացավ, իսկ նրանցից յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը՝ փառավորելով ու օրհնելով Աստծուն այն հրաշքի համար, որ Տերը ցույց էր տվել վարդապետի վրա։

Երեք ամիս անց քրիստոսասեր Վահան Ամատունին, Աստծու շնորհած հաջողությամբ, կամեցավ Աստծու անվան փառքի տաճար[162] կառուցել հանուն սուրբ վարդապետի։ Դա տաշած քարից պետք է լիներ, սքանչելի ձևավորված խորաններ պետք է ունենար և գեղեցիկ շինություն պիտի լիներ, իսկ խորանի տակ պետք է լիներ սրբի հանգստավայրը։ Քրիստոսի կենարար մարմնի ու արյան սեղանը՝ Աստծու տունը, պետք է զարդարվեր վայելուչ սպասքներով, ոսկով, արծաթով ու պատվական քարերով։ Սուրբ վարդապետի գգաստ և բարեպաշտոն Թոդիկ աշակերտին սպասավոր կարգեցին, որ մյուս եղբայրների հետ ամենօրյա ծես կատարի։ Սուրբ հայրերի հայտնած [ցանկության] համաձայն ժողովրդի վերակացուներ կարգեցին ճշմարտասեր ու ողջախոհ մարդկանց՝ Հովսեփին[163] ու Հովհաննին։ Սրանք սրբերի մահվանից հետո Պարսկաստանում՝ Տիսպովն[164] քաղաքում Քրիստոսի համար բռնավորների վրա գործադրվող տարբեր փորձությունների ենթարկվեցին. մենամարտիկ մնալով բազում հաղթանակներ տարան, որի համար և Խոստովանող[165] անունը ժառանգելով՝ վարդապետության նույն վերակացությամբ վերադարձան Հայոց երկիրը։

Բարյացապարտ, ամենահաս Վահանը[166] դարձավ բոլոր սրբերի ցանկալի հյուրընկալը, որը աշխարհը վերածնող հայրերի հոգևոր որդին լինելով՝ Քրիստոսի շնորհով հավիտենական կյանքի է արժանի[167]։

Արդ, երանելի սուրբ հայրերի վարքն ու վախճանը համառոտակի պատմելով գրի առնելուց հետո, մեր խոսքը ավարտի հասցնենք։ Մենք սա շարադրել ենք ոչ թե անցյալից եկած զրույցներ լսելով կամ կար-



դալով, այլ այդ մարդկանց սեփական աչքերով տեսնելով, սրբերի հոգևոր գործերի մասնակիցը, շնորհապատում վարդապետության ունկընդիրը, նրանց՝ սուրբ վարդապետների ավետարանական հրամանների սպասավորը լինելով։ Մեր հայրերին հարգած լինելու և գովասանքի արժանանալու համար ստապատում խոսքեր գրի չենք առել։ [Ավելին]. չենք նշել առաքինի այդ մարդկանց շատ գործերը, որ այժմ Քրիստոսին է հայտնի, որ հետո պիտի գա փառքով, իր սրբերով շրջապատված, որպեսզի իրեն արժանի փառքն ստանա։ Այդ մարդկանց քաջագործության վերաբերյալ որոշ բաներ լսել ենք նշանավոր գիտակներից[168], բայց դրանք համառոտ ենք շարադրել, որից շահել ենք ոչ թե մենք, այլ այս մատյանն[169] ընթերցողները։ Մենք չէինք կարողանա սրբերի կատարած ամեն ինչ[170] գրի առնել, ուստի սահմանափակվել ենք դյուրագույնն[189] ու ավելի հաճելին [շարադրելով]։ Սրբերի բազմադիմի վաստակները զանց առանք, որ ըստ մեր կարողության գոնե մի քանի կարևորագույնները հանգամանորեն մատենագրենք։ Այս բաները պատմեցինք ոչ թե ի պատիվ Քրիստոսի ընտրյալ մերձավորների, որոնք ամենապայծառ հավատով ու վարքով[172] են աչքի ընկել, այլ ի քաջալերիչ օրինակ իրենց հոգևոր սերունդների և նրանց, ովքեր նրանց միջոցով ճշմարտության աշակերտ են դառնալու իրենց ազգի մեջ ի փառս ամենասուրբ Երրորդության՝ Հոր և Որդվո և Հոգվույն սրբո այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Ա

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԱՌՆ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԻ Ի ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՏ ՅԱՇԱԿԵՐՏՏ ՆՈՐԻՆ

[Ա]

Զազբանազեան[2] *Ազգին և զՀայաստան աշխարհին զաստուածապարգեւ գրոյն, եթէ ե՛րբ և յորում ժամանակի մատակարարեցաւ և որպիսի՛ արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ և վասն նորին լուսաւոր վարդապետութեան և հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել և մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտացս վասն յուշ արկանելոյ միայնագործ հոգայի*[3]*, եկեալ հասանէր առ իս հրաման առն միոյ պատուականի Յովսեփ*[4] *կոչեցելոյ, աշակերտի առն այնորիկ, և ընդ նմին այլոց եւս քաջալերութիւն աշակերտակցաց մերոյն վարդապետութեան։ Ուստի և իմ մասնաւոր աշակերտութեան վիճակ առեալ, թեպէտ և էի կրտսերագոյն, և առաւել քան զկար մեր, գրաւեալ անաչառ հրամանին հասելոյ, փութանակի և առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել։ Զորս և մեր համօրէն աղաչեալ երկախառնել ընդ մեզ աղօթիւք՝ յանձնարարութեամբ աստուածեղէն շնորհացն, զի կամակարագոյնս և ուղղագոյնս նաւիցեմք զհամատարած ալեօքն վարդապետական ծովուն։*

[Բ]

Ծւ արդ առեալ նախաբանեացուք, եթե իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց, ոչ ի մէնջ արուեստախօսեալ մերոյն կարծեօք վիճաբանելով, այլ յօրինակացն տուելոց զընդդիմակացն բարձրացուցանել։ Քանզի Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիւրոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց՝ զչքնաղ և զբարձրագոյն հատուցումն բաւական համարել յանսպառ յաւիտեանսն, այլ և աստէն իսկ կանխագոյն. զի անցաւոր ժամանա-

ձօքս մատենապատում երկնաբերձ պայծառացուցեալ, զհոգեղինացն և զմարմնականացն առ հասարակ փայլիցեն։

Եւ ի մովսիսական պատմութեան[5] յայտնի է երանելեաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաստատութիւն, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն, սքանչելական կենացն պայծառութիւն։ Զի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալ[6], եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ ամենակուլ մահուանն կենօք երեւեալ[7], և միւս ոմն բովանդակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ աստուածապատիժ ծովուն հանդերձ ամենայն շնչականօք տարեւոր ժամանակօք նաւակաց պահեալ[8], և միւսոյն յանկարծագիտ հաւատովք արդարացեալ, աստծուածամերձ աստուածախօս դաշնաւոր կատարեալ, և զաւետիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ[9]։ Բազմօք և այլ նոյնպիսիք աստուածածանօք գտեալք, որոց ազնուականութիւնքն յամենայն աստուածածանօք գրոց պատմի։

Հանգոյն ասացելոցս երանելոյն Պաւղոսի[10] առ Երբայեցիսն կարգեալ զանուանս՝ գովէ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն. որով զվարձահաւատոյց մխիթարութիւն ընկալան յամենապարգեւողէն Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յառաջադիմութեանցն. Նա և զժանգագործին Բահաբու[11] զհիւրընկալութիւն լրտեսացն՝ համեմատէ։ Իսկ իբրև հայեցեալ ի բազմախուռն գումարութիւն արդարոցն՝ զսակաւուցն զանուանս յայտ առնէ, և զայլովք եւս զանց առնէ, անբաւական զժամանակն առ ի կարգի պատմելոյ։ Ի կիր արկանէ այնուհետեւ նշանակել միանգամայն զփորձութիւնս ի վերայ յարձակեալս և զնոցա զանընդդիմակաց գնահատակութիւնսն, զորս և պատուականս քան զաշխարհական վաճառս համարի։

Սոյն օրինակ և ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զօրաց. զոմանց՝ ըստ աստուածեղէն կրօնիցն զբարեյաղթութիւն, և զոմանց՝ ըստ աշխարհակիր կարգաց զմարտից և զպատերազմաց արուեստիւնսն, որպէս զներբոտայն[12] և զՄամփսոնին[13] և զԴավիթայն[14]։ Եւ զոմանց զրնական զիմաստութիւն գովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսէփայն[15] յԵգիպտոս, և զԴանիէլին[16] ի Բաբիլոն[17]։ Յորոց և հզօր թագաւորացն խրատիչք էին, զաշխարհական կենցաղոյս զհանգամանսն ցուցանէին, հանդերձ ամէնիշխանին Աստուծոյ ծանօթս առնելով։ Զորոց և մարգարէին իսկ գովեալ զիմաստութիւնն, ասէր ցոմն այսպէս. «Մի՛թէ իմաստնագո՞յն իցես քան զԴանիէլ. կամ իմաստո՞ւնք խրատուք խրատեցին զքեզ հանճարով իւրեանց»[18]։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և հոգևկան ազգին հրեշ-

տակութեամբ՝ գովեալ զսրբոցն զօրութիւն, որ զԴանիէլ ցանկալի քարոզելովն կոչէին. և զսուրբ Տիրամայրն ի Գալիլեայ՝ օրհնեալ ի կանայս[19]։

Բայց զի՞նչ ասիցեմք զզուգականացն զառ ի միմեանց պատուեալ զգովութիւնս, զորոց և Տէրն իսկ ամենայնի՝ բերանալիր գոչէր զազնուականութիւնսն, ոչ միայն զյանդիմանական գործոյն, այլ և զծածուկ սրտիցն լուսաւորութիւնս առաջի հրեշտակաց և մարդկան բերէ։ Որպես զհիւրամեծարին Աբրահամու[20] հրեշտակօքն հասելովք զծառայական հաւասարութիւնն յայտ արարեալ, պատմելով նմա յետ աւետեացն ընկալելոց, զինչ ի Սոդոմն[21] էր գործելոց։ Նոյնպէս և զքաջի նահատակին Յոբայ յառաջ քան զպատերազմել առաջի պատերազմականին՝ յօրինէ զգովութիւն ասելով. «Այր ճշմարիտ, արդար և աստուածապաշտ, և որոշեալ յամենայն գործոց չարաց»[22]։ Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն՝ ամենայն եկեղեցական գրով հնչեցուցեալ, զորոյ և զտղայութեան զկայտառութիւնն յայտ արարեալ աստուածեղէն օրինացն. նա և զայլազգոյն զՅոթորի[23] եւս զխրատն չանցուցեալ անգիր։

Եւ այնպես միահամուռ ամենայն աստուածակրօն արուեստականացն բարեգործութիւնք՝ փայլեն յաստուածագիր օրինանց, զորոց չէ ոք բաւական յիշատակել զերանելի անուանց գումարութիւն։ Եւ ոչ միայն զյառաջագունիցն, այլ և զկնի եղելոցն զմիածնի[24] որդւոյն Աստուծոյ փրկչին ամենեցուն՝ ի լուսաբեր աւետարանին իւրում ծաղկեցուցանէր զազնուականութիւնս, մանաւանդ երանութեամբ[25] իսկ պսակէր ոչ միայն սեպհականացն զերկոտասանիցն[26], և կամ զյառաջամուտ զԿարապետին[27], այլեւ զայլոց մատուցելոցն գովէ զհաւատոցն ճշմարտութիւն։ Քանզի զնաթանայէլ առանց նենգութեան նշանակէ[28] և զթագաւորազին զմեծութիւն հաւատոցն՝ անգիւտ յիսրայէլի ասէ[29]։ Բայց ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել եւս զթեթեւագոյնսն բարձրագոյնս [առնէ] անարգամեծարն Քրիստոս, որ սակաւիկ ինչ զծախ իւղոյն յարդէ, և զծախելեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ ի ներքոյ երկնից[30]։ Եւ զկնոջէն քանանացւոյ մեծ զհաւատոցն ասէ[31]. նաեւ զդանկաց երկուց ընծայելոց գովէ զարկանելեացն զյօժարութիւն առաւել քան զմեծացն[32]։

Իսկ Պաւղոսի ի մտի եղեալ էր շրջեցուցանել զքրիստոսադիր կարգացն պայծառութիւնն, անօթ ընտրութեան անուանեալ, անուանակիր յաշխարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ[33]։ Վասն որոյ երանելոյն հայեցեալ ի շնորհացն բարձրութիւն առ իւրոյ մեծ օրինացն և առ ամե-

նայն սրբոցն, բարձրագոյն բարբառով ի փառատրութիւն դառնայ, եթե «Շնորհք Աստուծոյ, որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս և զհոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեք յամենայն տեղիս»[34]: Ի վերայ այնորիկ ապա և զհամարձակագոյնն բերէ, թէ «ո՞ կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյ»[35]: Եվ զայս օճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն՝ զամենայն գործակցաց իւրեանց գրով նշանակել զքաջութիւնս Տեառնել զոմանց ի սուրբ աւետարանին և զոմանց ի Գործս Առաքելոցն[36] երանելոյն Ղուկասու մատենագրեալ. և իցեն որ ի կաթուղիկէս[37] առաքելոցն առաւելագոյնս ճանաչին:

Այլ Սրբոյն Պաւղոսի չորեքտասանեքումբք թղթովք պատմէ զիւր առաքելակիցս և նիգակակիցս, և ուրախակիցս իւր առնէ, և ի վախճանի թղթոցն ըստ իւրաքանչիւր ումեք յողջոյն կատարեալ՝ յանուանէ հարցանէ. և զուրումն յաւետարանէ անտի նշանակէ զգովութիւնսն: Բայց ո՛չ միայն զերանելոյն զօգնականութիւնսն յարգէ, այլ և զքրիստոսամեծար ասպնջականիցն իւրոց՝ բազում գովութիւնս փոխանակ մեծարանացն կարգէ, վասն որոյ և յաղաչանս առ Աստուած մատուցեալ՝ զփոխարէն բարեացն հատուցանել հայցէ: Եվ ամենայն եկեղեցեօք հնչեցուցանէ զընտրելոցն զաղնուականութիւն, ոչ միայն զարանցն, այլեւ զկանանցն աշակերտելոց, որ զճշմարտութիւնն աւետարանեն:

Եւ զայս ամենայն աւետարանեալ ոչ ի պարծանս գովութեան, այլ զի օրինակ և կանոն զկնի եկելոցն պաշտիցի. որպէս ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւոր լինել ամենեցուն[38] ստիպէ ասելովն, թէ «Զհե՛տ երթայք սիրոյ. և նախանձաւոր լինել ամենեցուն հոգեւորացն»[39]: Որոց գյօժարութիւն Աքայեցւոց վասն պաշտամանն սրբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալ յորդորեաց[40]: Այլեւ համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւն, թէ՝ «Վաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս»[41]: Այլ և նմանօղ իւր և Տեառն ստիպէ լիներ:

Դարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն վարել. «Հայեցարո՛ւք, ասէ, ի զօրագլուխն հաւատոց, և ի կատարիչն Քրիստոս»[42]: Եւ դարձեալ, թէ՝ «Յիշեցէ՛ք զաւաչնորդս ձեր, որք խօսեցան զբանն Աստուծոյ. հայեցեալ յելս գնացից նոցա, նմանօղք եղերուք հաւատոցն»[43]: Եւ միանգամայն, եթէ՝ «Զայս խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ և ի Քրիստոս Յիսուս»[44]: Հանգոյն սմին և Ղուկաս յսկիզբն Առաքելագործ մատենին դնէ: Իսկ ցանկալի Տեառնեղբայրն Յակորոս, զհամօրէն իսկ զգունդն սրբոց հանդերձ սրբասէր տերամբն յօրինակ առեալ՝ ի թղթին իւրում ասէ, եթէ «Օրինակ առէք չարչարանաց և յերկայնմտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն Տեառն. զհամբերութիւն Յորայ լուարուք, և զկատարումն Տեառն տեսէք»[45]:

Յայտնի է այսուհետև ասացելովքս, եթէ գովութիւն ամենայն աստուածասէր ընտրելոցն ի Տեառնէ է, որ՝ ի հրեշտակաց, որ՝ առ ի միմեանց, ոչ ի պարծանս անձանց, այլ առ ի նախանձուկս միմեանց արկանելոյ, զի միմեամբք քաջալերեալք՝ հասանիցեմք ի բարեացն կատարումն՝ ի նշանակեալ նպատակն երանելոյն Պաւղոսի, եթէ «Միաբան հասանել ի չափ հասակին Քրիստոսի»: Որոյ ազատութիւնն յերկինս է, ակն ունել փրկչին[46] մեծին Աստուծոյ:

Ունիմք և զկանոնական[47] յաջորդեալ յառաքելոցն անտի զշնորհապատում գրեալսն, եթէ ո՛րպէս մեծարեալք ի միմեանց, գովեալք ըստ ճշմարիտ հաւատոյն և ըստ աւետարանագործ կրօնից, մինչեւ ցայսօր ժամանակի նովին սովորութեամբ վարին:

Եւ արդ առեալ յերկոցունց[48] համարձակութիւն ի գիր արկանել և զվարս առն արդարոյ:

Արդ այսուհետեւ և խօստացեալն առաջի դիցի, և հայրենակատար մեծարեալ պայմանաւ որ առ ի մէնջ՝ հաճեսցի[49], և նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զարդարեսցի:

[Գ]

Առն, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն, ի Տարօնական[50] գաւառէն, ի Հացեկաց գեղջէ[51], որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գուռն[52] Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն[53] աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականացն: Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանանց սպասաւորութիւնսն:

[Դ]

Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն, և առեալ զխաչն պարծանաց՝ ելանէր զկնի ամենակե-

ցոյց խաչելոյն։ Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, և անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր։ Բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձն տուեալ՝ միայնաւորութեան, լռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ և գետնատարած անկողնոց։ Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ գիշերոյն և զարիկ քնոյ յոտնաւոր տքնութեան ի թօթափել ական վճարէր։ Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս։ Եւ գտեալ եւս զոմանս՝ յինքն յարբնցուցանէր՝ աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան։

Եւ այնպես ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ և պայծառացեալ՝ ծանօթական և հաճոյ լինէր Աստուծոյ և մարդկան։

[Ե]

Առեալ այնուհետեւ երանելւոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջաննէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան[54]։ Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածասէր, որում անուն էր Շաբիթ, և ասպնջական հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի։ Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեսն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր։

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ դիւացն փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց[55]։ Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ. և առաւել աղօթս մշտնջենամռունչս և բազկատարած պաղատանս առ Աստուած և արտասուս անդադարս, զմտաւ ածելով զառաքելականն, և ասէր հոգալով. «Տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգականաց»[56]։

Եւ այնպէս որտմական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծուխս խորհրդոց, եթէ որպիսի՛ արդեօք ելս իրացն գտանիցէ։

[Զ]

Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դիգերէր, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ[57]. զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ։ Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծաւք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ։ Եւ զայն առնէին աւուրս բազումս։

Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել։

Բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ։

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի աղնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գրեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի։ Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն[58] ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ։ Եւ նա առաքէր զոմն վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի։

Իսկ Հաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց։ Ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա[59] ի նա հասուցանէր։ Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէն, ուրախ լինէին։

Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չէն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղրայս գկապս[68] հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ։

[Է]

Վասն որոյ առեալ երանելւոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք

ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ[59] արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝[60] ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Եդեսիա[61] կոչի, և երկրորդին Ամիդ[62] անուն։ Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս[63] անուն և երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքաց պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի։

Իսկ աշակերտասէր վարդապետին զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր [ի քաղաքին Եդեսացւոց][64], և զոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական[65] քաղաքն գումարէր։

[Ը]

Եւ նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եդեալ զաղօթս և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահնծոս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հնծեծեսցես, յայնժամ կեցցես»[66]։

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ։ Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին։ Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ[67], յօրինէր սիղոբայիւք կապօք[68]։

Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսէն սրբոյ[69], հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսատացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր։

Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն[70], զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ[17], ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեցւոյ գաւառէն[72], և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն[73]։ Եւ եդեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի[74], որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաս-

տութիւն և զխրատ, իմանալ դրանս հանճարոյ»։ Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան։

[Թ]

Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց։ Որ յորոց նախընկալն եղեւ, առաջի արկեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում իսկ զովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ, և ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք։ Յորոց հրաժարեալք այնուհետև և առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր պարգեւօքն և ամենայն իւրայիւնք, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր. զօթեւանօք անցեալ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին[75], ի վեցերորդ ամի[76] Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց։

Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն[77]. չասեմք թէ առաւելօքն՝ պակասագոյն։ Քանզի յԱստուծոյ առեալ և աստուածագիր հրամանն ի բազուկս՝ այրն աստուածատես ի լեռնէն իջանէր. այլ վասն վրէժագործ ժողովրդեանն, որոց թիկունք ի տէրունեան և կործան յերկիր, տիրադրուժք յիւրեանց կուռս ձուլածուին երկիր պագանէին, և զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ լացուցին. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն թախծութիւնն։ Իսկ այսր երանելւոյ՝ վասն որոյ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի, որ անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգեւոր մխիթարութեամբ՝ կարծեալ զընդունելեացն յօժարութիւնն և ընդունելեացն յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն ճանապարհացն աւետաբեր[78]։

Բայց մի՛ ոք յանդգնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեսցի, թէ զիարդ զայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախօսին, սքանչելագործին նմանեցուցեալ հաւասարեաց. որով թերեւս ստգտանիցեմք։ Եւ կարեմք այլ աւելի հավատովք. քանզի և չկայ ինչ ի վերայ յայտնօք և ծածկականօք զաստուածականն խոտել, քանզի միոյն Աստուծոյ ամենազօրի շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին։

Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր

թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին։ Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելւոյն զափամբ Ռահ[79] գետոյն։ Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգեւորօք և բարբառագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին։

[Ժ]

Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտ խնդրեային, հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն։ Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրեւ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր։ Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացն, մինչեւ բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն գերծանել։

[ԺԱ]

Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել. մանաւանդ հայեցեալ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւնն, որ առ երանելին Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց, յաստուածեղէն պատգամացն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ գալոցն էին. նոյնպիսիք և այլոց մարգարէից հրամայեալք։ «Առ, ասէ, քարտէզ նոր մեծ, և գրեա՛ ի նմա գրչաւ դպրի»[80]։ Եւ այլուր, թէ՝ «Գրեա՛ զտեսիլդ ի տախտակի, և ի գիրս հաստատեա»[81]։ Իսկ Դաւիթ յայտնապէս ևս վասն ամենայն ազգաց՝ զվիճակ աստուածատուր օրինացն նշանակէ ասելովն, թէ՝ «Գրեսցի յազգ այլ»[82]։ Եւ թէ՝ «Տէր պատմեսցէ գրովք ժողովրդոց»[83]։ Զոր եկեալ կատարեաց ամենափրկիչն Քրիստոս շնորհատուր հրամանաւն, եթէ՝ «Ելէք ընդ ամենայն ազգս»[84], և եթէ՝ «Քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն տիեզերս»[85]։ Ուստի և երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ՝ յուսալից փութով և երեւելի և արդիւնակատար ըստ աւետարանին՝ զիւրեանց մշակութիւնն ցուցանեն։

Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւատարելոցն՝ հայաբարբառ հայերէնախօսք գտան։

Անդ էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն։ Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ և յառաջագոյն յաւիտենից, և ապա եկելոցն, սկզբանն և կատարածի, և ամենայնի աստուածատուր աւանդութեանցն[86]։

[ԺԲ]

Իսկ իբրև զչափ առեալ զիրացն հաստատութեան, և համարձակագոյն և առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն խմբէին ուսուցանել և թեքել, և պատրաստական քարոզութեանն անգէտ մարդկան յօրինել։ Որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ։ Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ։ Անդ էր յիշելի և մարգարէականն, եթէ՝ «Եղիցի անդ աղբիւր բղխեալ ի տան Դաւթի»[87]։

Որ և սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս. ի գավառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս և առ ի զայլսն զեկուցանելոյ։ Որոց կանոն և օրինակ զիւրեանց անձանց արգասիս եղեալ, և պատուիրեալ կալ ի նմին կանոնի։

Եւ իւրեանց անդէն՝ զառնութերակաց արքունիսն, հանդերձ ամենայն ազատագունդ բանակիւն[88], աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ։ Առաւել երանելւոյն Սահակայ զմամիկոնեան որեաբն ի վարժս վարդապետութեանն պարապեցուցեալ, որոց առաջնոյն Վարդան[89] անուն էր, որ և Վարդկան կոչէր։ Նոյնպէս և զամենայն ոգի ջանայր յերիւրել, հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեան։

[ԺԹ]

Ցետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի տէր Եպիսկոպոսն[90] ի կայենականն[91], և նա ի սփիւռս հեթանոսաց[92] զբանն կենաց սերմանիցեն։ Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ օգնականօքն, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական գաւառէն[93], և երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ, որք էին սուրբք և զուարթագոյնք, հանդերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել։ Որովք յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ. երթեալ իջանէր յՌոտաստակն[94] Գողթան, յառաջին դաստակերտն իւր։ Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ, լի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի. և կարգէր յամենայն գիւղս գաւառին դասս սրբոց վանականաց։ Որում և հասեալ ժամանեալ հայրաբարուին Գոտայ, որդւոյ Շաբաթայ առն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իբրև հաւասարի որդւոյ վարդապետին տանէր։

[ԺԴ]

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանն Մարաց[95], որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին։ Առ ի յարդարել և զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարզախօսս, հեռատրաբանս, կըրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանոթս[96] կացուցանէին։

[ԺԵ]

Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական[97] աշխարհն ելանէր։ Եւ անդ աստուածասէր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղենակ անուն։ Բազում օգնականութիւն գտեալ ի նմանէ վասն իրացն առաջի արկելոցն, մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց։ Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւաղաբարոյ կողմանցն. և այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ և դայեկաբար սնուցանել և խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենացն եպիսկոպոս տեսուչ[98] եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր

Անանիաս, այր սուրբ և երեւելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ[99]։ Ապա և զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր։

Յորում ժամանակի պարգեւեալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ[100], այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր։

[ԺԶ]

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն։ Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն նմա ի Տեառնէ։ Գրէր, կարդէր և օրինօք յարդարէր. և առնոյր ընդ իւր գոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց։ Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս։ Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն, հանդերձ ամենայն գաւառօքն։

Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել։ Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ և ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց և ի խառնաղանջ գաւառաց իշխանութեանն իւրոյ ժողովել մանկունս և տալ ի ձեռն վարդապետին։ Զոր առեալ՝ արկանէր ի բովս վարդապետութեանն և հոգեւոր սիրոյն եռանդմամբ զաղտ և զժանգ շարաւահոտ դիւացն և զսնոտիագործ պաշտամանն ի բաց քերէր, այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց և անյիշատակ ցուցանել, մինչեւ ասել, թէ՝ «Մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ»[101]։

Եւ արդ զնոսա, որ յայնչափ ի մասնաւոր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր։ Յորոց և գտան արժանիք[102] ելեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ և բարեպաշտօն, եպիսկոպոս կացեալ տանն արքունականի։

Իսկ իբրեւ ընդ ամենայն տեղիս վրաց կարգեալ զգործ աստուած-

պաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ դառնայր յերկիրն Հայոց և պատահեալ Սահակայ կաթուղիկոսին Հայոց, պատմէր նմա զողջութենէ եղելոցն, միանգամայն և փառաւոր առնելով զԱստուած, զմեծանունն Քրիստոս։

[ԺԷ]

Ապա դարձեալ ելանէր, շրջէր զտեղեօք կարգելովք և զգաւառօքն աշակերտելովը աշխարհին Հայոց, կուսրթացուցանել, նորոգել և հաստատել։ Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս լի առնէր զսուրբ աւետարան Տեառն և ամենեցուն զգուշացուցեալ զկենաց ճանապարհն վարելոյ, խորհուրդ առնէր այնուհետեւ վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց[103]։

Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք անցանել ի կողմանս Յունաց։ Եւ վասն առաւելագոյն բարեգործ համբաւուց՝ յառաջագոյն դնմանէ անդ ի հիւսիսական կողմանց[104] հռչակելոց՝ առաւել միամտութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին և յիշխանաց և ի գաւառականացն պատուեալ լինէր, մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատողիս, ի մուտ ճանապարհին, որ զիրս առաջի եդեալ՝ գրով ցուցանէր կայսերն, որում անուն Թէոդոս[105] կոչէին, որդի Արկադու[106] կայսեր. ուստի և հրաման ելանէր՝ վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ։

Իսկ նորա զբազմութիւն աշակերտացն տարեալ ի քաղաքն Մելիտինացւոց[107], յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոն կոչէին, և զլխաւոր աշակերտացն Թողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին, այր հաւատարիմ և ճշմարտապաշտ։ Եւ առեալ երանելոյն զպատուական եպիսկոպոսն Դերջանոյ[108], որոյ անուն կոչէր Դինք, և զսակաւս յաշակերտաց անտի, և ելեալ յանդուարն[109] դիմոսական և բազում պատիւ գտեալ, հասանէին ի թագաւորակաց քաղաքն Կոստանդինական։ Զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն, և մտեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատիկոս կոչէին, յորոց և գտեալ շնորհս։ Հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք կարգելովք յեկեղեցւոյն և յարքունեաց և ի պատուական իշխանաց քաղաքին։

Եւ ապա յետ Պասեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս, և առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք[110] կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի

կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և վասն ժանտագործ ազգին բարբարիանոսաց[111], և եկեղեցեաց հաստատութեան, և մեծամեծ պարգեւօք պատուելոյ։ Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարքունիսն, անընկալ թողոյր։ Եւ երկիր պագեալ ծիրանափառ օգոստականացն[112] և սրբոյ կաթուղիկոսին, և ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն և յերեւելի իշխանաց քաղաքին, և ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս և ի կառս արքունատուրս, և մեծաւ շքով և բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս։ Եւ ամենայն քաղաքացն պատահելով, ի քաղաքին պայծառագոյն երեւէին։

Եւ մեծամեծ պարգեւս գտեալ, գային հասանէին ի ժամադիր կողմանս։ Եւ անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին։ Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք, փութայր վաղվաղակի զհրամանն կատարել։ Եւ հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտւոյ ժողովել և նոցին ոռճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յորս և երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր։

Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր զդժպատեհ և զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ։ Եւ իբրեւ ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր զքշտուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս։ Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակելս, ապա խանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորզէին։

Իսկ երանելոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ սակեալ և վճարեալ։ Եւ բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ[113] ստացեալ, ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն, և լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք։

Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան[114] ազգաւ, Բենիամէն անուն. և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում և յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ և հաստատեալ կշռէր։

Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց, յիշխանաց աշխարհին և յամենայն եկեղեցւոց. առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն, որոց առաջնոյն ենովք անուն էր, և երկրորդին Դանան, արք կրօնաւորք և յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեանն. զորս յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝

անդէն զետեղէր։ Եւ ինքն բաղում աշակերտօք գայր, անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց և հասեալ ի նոր Քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և թագաւորին Հայոց, որում անուն Արտաշես[115] կոչէին, և ամենայն բանակին։ Եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց շնորհացն Աստուծոյ, դադարէր անդ աւուրս ինչ, մխիթարէր վասն հոգեւոր անձուկն սփռելոյ։

[ԺԸ]

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից։ Եւ երթեալ իջանէր յաշխարհն և հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատօք հանդերձ. որոց առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի։ Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եդեալ վասն որոյ եկեալն էր։ Եւ նոցա երկոցունց զուգակցելոց, եպիսկոպոսին և թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային ևս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել և գումարել ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց, և ոռճիկս կարգել ի դարմանս։

Իսկ իբրեւ հրամանն այն արդեամբք և գործովք յանկ ելանէր, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յական թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւիք անտեղեակք։ Դարձեալ առաւել ևս երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր և դիւամոլ ազգին սաստիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոցն և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի։

Եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ և լցեալ զպիտոյն իւրեանց և զկամացն յօժարութիւն, ձեռնատու ևս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական[116] կողմանս սրբոյ եպիսկոպոսին, որում անուն Մուշեղ կոչէին, հրաժարէր ապա և ի թագաւորէն և յեպիսկոպասացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից։ Եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր, հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն, որում անուն Յովնաթան կոչէին, որոյ բաղում յօժարութիւն ի վարդապետութենէն էր գտեալ։

Եւ յանձն առնելով զնոսա և զանձն՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ, խազացեալ գայր ի կողմանցն Աղուանից, անցանել յաշխարհն Վրաց։

[ԺԹ]

Եւ հանդիպ հասեալ գայր Գարդմանական ձորոյն[117]։ Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում [անուն] Խուրս կոչէին, և ասպընջական եղեալ նմա աստուածասէր երկիւղածութեամբ, առաջի դնէր զանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով։ Առաւելագոյն իսկ վայելեալ ի հիւթ և ի պարարտութիւն վարդապետութեանն, յուզարկէ զերանելին՝ ուր և երթալոցն էր։ Իսկ նորա անցեալ դիմեալ ի կողմանսն։

[Առ որով ժամանակաւ Արձիւղ անուն թագաւորեալ Վրաց, որոյ առաւելապէս պայծառացեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն. և նորա շրջեալ զամենայն աշակերտօքն, պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն։

Յայնժամ իշխանին Տաշրացւոց[118], առն պատուականի և աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աղուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. և նորա ամենսփիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ, քան զայլոցն գաւառաց անցուցեալ։

Եւ յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն դառնայր ի կողմանս՝ Հայոց Մեծաց. և եկեալ ի սովորական տեղիսն, զընդելական ողջոյնն սրբոյն Սահակայ և ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր նոցա վասն այնր ևս նորագործ իրացն. որք իբրեւ լուան, առաւել գոհանային զպարգեւացն Աստուծոյ։]

[Ի]

Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել։ Ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն։

Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ[119], զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ[120] անուն՝ յԱյրարատեան գաւառէն, իկողք գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուսցեն։

Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, և կատարեալ զհրամանսն և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին։

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդն՝ Կորիւնս, և մատուցեալ յարէին յեզնիկն, իբրև առ ընտանեգոյն սննդակից՝ ի Կոստանդինական քաղաքին, և անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն զխնդիրն վճարէին։ Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն և բազում շնորհագիր հարց յետ այնը աւանդութեամբք, և Նիկիական[121] և Եփեսոսական[122] կանոնօք, գային երեւելով աշխարհին Հայոց, և առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն[123] եկեցեցւոյ սրբոյ։

Իսկ երանելւոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն[124] կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ վիմաստութիւնն[125]։ Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ եղնակաւ[126] զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք։ Եւ շատ ևս մեկնութիւն գրոց[127] թարգմանէին։

Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս գրոց ծախէին հարքն զտիւ և զգիշեր, և նովիմբ ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայից լինէին. մանաւանդ զի ունէին, պատուիրանս զգուշացուցիչս յաստուածակարգ պատգամաւորացն[128]. յորոց առաջինն հրամայէ, թէ՝ «Յօրէնս տեառն խորհեսցիս ի տուէ և ի գիշերի»[129]. և երկրորդն հանգոյն նմին պատուիրէ, թէ՝ «Մի՛ տիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան, մի՛ անփոյթ առնել զշնորհացդ որ ի քեզ են. յայդ խորհեա՛ և ի դոյն յամեսջիր. զայդ եթէ առնիցես, և՛ զանձն ապրեցուցես, և՛ զայնոսիկ, որ քեզն լսիցեն»[130]։

[ԻԱ]

Ապա յետ այնորիկ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս[131], դիւրապատում, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան։ Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն

յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն, յերիւրեալ կազմեալ, զի հեշտընկալք և դիւրահասոյցք տխմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել և զարթուցանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել։

[ԻԲ]

Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն, զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ իւրով իսկ աւետարանական և ողջապատում գնացիքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց և անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին։ Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց, և բազում բանդականաց և կալանաւորաց և տագնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ՝ կորզելով զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի։ Եւ բազում մուրհակս անիրաւութեան պատառեաց, և բազում սգաւորաց և կարճամտելոց՝ մխիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի[132] նօթճեաց. և զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդր փոխեաց։

[ԻԳ]

Եւ դարձեալ բազում և անհամար գունդս վանականաց ի շէնս և յանշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս[133] բնակեցուցեալ հաստատէր։ Զորս ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբն օրինակ ցուցանէր. առեալ զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն և երթեալ լեռնակեաց, սորամուտ ծակախիթ եղեալ՝ զառօրէական զկերակուրն խոտաբուտ ճաշակօքն վճարէին։ Եւ այնպէս վշտակեաց տկարութեան զանձինս տային, մանաւանդ որոց հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական բանիցն, թէ՝ «Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զօրացեալ լինիմ»[134]. և թէ՝ «Վաւ ևս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի»[135]։

Անդ էր այնուհետև չարբենալ գինւով, այլ առաւելուլ հոգւով, և պատրաստել զսիրտս երգովք հոգեւորօք[136], ի փառս և ի գովութիւն Աստուծոյ։ Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց։ Անդ քաջալերութիւն յորդորական վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութեանն պսակահաս քրիստոսագիր կիտին։ Անդ եռալ

հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ։ Անդ աղօթք աղերսալիք, և խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուած։

Եւ նովին հոգեկրօն արուեստիւն հանէր աւուրս բազումս յանապատ տեղիս, մինչեւ ազդ լինէր յերիցանց՝ իրաց ինչ օգտակարաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յօգնականութիւն շնորհօքն Քրիստոսի։ Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ գործակցօք իչեալ ի թիկունս դիպացն պատահելոց, և վճարեալ զօրութեամբն Աստուծոյ, և յորդորագոյնս և պարարտագոյնս և անփակ բերանով՝ զվտակս վարդապետութեանն ի սիրտս լսողացն ծաւալեցուցանէր։

Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր վասն անձին և վասն աշխարհի. քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինութիւնս կանոն աշակերտելոցն զնել, մանաւանդ յուշ առնելով զտէրունականն՝ զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ. «Քանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»[137]։ Որոյ բազում անգամ առեալ զաշակերտսն ուրոյն, և աննիւթական անձամբն օրինակ կարօտելոցն լինէր, յորժամ ի Թաբօրական[138] լերինն՝ զաւետեաց երանութիւնն տայր, և յորժամ ի նմին լերին զկանոնական[139] զաղօթս առնէր, մինչդեռ աշակերտքն ի Տիբերական[140] ծովուն նաւէին։ Եւ դարձեալ յաւուրս բազարջակերացն[141] յօրինակ տօնին՝ զգիշերոյն աղօթքն և ցայգոյ, ի Զիթաստանեաց լերինն[142] առանձինն մատուցանէր։ Ուստի և յայտնի իսկ է և առանց խուզելոյ, եթէ ոչ վասն անձին ամենատէրն, այլ համաշխարհի յուսումն զայն գործէր. որ է օրինակ ամենայն հնազանդելոց. վասն որոյ ասէր իսկ. «Արթուն կացէք, զի մի՛ ի փորձութիւն մտանիցէք»[143]։

Իսկ արդ եթէ թեթեւագոյն արուեստից՝ պակասագոյն են ի գիտութենէ ազգք երկրածնացս, ո՛րչափ ևս այնմ արուեստի ոք համարեսցի և անգիտանալ՝ որ ընդ Աստուած զխօսսն կատարէ։ Որով երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ, վասն որոյ զամենակեցոյց Հոգին ի թիկունս հասանել՝ անմոռունչ հեծութեամբ, բարեխօս դիտէ[144]։

Իսկ արդ յորժամ լսիցեմք, եթէ՝ «սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»[145], ապաքէն առնէ և ուսուցանէ, և ոչ եթէ զի պարգեւեսցէ իմանալի է։ Եւ բարեխօսել նորա վասն սրբոց և բարեխօսել Հոգւոյն սրբոյ՝ առ ի վարդապետելոյ մեզ, զի ընդ միմեանց բարեխօսելն դիտելի է. քանզի միապատիւ է աստուածականն և ոչ բազմաբար[146]։

Իսկ երանելի առաքելոցն ընկալեալ ի վարդապետութենէ ճշմարտութեանն, նախ կարօտական անձանցն մատակարարէին, և ապա աշակերտացն բարձեալ տանէին. երբեմն առանձինն՝ և երբեմն ժողովրդովքն գումարելովք՝ զփառսն Քրիստոսի առաւելովք[147] բարձրացուցանէին. քանզի՝ առաւել օգտակար իսկ է՝ յամենայն աշխարհակիր զբօսանաց առանձինն սահմանել և միայն աստուածպաշտութեանն պարապել, զոր և մարգարէքն գործէին, որո ի լերինս և յանապատս և ի փապարս վիմաց՝ զաստուածեղէն կրօնիցն գծառայութիւն հարկանէին։

Նոյնպէս և ամենայն հարքն, որք յաջորդեցան յառաքելական կանոնաց կրեալ անձամբք զլաւութիւնս՝ բերէին վերջնոցս օրինակ. ուստի երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ, և ամենայն մատուցելոց առ նա՝ զնոյն պատուիրեալ գուշակէր։ Եւ այնպէս յառաջ՝ ամենայն աստուածեղէն գանձուցն վայելչութեամբք լեալք, պարարտացեալք, խաղացեալք գնային ի բազում ժամանակս՝ նովին ի նոյն կանխեալք, ի նմին հանապազորդեալք։

[Խ]

Յայնմ ժամանակի բերեալ երեւեցան ի Հայաստան աշխարհին դիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն Հոռոմի, որում Թէոդորոս[148] անուն։ Վասն որոյ սիւնհոդոսական Հայրապետացն[149] եկեղեցեացն սրբոց նշանակեալ՝ ազդ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշթոցի։ Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեցին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ։

[Խն]

Յետ այնորիկ դէպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրքդ երկայն ժամանակօք և վայելչացեալ աստուածաբեր պտղոցն բարութեամբք, յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի, որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ[150] գաւառի, ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի[151], որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտամանն անուշահոտ իւղոյն[152], հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ, հայեցեալ ի բան մարգարէին, որ ասէր. «Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ»[153]. և Ստեփաննոսի երանելւոյ, որ ասէր. «Տէր Յիսուս, ընկա՛լ զհոգի իմ»[154]։ Ըստ նմին օրինակի և նորա ապսպրեալ զանձն և զմնացեալս ամենապահ շնորհացն Աստուծոյ։

Զոր և առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելովք՝ ձեռնասուն

աստուածասէր պաշտօնէիցն իւրոց, որոց գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ և բարեպաշտօն, հանդերձ աստուածասէր իշխանակնաւ միով, որ անուանեալ կոչէր Դուստր[155], որ էր կին Վարդանայ, զոր ի վերնոյն յիշեցաք, և բազում ամբոխից սրբոց ժողովոց՝ Բարձեալ զսուրբն սաղմոսիւք և օրհնութեամբ և հոգեւոր բարբառով, յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ և ընդ գիշեր ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն յԱշտիշատ[156]։ Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոյն հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եղեալ և կնքեալ քրիստոսական կնքովն՝ և զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետեւ իւրաքանչիւրն դառնային։ Որոց և նոյնպէս ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբեն։

[ԻԶ]

Իսկ երանելի զուգականին լուեալ, զՄաշթոցէ ասեմ, բազում անձկայրեաց տրտմութեամբ և արտօսրագութ ողբովք և ծանրաթախիծ սգովք պաշարեալ դնէր. զի թէ առաքեալն սուրբ ոչ գտեալ առժամայն զընդելակիցն զՏիմոթէոս՝[157] անհանգիստ զհոգւոյն ասէ, ո՛րչափ ևս առաւել զմիանգամայն զհրաժարելոցն՝ սաստիկ կիրս մնացելոցն է համարեալ։ Բայց թևպէտ և միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն և զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր, և առաւել փութայր գուն եղեալ՝ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջութիւն։ Եւ ղցայգ և ղցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառով՝ զաստուածագիր պատուիրանացն հրամանս յուշ առնելով՝ զգուշացուցանէր ամենայն մարդոյ, մինչեւ բազմագոյնս և զդժուարագոյն վարուց կրթութիւնս. մանաւանդ զի և զմտաւ իսկ ածէր ըստ ծերունական[518] հասակին զօր վախճանին, չտայր քուն աչաց և ոչ նիրհ արտեւանաց՝ մինչև հասանել ի հանգիստն տեառն։

[ԻԷ]

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրև զհոգևոր եռանդն ածէր, և բազում թուղթս խրատագիրս և զգուշացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր, անդէն ի նմին ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելւոյն Սահակայ, լիներ հանդերձ սրբով վարդապետաւն բանակն Հայոց յԱրարատեան ի Նոր Քաղաք, և նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի[159]։ Եւ յորժամ որոշեալ ի միջոյ ձեռնասուն աշակերտացն և խառնեալ ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթեւացեալ և սթափեալ ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ, վասն նոցա օգնականութիւն հայցէր։

Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն են այս. առաջնում Յովսէփ, զոր և ի սկզբան գրեցաք. երկրորդին Թադիկ. արք զգաստք, զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն։ Ի զինուորական կողմանէն առաջնումն Վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց. և երկրորդին Համայեակ՝[160] ի Մամիկոնեան տոհմէն, արք պատուականք, երկիւղածք, հրամանակատարք վարդապետական հրամանաց։

Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ առ չընկերէ պատմեալ։ Եւ սորա սրբոցն զսէր և զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակէր, և զհաճոյական աղօթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեաւ։

Զոր առեալ Վահանայ և Համայեկի կազմութեամբ վախճանելոյ, հադերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ և հոգեւոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և խնկօք բուրելովք և ամենայն լուսաճաճանչ գնդիւն, և այնու խաչանշան լուսաւոր յառաջախաղաց նշանաւն, յՕշականն[161] ելանէին, և անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն աներեւոյթ լինէր, և նոքա յիւրաքանչիւր դառնային տեղիսն։

Իսկ յետ երից ամաց անցելոց յաջողեցան Վահանայ Ամատունւոյ քրիստոսասէր փութով խորան[162] սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելովք, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն Հանգիստն յօրինեալ։ Որոյ սպասս վայելուչս, գունագոյնս, պայծառատեսիլս, ոսկւով և արծաթով և ականբք պատուականօք՝ ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի պատրաստեալ, և ամենայն սրբովք ի միասին գումարելովք զմարմին խաչակրօն վկային Քրիստոսի, երանելոյն Մաշթոցի, ի հանգիստ խորանին փոխէր։ Եւ զնորին աշակերտ Թադիկ անուն, զայր զգաստ և բարեպաշտօն, հանդերձ եղբարբք, երանութեանն հասելոյ սպասաւոր սրբոյն ի փառս Աստուծոյ կարգէին։

[ԻՐ]

Եւ գլխաւորս, վերակացուս տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց, որոց առաջինն Յովսէփ[163]*, գլխաւոր ժողովոյն, և երկրորդն այլ աշակերտ՝ Յովհան անուն, այր իսկ սուրբ, վարդապետասէր և ճըշմարտապատում։ Որում դեպ լինէր յետ վախճանի սրբոյն, բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկպատակաց բռնութեանն, ի Տիզբոն*[164] *քաղաքի վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասն որոյ և զխոստովանողական*[165] *անուն ժառանգեաց, ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց։*

Իսկ բարեացապարտին Վահանայ[166]*, որ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր՝ աշխարհածնունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ, մերոյ մերձաւոր կենակից [լինել] վայելէր*[167]*։*

[ԻԹ]

Եւ զի ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան՝ ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, և առընթերակաց հոգեւորական գործոցն, և լսող շնորհապատում վարդապետութեանն, և նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն։ Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից զհօրէն իմոյ կարդեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ, և ի նշանաւոր գիտակացն[168] *քաղելով զհամառօտս կարգեցաք, որ ոչ միայն մեզ, այլ և որ զմատեանս*[169] *ընթեռնուն՝ յայտնի է։*

Քանզի չէաք իսկ հանդուրժօղք՝ զամենայն արարեալսն կտակաւ նշանակել զիւրաքանչիւրսն[170]*. այլ ի դիւրագոյնս և ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատսպարեցաք*[171]*. որոց անցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն՝ առ ի մանրակրկիտ առնելոյ զկարեւորագոյնս պատմելոյ զհանգամանս։ Ասացաք ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, որք ամենապայծառ հաւատով և վարուք*[172] *ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ՝ հոգեւոր ծննդոց իւրեանց, և որք նոքօք աշակերտելոց իցեն յազգս ազգաց։*

[Լ]

Եւ արդ լինի համար ամաց հաւատոց երանելւոյն ամք քառասուն և հինգ, և ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն և հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Կրմանայ[173] *Պարսից արքայի ամս վեց. և Յազկերտի ամս քսան և մի [և Վռամայ ութ և տասն]*[174]*, և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին*[175]*։*

Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ[176]*, և դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն*[177]*։*

Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

Բ

Ի ՅԻՇԱՏԱԿԻ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ԿՈՐԵԱՆ ՍՐԲՈՅ ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՅՆ ՆՈՐԱ

Արդ սկիզբն արասցուք պատմելոյ զառնն զոր նախակարգ բանից նշանակեցաք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշդոց անուն, ի Տարան[50] գաւառէ, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երևելոյ Վարդան կոչեցելոյ։ Ի մանկութենէ վարժեալ հելլենական դպրութեամբ, եկեալ հասեալ ի դուռն[52] Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանի, լինել սպասաւոր արքայատուր հրամանիցն առ հազարապետութեամբն[53] Հայոց աշխարհին՝ Առաւանայ ուրեմն։ Տեղեկացեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւ իւրով։ Եվ անդէն ի նմին ուշ եդեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց. որով առ ժամայն լուսաւորեալ և թևակոխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն յարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւն։*

Եւ յետ այսորիկ ըստ աւետարանական չափոյն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յայսմհետէ զամենայն աշխարհակիր ցանկութիւնս, և առեալ զխաչն պարծանաց, ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն։ Եւ հաճեալ հրամանացն պայմանի խաչակիր գունդն Քրիստոսի աշակերտացն խառնէր, և անդէն վաղվաղակի ի միայնակեցական կրաւնս մտեալ, բազում և աղգի աղգի վշտակցութիւն ըստ Աւետարանին կրէր, և ամենայն կրթութեամբ ամենայն իրաց հոգևորաց զանձն տուեալ՝ միայնաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի, և՛ ծարաւոյ, և՛ բանջարաճաշակ լինելոյ, արգելանաց անլուսից, խարագնազգեաս և գետնատարած անկողնոյ։ Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ գիշերացն և զհարկ քնոյ յոտնաւոր տքնութեամբ ի թաւթափել ական վճարէլով։ Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս։ Եւ գտեալ ևս զոմանս՝ յինքն յարուցանէր՝ աշակերտել նմին աւետարանական սպասաւորութեանն։

* Ձեռագրում՝ աշխարհացն կարգաւք։

Եւ այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ և նովին լուսաւորեալ և պայծառացեալ, ծանաւթական և հաճոյական լինէր առաջի Աստուծոյ և մարդկան։

Առեալ այնուհետև երանելոյն զհաւանեալս իւր, դիմեալ իջանէր յանկարդ և յանդարման տեղիս Գողթան։ Արդ ընդառաջ լինէր նմայ իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածասէր, որում անուն էր Շաբիթ, և ասպնջական հիւրամեծար գտեալ, բարեպաշտութեամբ սպասաւորէր, ըստ աշակերտական հաւատոց ի Քրիստոս։ Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառան հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին, և գերեալ զամենեսեան ի հայրենեացն աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր։

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց ներմանեաց և զամենեսեան զաստուածապաշտութիւն կրթեալ, յայտնի իսկ քնակչաց գաւառին նշանք մեծամեծք երևեալ կերպարակերպ նմանութեամբ դիւացն փախստեայ լինելով, անկանէին ի կողմանս Մարաց[55]։ Ապա ևս առաւել հոգ ի միտ արկանէր՝ զհամաշխարհականս զոփալով, և առաւել յաղօթս մշտնջենամուն, և բազկատարած պազատանս առ Աստուած և արտասուս անդադարս, զմտատ ածելով զառաքելականն, և ասէլ հոգալով. «Տըրտմութիւն է ինձ յոյժ և անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ»[56]։

Եւ այնպէս տրտմական հոգւովք պաշարեալ և անկեալ ի ծուխս խորհրդոց, եթէ որպէս ելս իրացն գտանիցէ։ Եւ իբրև բազում անգամ անդէն ի նմին դադարէր, յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Մեծաց, որոյ անուն ճանաչիւր Սահակ[57], զոր և պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ, որ մանաւանդ միաբանեալ։ Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծաւ և ուժգին խնդրուածովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեան հասանելոյ։ Եւ զայն առնէին աւուրս բազումս։

Ապա ելանէր նոցա պարգևական պատճառք յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրացն Հայաստան ազգին սահմանեալ։

Բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերել, աստ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին իւրեանց Հայոց, որոյ անուն կոչիւր Վռամշապուհ։

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիս-

կոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գրեալ[58] նշանագիրս ալփափետաց հայերէն լեզուին։ Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն Դանիէլի, յաւժարեացուցին զարքայ՝ փոյթ անել վասն պիտոյիցն այնոցիկ։ Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն՝ հանդերձ հրովարտակօք առ այր մի երէց, որում Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի եպիսկոպոսի։

Իսկ Աբեղ այն զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլ, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապայ առեալ ի նմանէ՝ առ արքայ յերկրին Հայոց, ի հինգերորդ[59] ամի թագաւորութեան նորին հասուցանէր։ Իսկ արքայն հանդերձ միաբան սրբովք Սահակաւ և Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն յԱբեղայ, ուրախ լինէին[178]։

Իսկ իբրև հասին ի վերայ, թէ չեն բաւական այն նշանագիրք ողջ ածել զսիւղոբէ և զկապս[68] հայերէն լեզուի, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ ի յայլոց դպրութեանց քաղեալք և յարուցեալք դիպեցան։ Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս* խնդրէին ժամանակս ինչ։

Վասն որոյ առեալ երանելոյն Մեսրոպայ դաս մի մանկտոց հրամանաւ արքունի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրեալ սրբութեամբ՝ խազայր գնայր ի հինգերորդ[59] ամի վառամշապուհ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամայ՝[60] ի քաղաքս երկուս Ասորւոց. որոյ առաջինն Եդեսա[61] կոչի, և երկրորդին Ամիդ[62] անուն։ Անդ դէպ լինէր սուրբ երանելի եպիսկոպոսացն. որոյ առաջնուն Բաբիղաս[63] անուն էր, և երկրորդին Ակակիոս, հանդերձ կղերականաւքն և իշխանաւք քաղաքաց պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգեբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոյ կարգի։

Իսկ աշակերտասէր վարդապետին՝ գտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորւոց դպրութիւն կարգէր [ի քաղաքին Եդեսացւոց][64], և զոմանս յունական՝ անդր ի Սամոսատական[65] քաղաքն գումարէր։

Եւ նա իւրովք հաւատարաւք զսովորականն առաջի եդեալ զպահս և զաղաւթս և զտքնութիւն և զպաղատանս արտասուաբեր, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհամեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, թէ՝ «Յորժամ հեծեծեսցես, ապա՝ կեցցես»[66]։

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց աւճան գտանելոյ։ Որում և պարգևէր իսկ վճճակ յամենաշնորհն

* Թյուրիմացաբար՝ ևս՝ ելս-ի փոխարեն։

աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին։ Եւ անդէն վաղվաղակի նշանագրեալ, անուանագրեալ և կարգեալ[67] սիղոյբայիւք, յաւրինէր և կապաւք[68] և ձայնատուր նշանաւք։

Եւ ապա հրաժարեալք յեպիսկոպոսացն[69] սրբոց, հանդերձ ազգականաւք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսատացւոց, յորում և մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր։

Եւ անդ ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութիւնն՝ Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ գնրբագոյն և զլայնագոյն[70], զկարճ և զերկայն, առանձինն և զկրկնայար միանգամայն յաւրինէր[71], ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկու աշակերտաւքն, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեցական գաւառէն[72], և երկրորդին Յովսէփ՝ ի Պաղնակաց տանէն[73]։ Եւ անդ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս յԱռակացն Սողոմոնի[74], որ ի սկզբանն իսկ ծանաւթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով թէ՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։ Որ և գրեցաւ իսկ ձեռամբ գրչին այնորիկ, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան։

Ապա յետ այնորիկ առեալ թուղթ եպիսկոպոսէ յաղալին, և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ իւրովքն ամենայն եբէր առ եպիսկոպոսն Ասորոց, յորոց նախընկալն եղև, առաջի արարեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս, վասն որոյ և բազում գովութիւնս իսկ յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցեացն բարձրանային ի փառս Աստուծոյ, և ի մխիթարութիւնք աշխատելոցն ոչ սակաւ։ Յորոց հրաժարեալք այնուհետև և առեալ թուղթս աւետագիրս հանդերձ շնորհատու պարգեւաւք, յանձ եղեալ Քրիստոսի շնորհացն ճանապարհորդ լինէր։ Եւ այնպէս բազում աւթևանաւք անցեալ աջողութեամբ և հոգալից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Արարատեան գաւառին, առ սահմանաւք Նոր Քաղաքի[75], ի վեցերորդ ամի[76] Վռամշապուհ արքայի Հայոց Մեծաց։

Եւ ոչ այնպէս Մովսէս մեծն զուարթագոյնս ցնծայր յէջս Սինէական լերինն[77]. չասեմք եթե առաւքելովքն պակասագոյն քան յԱստուծոյ առեալ և աստուածագիր հրամանք ի բազուկս այրն աստուածատես ի լեռնէն իջանէր։ Իսկ այսմ երանելոյ՝ վասն որոյ ճառելքս յարդարին, [ոչ] ըստ այնմ աւրինակի որ անդր գործեաւ, այլև ինքն իւրայովքն ղեկս հոգևոր ուրախութեամբ՝ կարծել զյաւժարութիւն ընդունելեացն[78]։

Ապա յետ այնպիսի առաւել ևս բարձրագոյն վարդապետութեան՝ սկսեալ երանելոյն Մեսրովպայ ճառս յաճախագոյնս[131], դիւրապատում, շնորհագիւտս, բազմազիմիս ի զաւրութենէ և ի հիմոյ գրոց մարգարէա-

կանաց կարգեալ յաւինեալ. լի ամենայն հաւատոցն ճշմարտութեան։

Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց և Վրաց և Աղուանից, զամենայն աւուրս կենաց իւրոց, զամառն և զձմեռն զտիւ և զգիշեր՝ անվհեր և առանց յապաղելոյ, իւրով իսկ աւետարանական և ողջունատիպ գնացիւք առաջի թագաւորաց և իշխանաց, և ամենայն հեթանոսաց և անընդհմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին զանունն Յիսուսի կրեաց։ Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց, և բազում բանդականաց և կալականաց և տագնապելոց փրկութիւն արարեալ՝ կորզելով զնոսա ահաւորութեամբ զօրութեամբ փառացն Քրիստոսի։ Եւ բազում մուրհակս արիւնագիրս անիրաւութեանն պատառեաց, և բազում սգաւորաց և կարճամտելոց՝ մխիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյն և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի[182] նուաճեաց, և զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդ փոխեաց։

Եւ դարձեալ բազում գունդս գունդս վանականաց, ի շէնս և յանշէնս, դաշտական լեռնականս, անձաւամուտս և արգելականս[133] բնակեցուցեալ հաստատէր։ Զորս ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբ օրինակ ցուցեալ, առեալ զոմանս զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանաց, և երթեալ լեռնակեաց սորամուտ ծակախիթ եղեալ զառաւրեայ ղկենցաղս խոտաբուտ ճաշակաւքն վճարէին. այնպէս վշտակեաց տկարութեան զանձինս տուեալ, մանաւանդ որոց հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական բանիցն, թէ՝ «Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ, զօրացեալ լինիմ»[134]։

Անդ էր ապա չարբենալ գինով, այլ առաւել հոգւով, և պատրաստել զսիրտս երգով հոգևորավք[136], ի փառս և ի գովութիւն։ Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց։ Անդ քաջալերութիւն յորդորական լուսաւոր վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութիւն պսակահամբար քրիստոսադիր կիտին։ Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ։ Անդ աղաւթք աղերսալիք, պաղատանք փարելիք, և խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուած։ Եւ նովին հոգեկրաւն արուեստիւ հանէր աւուրս բազումս յանապատ տեղիսն, մինչև ազդ լինէր յերիցանց՝ իրացն ինչ հոգևորաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յաւգնականութիւն շնորհաւքն Աստուծոյն։ Եւ անփակ բերանով՝ զվտակս վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցանէր։

Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր, վասն անձին և վասն աշխարհի, քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց

առաքինութիւն կանոնս աշակերտելոցն դնել. մանաւանդ յուշ առնելով զՏեառն հրամանն «Քանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»[137]։

Քանզի և առաւել աւգտակար իսկ է՝ յամենայն գբաւսանաց աշխարի, առանձինն սահմանել զկիրս և միայն աստուածապաշտութեան պարապել, զոր և մարգարէքն յառաջագոյն գործէին, որք ի լերինս և յանապատս, և ի յայրս և ի փապարս վիմաց՝ աստուածեղէն կրաւնիցն զծառայութիւնսն հարկանէին։

Նոյնպէս և ամենայն հարքն՝ որ յաջորդեցան յառաքելական կանոնացն գրեալ, անձամբք զլաւութիւն բերէին վերջնոցն աւրինակ. ուստի երանելիս այս բարձեալ տաներ գաւանդելոցն պատիւ։

Յայնմ ժամանակի բերեալ երևեցան ի Հայաստան աշխարհիս գիրք սուտապատում, ընդունայնախաւսք աւանդութիւնք առն հոռոմի, որում Թէոդոս[148] անուն։ Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետացն[149] եկեղեցւոյ սրբոյ նշանակեալ ազդ առնէին՝ ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մեսրոպայ։ Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհա[հայա]ծ արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեին. զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական յարիցէ։

Յետ այնորիկ դէպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրքք երկայնակեաց ժամանակաւք, և վայելեալ աստուածեղէն պտղոյն բարութեամբք, յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ[150] գաւառի՝ ի գիւղ Բլրացւոց, ի կատարել ամսոյն Նաւասարդի[151], որպէս զաւր ծննդեան երանելոյն զնոյն համարեալ յիշէին. յերրորդ ժամու աւուրն, պաշտամանն[152] զանուշ ոգին հանդերձ աստուածահաճոյ աղաւթիւք՝ ծերունոյն ի Քրիստոս աւանդեալ. հայեցեալ մարգարէին, որ ասէ «Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ»[153]։

ԵՒ ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ

Իսկ երանելոյն Մեսրոպայ բազում անձկայրեաց տրտմութեամբ և արտասրակաթ ողբովք և ծանրաթախիծ սգովք պաշարեալ դնէր։ Բայց թէպէտ և մինաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն, և զվերակացութիւնն եկեղեցւոյ սրբոյ շնորհաւքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր։ Եւ զգայդ և զցերեկ աղաւթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառով զաստուածադիր հրամանն յուշ առնելով, զգուշացուցանէր ամենայն մարդոյ. մինչև բաղմաց խաստագոյնս և դժուարագոյն համարեալ զծանրաբեռն վարուցն կրթութիւն. մանաւանդ զի զմտաւ ածէր բան ծերու-

նական[158] հասակին զմաւտաւոր վախճանն, չտայր քուն աչաց և ոչ ներհ արտևանաց և ոչ հանգիստ տիրանաց մինչ հասանել ի հանգիստ Տեառն։

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւր և զհոգևոր եռանդն ածէր, անդէն ի նմին ամի՝ յետ ամ[սո]ց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ, լինէր հանդերձ սրբով վարդապետաւն ի բանակն Հայոց յԱյրարատի Նոր Քաղաքի և նորին հոգեկրաւն վարուք հասանէր ի քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիվանդութեանն, յերեքտասաներորդի ամսոյն Մեհեկանի[159]։ Յորժամ ի միջոյ ձեռաւն աշակերտացն ի գունդն Քրիստոսի հասանէր, խառնեաւ թեթևացեալ և սթափեալ ի ցաւոցն, կանգնեալ նստաւ ի ժողովրդոցն ի միջի, և ամբարձեալ զձեռս իւր համատարած յերկինս՝ զամէնայն մնացեալսն յանձն առնելով շնորհացն Աստուծոյ և վասն նոցա աւգնական հայցէր։

Եւ անուանք գլխաւորացն ժողովելոցն աշակերտացն են այսոքիկ. առաջնում Յովսէփ, և երկրորդին Թադիկ, արք ըզգաստք և զգուշագոյնս վարդապետական հրամանացն։ Իսկ ի զինուորացն՝ առաջինն Վահան յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց. և երկրորդին Համայեակ՝[160] ի Մամիկոնեան տոհմէն, արք պատուականք և երկիւղածք, աստուածասէրք հրամանակատարք վարդապետական բանից։ Եւ մինչդեռ ձեռք սրբոյն կարկառեալ կային, տեսիլ սքանչելի խաչանշան լուսաւոր շողացեալ ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ ի յրնկերէ պատմել. Եւ ապա զսրբոցն և զսէր և զմիաբանութեան պատուիրան աւանդել և զմերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակել. և զհաճոյական աղաւթս հատուցեալ ի Քրիստոս՝ հանգեաւ։

Զոր առեալ Վահանայ և Համայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհակոյտ ամբոխիւն, սաղմոսիւք և աւրհնութեամբ և հոգեւոր ցնծութեամբ, կանթեղաւք վառելովք և ջահիւք բորբոքելովք և խնկաւք բուրելովք և ամենայն լուսաճաճանչ գնդիւն, և այնու խաչանշան լուսովն առաջխաղացեալ յԱւշականն[161] ելանէին, և անդի մարտիւրոսական բնակութիւնսն մատուցեալ և զաւրինաւոր յիշատակ երանելոյն կատարեալ, ապա նշանն աներևոյթ լինէր, և նոքա յիւրաքանչիւրն դառնային տեղիս։

Իսկ յետ երից ամաց անցելոց, յաջողելոյ Վահանայ Ամատունւոյ, քրիստոսասէր փութով խորան[162] կանգնեալ, տաշածոյ վիմաւք քանդակելով, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն Հանգիստն յաւրինեալ, որոյ սպաս ևս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ոսկւով և արծաթով և ակամբք պատուականաւք՝ յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյն և արեանն Քրիստոսի պատրաստեալ, զխաչակրաւն վկայսն

Քրիստոսի, հանդերձ երանելեաւն Մեսրոպայ, ի հանգիստ խորանին փոխէր։ Եւ զնորին աշակերտ զԹադիկ անուն՝ զայր զգաստ և բարեպաշտաւն, հանդերձ եղբարբ երանութեանն հասելով սպասաւորել սրբոյն ի փառս Աստուծոյ, զի նմա իսկ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, ամէն։

Գ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒՑ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ ՋՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ ԿՈՐԵԱՆ

ՋԱՍՔԱՆԱՉԵԱՆ[2] *ազգին և զՀայաստան աշխարհիս զաստուածատուր շնորհս զգրոյն գիւտ*[180]*, և զվարդապետութեանն պարգև ի Տեառնէ տուեալ, թէ յորում ժամանակի և որպիսի արամբ լուսաւոր վարդապետութեամբ, պատմեսցուք ձեզ, և զնորին հրեշտակակրաւն վարս առաքինութեան։*

Էր այրս այս Մեսրովբ, ի Տարաւն[50] *գաւառէ, ի Հացեկաց*[51] *գեղջէ, որդի Վարդանայ. ի մանկութեան աստիսս*[181] *վարժեալ Հեղինացւոց դպրութեամբն, և եկեալ ի դուռն*[52] *Արշակունեաց թագաւորացն Հայոց, կացեալ յարքունական դիւանին, լինէր սպասաւոր արքայատուր հրամանին։ Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց՝ ի զինուորական կարգս և յառաջադէմ, և սիրելի էր ամենեցուն՝ մեծամեծաց և փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն։*

Յետ այսորիկ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յինքենէ զամենայն զբաղմունս, և առեալ զխաչն պարծանաց՝ ըստ աւետարանական հրամանին՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի։ Եւ համեալ զհրամանաց պայման[182]*, ի խաչակիր գունդն Քրիստոսի աշակերտացն խառնի. և զկրաւնս միանձանց յանձն առեալ յաւէտ կրաւնաւորէր։ Եւ բազում և ազգի ազգի վշտակցութիւն ըստ աւետարանին կրէր. և ամենայն կրթութեան հոգևորացն գանձն տուեալ՝ կրաւնաւորէր ի քաղց և ի ծարաւ, ի ցուրտ և ի մերկութիւն. խոտաբուտ եղեալ, խարազնազդեստ և գետնատարած անկողնուք, և զհանգիստ քնոյ գիշերոյ յոտնաւոր տքնութեամբ ի թաւթափել ական վճարէր բազում անգամ։ Եւ զայս առնէր ոչ սակաւ ժամանակս։ Եւ գտեալ զոմանս զգաստասէրս յինքն յարեցուցանէր, աշակերտել նմին աւետարանական կրաւնաւորութեանն։*

Եւ ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց[183] *կամական քաջութեամբ տարեալ. և Նովիմբ լուսաւորեալ և պայծառացեալ ի հանդէս ճգնաւորական հաճոյ Աստուծոյ և մարդկան երեւեալ։*

Առեալ այնուհետև երանելւոյն զաշակերտեալսն իւր՝ երթայր ի Գողթն[54]*. որում ընդ առաջ լինէր իշխանն Շամբիթ, և սիրով ընդունէր որպէս զծառայ Աստուծոյ բարձրելոյ. և բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտական հաւատոցն ի Քրիստոս։ Իսկ երանելւոյն անդէն վաղվաղակի զվարդապետական շնորհսն ի մէջ առեալ, ուսուցանէր զբնակիչս քաղաքին և գաւառին, կամաւ իշխանին մատակարութեամբ։ Չի էր ինչ ի նոսա ի հեթանոսական սովորութեանցն, զորս դարձուցանէր ի գիտութիւն ճշմարտութեան, և զամենեսեան յուսաւորէր շնորհաց բանիւն։ Յորոյ ի ձեռն մեծամեծ սքանչելիք երևեալ, դիւաց կերպ ի կերպ լինելով՝ զաղաղակ բարձեալ յամենեցուն լսելիս հնչեցուցանէին զհալածանս իւրեանց, անկանելով ի կողմանս Մարաց*[55]*։ Վասն որոյ առաւել ունկնդիր լինէին աշակերտեալքն հոգեկրաւն վարդապետին, վասն հաւատոց և վարուց որ նոցա աւանդեցաւ, ի սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի՝ գրովք սրբովք։*

Բայց զի ոչ էր զիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն՝ առ աշակերտեալսն. իսկ երանելի վարդապետն տարակուսեալ ի խորհուրդս իւր՝ առ Աստուած ապաւինէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգիր հայ լեզուիս, որով նուազութիւնն յառաւելութիւն գայցէ գրով։ Եւ յարուցեալ այնուհետև հասանէր առ Սուրբն Սահակ[57] *հայրապետն Հայոց, յաղագս գրոյ նշանագրաց*[184]*. եգիտ զնա առաւել ևս փափագող այնմ։ Եւ յետ բազում ջանից և աշխատութեանց և ոչ ինչ ուգտելոյ, դարձեալ յաղուիս ապաւինելով՝ յԱստուծոյ խնդրէին որում ցանկային։ Եւ մեկնեալ ի միմեանց, և յանձն առեալ զխստամբերութիւն՝ ճգնէին առաւել քան զառաւելս։*

Եւ յետ այսորիկ ծանուցեալ լինէր ի թագաւորէն Վռամշապհոյ, որ և նա այսմ նախանձայոյզ եղեալ, առաքեն զՄեսրովբ աշակերտաւքն հանդերձ ի Միջագետս Ասորւոց։ Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստասիրաց համբաւէր գիտութիւն։ Եւ հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Ասորւոց առաքինւոյ, որ ասաց նմա ցուցանել զնշանագիրս՝ որում ցանկայրն։ Եւ յետ բազում աշխատութեանց և քննութեանց և ուսմանց՝ անշահ մնացեալ. զի ոչ բերէր զբաոս և զբանս աղփ[աբ]ետացն ըստ հայերէն լեզուիս։

Յայնժամ հաւատով առ Աստուած ապաւինի, և աղաւթս արտասուալից առ Աստուած մատուցանէր, և հայցէր յամենեցունց Տեառնէն գտիւ և զգիշեր՝ ցուցանել զփափագելին նշանագրաց։ Եւ տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի՝ երեւութացեալ հոգւոյն աչաց՝ թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեռն վերջք գծին ունէր քարտն, և ոչ միայն երևութացաւ, այլ

և հանգամանք ամենայնիցն՝ որպէս յամենայն ինչ ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղաւթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Ռուփինոսիւ[185] աշակերտիւ Եպիփանու, որ ի Սամոս էր միայնակեաց. կերպաձեւեալ զգիրն ըստ հրամանի Մեսրովբայ վարդապետին և երանելոյ, փոխադրելով հայերէն աթուաթայն ըստ անսայթաքութեան սիրղոբայից հեղինակացուցն։

Եւ իս[կ]ոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակելով զքսան և զերկուս յայտնիսն, զհին կտակարանն յեղուլ ի հայ բան։ Եւ աշակերտք նորա Յովհաննէս և Յուսէփ ի նոյնս նպաստ լինէին։ Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն աշակերտացն։

Ընդ այն ժամանակս թագաւորեաց Թէոդոս փոքր։ Եւ եկեալ երանելոյն Մեսրովբայ Հայոց վարդապետի, եւ բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս առ սուրբն Սահակ Հայոց, առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, յոյժ ուրախ լինէին որպէս ընդ տախտակս աստուածագիծս. և գոհութիւն և փառս ամենեցունց արարչին մատուցանէին զնորոգատուր պարգևացն որ տուաւ նոցա ի վերուստ։ Եւ ժողովեալ մանկունս ուշեղս և քաջուսումնս, փափկաձայնս և յերկարոգիս, և դպրոցս կարգեալ յամենայն գաւառս եւ ի գեուղս հրամանաւ սուրբ հայրապետին և թագաւորին, ուսոյց զբնաւ ամենայն աշխարհս Հայոց։

Երթեալ եւ յաշխարհն Վրաց երանելի այրն Աստուծոյ առնէ և՝ նոցա նշանագիրս ըստ տուեցելոյ ի նմա ի վերուստ շնորհացն Աստուծոյ և վարդապետս թողեալ անդ[ի] քաղաքաց քաղաքաց ուսուցանել զմանկունս նոցա։ Եւ ինքն յԱղուանս երթեալ։ Եւ անդ նորոգէր ըստ նմին աւրինակի զնշանագիրս և զուսումնասիրութեանն աւանդս։ Եւ վարդապետս թողեալ անդ դառնայր ի Հայս։ Եւ գտանէ զսուրբն Սահակ հայրապետ, եւ թարգմանութեան պարապեալ շնորհուքն Քրիստոսի յԱստուծոյն, ոչ լինելով Յունի, զի ի Մերուժանայ այրեալ էին յոյն գրեանն հանուր աշխարհիս, զի ի բաժանել զաշխարհս հայոց՝ չտային Պարսկաց վերայկացուքն Յոյն ումեք ուսանել զդպրութեան իւրեան մասին, այլ միայն Ասորի։ Վասն որոյ յոյժ տարակուսեալ լինէին սուրբ հայրապետքն Սահակ եւ երանելին Մեսրովբ, եւ գնացին զկողմամբք արևմտից վիճակին իւրեանց ի մասն Յունաց։

Եւ առաքէ սուրբ Սահակ զՄեսրովբ առ կայսր Թէոդոս և առ հայրապետն Ատտիկոս հանդերձ թղթովք, և թոռամբն իւրով վարդանաւ, զգացուցանել նոցա զգալուստն իւրեանց, և զի ընդունեցին բնակիչք աշխարհիս զնոր ուսումն վարդապետութեանս Հայոց։ Որոց հանդիպեալ զաւրավարին Անատոլիեայ, որ փոքր-ինչ արար ընդունելութիւն նոցա.

զի յառաջագոյն լուեալ էր զլուր առաքինութեան երանելեացն Սահակայ և Մեսրովբայ. և ի ձեռն թղթոց յառաջագոյն զգացուցանէր կայսեր, և առնու հրաման արժանապէս առաքել և բարեփառութեամբ յուղարկել ի Բիւզանդիոն։ Եւ յանդիման եղեալ թագաւորին և հայրապետին, և ձեռնագրեցին զՄեսրովբ եկեղեսիկոպոս[186]. և գրեցին զնա ընդ առաջին երանելի վարդապետն։

Եւ դարձան հանդերձ թղթովք, և եկեալ հանդիպէին սրբոյն Սահակայ, և զօրավարին Անատոլեայ։ Որոց ընկալեալ զթուղթս և զհրամանս, յոյժ ուրախ եղեն և փառաւորութիւն ամենեցուն տեառնէ և Աստուծոյ հատուցին։ Եւ փութայր վազվազակի զհրամանսն կատարել և առաքէ ի գաւառս և ի քաղաքս հայոց որ ընդ իշխանութեամբն կայսեր, ժողովեալ բազմութիւն մանկաւոյ ի տեղիս տեղիս, և դարմանս և ռոճիկս կարգէր յարքունուստ, որպէս զի անզբազապէս ուսցին. զորս և երանելին Մեսրովբ զլուսաւոր վարդապետութեանն ի գործ արկեալ զժողովեալ մանկանսն ուսուցանէր զնշանագիրն. և վարդապետս կացուցանէր յիւրոյ աշակերտացն, զի առ փոքր փոքր զնոսա ի կատարումն ուսմանն ածիցեն։

Յետ այնորիկ ձեռն արկանէր զժպիրհ և զկամաւոր աղանդն Բորբորիանոսացն[111] քննել և որք ոչն գային յուղղութիւն հաւանական բանին՝ սաստկագոյն խոշտանկանաւք պատուհասէին ի բանդ և ի կապանս, և յայլ ինչ տանջանարանս. իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէ գտանէին Աստուծոյ ատելիքն, ապա խանձեալս և մրեալս և պէսպէս խայտառականաւք հալածէին յաշխարհէ։

Իսկ երանելին զիւր վարդապետութեանն պայման արարեալ, սկսեալ և վճարեալ, և բազում շնորհագիր մատեանս զհարց եկեղեցւոյ[113] ստացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութենէն խորութիւնն և լցեալ զեղոյր զամենեքումբ ի բնակիչս աշխարհին հոգեւոր վայելչութեամբ ի փառս ամենասուրբ երրորդութեանն։ Եւ յանձն արարեալ զամենեսեան ամենապահ շնորհացն Աստուծոյ՝ ինքն դառնայր ի կողմանս Հայոց, և շրջէր զամենեքումբ, հաստատէր զաշակերտեալսն ի ճշմարտութեանն հաւատոն։ Եւ եկեալ հանդիպէր սրբոյն Սահակայ, և պատմեալ զեղեալսն առ ի նմանէ, ի միաբան աւրհնեցին զԱստուած ի վերայ նորոգատուր պարգեւացն տուելոց նոցա ի վերուստ։

Յետ այսորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն զիւրեանց ազգի զդպրութիւնն առատացուցանել և առաւելուլ՝ ի թարգմանել և ի գրել ըստ յաջողելոյն Աստուծոյ։ Վասն որոյ առաքեն երկուս յաշակերտացն ի քաղաքն Եդեսեայ զԵզնիկ[120] և զՅովսէփ[119], զի յԱսորի բարբառոյն զսուրբ գիրս նոր թարգմանեսցեն[187] ի Հայ լեզու, և գրով աւանդեսցեն

իւրեանց աշխարհիս։ Իսկ նոքա եկեալ կատարեցին զհրամայեալսն, և ի ձեռն հաւատարիմ եղբարց առ պատուական հարս իւրեանց առաքեցին զգրեանն. և ինքեանք անցեալ գնացին ի կողմանըս Յունաց ի քաղաքն Բիւզանտիոն յուսումն իմաստասիրութեան. որ և ուսեալ և տեղակացեալք՝ թարգմանիչք եղեալք ըստ հեղղենականի լեզուին։

Ապա յետ ժամանակի ընչ ընդ մէջ անցանելոյ, դէպ լինէր եղբարց ոմանց ի Հայաստան աշխարհէս, երթալ ի կողմանս Յունաց՝ ի քաղաքն Կոստանդինուպաւղիս, որոց անուանքն էին միումն Ղևոնդ և միւսումն Կորիւն. երթեալք յարեին յԵզնիկն, իբր առ ընտանի և սննդակից իւրեանց. և առաջի դընէին սուրբ հարանցն զբերեալ կտակարանսն[123] եկեղեցւոյ սրբոյ։

Իսկ երանելեացն սրբոյն Սահակայ և Մեսրովբայ զեկեղեցական զգրոց[124] զգումարութիւն կանխաւ ի յունարէն բարբառոյ ի հայերէն թարգմանեալ, և զբազումս եւ զհայրապետական սրբոց ճշմարտապատում իմաստութիւնս[125] յաւրինեալ ի հայ լեզու։ Դարձեալ յետ այսորիկ առեալ հանդերձ Եզնկաւ[126] զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի թարգմանեալսն՝ հաստատէր ճշմարիտ օրինակաւքն բերելովք. և շատ եւս այղ մեկնութիւնս գրոց[127] սրբոց՝ թարգմանէր ըստ հայերէն նշանագրացն։ Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ ընթերցուածոց գրոց սրբոց պարապէին երանելի սուրբ հարքն զտիւ և զգիշեր. և նովին ծաղկեալք և շահաւետեալք՝ աւրինակ բարեաց ուսումնասիրաց առընթերակացացն լինէին. մանաւանդ զի ունէին եւ զպատուիրականն զգուշացուց[իչ] յաստուածակարգ պատգամաւորացն. յորոց առաջինն պատուիրէ՝ «Յօրէնս Տեառն խորհել ի տուէ և ի գիշերի.»[129] և երկրորդն ասէ. Միտ դիր ընթերցուածոց գրոց մխիթարութեան, վարդապետութեան. մի անփոյթ առնէր զշնրհացդ որ ի քեզ են. յայդ խորհեայ և ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի. զգոյշ լինիջիր անձինդ և վարդապետութեանդ, և ի դմին յամես ջիր. զայդ եթէ առնիցես, և զանձն ապրեցուսցես և զայնոսիկ որ քեզն լսիցեն[130]։

Ապա դարձեալ յետ այնպիսի առաւել եւ ուսաւոր վարդապետութեանն, սկսեալ երանելւոյն Մեսրովբայ ճառս յաճախագոյնս[131], դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի զաւրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէ[ակա]նաց և առաքելականաց կարգեալ եւ յաւրինեալ՝ լի ամենայն ճաշակաւք աւետարանական անհաւատոցն ճշմարտութեան. յորս բազում նմանութիւնս եւ աւրինակս ի յանցաւորացս աստի ճշմարտութիւնն բերելով, առաւելագոյն վասն յարութեանն յուսոյն առ հանդերձեալսն յերիւրելոյ նկարեաց, զի հեշտընկալք եւ դիւրահասոյցք տխմա-

րագունացն։ Եւ մարմնական իրաւք զբաղելոցն՝ ուսցին սթափել, եւ ի զուարթացուցանել եւ հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել։

Եւ այսպէս ընդ ամենայն կողմանս Հայոց և Վրաց և Աղուանից՝ զամենայն ժամանակս կենաց իւրոց՝ զամառն և զձմեռն, զտիւ և զգիշեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ զնորոգագիւտ վարդապետութիւնն ուսուցանէր։ Եւ իւրովի իսկ ճանապարհորդեալ աւետարանական և ողջապատումն բանիւ յաղագս հաւատոյ և վարուց առաջի թագաւորաց և իշխանաց և ռամկաց, անընդդիմական ի հակառակորդաց ըստ տուեցելոյ նորա ի վերուստ շնորհի՝ ուսուցանէր ի փառս և ի գովութիւն Աստուծոյ, և զամենայն ոգի քրիստոսասէրս և ոգէղէնս վառէր. և բազում բանդականաց և կալանականաց և տագնապելոց ի պէսպէս վտանգից՝ փրկութիւն ընձեռեաց, կորզելով զտարակուսեալսն ահաւորութեամբ զաւրութեամբ փառացն Քրիստոսի՝ ի գովեստ փրկութեան աւետարանին. և բազում մուրհակս անիրաւագիրս պատառեաց. և զբազում սգաւորս և կարճամիտ մխիթարեաց վարդապետութեամբն և նուաճեաց ակնկալութեամբ՝ յուսոյն ի համբերութիւնն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի[132]. և զամենայն հաւատացեալս միանգամայն զաւրս և զկանայս յաստուածպաշտութեան պայման անդր փոխադրեաց։

Եւ [եւ] դարձեալ անհամար և գունդս գունդս ի շէնս և յանշէնս ի ճշմարտութեան աւանդս սուրբ հարցն հաստատէր ի փառս և ի գովեստ ամենասուրբ Երրորդութեան։ Նա և (ի) դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և լեռնականս և արգելականս[133], բնակեցուցեալ կրօնաւորիլ առ ի բարեպաշտութեանն ջանս, զոր ոչ միայն բանիւք և վարդապետութեամբ, այղ եւ արդեամբք զանձն աւրինակ կացուցանէր միանձանց, հանապազորդ պահաւք և աղաւթիւք, տքնութեամբ եւ արտասուաւք, խոնարհութեամբ, եւ հեզութեամբ եւ կուսութեամբ նահատակեալ. և ընդդէմ հանապազորդեան թշնամւոյն քաջապէս արիացեալ. նա և ի պատուոյ և ի փառաց խուսափեալ, երթեալ սորամուտ ծակախիթ լինէր, և զառաւրեայ զկեանսն խոտաբուտ ճաշակաւք վճարէր։ Եւ այնպէս վշտակցեալ տկարութեան զանձն իւր տուեալ անհեղգաբար, հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական խրատուն, թէ՝ Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ՝ յայնժամ զաւրացեալ լինիմ[134] և եթէ՝ Լաւ լիցի ինձ մնալ ի տկարութեան, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի[135]։

Անդ էր զուարճանալ հոգւով ուր ուրեք դադարեալ լինէր. և ոչ պայծառանայր գինով, այղ երգաւք հոգեւորաւք[136] ի փառս և ի գովութիւն Աստուծոյ. ի կրթութիւնս միշտ քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպա-

տում գրոց, ի քաջալերութիւնս յորդորականս լուսաւոր կարգաց և տաւօնից զանձինս ճգնաւորացն ամենաշնորհ վարդապետութեամբն զինէր առ ի յառաջադէմ ընտրութիւն պսակահամբար քրիստոսադիր կիտին։

Եւ եռայր հոգւով յաստուածպաշտութեանն մրցարան վերին կոչմանն, աղերսալի աղօթիւք և փարելի պաղատանաւք և հաշտելի խընդրուածաւք յամենեցունց Տեառնէն, վասն ամենեցուն կենացն յաւիտենական արժանի լինել մասին սրբոցն ի լոյս։ Եւ նովին հոգեկրաւն վարուք կայր յանապատ տեղիս. մինչեւ ազդ լինէր իրաց ինչ աւգտակարաց եկեղեցականաց ի կողմանս կողմանս յաշակերտեալսն։

Յայնժամ իջանէր յաւգնականութիւն եւ վճարէր զպէտս պիտոյից, ուր հոգևոր կարգաց էր նուազութիւն, շնորհաւքն Քրիստոսի. Եւ յորդորագոյնս և պարարտագոյնս անփակ բերանով եւ հանճարով իմաստութեամբ զվտակս վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցանէր եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր երանելի վարդապետն Հայոց Մեսրովբ։ Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւն կանովն աշակերտացն առնել. որպէս զՔրիստոսի և Աստուծոյ մերոյ է ուսուցանել ըստ տնաւրէնութեանն. քանզի Սկսաւ, ասէ Յիսուս առնել եւ ուսուցանել[137], և եթէ, հայեցարուք յառաջնորդն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ առաջի կայր՝ յանձն էառ զխաչն, արհամարհեաց զամաւթ, եւ զինչ այր վշտաց հատուցումն ցուցանի հաւատացեալ ի Քրիստոս Յիսուս։ Նստաւ, ասէ, ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս. աղէ ածէք զմտաւ որ այսպիսի համբերութիւն վասն մեր կրեաց, զի մի աշխատ լինիցիմք և լքանիցիմք ի վարս առաքինութեան։ Զի ոչ վասն անձին ամենատէրն զայս առնէր, այլ վասն համաշխարհական փրկութեանն, յուսումն աստուածասիրաց որ ընդ նոյն ճանապարհորդեն ի հանդերձեալսն, որ են աւրինակ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, որպէս ճառք աւետարանին քարոզեն։

Իսկ արդ եթէ ի թեթեւագոյն արուեստաւոր և հանճարեղ իմաստից տգիտանամք, որ ընդ աստուածախաւսսն[138] կատարէ զշնորհացն ներգործութիւնն, որում երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ, այղ և յուշ առնէ զառաջնորդս կենաց բանին. Հայեցեալք, ասէ, յելս գնացից նոցա նմանողք եղերուք, և յուսմունս պէսպէս և յաւտարաձայնս մի դանդաչէք, այղ առաքելոց և մարգարէից և երանեալ սրբոց հարցն հետեւեալ ճշմարտութեանն աւանդից զոր նոքայն հորդեցին զանսայթաք ճանապարհն յերկնից արքայութիւնն[144]. և աւրինակ աշակերտելոցն զհաւատս և զվարս բայցայայտեցին գրովք սրբովք. երբեմն առանձինն խրատատելով ըստ իւրաքանչիւրոցն աւգտի, երբեմն ի ժողովս բազմամբոխս զփառս Քրիստոսի շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն բարձրացուցանէին, և յամենայն աշխարհակիր ղբաւսանաց ի բաց կալ, և միայն աստուածպաշտութեան պարապել. զոր և մարգարէքն և առաքեալքն յառաջագոյն գուշակեցին ըստ Պաւղոսի վկայութեանն։ Շրջեցան, ասէ, լաշկամաշկաւք և մորթովք այծենաւք, կարաւտեալք, նեղեալք, չարչարեալք, յանապատի մոլորեալք և յայրս և փապարս երկրի. և սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոցն[189] ստուգեցին զարդարութեան ճանապարհն աշակերտելոցն, որ տանի ի կեանսն յաւիտենից։

Ուստի երանելիս այս Մեսրովբ բարձեալ բերէր զաւանդելոցն պատիւ ի փառս ամենեցունց Տեառնն, և զամենայն աշակերտեալսն իւր ի նոյն հանդէս յորդորէր. և այնպէս յառաջադէմ ամենայն աստուածահաճոյ վարուք և հաւատոյ վայելչութեամբք լցեալք պատրաստեալք և ամեթացեալք ի բազում ժամանակս աշակերտեալք առ ի նմանէ, նովին ի նոյն կանխեալք և ի նմին հանապազորդեալք ի փառս ամենասուրբ Երրորդութեանն։

Յայնժամ արք ոմանք հալածեալք ի ժողովոյն Եփեսոսի, որում անուն էր Թէոդորոս[148], ըստ Պաւղոսի Սամոսատացւոյ և ըստ Նեստորի հերձուածոյն գիրս ստացեալ համաձայնս պարզամտացն և դիւրահաւանիցն, և եկեալ յաշխարհս մեր՝ կամէին ուսուցանել զչար աղանդն։ Վասն որոյ ի սուրբ ժողովոյն[149] առաքեալ թուղթս ազդ առէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մեսրովբայ։ Եւ նոցա ճշմարտապէս փութով զկամակոր հերձուածողսն ի բաց հալածեալ յիւրեանց աշխարհէն, զի մի ինչ ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական մերձեսցի։

Յետ այնորիկ դէպ լինէր փոխել յաշխարհէս երանելւոյն սրբոյն Սահակայ հայրապետին հայոց՝ ճշմարիտ վարուք և ուղղափառ հաւատով, լցեալ աւուրք և երկայնակեաց ժամանակաւք վայելեցուցեալ զամենայն աշխարհս հայոց ի լուսաւոր վարդապետութիւնն, այնպէս հանգեաւ ի Քրիստոս, յառաջնում ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից, ի Բագրեւանդ գաւառի[150] ի գեւղն Բլուր, ի կատարել ամսոյն Նաւասարդի[151], յերրորդ ժամու աւուրն պաշտամա[ն], որ և զաւր ծննդեան ի նոյն աւուր։ Եւ այնպէս զամբիծ հոգին սաղմոսերգութեամբ և աղաւթիւք ծերունւոյն աւանդեալ զհոգին ի Քրիստոս, ասէ, ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ[153], ըստ նախավկային բանի։

Ըստ նմին օրինակի և նորա ապսպարեալ զանձն և զմնացեալսն զիւր զհաւատն ամենապահ շնորհացն Աստուծոյ յանձն արարեալ՝ այնպէս փոխեցաւ յաշխարհէս։ Զոր առեալ վաղվաղակի պարսպէին հանդերձանաւք ըստ խորհրդածութեան քահանայապետութեան թաղմանն՝

իւր իսկ ձեռաւսւն աշակերտքն. որոյ առաջնոյն Երեմիա անուն, այր սուրբ և երկեւղած յԱստուծոյ. և այդք ընդ նմա, հանդերձ կնաւն[155] Վարդանայ Մամիկոնէի. և բարձեալ զմարմին երանելւոյն բազում ամբոխիւ, եպիսկոպոսաւք և քահանայիւք, սարկաւագաւք և դպրաւք, սաղմոսիւք և աւրհնութեամբ և երգաւք հոգեւորաւք՝ ածին ի Տարաւն գաւառ ի գեւղն Յաշտիշատ[156]. և անդ ի մարտիւրոսական խորանին յարկեղս սրբոցն հանգուցանէին զսրբոյ առն Աստուծոյ զնշխարսն հանդերձ ամենայն պատուով. և կնքեալ քրիստոսանշան կնքովն, և զյիշատակ սրբոյն կատարեալ ի փառս և ի գովութիւն Աստուծոյ, այնուհետեւ յիւրաքանչիւրսն դառնային. վորոյ և զտաւն յիշատակի սրբոյն տաւնախմբեն յերեսուն Նաւասարդի ամսեանն բազում ժողովովք. և բարեխաւսութեամբ սուրբ հայրապետին զիւրաքանչիւր աւգուտ յամենեցունց Տեառնէն ընդունին։

Իսկ երանելւոյ զուգականին զայս լուեալ, զսուրբ վարդապետէն ասեմ զմեսրովբայ, տրտմեալ և տխրեալ լինէր, և յարտասուս եղեալ վարանէր զի ի նմանէ բաժանումն և զվախճան առնն Աստուծոյ, և զսպառումն զարմից սրբոյն Գրիգորի. և հոգւաւք տարակուսեալ պաշարէր առ այնպիսի աղէտս. մանաւանդ զի ոչ տեսանէր զայնպիսի զոք առ ի բարեպաշտութեան ջանս և առ լուսաւոր վարդապետութիւնն և առ վերակացութեան շնորհն, որ եր ի վերոյ էր քան զառաջինսն զիւր սուրբ հարսն։ Յայսոսիկ մտախոհ եղեալ ողբերգական բարբառով վարանէր. զի ոչ ոք ունէր համաշունչ՝ թէ ընտանեբար հոգասցէ վասն Հայաստանեաց և ելս այսոցիկ զԱստուած յիշէր և մխիթարէր ըստ Սաղմոսերգողին, որ արար զամենայն և փոփոխէ անհաս իմաստութեամբ և մատակարարութեամբ։ Եւ զինքն առաւել ևս յորդորէր ի կրաւնաւորութեան կարգս, համանգամայնիցն յաղթող լինել էր կրաւնաւորացս ըստ երկնային կոչմանն հանդիսանալ ի բարձրագոյնսն շնորհաւքն Աստուծոյ՝ առանց հեղգութեան։ Եւ յորդորէր զամենայն աշակերտեալսն առ բարեացն քաջութիւնսն, և յուշ առնէր ամենայն անձին զգուշանալ ամենայն անձին, ի վարս ի գնացս խոհեմագոյն և հանճարեղ խրատուք. մինչ բազմաց խիստ և ծանր և դժուար համարեալ զվարուցն կրթութիւնսն։ Այղ նա վերջինսն մոռանայր և յառաջադէմսն նկատէր ծերունի հասակաւն[158], զմտաւ ածելով զմաւտաւոր վախճանն՝ ոչ տայր քուն աչաց և ոչ նինջ արտեւանաց մինչև ցաւր կոչման ելանելոյ նորա յաշխարհէս։

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւր և զհոգեւոր եռանդն բորբոքէր յաստուածսիրութիւն, և բազում թուղթս խրատուց ընդ ամենայն գաւառսն առաքէր, անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելւոյն սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն ի տասն և չերիսն[159] մեհեկա-

նի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին հայոց, յԱյրարատ գաւառի նոր քաղաքին, ի նոյն հոգեկիր կրաւնս, որպէս և յառաջագոյն ասացաք, հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումնն՝ յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեան։ Եւ յորժամ կամեցաւ Աստուած որոշել զսուրբն ի մեջոյ ձեռնասուն աշակերտացն, և խաւնել ի զունդս սրբոցն, թեթեւացեալ և սթափացեալ ի ցաւոցն, և կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարածս յերկինս, զամենասուրբ զերրորդութիւնն աւրհնէր, և յանձն առնէր զաշակերտեալսն ամենապահ շնորհացն Աստուծոյ, զի կայսեն հաստատուն ի հաւատս և ի վարս ուղղութեան, և առանց գայթագղութեան կատարեսցեն զարդարութիւն սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի։

Եւ անուանք գլխաւոր աշակերտացն ժողովելոցն առ նա, են այս. առաջնումն Յովսէփ, և երկրորդումն Թոդիկ, արք զգաստք և զգուշագոյնք. իսկ ի զինուորացն՝ առաջնումն Համայեակ՝[160] ի Մամիկոնեան տոհմէն, և երկրորդին Վահան՝ զազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ հայոց Մեծաց. աստուածասէրք և երկիւղածք յԱստուծոյ։ Եւ մինչդեռ ձեռք սրբոյ վարդապետին ընդ երկինս կարկառեալ կայր, տեսիլ սքանչելի և խաչանշան լուսաւոր շողաձև երևէր ի վերայ ապարանիցն՝ յորում երանելին վախճանէր. զոր և ամենայն ուստեք ինքնատես լեալ և ոչ յրնկերէն պատմեալ։ Իսկ սրբոյն զսիրոյ և զմիաբանութեան պատուիրանն աւանդեալ, եւ զհեռաւորս և զմերձաւոր աւրհնութեամբ պսակեալ և զհաճոյական աղաւթս հատուցեալ ի Տէր, անդէն վաղվաղակի աւանդեաց զհոգին ի փառս ամենասուրբ Երրորդութեանն։

Զոր առեալ Համայեկի և Վահանայ կազմութեամբ վախճանելոցդ, հանդերձ աշխարհաժողով ամբոխիւ, սաղմոսիւք աւրհնութեամբ և երգաւք հոգեւորաւք, մոմեղինաւք վառեալք և ջահիւք բորբոքելովք և անուշահոտ խնկաւք, և այնու խաչանշան յառաջախաղաց լուսաւոր նշանաւն՝ յԱւշականն[161] ելանէին, և անդ ի մարտիրոսական յարկսն հանգուցանէին զսուրբ այրն Աստուծոյ և զաւրինաւոր տաւն յիշատակի երանելւոյն կատարէին։ Ապա նշանն աներևոյթ լինէր, և նորա յիւրաքանչիւր տեղիս դառնային, փառաւորելով և աւրհնելով զԱստուած ի վերայ սքանչելեացն զոր Տէր եցոյց ի վերայ վարդապետին։

Իսկ յետ ամսոյ երից անցելոց ըստ յաջողելոյն Աստուծոյ Վահանայ Ամատունւոյ քրիստոսասիրի՝ կամեցաւ տաճար[162] փառաց անուանն Աստուծոյ շինել յանուն սրբոյ վարդապետին, ի տաշածոյ վիմաց սքանչելապէս յաւրինեալ խորանս և գեղեցկապէս կազմեալս. և անդ ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն առնել. և վայելուչ սպասուք ոսկւով և արծաթով և ակամբք պատուականաւք զտունն Աստուծոյ և

զսեղան կենարար մարմնոյ և արեանն Քրիստոսի զարդարէր։ Եւ զնորին աշակերտն զգաստ և բարեպաշտաւն զԹոդիկ՝ սպասաւոր նորին կացուցանէին և այղ ևս եղբարբք՝ կատարել զհանապազորդ պաշտաւնն։ Եւ որ վերակացուս ժողովրդեանն ըստ յայտնութեան սուրբ Հարցն՝ զՅովսէփ[163] և զՅովհան կացուցանեին արս ճշմարտասէրս և ողջախոհս, որոց դէպ լինէր յետ վախճանի սրբոցն ազգի ազգի փորձութեանց ի վերայ եկելոց ի բռնաւորաց, մենակռիւ մենամարտիկ ի Պարսս ի Տիսպովն[164] քաղաքի վասն Քրիստոսի, յաղթութեամբ բազմաւ. որոց և զխոստովանողական[165] անուն ժառանգեալք, ի նոյն վերակացութիւնս վարդապետութեան դառնային յերկիրս Հայոց։

Իսկ բարեացապարտն Վահան[166] յանկարծահաս կենաց, ասպնջական ցանկալի ամենայն սրբոց լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ՝ շնորհաւքն Քրիստոսի մերձաւոր կենացն յապիտենից լինէր[167]։

Եւ արդ ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ զերանելեաց սուրբ Հարցն զվարս և զվախճան փոքր ինչ պատմելով՝ ի կատարումն զբանս ածից. ոչ եթէ ի հին համբաւուց զրուցաց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այղ որոց մեզէն իսկ ականատես կերպարանացն և առնթերակաց հոգևորական գործոց սրբոցն. և լսողք շնորհապատում վարդապետութեանն. և նոցին սրբոց վարդապետաց արբանեակ ըստ նոցին աւետարանական հրամանաց. ոչ առ սուտակայպատում յարմարեալ զբանս ի մեր գովութիւն զհայրենիսն յարգելով, այղ զյաճախագոյնսն թողեալ զառաքինեացն հանդէս, որ այժմ ծածկեալ է ի Քրիստոս և յայնժամ ընդ նմա յայտնեսցի փառաւք, յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց։ Այլ սուղ ինչ նշանաւոր գիտակացն[168] պատմելով՝ զհամառաւտս կարգեսցուք, որք ոչ մեզ է շահս, այղ և որք զմատեանս[169] ընթեռնուն, յայտնեսցի արանցն քաջութիւնն։ Քանզի և ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոցն գրով նշանակել զիւրաքանչիւրսն[170], այղ ի դիւրագոյնսն[190] և ի հեշտագոյնսն զանձինս պարապեսցուք, և զանցեալ զբազմախուռն արգասեաւք սրբոցն առ ի մանրակրկիտն առնելոյ թողաք, և զկարեւորագոյնսն սուղ ինչ մատենագրեցաք ըստ մերում կարի, ոչ ի պատիւ ընտրելոցն մերձաւորացն Քրիստոսի, որք ամենապայծառ հաւատով և վարուք[172] ծանուցեալք եղեն, այղ յաւրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց, և որոց նոքաւք աշակերտելոց իցեն զճշմարտութիւն յազգս իւրեանց՝ աւանդեցաւ այս, ի փառս ամենասուրբ Երրորդութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտենաս յաւիտենից. ամէն.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Բնագրի մէջ ամեն տեղ է Մաշթոց. միայն այստեղ վերնագրի մէջ է Մեսրովպ, իսկ համառոտ վերնագրի մէջ՝ Մեսրոպ։ Ես փոխում եմ՝ Մաշթոց։ Տե՛ս առաջաբան § 9։ Թողել ենք Մեսրոպ։ (Ա. Մ.)։

[2] Ասքանազական ազգ—Հայոց ազգ։ Մեր թարգմանիչները հայերին այսպես կոչել են նկատի ունենալով Աստվածաշնչի հետևյալ խոսքը. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին» (Երեմիա, ԾԱ. 27)։ Երբայերենում է՝ «Կոչեցէք ի վերայ դորա զթագաւորութիւնս Արարատայ, Մինուայ և Ասքանազայ»։ «Արարատ» անունը մեկնաբանները նույնացրել են Հայաստանի հետ և նրա հետ հիշված «Ասքանազյան գունդն» էլ մեկնել են իբրև հայկական գունդ։ Համմտ. և Մ. Խորենացի «Հայ. Պատմ.», Ա. իր. «Եւ զի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն, վկայէ և երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գընդին»։ Ասքանազ անունը հիշվում է Ս. Գրքի մեջ նաև Ծննդոց, Ժ. 3. և Ա. Մնացորդաց, Ա. 5. իբրև նոյի որդի Յաբեթի թոռ։

[3] Բնագիրը տպված է «Հոգեցայ». ուղղում եմ «Հոգայի», որ կարդացվել է նախ՝ «Հոգացի», 3 և 8 տառերի շփոթումով. ապա՝ սակավ գործածվող անց. կատարյալ ներգործական ձևին փոխանակել է սովորական հոգացայ ձևը։

[4] Այս Հովսեփին Կորյունը հիշում է հետո էլ երկու անգամ։ Մաշտոցի մահվան ժամանակ ժողովված գլխավոր աշակերտների մեջ նա հիշվում է իբրև առաջինը՝ «գլխավոր ժողովոյն»։ Սահակն ու Մաշտոցը, մահից առաջ, նրան նշանակում են տեղապահ։— Բայց Ղազար Փարպեցին գրում է, թե Մաշթոցի մահից հետո «յաջորդեաց գաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց... սուրբն Յովսէփ, որ էր ի գաւառէն Վայոց Ձորոյ, ի գեղջէն, որում անուն էր Խողոցիմք» (Ղր. Ա., ԺԲ)։ Այս Հովսեփը Վարդանանց պատերազմի շրջանում կատարում է առանձին դեր։ Ավարայրի ճակատամարտից (451 թ.) հետո նա տարվում է Պարսկաստան, ուր և նահատակվում է, այսինքն՝ քրիստոնեական կրոնի համար սպանվում 454 թ.։ Տե՛ս ծան. 119։

[5] Մովսես մարգարեն, ըստ աստվածաշնչյան ավանդության, հին հրեական ազգի առաջնորդն ու օրենսդիրը, համարվում է հեղինակ Աստվածաշնչի Հին Կտակարանի առաջին հինգ գրքերի, որոնք կոչվում են Հնգամատյան։ «Մովսիսական պատմություն» ասելով Կորյունը նկատի ունի Հնգամատյանի առաջին երկու գրքերը որ են՝ Ծննդոց և Ելք։

[6] Ակնարկում է առաջին մարդ Ադամի որդի Աբելի արած զոհին, որ աստված ընդունում է ըստ աստվածաշնչյան պրոյցի (Ծննդոց, Դ. 4)։ Իսկ «արդար» կոչումն առնված է հետևյալից. «Հաւատովք լաւ պատարագս Հաբէլ քան զԿայէն մատուցանէր աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել» (Թուղթ առ Եբրայեցիս, ԺԱ. 4)։

7 Ակնարկում է աստվածաշնչյան նախահայրերից Ենովքին, որ 365 տարի ապրելուց հետո՝ իբր կենդանի փոխվում է այն աշխարհը։ «Ենովք հաճոյ եղև Աստուծոյ, և ոչ ուրեք գտանէր զի փոխեաց զնա աստուած» (Ծննդ., ե. 24)։ «Հավատովք Ենովք փոխեցաւ, զի զմահ մի՛ ճաշակեսցէ, և ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա աստուած. և յառաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճոյ լինել աստուծոյ» (Առ Եբրայեցիս, ԺԱ. 5)։

8 Ակնարկում է Նոյ նահապետին, որ ըստ աստվածաշնչյան ավանդության, հավաքարհային ջրհեղեղի ժամանակ, հետև առնելով կենդանիներից մի-մի զույգ, մտել է տապանը և ազատվել խեղդվելուց (Ծննդ., Զ., է., Ը., Առ Եբրայեցիս, ԺԱ. 7)։

9 Ակնարկում է Աբրահամ նահապետին, որ ըստ աստվածաշնչյան առասպելի, մի քանի անգամ տեսնում է աստծուն, դաշնակցում է նրա հետ և աստված խոստանում է տալ նրան և նրա սերունդներին «Աւետեաց երկիրը», որ է Պաղեստինը (Ծննդ., ԺԲ., ԺԳ., ԺԵ., ԺԷ)։

10 Պողոս առաքյալը, քրիստոնեության մեծ քարոզիչներից մեկը։ Նրա անունով մնում են Նոր Կտակարանի 14 Թղթեր, որոնցից մեկն է «Թուղթ առ Եբրայեցիս»։ Կորյունը նկատի ունի այդ Թղթի ԺԱ. գլուխը։

11 «Հաւատովք Բախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսն խաղաղութեամբ։ Եւ արդ զի՞նչ ևս ասացից, զի չէ բաւական ժամանակս պատմելոյ»... (Առ Եբրայեցիս, ԺԱ. 31, 32)։ Մովսեսի մահից հետո՝ նրա հաջորդ Հեսուն երկու մարդ է ուղարկում «Ավետյաց երկիրը», այսինքն՝ խոստացած երկիրը, Քանանացոց երկիրը (Պաղեստինը) լրտեսելու։ Նրանք իջևանում են Բախաբ անունով պոռնիկ կնոջ տանը։ Նա պահում, ազատում է երկու լրտեսներին. սրանք էլ նրան են պահում իր ընտանիքով հանդերձ, երբ հրեաները տիրում են Քանանացոց երկրին (Ցոլք, Բ., Զ.)։

12 Ներրովբ—Քամի որդի Քուշի որդին ըստ Ս. Գրքի։ Համարվում է հիմնադիրը Բաբելոն քաղաքի և Բաբելոնի թագավորության։ «Նա սկսաւ լինել հսկայ ի վերայ յերկրի։ Եւ նա էր սկիզբ որսորդ առաջի Տեառն աստուծոյ... Եւ եղև սկիզբն թագաւորութեան նորա Բաբելովն» (Ծննդ., ժ. 8—10)։

13 Սամփսոն—հին հրեական առասպելական հերոս ըստ Ս. Գրքի, դատավորներից մեկը։ Զարմանալի մեծ ուժի տեր է. պատանի հասակում սպանում է մի առյուծ, հետո շատ կռիվներ է ունենում հրեաների հարևան փղշտացիների դեմ (Դատաւորք, ՓԳ—ԺԶ)։

14 Դավիթ—հին հրեական թագավոր-մարգարե։ Պատանի հասակում փղշտացիների դեմ պատերազմի ժամանակ սպանում է փղշտացի հսկա Գողիաթին։ Հետո էլ կատարում է ուրիշ քաջագործություններ, պատերազմների մեջ հաղթություններ է տանում։ Տիրում է Երուսաղեմին, որ և դարձնում է իր մայրաքաղաքը։ Նրա անունով կան Աստվածաշնչի մեջ բազմաթիվ սաղմոսներ—սրբազան երգեր (Ա. Թագաւորաց, ԺԶ—Լ., Բ. Թագ., Ա—ԻԴ., Թագ., Ա—Բ)։

15 Հովսեփ—հրեական նախահայր Հակոբի որդին, որին ըստ Ս. Գրքի, եգիպտոսի փարավոնը (թագավորը) նրա իմաստության համար կարգում է իր երկրի կառավարիչ (Ծննդ., ԼԷ—Ը)։

16 Դանիել—չորս մեծ մարգարեներից մեկը, հրեական Դավիթ թագավորի տոհմից. մանուկ հասակում գերի է տարվում Բաբելոն և կրթվում է Նաբուգոդոնոսոր թագավորի պալատում։ Հայտնի է իր մեծ իմաստությամբ (Մարգար. Դանիէլի)։

17 Բաբելովն—հին Արևելքի շատ նշանավոր քաղաք։ Եփրատ գետի վրա, արդի Բաղդատ քաղաքից հարավ, հին բաբելացոց երկրի ու թագավորության մայրաքաղաքը։

18 «Միթէ իմաստնագո՞յն իցես քան զԴանիէլ, կամ իմաստո՞ւն խրատեցին զքեզ հանճարովն իւրեանց» (Եզեկիէլ, ԻՀ. 3)։

19 Գալիլեա—Պաղեստինի չորս մեծ բաժանմունքներից մեկը, հյուսիսային կողմում։ Գալիլեայի Նազարեթ քաղաքում, ըստ ավետարանական պատմության, իբր Գաբրիել հրեշտակը ողջույն է տվել Մարիամ կույսին (Ղուկ., Ա. 26—28)։ «Օրհնեալ ես դու ի կանայս (Ղուկ., Ա. 42)։

20 Աբրահամն (ըստ Ծննդ., ԺԸ.) իբր ընդունում է աստծուն երկու հրեշտակների հետ և հյուրասիրում է նրանց։ Աստված խոստումներ է անում նրան և վերջը հայտնում է նրան Սոդոմ և Գոմոր քաղաքների կործանման մասին, սկսելով այսպես. «Միթէ թաքո՞ւցա ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմմէ՝ զոր ինչ գործելոց եմ»։

21 Սոդոմ—քաղաք Պաղեստինում, Մեռյալ լճի ափին, հյուսիսային կողմում։ Ըստ Ս. Գրքի, այդ քաղաքը, Գոմոր քաղաքի հետ (Սոդոմից հյուսիս) կործանվում է բնակիչների մեծ անառակության պատճառով։

22 Հոր—Աստվածաշնչի «Գիրք Յոբայ» կոչված վսեմ բանաստեղծության հերոսը, որ հայտնի է իր մեծ համբերությամբ դժբախտությունների մեջ։ Մի օր հրեշտակները գալիս են աստծու առաջ, սատանան էլ հետները։ Աստված սատանայի առաջ գովում է Հորին, անվանելով նրան՝ «Այր անարատ, ճշմարիտ, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարաց» (Յոր, Ա. 8), և թույլ է տալիս, որ սատանան փորձի Հորին, ամեն դժբախտություններ բերելով նրա գլխին։ Այս «պատերազմի» մեջ «պատերազմականի», այսինքն՝ սատանայի հետ՝ հաղթող է ելնում Հորն իր մեծ համբերությամբ։

23 Հոթոր—Մովսես մարգարեի անները։ Նա խրատում է Մովսեսին, որ ժողովրդից մարդիկ կարգի դատավորներ (Ելք, ԺԸ. 17—23)։

24 «Միածին որդի»—Հիսուսի մակդիրը՝ իբրև «միամոր որդի»։

25 Լեռան քարոզի ժամանակ Քրիստոսի տված երանությունները (Մատթ., ե. 3—11)։

26 «Սեփական տասներկուսը»—Քրիստոսի տասներկու աշակերտները, առաքյալները։

27 Բնագրի մեջ՝ «յառաջամուտ Կարապետ», նույն և Հովհաննես Մկրտիչ։ Սովորաբար կոչվում է «յառաջընթաց Կարապետ», իբրև Քրիստոսից առաջ գնացող, ճանապարհ բաց անող։

28 «Ահա արդարև այր յԻսրայէլի, յորում նենգութիւն ոչ գոյ (Յովհ., Ա. 47)։

29 Յովհ., Դ. 46—54. Մատթ., Ը. 5—10. «Եւ ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի» (Մատթ., Ը. 10)։ Իսրայել—հրեաներ։

30 «Մատեաւ առ նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, և թափեաց ի գլուխ նորա ի բազմականին»... «Ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ՝ խօսեսցի, և զոր արար դա ի յիշատակ դորա» (Մատթ. ԻԶ. 7—13)։

31 «Ո՛վ, կին դու, մեծ են հավատք քո». (Մատթ., ԺԵ. 28)։

32 Այրի կինը երկու լումա է ձգում գանձանակը. «Արդարև ասեմ ձեզ, զի այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսին» (Ղուկ., ԻԱ. 1—4)։

33 «Ասէ ցնա Տէր. երթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց (Գործք, Ը. 15)։

34 «Այլ աստուծոյ շնորհքն, որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս Յիսուս և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ միւք յամենայն տեղիս» (Բ. Կորնթ. Բ. 14)։

35 «Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց աստուծոյ» (Հռոմ., Ը. 33)։

36 «Գործք Առաքելոց»—Նոր Կտակարանի գրքերից մեկը, որի մեջ պատմված են առաքյալների գործերը։

37 «Կաթուղիկէք առաքելոց»—Հակոբ, Պետրոս, Հովհաննես, Հուդա առաքյալների ընդհանրական թղթերը։

38 «Եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական, նախանձաւոր գործոց բարութեան» (Տիտոս, Բ. 14)։ «Փոյթ արասցեն գործոց բարեաց վերակացու լինել հաւատացեալքն աստուծոյ» (Տիտոս, Գ. 8)։

39 «Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգևորացն առաւել» (Ա. Կորնթ., ԺԴ. 1)։

40 «Այլ վասն պաշտաման նոր ի սուրբսն է, աւելի է ինձ և գրել առ ձեզ։ Զի գիտեմ գյոժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ ի մէջ Մակեդոնացւոցն, թէ Աքայեցիքն ի հերուն հետէ պատրաստ են, և ձեր նախանձն զբաղումս յորդորեաց» (Բ. Կորնթ., Թ. 1—2)։

41 «Բայց լաւ է նախանձաւոր լինել ի բարիս յամենայն ժամ» (Գագատ., Դ. 18)։

42 «Հայեսցուք ի օրագլուխն հաւատոց և ի կատարիչն Յիսուս» (Եբր., ԺԲ. 2)։

43 «Յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն աստուծոյ, հայեցեալք յելս դնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր., ԺԳ. 7)։

44 «Զայն խորհեսցի իւրաքանչիւր որ ի ձէնջ որ և ի Քրիստոս Յիսուս» (Փիլիպ., Բ. 5)։

45 «Օրինակ առէք, եղբարք, չարչարանաց և երկայնմտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն Տեառն։ Ահաւասիկ երանեմք համբերողաց, զհամբերութիւնն Յովբայ, լուարուք, և զկատարումն Տեառն տեսէք» (Յակ., Ե. 10—11)։

46 «Մինչև հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութեան որդւոյ աստուծոյ, յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի» (Եփես., Դ. 13)։ «Այլ մեր առաքինութիւն յերկինս է, ուստի և փրկչին ակն ունիմք» (Փիլիպ., Գ. 20)։

47 «Կանոնական» ասվում են այն գրվածքները, որ քրիստոնեական եկեղեցին ընդունում է իբրև աղբյուր այն կանոնների, որոնցով պիտի առաջնորդվեն եկեղեցու բարեկարգության, վարչության, կարգ ու կանոնի և այլնի նկատմամբ։

48 «Երկուսից էլ», այսինքն թե՛ Ս. Գրքից և թե՛ առաքյալներից հետո եկած կանոնական գրվածքներից։

49 Բնագրի այս խոսքը՝ «և հայրենակատար մեծարեալ պայմանաւոր առ ի մէնջ՝ հաճեսցի» մութն է համարվել՝ «հայրենակատար» բառի պատճառով, որ հասկանում եմ «հոր վարքը կատարել», այսինքն գրել։ Իսկ «հաճել»—կատարել, վճարել, վերջացնել, գլուխ բերել։—«Զարդարեսցի»—զարդարուն կերպով գրել, ծաղկեցնել, ինչպես սկզբում հենց ասում է Կորյունը։

50 Տարոն գավառը՝ Հայաստանի Տուրուբերան նահանգի մեջ, Տորոսյան լեռներից հյուսիս, Վանա լճից դեպի արևմուտք։ Գլխավոր քաղաքն է Մուշ, որի անունով և վերջին դարերում կոչվել է Մշու գավառ։ Կորյունն այդ գավառն անվանում է «Տարօնական գաւառ», երկրորդ անգամ՝ «նահանգ Տարօնոյ»։

51 «Հացեկաց գյուղը» մինչև 1915 թ. դեռևս մնում էր։

52 Դուռն, դուռն արքունի—պալատ։ Ուրիշ ձեռագրերի մեջ է «գաւառն», որ է Այրարատյան գավառը։

53 «Հազարապետ» կոչվում էր բարձրագույն քաղաքացիական պաշտոնյան Հայաստանում և Պարսկաստանում, մեծ վեզիր։

54 Դողթն գավառ, Սյունիքում, այժմյան Ագուլիսն իր շրջակա գյուղերով։

55 Մարք, ի կողմանս մարաց—մարեր, մարերի կողմեր։ Այս անվան տակ չպիտի հասկանալ Մեծ կամ Փոքր Մարաստանը, այլ Արաքսից հարավ գտնվող լեռնային Ղարադաղը, որը հին Հայաստանի վասպուրական նահանգի մասն էր կազմում, Պարսպատունիք և Մարանդ գավառները։ Հնումն այստեղ մարեր (մեղացիք) են բնակվելիս եղել, դրա համար այդ կողմերի անունը մնացել է «Մարք»։

Հին գրողները (և ոչ միայն մեր մեջ) քրիստոնյա քարոզիչներից հալածված և իրենց կուռքերի հետ փախչող քրմերին ու կուռքերին անվանում են «դև», իսկ կռապաշտներին՝ դիվապաշտ։

56 «Զի տրտմութիւն է ինձ յոյժ և ունայնակաս ցաւք սրտի իմոյ։ Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ» (Հռոմ., Թ. 2—3)։

57 Գրիգոր Լուսավորչի տոհմից Մեծն Ներսես կաթողիկոսի որդին է Սահակը, որ կաթողիկոս է դառնում հավանորեն 390—395 թվականների մեջ։ Ստացել է հունական կրթություն, եղել է մեծ գիտության տեր, ժամանակակից երաժշտական ու հռետորական արվեստին հմուտ, ինչպես և փիլիսոփայության։ Պարապել է թարգմանություններ անելով։ Երբ 428 թ. Հայաստանի վերջին Արշակունի թագավորը գահընկեց է լինում արքայից արքա Հազկերտի ձեռքով, Սահակն էլ զրկվում է իր կաթողիկոսական իշխանությունից։ Բայց նրա և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները շարունակում են նրան կաթողիկոս ճանաչել։

58* Բնագիրն է. «Որոյ (=Դանիէլի) յանկարծ ուրեմն գրեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի։ Եւ իրրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիէլէ»։ Այս խոսքերից առաջինի մեջ բայը ձեռագրերի մեծ մասը չունեն։ Դա, ըստ իմաստի, պիտի լինի «գտեալ»—գտել է. երկու ձեռագիր ունին «գրեալ»։ Երկրորդ նախադասության մեջ նույն դերբայն է, միայն աղճատված ձևով, այսինքն՝ «գտելոյն» դարձած է «գրելոյն»։ Այդ խոսքերն աղճատված ձևով նշանակում են Դանիելը «հանկարծ (=պատահարար) գրել է նշանագրեր»։ «Երբ թագավորից պատմվեց նրանց Դանիելից գրվածի մասին», սովորական լեզվով՝ «երբ թագավորը պատմեց նրանց Դանիելի գրածի մասին»։ Բայց անհեթեթություն է ասել, թե Դանիելը հանկարծ (պատահարար) նշանագրեր է գրել, հնարել. հանկարծ—պատահարար կարելի է գտնել մի բան, ոչ թե հնարելու նշանակությամբ, այլ հայտաբերելու։ Ապա քիչ առաջ թագավորը չի ասել, թե ինքը կամ մեկ ուրիշը Դանիելից գիր ստացած լինի։ Եվ այդ ենթադրել էլ կարելի չէ, քանի որ թագավորը, նշանագրերը բերել տալու համար, իր նամակն ուղղում է ոչ թե Դանիել եպիսկոպոսին, ինչ որ բնական կլիներ, եթե նրանից գրություն ստացած լիներ, այլ Հարել անունով մի քահանայի, որ այն եպիսկոպոսի մերձավորն էր, որից և թագավորը, հավանորեն, իմացած կլիներ Դանիելի գտած (ոչ հորինելու իմաստով) նշանագրերի մասին։ ԳՏԵԼՈՅՆ հեշտությամբ կարող էր աղճատվելով դառնալ ԳՐԵԼՈՅՆ. բավական էր միայն Տ տառի ներքևի կարճ մասը ջնջվեր կամ լավ չկարդացվեր, այդ տառը Ր տառի հետ կշփոթվեր։ Ըստ այսմ՝ վերևի նախադասությունը նշանակում է. «Երբ թագավորը պատմեց նրանց՝ Դանիելի գտածի մասին»... Եվ վերջապես՝ թե «գտեալ» բառը պիտի լինի, այդ երևում է նրանից, որ «հանկարծ գտած» լինելու բովանդակությունը քիչ հետո Կորյունը հայտնում է ըստ իր սիրած ոճի մի բարդ բառով. «Առեալ հոգաբարձուացն գյանկարծագիւտ խնդրելին»... (ըստ ձեռագիրների մի մասի՝ «գյանկարծագիւտն=հանկարծ գտնվածը) հանկարծ գտնված ուղածը, այսինքն՝ իրենց ուզած նշանագրերը, որ

* 58 և 59 ծանոթագրությունների մասին տե՛ս նախագիրը (կազմող)։ Բողնում ենք «գրեալ»։

գտած, և ոչ թե իրենց, քանի որ իրենք հանկարծ (պատահաբար) չէին գտել այդ նշանագրերը։

Ըստ Մարկուարտի («Հանդես ամսօրյա», Վիեննա, 1911, էջ 663) հիշում է ասորի Դանիել եպիսկոպոս. Արղոնի (Աղձնիքի) 410—424 թ.։ Կա և Մոկաց Դանիել եպիսկոպոս, որ նույնպես հիշում է 412 թ.։

59 Վռամշապուհի «հինգերորդ տարի» թվականն աղճատված է։ Վռամշապուհի հինգերորդ տարում «Դանիէլյան» կոչված նշանագրերը հասցնում են թագավորին. մոտ երկու տարի սովորեցնում են այդ տառերով, հետո, երբ այդ նշանագրերը բավական չեն գրաւոր, մի քանի ժամանակ, ուրեմն 1—2 տարի, նույն հոգսի մեջ են ընկնում, և ապա նոր, 3—4 տարի հետո, Մաշտոցը գնում է Միջագետք։ Ուրեմն այդ չէր կարող կատարվել նույն հինգերորդ տարում։ Աղճատված է երևում և Միջագետքից վերադառնալու տարին՝ Վռամշապուհի վեցերորդ տարին։ Տե՛ս ծան. 63։ Հր. Աճառյանը (Տեղեկագիր Գիտ. Ակ. Հայկ. Ֆիլ., 1941, № 1/6, էջ 170) առաջարկում է առաջին «հինգերորդ» ուղղել «երրորդ»՝ իր սկզբնապես գրված է եղել «երդ», իբրև «երրորդ», բայց արտագրողը կարդացել է «ե-րդ»=հինգերորդ։

60 «Արամ» անունով կոչվում է Ս. Գրքի մեջ Ասորիքը։ Այդ անունը տարածվում է նաև Միջագետքի և Ասորեստանի վրա։ Ծագած է համարվում Նոյի Սեմ որդու յոթերորդ որդի Արամի անունից, որից և այդ երկիրների ժողովուրդները կոչվել են Արամեացիք։ Արամերենը շատ հին ժամանակներից ի վեր, հատկապես պարսկական տիրապետության օրով, դառնում է Առաջավոր Ասիայի հարաբերության լեզուն, մինչև որ արաբացոց տիրապետության ժամանակից սկսած ետ է մղվում արաբերենի առաջ։ Միջագետքի արամեական բարբառներից Եդեսիայի և Մծբինի բարբառները դառնում են գրական լեզու և կոչվում ասորերեն։—«Սեմական ժողովուրդների մեջ լորս լեզվական խմբեր են զանազանվում. 1) բաբելոնյան-ասորեստանյան, 2) քանանական, որի մեջ իսրայելացիք ու փիւնիկեցիք, 3) արամեական որ և ասորերեն է կոչվում, և 4) արաբական»։

61 Եդեսիա, կոչվում է նաև Ուրհա (Ուրֆա) հին նշանավոր ամուր քաղաք հյուսիսային Միջագետքում, Եփրատ գետից արևելք։ Մի ժամանակ եղել է քաղաքական, կրոնական կենտրոն։ Հայտնի է եղել իր եպիսկոպոսական աթոռով և քրիստոնեական մոտ 300 վանքերով։ Եդեսիայի արամեական բարբառը դարձել է գրական լեզու—ասորերեն (տե՛ս նախորդ 60-րդ ծան.)։

62 Ամիդ—այժմյան Դիարբեքիր քաղաքը, Տիգրիս գետի վրա։ Նստավայր է եղել եպիսկոպոսների։

63 «Բարիլաս» անունն առաջարկում են ուղղել «Բարուլաս»։ Եդեսիայի եպիսկոպոսական աթոռակալ ընտրվել է 412 թ. (ըստ Մարկուարտի՝ 411—412 թ.) շատ հայտնի թվից առաջ չէր կարող լինել Եդեսիայում։ Բայց այս թվականը չի համարվում հայոց թվից առաջ չէր կարող լինել Եդեսիայում։ Բայց այս թվականը ընդհանրապես ընդունված դարձության (Դանիէլյան նշանագրերի գործածության) սկզբի ընդհանրապես ընդունված 404 կամ 405 թվականին, որից ամենաշատը երեք-չորս տարի աշնելուց հետո, ըստ Կորյունի պատմելուն, Մաշտոցը կարող էր լինել Եդեսիայում։ (Տե՛ս ծան. 59)։ Մարկուարտը կարծում է, թե՝ «այդտեղ անտարակույս անաքրոնիզմ գոյություն ունի», այսինքն՝ «Ռաբուլասի» անունն է հիշված՝ փոխանակ նրա նախորդինը հիշված լինելու։

64 Բնագրի մեջ պակասում է «Եդեսիա» անունը, որ անպայման պիտի լինի, թե չէ՝ շարունակության մեջ «անտի» (=այնտեղից) և «անդ» (=այնտեղ) բառերի իմաստը մնում է անորոշ։—Մաշտոցն, աշխարհագրական դիրքը և մի քանի այլ հանգամանքները նկատի ունենալով, նախ հասել է Ամիդ, հետո՝ Եդեսիա և այստեղից գնացել Սամոսատ։ Ուստի պակասած անունը պիտի լինի Եդեսիա և ոչ Ամիդ։

65 Սամոսատը գտնվում է Եդեսիայից հյուսիս, Եփրատի վրա, գետի աջ կողմից։ Այս քաղաքը 5-րդ դարում Հռոմայեցոց կայսրության մեջ էր, որի արևելյան մասում իշխում էր հունարեն լեզուն։

66 «Յորժամ դարձցիս և յոգւոց հանիցես, յայնժամ կեցցես» (Եսայի, լ. 15)։

67 «Նշանակից»—գրեց, գծագրեց։ «Անվանեց»—գրեց տառերի անունները, որ են՝ այբ, բեն, գիմ, դա և այլն։ «Դասավորեց» (բնագիրը՝ կարգեաց), այսինքն՝ տառերի կարգը, շարքը որոշեց։ Այդ դասավորությունը հունարենի ալփաբետի համեմատ է, միայն շարքի մեջ տեղ-տեղ ալեւլացրած են այն տառերը, որոնց համապատասխանը չկա հունարենում։

68 Բնագիրն է «յօրինէր սիղոբայիւք և կապօք», նույնպես քիչ վերևում Դանիէլյան գրերի մասին՝ «ողջ ածել զսիղոբայս և զկապս»։ Հապավում ենք «և» շաղկապը, որովհետև «կապ» բառը հունարեն «սիղոբաս» բառի թարգմանությունն է։ Տառերը «հորինեց սիղորաներով—կապերով» խոսքից իմացվում է, որ Մաշտոցը հորինել է գրերն ի վանկ կապելու, կամ «գիր-կապ» կարդալու համար դասագիրք։

69 Բնագրի մեջ է «յեպիսկոպոսացն սրբոց». ուղղում եմ «յեպիսկոպոսէն սրբոյ»—սուրբ եպիսկոպոսից, այսինքն՝ Բաբիլաս (Ռաբուլաս) եպիսկոպոսից, կամ թե չէ՝ պետք է ընդունել, որ Եդեսիայում եղել են մեկից ավելի եպիսկոպոսներ։ (Նկատի ունի նաև Ամիդի եպիսկոպոսին. Ա. Մ.)։

70 Բնագրի մեջ է «զնըրբագոյնն, զկարճն». պակասում է «հաստ» բառի համապատասխան բառը։ Ջեռագիրների մեջ կա՝ «զնըրբագոյնն և զլայնագոյնն—բարակն ու հաստը։

71 Կորյունն իր ճոռոմ պատկերավորությամբ պատմում է քիչ վերևում, թե Մաշտոցն «իր սուրբ աչով հայրաբար ծնել է նոր և սքանչելի ծնունդներ—հայերեն լեզվի նշանագրեր»։ Նա ինքը գծագրել, անվանել և դասավորել է այդ նշանագրերը։ Իսկ Սամոսատ քաղաքում նա հույն գրագրի ձեռով, գեղագրության և հարմարության տեսակետից, վերջնապես հարդարել է տառերի հաստ ու բարակ և երկայն ու կարճ մասերը, ինչպես և առանձինն ու կրկնավորը։ «Կրկնաւոր» բառի փոխանակ ձեռագիրների մեջ կա «կրկնայար», որ նշանակում է երկու տառի միացում։ Այդպիսին է միայն «ու» երկտառը, որ մի պարզ ձայնավորի նման է և այդպես գրվել է հունարենի հետևողությամբ։ Մնացած բոլորն «առանձին» են։

72 Եկեղեաց գավառ—այժմյան Երզնկայի գավառը։

73 Պաղնական տուն կամ Պաղնատուն—Պաղնայ գավառը Չորրորդ Հայքում (Ծոփքում)։ Ունեցել է Պաղին անունով բերդ, այժմյան Բալուից հյուսիս արևմուտք։ Հովսեփ Պաղնացին է երևի հիշվում իբրև թարգմանիչ (տե՛ս ծան. 119)։

74 Առակք Սողոմոնի—Աստվածաշնչի գրքերից մեկը. խրատական բովանդակություն ունի։ Սկսվում է այսպես՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», ճիշտ, ինչպես Կորյունն է բերում։

75 Նոր Քաղաք—Վաղարշապատ քաղաքը, որ այն ժամանակ մայրաքաղաքն էր։

76 Թվականի Ըիվն աղճատված է ըստ երևույթին։ Տե՛ս ծան. 59։

77 Սինա լեռ—Արաբիայի լեռ։ Գտնվում է հյուսիս-արևելքից Կարմիր ծովի մեջ ներս մտնող թերակղզու վրա։ Ըստ Աստվածաշնչի՝ այս լեռան գագաթի վրա իբր աստված քառասուն օր երևացել է Մովսեսին և տվել նրան իր օրենքը։ Այդ միջոցին իսրայելացիները մի ոսկե հորթ ձուլելով՝ այդ կուռքին էին երկրպագում։ Մովսեսը ձեռին բռնած

վկայության երկու տախտակները, որոնց վրա գրված էին պատվիրանները, իջնում էր լեռից։ Նա տեսնելով ժողովրդի արարքը՝ սրտնեղությունից կոտրատում է տախտակները։

78 Բնագիրն է՝ «ընդունելոցն յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն ճանապարհացն աւետարեր»։ Մութն է. առանձնապես «դասաւորութիւն» բառի նշանակությունը. հավանորեն դա գործածված է «կայարանի» իմաստով։

79 «Ռահ» գետ—Թերևս աղճատված ձև է «Երասխ» կամ «Քասախ» անուններից։ Քասախ գետի ընթացքը հնում կարող էր Վաղարշապատի արևելա-հարավային կողմից լինել։ Բայց հավանորեն դա «Երասխ» անվան աղճատումն է։ Մաշտոցը Վաղարշապատ պիտի վերադառնար Երասխի Տափերական կամրջի վրայով, որ Արտաշատի մոտ էր։ Փ. Բուզանդը (Գ., 12) գրում է, թե Տիրան թագավորը, երբ լսում է կաթողիկոս ձեռնադրված Հուսիկի գալը, «ընդ առաջ ելանէր ի դաշտն յայնկոյս գետոյն [Երասխ] Տափերն կամրջի, ամենայն բանակօքն բազմութեամբք»։ Նույնն արել է Վռամշապուհը Մաշտոցի համար, միայն Երասխի մյուս կողմը չեն անցել։

80 «Ա՛ռ դու քեզ տոմս մի նոր մեծ և գրեսցես ի նմա գրչաւ սոն ճարտարի» (Եսայի, Ը. 1)։

81 «Արդ նիստ և գրեա ի տախտակի և ի գիրս» (Եսայի, Լ. 8)։

82 «Գրեսցի այս յազգ յայլ» (Սաղմոս, ՃԱ. 19)։

83 «Տէր պատմեսցէ գրովք ժողովրդեան» (Սաղմ., ՁԶ. 6)։

84 «Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (Մատթ., ԻԸ. 19)։ Աշխարհաբարում «գնացեք, բոլոր ազգերը աշակերտեցեք»։ Հեթանոս=ազգ, ժողովուրդ։

85 «Եւ քարոզեսցի աւետարանս, արքայութեան ընդ ամենայն տիեզերս» (Մատթ., ԻԴ. 14)։

86 Այս և նախորդ կտորից երևում է, որ Սահակն ու Մաշտոցը («ի ձեռն երկուց հաւասարելոցն»—երկու հավասարվածների ձեռքով) թարգմանել են մարգարեական գրքերը, Պողոս առաքյալի և մյուս առաքյալների թղթերը, ավետարանները, Ծննդոց գիրքը, ամբողջ Աստվածաշունչը («ամենայն աստուածատուր աւանդութեանցն»), և նույնիսկ «Յայտնութիւն Յովհաննու» գիրքը, քանի որ «կատարածի», աշխարհի վերջի մասին այս գրքի մեջ է խոսվում։

87 Հավանորեն Եսայի, Լ 25. «Եւ եղիցին ի վերայ ամենայն լերանց բարձանց և ի վերայ ամենայն բլրոց բարձրաւանդակաց՝ ջուր բղխեալ»։

88 «Աղատադունդ բանակն» կամ «բանակն Հայոց», ինչպես հիշվում է հետո, կազմում էին արքունիքը՝ թագավորով ու թագուհիով հանդերձ, այլև նախարարների գունդը, հազարապետն ու սպարապետը, ինչպես և արքունի դռան եպիսկոպոսը։ Երբ թագավորը որևէ առթիվ հանդիսավոր կերպով գնում էր մի տեղ, նա ամբողջ բանակով էր գնում։ Թագավորության վերացումից հետո մնում էր «Հայոց բանակը», միայն առանց թագավորի։ «Բանակ» նշանակում է, հարկավ, և «զորաբանակ»։

89 Այս Վարդանն է հայտնի Վարդան Մամիկոնյանը, Հայաստանի սպարապետը, Ավարայրի ճակատամարտի հերոսը, որի անունով կոչվում է կրոնական պատերազմը՝ «Վարդանանց պատերազմ»։ Վարդանը որդին էր Համազասպ Մամիկոնյանի, որի կինը Սահակ կաթողիկոսի դուստրն էր։ Վարդանն ուրեմն թոռն էր Սահակի, որ բացի մեկ դստրից՝ էլ ուրիշ զավակ չուներ։ Վարդանի կնոջ անունն էր Դուստր։ Տե՛ս ծան. 154։

90 Նորայր Բյուզանդացին* «Տէր եպիսկոպոսն» համարում է Սահակ կաթողիկոսի համար ասված։ «Տէր» բառը եպիսկոպոսների տիտղոսն էր և՛ հնում, և՛ նորում (ինչպես և «սուրբ» բառը, մեր օրով «սրբազան»), բայց եղել է և «Տէր» հատուկ անուն։ Ղազար Փարպեցին Մաշտոցի օգնականների մեջ դնում է «Տէր ի Խորձենայ», որին Կորյունը անվանում է «Տիրայր ի Խորձենական գաւառէն»։ Նույնպես և Մ. Խորենացին (Գ., ծզ) ունի՝ «Տէր Խորձենացի»։ Տե՛ս հաջորդ 93-րդ ծան.։

91 Կայենականք—«գաւառն Կայենոյ», «աշխարհն Կայենոյ» (Աղստև—Աղստաֆա գետի հովտում)։ Այս հիշում է մի քանի անգամ Կիրակոս Գանձակեցին՝ «ի Կայենականսն»—Կայեանի կողմերում, կամ Կայենո գավառի բնակիչների մեջ։ «Կայենոյ գաւառը» կարող էր Կորյունն իր սիրած «ական» ածանցով անվանել «Կայանական» գավառ, իսկ բնակիչներին՝ «կայանականք», ինչպես քիչ հետո «Խորձեան» գավառը կոչում է «Խորձենական գաւառ»։ Բայց անբացատրելի է մնում, թե ինչու պետք է Կայենո գավառն առանձնացվեր մյուս հեթանոսական շրջաններից և «Տէր» անունով մի եպիսկոպոս ուղարկվեր այնտեղ քարոզելու. մինչդեռ սպասելի էր, որ այդ գավառն էլ, ինչպես է աշխարհագրորեն, մտներ Մաշտոցի գործունեության վայրերի մեջ, քանի որ նա գործում է՝ Գողթնում, Սյունիքում, ապա՝ անցնում գործում է Աղվանքում ու Գարդմանում և Տաշիրքում, և վերջապես՝ առաջին և երկրորդ անգամ անցնում գործում է նաև Վիրքում (Վրաստանում)։ Մյուս կողմից՝ բնավին անընդունելի է, որ Սահակ եպիսկոպոսը, այսինքն կաթողիկոսը (տե՛ս վերը՝ ծան. 92), քարոզչության ելներ Հայաստանի մի ծայրագավառ, ինչպես Կայենո գավառն է, թողնելով Այրարատյան գավառը, արքունիքը, «զթագաւորական տեղիսն» և «Բանակն Հայոց»։ Ես կարծում եմ, որ «Կայենականք» բառի մեջ պետք է տեսնել հենց այդ վերջինները և «Տէր եպիսկոպոսի» համար ընդունել, որ դա Սահակ եպիսկոպոսն է։ Այս դեպքում «կայենականք» բառը բացատրվում է «կայեան» բառից, իբրև «կայեաններում» եղողներ։ Եղիշե պատմագիրը գրում է Վասակ մարզպանի համար, թե «յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք (գրվում է նաև՝ կայեանք) զօրացն էին՝ զԳառնին և զԵրամայիս և զԴրասխանակերտն՝ զմեծ դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զՓառախոտն, զՍարդեանսն, զՑոլակերտն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն ոտն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գիւղս և զաւանս որ շուրջ զնովաւ էին»։ Հիշատակված տեղերը գտնվում են Այրարատյան գավառում կամ բոլորովին մոտիկ սահմանների վրա։ Դրանք մեծ մասամբ, անշուշտ, ռազմական նշանակություն են ունեցել իբրև արքունի զորակայաններ, ուստի և ավերել է Վասակը, այսինքն՝ դրանց մեջ եղած ուտեստի պաշարը (զռոճիկս) ոչնչացրել։ Դրա հետևանքով Վարդանը չկարողանալով զորքը կերակրել այդ տեղերում՝ ցրվում է «ընդ գաւառս գաւառս», զանազան գավառներում, «և զսակաւս ի գնդէն յաւագ նախարարացն գործակից իւր թողեալ՝ բնանայր ի վերայ ունելով զթագաւորանիստ տեղիսն»։ Թագավորանիստ տեղեր են եղել հենց հիշված «արքունի ձմերոցները», հարկավ նաև մայրաքաղաքը։ Այսպես օրինակ՝ Ագաթանգեղոսն Անակի համար գրում է, թե «եկեալ յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց»։ Թագավորն ուրեմն նստում էր ձմեռոցներում։ Բայց այս վերջինները նաև «կայանք զօրացն» էին։ Իսկ այդ տեղերի զորքը միայն «ռամիկ զորքը» չէր, այլև ազնվականները, որոնք կազմում էին բուն բանակը, «աղատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն», այնպես որ Բուզանդը «զօրք» ասելով՝ ընդհանրապես ազնվականներին է հասկանում։ Դանիր հիմա Կորյունին։ Այս տեղեկությունից հետո, կարծում եմ՝ պարզ է, որ «կայենականք» նշանակում է արքունի զորակայաններում մի տեղ հավաքված-

* Կորյուն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփխիս, 1908, էջ 148, 20։

ները, լինեն «ռամիկ զորք» թե «ազատախումբ բանակ»։ Ըստ այսմ՝ Սահակ եպիսկոպոսը պետք է «ի կայենականսն», այսինքն՝ «ի կայեանս զորացն» եղողներին սովորեցներ, մնալով Այրարատյան գավառում, թագավորանիստ տեղերում։ Այսպես հասկանալով բնագիրը՝ պետք է հետևյալ խոսքի մեջ առաջին «այլովքն ևս» բառը համարել իբրև արտագրության ժամանակ առաջացած անհարմար կրկնություն։

[92] «Սիփոք, սիփուք»—սփռված, ցրված ընդարձակ կողմեր։ «Ի սիփուս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն» խոսքը գրված է ըստ Հովհ., Լ. 35, «Մի՞թէ ի սփիւռ հեթանոսաց երթայցէ և ուսուցանիցէ զհեթանոս»։ Կորյունի այդ խոսքից երևում է, որ դեռ կռապաշտ ժողովուրդներ են եղել Գողթնում, Սյունիքում և այլն, ուր գնում է քարոզելու Մեսրոպը։

[93] Խորձենական գավառ—Խորձեանք, Չորրորդ Հայքի գավառներից մեկը Եփրատի վրա։

[94] Բնագրի մեջ է՝ «երթեալ իջանէր առ ոտս տասն Գողթան, յառաջին դաստակերտն իւր», որ բառացի նշանակում է «գնաց, իջավ Գողթան տան ստորոտի մոտ, իր առաջվա դաստակերտը»։ Հայտնի է, որ Կորյունից շատ կտորներ գրեթե բառացի կան Ագաթանգեղոսի մեջ։ Այստեղ կարդում ենք. «Հասանէր և յառաջին դաստակերտսն իւր, յՈտաստակն Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաք»։ Իսկ ձեռագրերներից ընթերցվածներ կան՝ «յոռոզաստակն, յողաստակն, յոյտաստակն, յըոտստակն, յըոտոտակն։ Կոր. առոտստակն (տպ. առ ոտս տանն)։ Հմմտ. Կոր. § 33» (Ագաթանգեղայ Պատմ. Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, 438)։— Կորյունի «առոտստակն» ձևը երկու ձեռագրերից է առնված։ Կորյունի մեջ այդ բառը պետք է սկզբից ունենար «յ» նախդիրը՝ «յառոտստակն», ինչպես է Ագաթանգեղոսի մեջ՝ «յոտստակն» և այլն։ Նոր. Բյուզանդացին (162. 4) կարդալով կամ դարձնելով «յառուստակն», ցուցում է անում «տե՛ս Առուստակ ի Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, 204ա)։ Իսկ այստեղ «Առուստակ» չկա, այլ Ալիշանը Վաղարշապատի մասին գրելիս ասում է. «Գտանեմք առ Ագաթանգեղեայ կոչեալ և այլով իմն մակադրական անուամբ, որ ոչ այլ ուրեք լսի»։ Այդ են՝ «յԸոտստակն, Ըոտանտակ»։ Ապա նա ավելացնում է. «Այս բառ նորալուր առ մեզ՝ հավաստի ի պարսկականէն [ռուստակ] ըստ վկայության Եաղութի արաբացւու աշխարհագրի ի սկիզբն ԺԳ դարու, նշանակել երկիր մշակեալ, յորում իցեն աւանf, այլև fաղաff, բայց ոչ մեծամեծք»։ Վաղարշապատը մեզնում կոչվել է նաև Նոր Քաղաք ու Դաշտ*, որ ըստ երևույթին, համապատասխանում է պարսկերենի «ռուստակ» բառի բացատրությանը։ Ըստ այդմ «առոտստանն» կամ «առոտստակն» պետք է ուղղել «յառուստակն» կամ ըստ Ագաթանգեղի՝ «յըռոտաստակն», քանի որ «ռ» տառով սկսվող օտար բառերի սկզբում ավելանում է Ա կամ Ը. Գողթան «Առուստակն» այդ բացատրությամբ, եթե այդ ստույգ է, եղել է, ինչպես կարծում եմ, Ագուլիսը, Վերին Ագուլիսն իբրև քաղաք, իսկ Ներքին Ագուլիսն իբրև դաշտ։ Ներքին Ագուլիսը հայերն հենց այդպես «Դաշտ» էլ կոչում էին։ Իսկ Վերին Ագուլիսն իբրև Գողթնի կենտրոն՝ իր շուկայով՝ քաղաքի դեր էլ կատարում էր մինչև վերջերս։ Գառնիկ Ֆնտգլյանն** ուղղում է այսպես. «երթեալ իջանէր առ ոստանն Գողթան յաղաճին դաս-

* Ստեփանոսի Տարօնեցւոյ պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 77, 282։

** Կորյուն, Վարք Մաշթոցի, ուղղեալ և լուսաբանեալ ի Գառնիկ Ֆնտգլեանէ, Երուսաղեմ, 1930, ներածություն, էջ ԺԴ։ Այս գիրքը ես ստացել եմ աշխատությունս ամբողջապես պատրաստելուց և Հայ Պետ., հրատարակչությանը հանձնելուց հետո. ուստի հնարավորություն չունեցա անդրադառնալու Գ. Ֆնտգլյանի շատ կարծիքներին, մանավանդ այնպիսիներին, որոնք անընդունելի են ինձ համար։

տակերտն իւր»—գնաց, իջավ Գողթնի ոստանի մոտ իր առաջվա դաստակերտում։ Իսկ Ագաթանգեղոսի հիշված հատվածն ուղղում է այսպես. «Հասանէր առ ոստանն Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաքն»։ Այս վերջին ուղղումն անընդունելի է «առ» նախդրի պատճառով, քանի որ Այրարատյան գավառի ոստանն ու Վաղարշապատ քաղաքը նույնն են, ուրեմն պետք է լիներ՝ «Հասանէր յոստանն Այրարատեան գավառին, ի Վաղարշապատ քաղաքն»։ Խորենացու անունով հայտնի «Աշխարհացույցի»* ձեռագիրների մեջ Աղվանքի գավառներից մեկը կոչվում է՝ «Ուտոուստակ», «Ոտոոտստակ, Ոտստակ աղճատված ձևերով, որոնք նման են Կորյունի և Ագաթանգեղոսի մեջ եղած տվյալ անվանը։ Քիչ չի պատահում, որ նույն աշխարհագրական անունն այլ և այլ կողմերում է երևան գալիս։ Աճառյան, Հայերեն Արմ. բառ. «Ռոտոստակ»—գլխավոր քաղաք, գավառի կամ նահանգի «մայրաքաղաք»։ Այս բառի բացատրությունը տե՛ս նաև Ն. Մառ, Мнимое географическое название вротастак в Истории Агафангела («Записки вост. отдел. имп. русск арх. общ., том IX, 1894 г.)։

[95] Մարաց կողմերը—տե՛ս, ծան. 55։

[96] Բնագրի մեջ է. «ծնունդս կացուցանէ նշում եմ ըստ Նոր. Բյուզանդացու «ծանօթս ցանէին»—ծանոթ դարձրին։

[97] Սիւնական աշխարհ—Սիւնիք, Հայաստանի նշանավոր նահանգներից մեկը, հյուսիս-արևելյան կողմում։ Սյունիքի մեջ էին արդի Հայաստանի Զանգեզուրը, Դարալագյազը և Գեղարքունիքը (Սևանա լճի շուրջը)։

[98] Բնագրի մեջ է՝ «եպիսկոպոսս տեսուչս», ուղղում եմ եզակի՝ ըստ հաջորդ նախադասության՝ «որոյ անունն...»։

[99] «Ժառանգաւորք» եկեղեցւոյ» կոչվում էին այն պատանիներն ու երիտասարդները, որոնք կրթվում էին կրոնական ուսումով և հետագայում դառնում էին եկեղեցու ուխտի ժառանգներ։ Էջմիածնում մինչև 1883 թ. կար «ժառանգավորաց դպրոց»։

[100] Սիսական Վասակը—շատ հայտնի Վասակ Սյունին, Հայաստանի մարզպանը, որ Վարդանանց պատերազմի ժամանակ (451 թ.) անցավ պարսիկների կողմը։ Կորյունն այս դեպքից առաջ է գրել իր գիրքը, թե չէ՝ նա Վասակին այդպես չէր գովի։

[101] «Մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քո» (Սաղմոս, ԽԴ. 11)։

[102] Բնագրի մեջ է՝ «յորոց և իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ»—որոնցից [Վրաստանում սովորեցրած մանուկներից] և ես անարժանս եղա եպիսկոպոսական կարգի, վիճակի մեջ, այսինքն՝ հասա եպիսկոպոսական կարգի վիճակին։ Ըստ այսմ, ինչպես 18-րդ դարից ի վեր կարծել են, Կորյունը դառնում է Վրաց թագավորի իշխանության զանազան կողմերից ժողոված մանուկներից մեկը, որոնց սովորեցնում է Մաշտոցը Վրաստանում։ Նոր. Բյուզանդացին առանց հիմնավորելու (եր. 385, 3), համարելով աղճատված՝ առաջարկում է այդ կտորն ուղղել այսպես. «Յորոց և գտան արժանիք ելանել ի կարգ եպիսկոպոսական վիճակին»— որոնցից և գտնվեցին արժանիներ բարձրանալու եպիսկոպոսական վիճակի կարգին։ Այդպիսի աղճատումը միշտ էլ հնարավոր է. բավական է, որ երկաթագրի մեջ Գ տառի գլխի ձախակողմյան մասը ջնջվի, իսկ Տ տառի ներքևի ձախակողմյան մասը բարձրանա, դրանք կկարդացվեն մեկը՝ Ի, մյուսը՝ Մ. և կստացվի «ԻՄ անարժանիք», որ հետո ըստ իմաստի ուղղել են՝ «իմ անարժանիս»։ Այդ ուղղումն ընդունելով հանդերձ՝ ես ավելորդ եմ համարում «եղեալ» բառը դարձնել «ելանել», այլ պետք է ուղղել «ելեալ», քանի որ նույն իմաստը կարող է արտահայտվել և անցյալ դերբայով։ Ուրեմն բնագիրը պետք է ուղղել այս-

* Տե՛ս Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 606, ծան. 4։

պես. «Յորոց և գտան արժանիք ելեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ»։ Այս ուղղումը ընդունելի եմ համարում, որովհետև այդ հարմարվում է իմաստին հաջորդ նախադասության, որի սկզրի «որոց» դերանունը վերաբերում է այդ եպիսկոպական վիճակին արժանի եղածներին, մինչդեռ նախորդ «յորոց» դերանունը վերաբերում է սովորեցնելու համար պահպան կողմերից ժողոված մանուկներին։ Սթե «իմ անարժանիս» ձևը պահվի, Կորյունը կդառնա այդ մանուկներից մեկը, մինչդեռ դրանից առաջ Կորյունն իրեն դնում է իբրև մեկը վաղարշապատում սովորողներից, որոնց իբրև «ի կատարումն գիտութեան» հասածներին, դրանց թվում և Կորյունին, ուղարկում են Հայաստանի պահպան կողմերը սովորեցնելու։ Դարձյալ, մի ուրիշ տեղ Եզնիկ Կողբացու համար ասում է, թե իր «ընտանեգույն սննդակիցն» է։ Տե՛ս առաջաբան § 2։

[103] Հայաստանը 387 թ. բաժանվել էր երկու հարևան մեծ տերություններ մեջ։ Արևելյան մասը գտնվում էր Պարսից թագավորի, արքայից արքայի գերիշխանության տակ. բայց դեռ մինչև 428 թ. ուներ իր առանձին Արշակունի թագավորը։ Իսկ արևմտյան մասը Հռոմայեցոց (Հռոմեների) արևելյան կայսրության իշխանության ներքո էր։ Հայերեն անվանում էին նաև հունական հունաց կողմեր, իշխանություն, որովհետև պետական լեզուն էր հունարենը։ Իշխանության կենտրոնն էր Կոստանդնուպոլիս քաղաքը։ Հայաստանի այս մասում կայսրները շուտով վերացրին հայկական թագավորությունը և երկիրը կառավարում էին առանձին հուսակալներով, որ կոչվում են նաև դորավար, սպարապետ։

[104] «Հիսիսական կողմանք» կոչվում են Հայաստանը և Հայաստանից հյուսիս գտնված երկրները, այս դեպքում՝ Արևելյան Հայաստանը և Վրաստանը։ Համմտ. Մ. Խորենացու խոսքը՝. Ողբի մեջ Հայաստանի համար. «Հանուրց հիւսիսականաց վհատ գոյն»։

[105] Թեոդոս Բ., որ գահ է բարձրանում մանուկ հասակում 408 թ. և իշխում է մինչև 450 թ.։

[106] Արկադիոս (395—408 թ.) առաջին կայսրը արևելյան հռոմեական իշխանության։

[107] Մելիտինէ—այժմյան Մալաթիա քաղաքը, Եփրատ գետից արևմուտք, Սամոսատ քաղաքից հյուսիս։ 4-րդ և 5-րդ դարերում հռոմայեցոց կայսրության մեջ էր և Փոքր Հայաստանի կենտրոնն էր։

[108] Դերջան—Մեծ Հայաստանի Բարձր Հայք նահանգի գավառներից մեկը, Կարնո (Արզրում) գավառից հարավ-արևմուտք, Երզնկայից արևելք, Եփրատի հովտում։

[109] Բնագիրն է՝ «Եւ ելեալ յաճառայն դիմոսական և բազում պատիւ գտեալ հասանէին ի քաղաւորակաց քաղաքն Կոստանդնիական»։ Այս հատվածի մեջ «յանարուոյն» ուղղում եմ «յանդրուարն», որ նշանակում է «կառք, սայլ, սայլակառք, պատգարակ»։ Նույնը վերադարձի համար ասվում է. «Ելանէին ի դեպակս և ի կառս արքունատուրս»...

[110] Սակերք—սրբազան գիր կայսրի, կայսերական նամակ sacra rescripta սրբազան հրամանագիր։

[111] Բնագրի մեջ է՝ «վասն ժանտագործ ազգին բարբարոսաց». քիչ հետո «ձեռն արկանէր զդժպատեհ և կամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ»։ Առաջին դեպքում ուղղում ենք՝ «բարբարիանոսաց»։ Մ. Խորենացին (Գ. ծը) ունի՝ «քննել զժանդագործ բորբորիտոնն»։ Հավանորեն «բարբարիանոս» և «բորբորիտոնս» բառերից առաջինը մյուսի դծագրական աղճատումն է։ Հայկական աղանդների մասնագետ Կարապետ Տ. Միքռչյանը գրում է իր «Հայոց եկեղեցու պատմության» մեջ (Վաղարշ. 1908, էջ 108). «Դժվար է որոշել, թե մեզ հայտնի քրիստոնեական աղանդներից որի՛ մասին է

խոսքը։ Բորբորիտոն անունով աղանդավորներ հայտնի են ընդհանուր եկեղեցու Դ.—Ե. դարու պատմությունից, որոնց ծագումն ու բնավորությունը մութ են, և դժվար թե սոցա մասին լինի Կորյունի հիշատակությունը, այլ ավելի հավանական է, որ նրա հիշած աղանդը խիստ առնչություն ունենա այն մծղնեության հետ, որով... ստիպված էին զբաղվել Ս. Մաշտոցի անմիջական աշակերտները»։ «Դոկտոր Մինգանա՝ հայտնի ասորագետ՝ կկարծէ, թե burburiani ծանոթ ազանդն է ատ, որ Վերին Միջագետք և անկե Հայաստան տարածված էր, և որուն դեմ քանի մը տեղեր գրած է Ս. Եփրեմ» (Գ. Ֆնազլյան, Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 38)։

[112] Աւգոստոս (սուրբ, սրբազան, վեհ, վեհափառ)—Օկտավիանոս կեսարի մականունն իր միահեծան իշխանությունից ի վեր, և նրանից հետո տիտղոս բոլոր հռոմեական կայսրների և կայսերական տան անդամների, սրանցից՝ առանձնապես կայսրուհու (augusta)։ Կորյունը իր սովորական ձևով ածականաբար է գործածում. «Եւ երկիր պագեալ ծիրանափառ աւգոստականացն»։ Պետք է հասկանալ՝ Թեոդոս կայսրին և Եվդոքսիա կայսրուհուն։

[113] Հայրեր, եկեղեցու հայրեր կոչվում են մեր թվ. առաջին վեց դարերում ապրած այն վարդապետները, որոնց գրվածքները կանոնական են ընդունվում դավանաբանական տեսակետով, ինչպես են՝ Աթանաս, Կյուրեղ Երուսաղեմացի, Բարսեղ Կեսարացի և ուրիշները։

[114] Աղվանք (Ալբանիա)—Մեծ Հայաստանից հյուսիս-արևելք, Կուր գետի ափերից մինչև Կասպից ծովն ընկած երկիրը, որ կոչվել է նաև Առան։ Հետագայում Հայաստանի մի քանի գավառներն ևս Կուր և Երասխ գետերի ստորին հոսանքների միջև՝ մասն են համարվել Աղվանքի։ Աղվանները եղել են հայերին բարեկամ ժողովուրդ։

[115] Արտաշես—Վռամշապուհ արքայի որդին, վերջին Արշակունի թագավորը Հայաստանում։

[116] Բաղասական կողմեր—Բաղասական դաշտ Աղվանքում, հավանորեն երկրի հյուսիս-արևելյան կողմերում, հոների մոտիկ սահմաններում։

[117] Գարդման, Գարդմանայ ձոր, Գարդմանք—Հայաստանի Ուտի նահանգի գավառներից մեկը, այժմյան Շամքոր գետի հովտում։ Այդ գետի վերին հովտում այժմ կա Գարդմանիկ գյուղը։ Մի ժամանակ մտել է Աղվանքի մեջ։

[118] Տաշիր, Տաշիրք—Մեծ Հայաստանի հյուսիսային կողմում՝ Վրաստանին սահմանակից Գուգարք նահանգի գավառներից մեկը, այժմյան Լոռին, հին Լոռի բերդի գավառը, ուր էր Տաշրատափ, այժմյան Լոռվա տափաստանը։

[119] Կորյունը սրանից առաջ երկու Հովսեփ է հիշել, երկուսն էլ Մաշտոցի աշակերտներ։ Մենք սկզրում հիշած Հովսեփին է, որ հրամայում է Կորյունին գրել Մաշտոցի վարքը (տե՛ս ծան. 4)։ Սրա համար հետո Կորյունն ասում է՝ «որ ի սկզրան գրեցաք»։ Երկրորդն է Հովսեփ «ի Պաղտական տանէն» (Պաղնացին), որի հետ Մաշտոցը Սամոսատում բարեկամություն է անում (տե՛ս ծան. 73)։ Բարեկամություն անելու համար նեղսիա ուղարկվել է հավանորեն այս երկրորդ Հովսեփը, որի համար է գրում՝ «զոր ի վերոյն յիշեցաք»։ Մ. Խորենացին (Գ., Կ) էլ Եզնիկի հետ նեղսիա ուղարկվածի համար լոկ Հովսեփ է գրում, առանց որոշելու, թե ո՛ր Հովսեփն է։

[120] Եզնիկ—Հայտնի Եզնիկ Կողբացին է, Սահակ կաթողիկոսի գործակիցն Աստվածաշնչի թարգմանությունը հունարենի համեմատ դարձնելու ժամանակ, և «Եղծ աղանդոց» գրքի հեղինակը։

[121] Նիկիա—քաղաք Բիթինիայի հյուսիսային կողմում (Փոքր Ասիայի արևմտյան կողմում)։ Այստեղ 325 թ. Կոստանդին կայսրի ժամանակ գումարվել է Նիկո տիեզերա-

կան ժողովը, որ նզովել է Արիոսին և նրա ուսումը, կազմել է քրիստոնեական «հավատքի հանգանակը» («Հավատամք») և հաստատել քվով 20 կանոններ։ Հայոց եկեղեցուց այդ ժողովին մասնակցել է Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը։

122 Եփեսոս—քաղաք Փոքր Ասիայի արևմտյան կողմում, Էգեյան ծովի ափին, Զմիռնայից հարավ։ Այստեղ 431 թ. գումարվել է Եփեսոսի տիեզերական ժողովը, որ բանադրել է Թեոդորոս Մոպսուեստացու աշակերտ Նեստորի ուսումը, Նեստորականության աղանդը։

123 Կտակարանք—գիրք, գրքեր, առանձնապես Ս. Գիրքը, որ բաժանվում է երկու մեծ մասի—հին և նոր, որոնք կոչվում են առաջինը՝ Հին Կտակարան, երկրորդը՝ Նոր Կտակարան։ Երկրորդը քրիստոնեական շրջանին է վերաբերում. առաջինը նախաքրիստոնեական հրեական գրականությունն է։

124 «Եկեղեցական գրոց գումարութիւն»—եկեղեցական գրքեր. ընդունում են, թե դրանք եկեղեցում ժամասացության ժամանակ գործածած գրքեր են՝ ժամագիրք, պատարագամատույց, տոնական, որոնց հիմնական մասերը հին են։

125 «Հայրապետաց սրբոց ճշմարիտ իմաստութիւն»—հասկացվում է եկեղեցական բարձրագույն աստվածաբանական գիտության վերաբերյալ գրքեր։ Թե ի՛նչ գրքեր են թարգմանված, այդ հայտնի չէ։

126 Եզնակ—միևնույն եզնիկ կողբացին է։

127 «Մեկնութիւն գրոց»—Ս. Գրքի մեկնություն։ Ընդհանուր եկեղեցական գրականության մեջ մեկնաբանական ճյուղն արդեն զարգացած էր 5-րդ դարի առաջին կեսին և, քանի որ առաջ էին գալիս դանազան աղանդներ, մեկնությունը կարևոր էր համարվում՝ Ս. Գրքի «ուղղափառ» եկեղեցական տեսակետով հասկանալու համար։

128 «Աստուածակարգ պատգամաւորք»—աստծու կարգած պատգամավորներ—մարգարեներ և առաքյալներ։ Այսպես կոչվում են նրանք իբրև աստծու պատգամները, պատվերները բերող, ասող։

129 «Յօրէն Տեառն են կամք նորա, և յօրէնս նորա խորհեսցի նա ի տուէ և գիշերի» (Սաղմոս, Ա. 2)։

130 «Մի՛ դիր ընթերցուածոց, մխիթարութեան, վարդապետութեան։ Մի՛ անփոյթ առներ գշնորհացդ որ ի քեզ են... Յայդ խորհեաց և ի դոյն կանխեսջիր... ի դմին յաճեսջիր։ Զայդ եթէ առնիցես, և՛ դանձն ապրեցուցես, և՛ զայնոսիկ որ քեզն լսիցեն» (Ա. Թուղթ առ Տիմոթէոս, Դ. 13—16)։

131 «Ճառս յաճախագոյնս, դիւրապատում»։ Մեր հին գրականության մեջ կա ճառերի մի ժողովածու, «Յաճախապատում ճառք» անունով հայտնի։ Այդ ճառերը հին ժամանակներից ի վեր վերագրվել են Գրիգոր Լուսավորչին, անշուշտ, որպեսզի ավելի ևս ընդունելի դառնան հետագայում։ Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութեան» մեջ ևս նման խոսքերով ասվում է, թե Գր. Լուսավորիչը ճառեր է գրել։ Բայց Ագաթանգեղոսի մոտ կան բազմաթիվ բառեր ու դարձվածներ, որոնք կան նաև Կորյունի այս գրքույկի մեջ. սրանց հիման վրա Նոր. Բյուզանդացին իր հիշված գրքի մեջ եղրակացնում է, թե Ագաթանգեղոսի Պատմությունը Կորյունի գործն է։ Բացի այդ, երկուսի մեջ էլ կան բազմաթիվ ամրողջական նման կտորներ, որոնք բովանդակությամբ մեծ մասամբ ավելի Մաշտոցին են համարվում, քան Գր. Լուսավորչին։ Այդ կտորներն ամենայն հավանականությամբ Կորյունից են մուծվել Ագաթանգեղոսի մեջ։

132 «Յայտնութիւն»—այսպես կոչվում է Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը, որին հավատում էին քրիստոնյաները։ Այդ ժամանակ իբր թե պիտի լիներ «վերջին դատաստանը», և արդարները վարձատրվեին, մեղավորները պատժվեին, իսկ սգավորները

պիտի մխիթարվեին։ «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին» (Մատթ., Ե. 2)։ «Եւ ակն կալցուք հրանելի յուսոյն, և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Տիտոս, Բ. 13)։

133 «Անձաւամուտս» ասածներն իսկապես ճգնավորներն են, որ կոչվում են նաև «լեռնական»։ Բայց և վանքերը կամ մենաստանները, «եղբայրանոցները» շինվում էին լեռներում, «շէն և անշէն» տեղերում։ Այստեղ ապրում էին խմբերով, իսկ ճգնավորները «մենակեաց» էին կամ սակավաթիվ ընկերներով, աշակերտներով, «սորամուտ ծակախիթ» էին լինում։ «Արգելական» ասածներն էլ վանականներ են, որոնք «արգելված», այսինքն փակված ապրում էին իրենց վանքերում, «արգելավանքերում», ինչպես կոչվում էին առանձնապես կուսանների վանքերը։

134 «Հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս և ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի, զի յորժամ տկարանամ, յանյժամ զօրանամ» (Բ. Առ Կորնթացիս, ԺԲ. 10)։

135 «Վաւ ևս լիցի ինձ պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի» (Բ. Առ Կորնթացիս, ԺԲ. 9)։

136 «Եւ մի՛ արբենայք գինով, յորում զեխութիւն է, այլ մանաւանդ լցարուք հոգւով, խոսել ի սիրտս ձեր սաղմոսիւք և օրհնութեամբք» (Եփես., Ե. 18)։

137 «Սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել» (Գործք Առաքելոց, Ա. 1)։

138 Թաբոր լեռ—արաբական Ջեբել Տուր, Տիբերիական լճի հարավ-արևելքում։ Իբր այս լեռան վրա է Հիսուս տվել իր հայտնի «երանությունները» (Մատթ., Ե. 1—12)։

139 Կանոնական աղոթք—հրեայական օրենքով սահմանված աղոթք։

140 Տիբերիական ծով, այլև Գալիլիայի լիճ, Պաղեստինի հյուսիսում, լճափին գտնված Տիբերիա, Տարարին քաղաքի անունով։

141 Բաղարջակերք, Բաղարջակերաց օրեր—հրեական տոնի օրեր, երբ յոթն օր բաղարջ հաց էին ուտում։

142 Ջիքենյաց լեռը գտնվում է Երուսաղեմի մոտ։

143 «Արթուն կացէք և աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն» (Մատթ., ԻԶ. 4)։ «Արթուն կացէք և յաղօթս կացէք, զի մի՛ մտջիք ի փորձութիւն» (Մարկոս, ԺԴ. 38)։ «Կացէք յաղօթս, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն» (Ղուկաս, ԻԲ. 46)։

144 «Զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք, այլ ինքնին Հոգին բարեխօս լինի ի հեծծութիւնս անմռունչս։ Բայց որ քննեն զսիրտս, գիտէ զինչ խորհուրդ է հոգւոյն. զի ըստ Աստուծոյ բարեխօս է վասն սրբոց» (Հռոմ., Ը. 26, 27)։

145 Տե՛ս ծան. 136։

146 Խոսքը վերաբերում է քրիստոնեական դավանությանը երրորդության անձերի մասին։ Ուզում է ասել, թե երրորդության անձերը (Հայր, որդի, Հոգի) միևնույն պատիվն ունեն, ուստի Հոգին բարեխոսել չէր կարող, այլ այդ՝ մարդկանց սովորեցնելու համար է ասվում։

147 Բնագիրն է՝ «առաքելովքն», ուղղում եմ ըստ Նոր. Բյուզանդացու՝ «առաւելովք»—շատ, շատ ու շատ ավելի, գավառական՝ «էվելոք»։

148 Բնագրի մեջ՝ Թեոդիոս, ուղղում եմ՝ Թեոդորոս։ Դա Թեոդորոս Մամեստացին կամ Մոպսուեստացին է, ծնված 350 թ. Անտիոքում, մեռած 428 թ., Հովհան Ոսկեբերանի աշակերտակիցը, Մոպսուեստի եպիսկոպոս, հեղինակ բազմաթիվ գրվածքների, որոնք 553 թ. նզովվել են Կոնստանդնուպոլսի ժողովում, իբրև նեստորականության սկզբնահոր գրվածքներ։ Աղանդապետ Նեստորը եղել է նրա աշակերտը։ Տե՛ս ծան. 122։

149 «Սիւնհոդոս» հունարեն բառ է և նշանակում է՝ ժողով։ Այսպես կոչվում էին

եպիսկոպոսների ժողովները, որոնք կարգավորում էին եկեղեցական խնդիրները հավատքի ու բարեկարգության վերաբերյալ։ Երկու տեսակ ժողովներ են որոշվում. 1) Ընդհանուր կամ տիեզերական կոչված ժողովներ, որոնց որոշումներն ընդունում են բոլոր քրիստոնյաները։ Հայոց եկեղեցին այդպիսի ժողովներից ընդունել է միայն երեքը։ 2) Ազգային եկեղեցական, Հայոց եկեղեցու ժողովներ, որոնց մասնակցում էին ոչ միայն հոգևորականները, այլև աշխարհականները։ Ժողովները հրատարակում էին իրենց կանոնները։—«Սիւնհոդոսական հայրապետներ» կոչվում են ժողովներին մասնակցող մեծ «հայրերը», եկեղեցու հայրերը, տվյալ դեպքում Եփեսոսի ժողովին մասնակցող եպիսկոպոսները։ Մեզ հասել է մի թղթակցություն Եփեսոսի ժողովի երկու ներկայացուցիչների և Սահակի ու Մաշտոցի միջև՝ Թեոդորոս Մոպսուեստացու ուսման մասին։

150 Բագրավանդ գավառ—այժմյան Ալաշկերտի գավառը։

151 Նավասարդ ամիս—հայկական տոմարի առաջին ամիսը։ Հազկերտ Բ.-ի թագավորության առաջին տարում Նավասարդի 30-ը, երբ վախճանվեց Սահակը, ընկնում է 439 թվի սեպտեմբերի 7-ին։ Տե՛ս ծան. 175։

152 «Անուշահոտ յուղի պաշտամունք»—Հիվանդներին, մահամերձներին յուղով օծելու ծեսը, որ կատարում էին նախկին քրիստոնյաները—«օծումն հիւանդաց»։

153 «Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ» (Սաղմ., լ. 6)։

154 «Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ» (Գործք. Առ. է. 58)։։

155 Իշխանուհի Դուստր—տե՛ս ծան. 91։

156 Աշտիշատ—նշանավոր մեհյանի գյուղը, որ հեթանոսական շրջանում պատկանում էր Վահունի քրմապետներին իբրև իրենց սեփական գյուղը (Մ. Խորենացի, Բ. ԺԲ), իսկ քրիստոնեության ժամանակ անցել էր Գրիգոր Լուսավորչին և նրա ժառանգներին։ Հին մեհյանի տեղ (ուր կային Վահագն աստծու և Անահիտ ու Աստղիկ դիցուհիների բագինները) շինված էր մարտիրոսական խորան, լեռան սարահարթի վրա, Ս. Կարապետի վանքի արևելյան կողմում, 6 ժամ ճանապարհի հեռավորությամբ։

157 Բնագրի մեջ է՝ «զՏիմոթէոս»։ Նոր. Բյուզանդացին առաջարկում է ուղղել «զՏիտոս», որովհետև այդ բովանդակությունը կա Տիտոսի մասին. «Ոչ եւս հանգիստ հոգւոյ իմում, քանզի ոչ գտի ես անդ (ի Տրովադա) զՏիտոս զեղբայր իմ» (Բ. Կորնթ., Բ. 13)։ Դժվար է որոշել, թե արդյոք սկզբնապես «Տիտոս» է եղել և արտագրողների անզգուշությունից գրված է «Տիմոթէոս», թե՞ հենց Կորյունն ինքն անուշադրությամբ «Տիմոթէոս» է գրել։

158 Տպագիրներում է «տերունական», ուղղում եմ «ծերունական» ըստ երկու ձեռագիրների։

159 Սահակի մահվան տարում մեհենական ամսի 13-ն ընկնում է 440 թվի փետրվարի 17-ին։ Տե՛ս ծան. 174։

160 Հմայակ Մամիկոնյանը Վարդան Մամիկոնյանի եղբայրն է։

161 Օշական գյուղի մի մատուռում, ինչպես պատմածից երևում է, առաջ էլ թաղված են եղել մարտիրոսներ կամ վկաներ, այսինքն քրիստոնեական հավատի համար նահատակներ։ Բայց այդ տեղը նշանավոր է դարձել միայն Մաշտոցի այնտեղ թաղվելուց հետո, և դա ժողովրդի մեջ մինչև վերջերս հայտնի էր միայն իբրև «Սուրբ թարգմանիչ», որ է թարգմանիչ Մաշտոցը։

162 Մաշտոցի գերեզմանի վրայի տաճարը («խորանը») 1860-ական թվականներին բոլորովին խարխուլ դրության մեջ է եղել։ Այժմյան տաճարը հիմնովին նոր շինված է 1870-ական թվականներին Գեորգ Դ. կաթողիկոսի նախաձեռնությամբ։ 1880-ական

թվականներին տաճարի մոտ կար մի փոքր կամարակապ ծածկ, որ ցույց էին տալիս իբրև Վահան Ամատունու գերեզման։

163 Հովսեփ տեղապահը։ Տե՛ս ծան. 4։

164 Տիգրոն քաղաք (Կտեսիփոն)—Տիգրիս գետի ձախ ափին, Բաղդատ քաղաքից մոտ 18 կիլոմետր հարավ. հիմնված է Պարթև թագավորներից, որոնց ձմեռային նստավայրն էր։ Պարսից Սասանյան թագավորների օրով Իրանի տերության մայրաքաղաքն էր։

165 «Խոստովանող» կոչվում էին քրիստոնեական հավատի համար չարչարվողները, որոնք իրենց հավատը չէին ուրանում և Քրիստոսին աստված էին «խոստովանում», այսինքն ճանաչում։

166 Բնագիրն «իսկ բարեացապարտին Վահանայ» բառերից սկսած մասամբ ագճատված է։ Ուղղում եմ կետադրությունը. այն է՝ «վայելէր» բառից հետո դրված միջակետը դարձնում եմ վերջակետ և շարունակությունն սկսում եմ նոր տողից. ապա՝ «դարձան» բառից հետո վերջակետը դարձնում եմ բութ, որին անմիջապես հաջորդում են՝ «ոչ եթէ»... Ամբողջ բնագիրն ստացվում է այսպես. «Իսկ բարեացապարտին Վահանայ, որ յանկարծահաս կենաց ամենեցուն լիներ՝ աշխարհածնունդ. Հայրենեացն սեպհական որդի գտեալ շնորհօքն Քրիստոսի ասատուծոյ մերոյ, մերձաւոր կենակից [լինել] վայելէր։

Եւ զի ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան՝ ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ գայս կարգեցաք»...

Պետք է նկատել՝ 1) «Վահանայ» բառից հետո եղած «որ» բառը արտագրողի անուշադրության հետևանքով գրված է «լիներ» բառից հետո։ Բառերի այսպիսի տեղափոխություն սովորական է ձեռագիրների մեջ։ 2) «Վահանայ» հոլովը սեռական չէ, այլ տրական, միջադաս երկրորդական նախադասությունը դուրս թողնելով ստացվում է «Վահանայ... վայելէր»...— Վահանին վայել էր, կվայելեր, Վահանին ակն էր։ 3) «Յանկարծահաս կենաց ամենեցուն լինել» նշանակում է հանկարծ, անսպասելի կերպով օգնության հասնել ամենքին և փրկել, կյանքի պատճառ լինել, ինչպես գրում է Կորյունը, ինչպես հասկանում են ուրիշները։ «Յանկարծահաս» բառի նշանակության համար տե՛ս. «արագահաս Ս. Սարգիս»—արագ օգնության հասնող։ Եվ վերջապես՝ 4) Վահան Ամատունին, որի համար Եղիշեն գրում է՝ «իբրև գնայր վերակացու համարեալ էր աշխարհական քրիստոնեից», նա իրև աշխարհի հաղարապետ իր բարձր պաշտոնով շատ մարդու օգնության հասած և կյանքի պատճառ դարձած է եղել, ինչպես գրում է Կորյունը։ Նույնը, մի փոքր տարբեր ձևով, գրում է Ղազար Փարպեցին իր նամակի վերջում մարզպան Վահան Մամիկոնյանի մասին. «... յորմանէ ամենայն մարդ ի հայս, յաւագ և ի կրտսեր, հասեալ է մեծապես օգնականութիւն, և գահ և փառք, իսկ ումանց և ի մահուանէ ի կեանս, և ի կորստենէ գտանել և ի միջի լինել, դու, տէր, եղեալ ես պատճառ»։

167 Բնագիրն է՝ «մերձաւոր կենակից վայելէր»։ Սուտ-Կորյունի մեջ է՝ «մերձաւոր կենացն յաւիտենից լիներ»—«հավիտենական կյանքին մերձավոր էր լինում» Վահանը։ Բայց այդ Սուտ-Կորյունի ըմբռնումն է, որի համեմատ նա փոփոխել է բնագիրը։ Իսկական Կորյունի գրածի իմաստն է՝ «մերձաւոր կենակից կենացն լինել վայելէր», որ է՝ Վահանին վայել էր մերձավոր մասնակից լինել նրանց (=սուրբ հայրերի) կյանքին, գործունեությանը։ Եվ Կորյունի այս վկայությունից երևում է, որ Վահանը նույնպես դարձել է մեր աշխարհը վերածնող հայրերի հարազատ որդին, հարկավ, իրր հոգևոր ծնունդ, և մոտիկ մասնակցություն է ունեցել նրանց կյանքին, գործունեությանը։

Տարօրինակ չպիտի թվի «կենակից կենացն» կրկնությունը, որ հազվադեպ չէ, ինչպես օրինակ, Կորյունը մի փոքր վերևում գրում է նույն Վահան Ամատունու և Համյակ Մամիկոնյանի համար, թե՝ էին «հրամանակատարք վարդապետական հրամանաց»—վարդապետի, այսինքն Մաշտոցի հրամանների հրամանակատարք։ Բայց և այնպես ավելի պարզ լինելու համար միայն՝ Սուտ-Կորյունից առնելով՝ ավելացրել եմ միայն «լինել», որ, իմ կարծիքով, սկզբնապես եղել է բնագրի մեջ։ Սուտ-Կորյունը պարզել է խոսքը, դուրս ձգելով «վայելէր» բառը և «լինել» բառը դարձնելով «լինէր». ըստ այսմ և «բռնացապարտին Վահանայ» դարձնելով ուղղական հոլով։

Անհասկանալի է, թե ինչպե՞ս այս հատվածից եզրակացնում են ոմանք, թե Վահան Ամատունին արդեն վախճանված է եղել այն ժամանակ, երբ Կորյունը գրելիս է եղել այդ տողերը. մինչդեռ Վահանն ըստ Ղազար Փարպեցու դեռ ապրել է և մասնակից է եղել Վարդանանց պատերազմին։ Ասյա ուրեմն, հետևցնում են, Կորյունի երկն ավելի ուշ ժամանակի գործ է, քան 440-ական թվականների առաջին տարիները։ Ոչ մի հիմք չկա այդպես մտածելու. նույնիսկ Կորյունի գործածած բայերի ժամանակը՝ «լինէր», «վայելէր» թույլ չի տալիս այդպես մտածելու։ Չպիտի մոռանալ, որ Կորյունն անցյալ ժամանակի համար է գրում, և այն, որ այդ գրելիս նա նկատի ունի Մաշտոցի ժամանակը, իսկ Մաշտոցն արդեն վախճանված էր։ Այդպիսի դեպքերում հին եղելությունը միշտ էլ անցյալ ժամանակով է պատմվում։

168 Բնագրի մեջ է «ի նշանակադիմակացն քակելով զհամատուրսն կարգեցաք»։ Սուտ-Կորյունի մեջ է. «ի նշանաւոր գիտակացն պատմելով՝ զհամառօտս պատմեցաք»։ «Քակելով» բառն ուղղելով «քաղելով»՝ բնագիրը վերականգնում եմ այսպես. «ի նշանաւոր գիտակացն քաղելով՝ զհամառօտս կարգեցաք»—նշանավոր գիտակ (=տեղյակ) անձերից քաղելով՝ այս համառոտը կարգեցինք։ «Նշանավոր գիտակներն» անշուշտ Մաշտոցի մյուս աշակերտներն են։ Կորյունը, հարկավ, ամեն բան չէր կարող իմանալ, պետք է ուրիշներից էլ հարցներ։ Թե «համառոտ» է գրել, այդ երևում է նախորդ և հաջորդ խոսքերից, թե շատ բան թողել է, նրանց բոլոր ասածները չի գրել և այլն։

169 Բնագրի մեջ է «այլ և որ զատեանսն ընթեռնուն՝ յայտնի է»։ Ուղղում եմ ըստ Սուտ-Կորյունի՝ «զմատեանս»։ Ըստ այսմ Կորյունն ասում է, թե իր գրածները ոչ միայն իրեն են հայտնի, այլև իր մատյանը՝ գիրքը կարդացողներին։ Իսկ այդ գիրքը կարդացողներն առաջին հերթին էին Մաշտոցի աշակերտները, որոնք գիտակ էին իրենց ուսուցչի գործերին, որոնցից և քաղել է, այսինքն ժողովել է իր գրածները մասամբ։

170 Բնագիրն է, «Քանզի չէաք իսկ հանդուրժողք զամենայն արարեալսն կտակաւ զիւրաքանչիւրսն»։ Սուտ-Կորյունն ունի. «Քանզի և ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոցն գրով նշանակել զիւրաքանչիւրսն»։ Բնագրի մեջ պիտի առնել «նշանակել» բառը։

171 Բնագիրն է. «ի դիւրագոյնս և ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատասպարեցաք»—այս ավելի հեշտ ու դյուրինի, առաքելականի մեջ պատսպարվեցինք (=պաշտպանվեցինք)։ Տե՛ս Առաջաբան, § 5։

172 Բնագիրն է. «որք ամենապարծ և կենդանատուր խաչիւն ծանուցեալք»։ Սուտ-Կորյունն ունի. «որք ամենապայծառ հաւատով և վարուք ծանուցեալք»։ Ուղիղն ընդունում եմ Սուտ-Կորյունինը։ Խաչանշան լուսավոր ձևը վերաբերում է միայն Մաշտոցին։ Որևէ մեկն է մտցրել այդ, առանց մտածելու, որ Կորյունն այս վերջի մասում խոսում է Սահակի ու Մաշտոցի համար, գրելով՝ սրբոցն, իւրեանց, նոքօք և այլն։

173 Բնագիրն ունի՝ «Դիմոնայ». ուղղում եմ «Կրմանայ»։

174 Բնագրի մեջ պակասում են Վռամ թագավորի տարիները։ Պետք է լինի Հազկերտի տարիներից հետո այսպես. «Եւ Վռամայ ամս ութ և տասն»։ Սկզբնապես անպայման եղել է այդ. թե չէ Մաշտոցի կրոնավորության տարիների հաշիվը սխալ կլինի, մինչդեռ դրանով ճշտվում է 45 թիվը. 6+21+18=45։ Հազկերտ Բ.-ի առաջին տարին հաշվի չի առնվում։

175 Սահակը վախճանվել է 439 թ. հայոց նավասարդ ամսի 30-ին, որ է սեպտեմբերի 7-ին, հինգշաբթի օրը։ Մաշտոցը վախճանվել է մեհեկան ամսի 13-ին, որ է 440 թ. փետրվարի 17-ին, շաբաթ օրը։ Տե՛ս «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1912, № 5—6, էջ 500—50. Գալուստ Տ. Մկրտչյանի հոդվածը՝ «Հայ գրերի 1500-ամյակի առթիվ»։

176 Հազկերտ Բ.-ի առաջին տարին, որ Կորյունը հաշվի չի առնում, ընկնում է 439/440 թվականներին։ Մաշտոցի կրոնավորության տարիների թիվը 45 է, որ հանելով 439-ից՝ ստանում ենք 394։ Այս թվականին է սկսվել Մաշտոցի կրոնավորությունը։

177 Հայոց դպրության սկիզբը կամ հայկական գրերի գյուտը դնում են 402/403, 404, 404/405, 406 թվականներին, նայելով, թե ո՛ր հեղինակը ի՛նչպես է անում հաշվները։ Հազկերտ Ա.-ի ութերորդ տարին ընկնում է 407 թվին, երբ և ըստ Կորյունի եղել է հայ դպրության, այսինքն «Դանիելյան» նշանագրերի գործածության սկիզբը, եթե միայն այս «ութերորդ» թիվն աղճատված չէ։ Մյուս կողմից՝ Կորյունն ասում է, հայոց դպրությունից մինչև Մաշտոցի մահը 35 տարի է. ուրեմն Հազկերտ Բ.-ի առաջին տարուց՝ 439—35=404։ Կնշանակե ըստ այսմ՝ 404 թ. է եղել գրերի գյուտի սկիզբը, եթե միայն այս դեպքում էլ 35 թիվն աղճատված չլինի։

Ավելորդ չէ դնել այստեղ հետևյալ Սասանյան թագավորների տարիները ըստ Կրումբախերի* Վռամ Դ. (որ և Կրման, Քրմանշահ) 389—399. Հազկերտ Ա. 399—420, Վռամ Ե. 420—439. Հազկերտ Բ. 439—457։ Այս թվականներին համապատասխանում են Կորյունի հիշած տարեթվերը։

178 Ընդարձակ բնագրում և այստեղ զետեղված հատվածի մասին, տե՛ս մեր ուսումնասիրությունը՝ Հավելվածում, էջ 149—168։

179 Ձեռագրում սույն ենթավերնագրից հետո զետեղված է Մ. Խորենացու Հայոց Պատմության երրորդ գրքի ԽԷ՝ «Յաղագս երանելւոյն Մեսրոպայ» գլխի սկզբի հատվածը։ Այդ մասին տես՝ աստ, Բ ձեռագրի հնագրական համառոտ նկարագրության մեջ, էջ 13։

180 «Հայաստան աշխարհի, գրի աստվածատուր շնորհք հանդիսացող գյուտի» հատվածը կարելի է թարգմանել նաև՝

ա. Հայաստան աշխարհում գրի աստվածատուր շնորհք հանդիսացող գյուտի,

բ. Հայաստան աշխարհում աստվածատուր շնորհք հանդիսացող գրի գյուտի։ (Թարգմ.)։

181 Բնագիրը, ի տարբերություն Կորյունի «ի մանկութեան տիսն» բառակապակցության, ունի «ի մանկութեան աստիսս» ուր «աստիսս»-ը եղանակավորող բառի դեր է կատարում։ (Թարգմ.)

182 Գառնիկ Ֆնտգյանը (էջ 14) «Հաճեալ»-ը ուզում է թարգմանել «հնազանդելով», որը ճիշտ չէ, «Հնազանդել»-ի մեջ կա պարտադրվածն ընդունելու տարր, այնինչ այստեղ քրիստոնեությունը, քրիստոնեական օրենքները ընդունելու մասին է խոսքը։ (Թարգմ.)։

183 Մ. Աբեղյանը թարգմանում է «բոլորի վրա հասած փորձություններ»։ Բնա-

* Krumbacher, Gesch. der Byz. Lit., էջ 1146։

գրում ունենք. «Ամենայն փորձութեանց և ոչ թե սիրտութեանց ամենեցունց». (Թարգմ.)։

184 Սկսած «Ոչ ոք կարող է Ս. Խորենացու Հայոց Պատմությունից (Գիրք Երկրորդ ԽԲ, ՕԳ, ՕԴ, ՕԵ, ՕՀ գլուխներ)։

185 Այս ցույց է տալիս, որ գրչի կողմից նախադասության բաց թողումն ամեն ուրիշ կողմից բնագրի ձեռ մուծումը տեղի է ունեցել համառոտ բնագիրն ստեղծելուց շատ առաջ։

Չկա մի ձեռագիր, որտեղ տեսա, բառ, նախադասություն բաց թողած լինի գրչի ծաղրության ժամանակ (որը գրչության արվեստի շատ կարևոր բաղադրիչներից է) սրբագրիչը շտկում էր գրչի սխալները և բացթողումները՝ գրելով կամ գրչին գրել տալով, մոնում սխալի տեղում, ընդլուզ հետո՝ վերևում, տողամիջում, եզրալուսանցքում կամ տողին լուսանցքում։ Որ մեծ է բացթողումը։ Բառի, տառի կամ նախադասության վրա սխալի (կամ մոռացվածի) տեղում դրված մուծման միևնույն նշանը ցուցանում, սրբագրողը լուսանցագրություններ մուծում էր բնագրի մեջ համապատասխան տեղում։ Բոլորին է մուծման նշանի սխալ տեղադրում և թյուրիմացությունը պատճառ էր։ Հետևանք է մի թյուրիմացության, որը սրբագրվում է հոյակի երկուլ։

ԿԱՐՅՈՒՆ Մեսրոպ Մաշտոցը

ա) (Նեխասյում) «Հայրական չափեցն ծնեալ ծնողեցն նորոգ և արանչելի՝ սուրբ աղբիւր խրոյ, նշանագիրս հայերէն լեզուին» (գրերի ստեղծում)։

բ) «Եւ անդ (Նեխասյում) վազվազուկի եղանակեալ, անուսնեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք» (այբուբենի հորինում)։

գ) Անդէն ի նմին քաղաքի (Ամիդասա) «գրիչ ոմն հեթանոսական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով ամենայն բնտրութիւն նշանագրացն, ինիգամային յօրինեալ և տանկուցեալ» (գրերի հարդարում կամ կերպաձևում)։

դ) (Սամոսատում) «ի թարգմանութենէն դասական...» (թարգմանություն)։

ե) (Ամասիայում) «Հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեանն» (գրչության արվեստի ուսուցում) (աստ, 90, 91)։

ԿԱՐՅՈՒՆ Մեսրոպ Մաշտոցը

ա) (Նեխասյում) «Յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր (գրերի ստեղծում)։

բ) (Սամոսատում) «Հանդերձ Հռոփանոսիս կերպաձևեալ զգիրս առ ձեռն պիտոյս Մեսրոպայ (գրերի հարդարում կամ կերպաձևում)։

գ) (Նեխասյում) «Փոխանակելով զհնչիւնէն հնոյիմաստ քան անսպիաքութեան անուղղայիցն Հելլենացւոց» (այբուբենի հորինում)։

դ) (Սամոսատում) «Ես խնդոյն ի թարգմանութիւն ձեռն արկանել...» (թարգմանություն)։

ե) (Սամոսատում) «Միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկտոյն աշակերտացն»։ (գրչության արվեստի ուսուցում)։ (Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 322)։

Կորյունի մոտ

1 Գրերի ստեղծում (Նեխասյում)
2 Այբուբենի հորինում (Նեխասյում)
3 Հարդարում կամ կերպաձևում (Սամոսատում)
4 Թարգմանություն (Սամոսատում)
5 Գրչության արվեստ (Սամոսատում)

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԻՆԳԱՏԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Խորենացու մոտ

1 Գրերի ստեղծում (Նեխասյում)
2 Հարդարում կամ կերպաձևում (Սամոսատում)
3 Այբուբենի հորինում (Նեխասյում)
4 Թարգմանություն (Սամոսատում)
5 Գրչության արվեստ (Սամոսատում)

Նշանակում է նախկինում ասվածի կրկնություն։

Ինչպես տեսանք, նեղ իմաստով պատմագրի գործ կհամարվի հինգ տողերը շտկելու հարցում նրա կատարած աշխատանքը և բացատրենք, թե ինչպես կարող էր նա դա անել։

ա) (Նեխասյում) Ես կատարեցի հարցերին ձեռնամուխ եղած անձանց խնդրանքը։

բ) (Նեխասյում) Փորձառության հանձնարարությամբ ստանալով գրերի հնչյունացման դիմ մասին տեղեկություններ։

գ) (Սամոսատում) Ես հանդերձ հարմարավետ կերպաձևել գիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ։

դ) (Սամոսատում) Ինչպես թարգմանչին ձեռն տրվեց, հորջորջել զնոսա անուանիցն, որ ի նոսա էին։

ե) (Սամոսատում) Ուսուցանել զգրչության արվեստն, տալով իւրոց մանկտոյն աշակերտացն։

Ստացվեց (ա) գրերի ստեղծում, (բ) այբուբենի հորինում, (գ) հարդարում կամ կերպաձևում, (դ) թարգմանություն, (ե) գրչության արվեստի ուսուցում։

Ձեռագրերը արբագրելիս քանի որ մեծ էր բաց թողածը, գրվել է մարմին լուսանցքում մեծ մասը։ Այդ նշանից դրվել է նաև ոչ ճիշտ տեղում, այսինքն՝ նախադասության վերջում։ Այս գործողությունը բավական էր, որ հաջորդ ընդօրինակողը սխալ մուծված բաց թողումը և ստեղծվեր սուտ թյուրիմացություններ կամ էլ փոքրացրած նշանը ճիշտ տեղն է դներ, սխալվել է ընդօրինակող գրիչը, որը սխալ է մուծել բաց թողնված նախադասությունը։ (Ա. Մաթևոսյան, Մովսես Խորենացին Մեսրոպյան գրերի մասին, ՊԺՀ, 1990, 3, էջ 100—117)։

186 Մինչև այստեղ Մ. Խորենացուց է, ամփոփում է Մեկ գլխի վերջում։

187 «Ձառս գիրս նոր թարգմանեցեալն կապակցությունն ընկալելի է երկու ձևով.

ա. «Թարգմանեալ նոր առաջ գիրքդ (նոր Կտակարանը)»

բ. «նորից (=նորովի) թարգմանեալ Սուրբ Գիրքդ»։

Բնագրի ձեռագրերը ասկայն ասլիս է այլ ընթերցում. «Ձսուրբ գիրսն, որ թարգմանեցեալ»։ Այս բառանջատումը շատ հստակ է. գիրսն և որ բառերը ընդգծված կերպով անջատված են իրարից։ Սակայն այս դեպքում էլ քերականական անկապակցություն կա։ (Թարգմ.)։

188 Մ. Աբեղյանի հրատարակած բնագրում ունենք «աստուած գիտութեան»։ (Թարգմ.)։

189 Ծրրայեցիս, ԺԱ—37։

190 «Ելեալ գետոյն» պետք է հասկանալ ոչ թե ավելի հեռուս, այլ ավելի մատչելիս։ (Թարգմ.)։

ՀԱՎԵԼՎԱԾ

«ՎԱՐՔԻ» ԵՐԿՈՒ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կորյունի երկի ընդարձակ բնագիրը առաջին անգամ տպագրվում է Վենետիկում 1833 թ. «Կորիւն, Մամբրէ, Դաւիթ» միհատորյակում։ 1894 թ. վերահրատարակվում է, յուրաքանչյուր էջի ստորին մասում տեղադրվելով Համառոտ Կորյունի համապատասխան մասը, որը մինչև այդ 1854 թ. արդեն տպագրվել էր դարձյալ Վենետիկում (Սուփերք, ԺԱ)։ 1894 թ. օրինակից Կորյունը 1913 թ. վերահրատարակվում է Թիֆլիսում, ուր Համառոտը, որպես առանձին բնագիր, հաջորդում է Ընդարձակին։

Գ. Ֆնտգլյանը 1930 թ. Երուսաղեմում, Վենետիկյան հիմքի վրա հրատարակում է Կորյունի երկը «Վարք Մաշտոցի» խորագրով, տողատակի բառաքննական, համեմատական, մեկնողական բաժնով (Բ մաս), ուսումնասիրությամբ (Ա մաս) և ծանոթագրություններով (վերջում)։ «Խորագրես համոզված, թե հանձին Կորյունի ունինք մեծ, ինքնատիպ և ստեղծող մի մատենագիր, որմէ բանաքաղած են առհասարակ բոլոր մեր հին մատենագիրները, մինչ ինքը և ոչ մեկէն փոխառած է», ուսումնասիրողը ցանկանում է Կորյունի Մատյանը տեսնել մաքրված արատավորող բազմաթիվ սխալներից և ունենալ վստահելի և դյուրիմաց բնագիրը «այս հիրավի «Ոսկեդենիկ» մատենիկին»[1]։

Մ. Աբեղյանը 1941 թ., Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերի և Վենետիկյան տպագրությունների հիման վրա կազմում է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի քննական բնագիրը, և հրատարակում ձեռագրական ընթերցվածներով, աշխարհաբար թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով։ «Փոքր գրքույկը...— գրում է Մ. Աբեղյանը,— հայ պատմական կյանքի նոր դարաշրջանի սկզբնավորության հետ ծանոթանալու նկատմամբ՝ ունեցել է և ունի շատ մեծ արժեք... Նա բավարար չափով տեղեկություններ է տալիս իր առաջադրած խնդրի վերաբերմամբ և սովորաբար շատ որոշ կերպով։ Նրա գրածով մենք պատկերացնում ենք մի խելոք կերպով ծրագրած ու կատարած գործունեություն, իսկ գլխավոր գործիչը՝ Մաշտոցը, հանդես է գալիս իբրև անսպառ եռանդի տեր, շնորհալի և ազդեցիկ տղամարդ, որ մտածում և հոգում է ամբողջ հայության, այլև հարևան ժողովուրդների համար...»[2]։ Անդրադառնալով Կորյունի աշխատության ձեռագրին, նա նկատում է, որ այն «ընդհանրապես, մանավանդ վերջին մասում, շատ աղճատված է արտագրողների ձեռով...» որոնց «համար մի զժվարության հանգամանք էլ եղել է նաև Կորյունի գրության ոճը։ Նա հորինում է շատ ճոռոմ, ավելորդ զարդերով և կրկնություններով... հաճախ մութն է նաև անկանոն լեզվի պատճառով, պակասում են անհրաժեշտ բառեր... Դժվար մատչելի է եղել այդ գրվածքը նաև միջին դարերում»[3]։

1949 թ. Վիեննայում Ն. Ակինյանը օգտագործելով նախորդ հրատարակությունները և այլ ձեռագիր ու տպագիր ավելի քան երկու տասնյակ աղբյուրներ, կազմում է Կորյունի «Վարք Ս. Մաշտոցի» երկի քննական բնագիրը՝ ներածությամբ, ձեռագրական տարընթերցվածներով և ծանոթագրություններով։ «Կորյունը հայ դպրության աշակերտն է և առաջինը այդ դպրոցին, որ ձեռնարկած է գրել ինքնուրույն գործ մը, փոքրիկ, բայց հոյակապ իր կառուցվածքին մեջ»[1]։

Ն. Ակինյանին չեն բավարարում նախորդ հրատարակությունները, ուստի աշխատում է վերականգնել Կորյունի ճշգրիտ բնագիրը։ «Ուշի ուշով, մանրակրկիտ զննությամբ քննության ենթարկելով բնագիրս,— գրում է նա,— նկատեցի, որ ան բազմապիսի փորձություններու ենթարկված է յընթացս դարերու։

ա. Աղճատված է լեզուն բազմախուռն վրիպակներով.

բ. դուրս ինկած են բառեր, նախադասություններ.

գ. հավելվածներ կրած է.

դ. կատարված են հատվածներու տեղափոխություններ, ըլլա դիտումով, ըլլա քըղթերու հետևառաջությամբ»[3]։

Հ. Աճառյանին էլ չի բավարարում Ակինյանի հրատարակությունը. «Ակինյանը,— գրում է նա,— Կորյունի գիրքը համարեց եղծված, խանգարված, թերթերը հետևառաջ ընկած։ Այս մտածությամբ նա առավ իր հատու մկրատը, աջից ու ձախից կտրեց, հանեց, տեղափոխեց, ջնջեց, փոփոխեց և մեր ձեռքը տվեց մի նոր Կորյուն, որ տե՛ս ՀԱ 1935, էջ 454—550։

Իրավունք ունե՞ր այսպես վարվելու։

Ընդունելի է, որ մի դասական հեղինակի մոտ գործածված որևէ անհարազատ բառ փոխենք և ուղղենք... անշուշտ իրավացի գործ արած կլինենք... վերջապես այս կարգի բառերի սրբագրությամբ փոխում ենք միայն մի քանի տառ և իմաստի տարբերություն չկա բնավ։

Բայց ինչ ասենք, երբ մի քննադատ առանց պատճառաբանության հանդգնում է ամբողջ տողեր ու հատվածներ փոխել։

Թերթերի տեղափոխություն՝ կազմի քայքայման պատճառով, նույնպես հասկանալի է, բայց այս դեպքում տեղափոխությունը պիտի լինի ամբողջ էջով, կամ երկու էջով և ոչ թե հատվածներով կամ մի քանի տողով, ինչպես անում է Ակինյանը Կորյունի մեջ»[2]։

Կորյունի (և ոչ միայն նրա) Մատյանի նկատմամբ զանազան կարծիքները, սրբագրությունները, մեկնաբանությունները բնական են, քանի որ դրանք բոլորը վերաբերում են հարյուրամյակների փոթորկուն հանապարհներով անցած, տարբեր հանգամանքներում ու նպատակով, տարբեր մակարդակի գրիչների ընդօրինակությամբ մեզ հասած ձեռագրերի, որոնք կարող են նաև դրանցից դուրս այլ պատահականությունների ենթարկվել, ուստի իրավացի են նշանավոր հայագետ Նորայր Բյուզանդացու խորհուրդ-

---

1 Գ. Ֆնտգլյան, Կորիւն, «Վարք Մաշտոցի, ի Կորիւն աշակերտէ նորին», Երուսաղեմ, 1930, Յառաջաբան (արտատպված «Սիոնի» 1927-ի էջերից)։

2 Կորյուն, Վարք Մաշտոցի (աշխարհաբար թարգմանությամբ և աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի), Երևան, 1981, Առաջաբան, էջ 64։ Տե՛ս, աստ, էջ 28, 29։

3 Նույն տեղը, էջ 65։

1 Կորյուն, «Պատմութիւն վարուց Ս. Մաշտոցի», Բ հրատարակութիւն (Հրատարակեց հանդարձ ներածութիւն և ծանոթագրութիւններով Հ. Ներսես վ. Ակինյան), Վիեննա, 1952, էջ Լ։

2 Հ. Աճառյան, Հայոց գրերը, եր., 1984, էջ 32—33։ (Ընդգծումն իմն է, Ա. Մ.)։

նեցը) որ «Նախնյաց արևից բնագիրը հարցաքննելու համար, քանի մեռանելի մատուցյունից, անհրաժեշտ կարևոր է լիովին ուսումնասիրել այն՝ ստեպ ստեպ կարդալ յոլ պետք է միտ դնել մատենագրի ոճին, որում գրել է, յոր պատմության առանձնաին, ընդհանուր քաղաքականության, բանակցությանց մեռ պետք այն բառերին և արտահայտություններին, որ գրված են մերթ այն կերպ, մերթ այն կերպ, և հենց նույն մատենագրի գործունեության՝ այսպես սխալ գրվածք արտագրել, հարմանք ազգիչ գրվածով։ Մեռ գործ մատենագրի նման ուրիշ հեղինակներին և թարգմանություններին եթե ունի, և իր ժամանակակից այլ մատենագրություններին, որ հետազոտությամբ կլուսավորեն, կվարդեն, կամ առանձին դեմ լուսցնեն մեզ մեզին նպատակ և այն հետազոտ մատենագրություններին, որոնց մեջ նույն մատենագրից տեղեկություններ կգտնվեն։ Միայն ոճով ուսումնասիրված և հարդարված բնագրի հրատարակությունը կհոչակի Քննական հրատարակություն»[1]։

Նորայր Բյուզանդացու սույն խորհուրդը և Ակինյանը հետամուտ է մնացի կանոն բանասերներու՝ բնագրական սրբագրությանց հետամուտ։ Այս խորհուրդը այժմ էլ պահպանում է իր ուժը, պարզապես այսօր պետք է հաշվի առնել ձեռագրագիտության ժամանակակից նվաճումները, որոնք միայն կնպաստեն ավելի հշգրիտ և արդյունավետ սրբագրությունների կատարելուն։ «Նախնյաց արևից բնագիրը հաստատելու» ամենակարևոր խնդիրներից մեկը, որ Ակինյանը դրել էր իր առջև, մնաց անլուծելի։ Ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Ակինյանի անպատահական մասին 1935 թ. գրելը։ Ն. Ակինյանը, նկատելով, որ «նախնյաց արևից բնագիրը հաստատելու» համար անհրաժեշտ է ուսումնասիրել Ա դարի հեղինակների լեզուն, ոճը, ինչպես նաև Ա դարի հեղինակների հետ կապված հարցեր

խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց, եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի»[1]։

Իր տեղում չէ ընդգծված հատվածը, որն այսուհետև կանվանենք առաջին՝ «Ապա առեալ» բառերով։ Այս հատվածի տեղի անպատեհությանը չկասկածելու առաջին և հիմնական նախապայմանը նրա և նախորդ պարբերության տրամաբանական և ժամանակագրական շարունակությունն թվալն է, մանավանդ իրար կից նախադասությունները, որոնք միմյանց պարզ սկիզբ ու շարունակություն են երևում. այսպես. «Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հարելէն, ուրախ լինէին։ Ապա առեալ երանելի եռազարառուցն զյաճկարծագիւտ խնդրելին, հայցէին եւս յարեայէ մանկունս մատագս, որով զնշանագիրսն առծարծել մարթացեն»[2]։ Բայց բավական է ընթերցել հաջորդ պարբերությունը, և ամեն ինչ շուռ է գալիս, բացվում է անպատեհությունը. «Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել ըսիղորայս զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ»։

Այստեղ հերքվում է նախորդ՝ «Ապա առեալ» պարբերության դանիելյան գրերին վերաբերվելու հանգամանքը։ Պարզվում է, որ ա) դանիելյան գրերը՝ հայոց լեզվի հընչյունական համակարգի համար ոչ բավական, ուստի ոչ պետքական, պակասավոր նշանագրեր են։

բ) Պարզվում է նաև, որ նրանք ուրիշ դպրությունից առնված, լույս աշխարհ հանված գրեր են, այսինքն՝ հայերեն նշանագրեր չեն, օտար են և հայերեն լեզվին անհամապատասխան։

գ) Այդ պատճառով Վռամշապուհ թագավորը, Սահակ Պարթև կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը կրկին ապրում են նույն հոգսը, ինչ ունեին դանիելյան գրերից առաջ. այդ հայերեն լեզվին համապատասխան նշանագրեր ունենալու հոգսն էր, որի համար էլ նրանք ելք էին որոնում[3]։ Ուստի ամեն ինչ նորից էր սկավելու, առանց դանիելյան գրերի։

Ելքը գտնվեց. Մեսրոպ Մաշտոցը մի խումբ աշակերտների հետ պետք է իջնի Միջագետք, հայերեն լեզվին համապատասխան նշանագրեր ստեղծելու համար։ Եվ ստեղծեց։ Ինչպես Ն. Ակինյանի պատճառաբանությունները, այնպես էլ սույն պարզաբանումները ցույց են տալիս, որ «Ապա առեալ» հատվածը իրենից առաջ գտնվող հատվածի հետ բնագրային, պատմաժամանակագրական և տրամաբանական կապ չունի, որ այդ կապը երևութական է, իսկ իրենից հետո հատվածի հետ՝ արմատական հակասության մեջ։

Այժմ ամրապնդենք մեր տեսակետը բնագրի ձեռագրական ճշգրտումների միջոցով։

Մ. Աբեղյանը Կորյունի երկի համեմատական բնագիրը կազմելիս, օգտագործած բոլոր ձեռագրերի «Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գրեալ նշանագիրս հայերէն լեզուի» հատվածում «գրեալ» բառը դարձնում է «գտեալ» և տողատակում գրում. «ՃԱ, ՃԲ—ուրեմն գրեալ նշանագիրս ալփարենաց. C—լուսանցքում՝ էր գրեալ, մյուսներում՝ լիք գրեալ. ուղղում եմ՝ գտեալ»։ «Ես իրրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիէլէ, հատվածում» «գրելոյն» նույնպես փոխում է «գտելոյն» և՝ նշում «բոլոր «գրելոյն», ուղղում եմ՝ գտելոյն»։ Երկու դեպքում էլ հղում է № 56 ծանոթագրությունը։

Ինչպես տեսնում ենք բոլոր ձեռագրերում, մանավանդ ՃԱ և ՃԲ ճառընտիրներում,

[1] Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 90—94։



որոնք Կորյունի երկի հնագույն, համառոտ նմուշներն են, գրված XIV դարի առաջին կեսին, ունեն «գ ր ի մ լ», «գ ր ե լ ո յ ն» ձևերը, որոնք փոխվում են «գ տ ե ա լ» և «գ տ ե լ ո յ ն» ձևերի, և Դանիելի կողմից գրած, հարմարեցրած նշանագրերը միանգամից հուշակվում՝ գյուտ «գտած»։ Սրան համապատասխանեցնելու համար էլ «յայլոց դպրութեանց քաղելոք»-ը, որ ունեն նույն ճառընտիրները, դարձնում է «քաղեալք» և Դանիելի գյուտի համար գանձը պատրաստ է, մնում էր հաստատել, որ Դանիելը գյուտարար է։ Եվ հաստատվում է։

Ահա թե ինչպես է պատճառաբանում Մ. Աբեղյանը. «Առաջինի մեջ բայը ձեռագիրների մեծ մասը չունեն։ Դա, ըստ իմաստի պիտի լինի «գտեալ»—գտել է. ՃԱ ՃՐ ունին «գրեալ»։ Երկրորդ նախադասության մեջ նույն դերբայն է, միայն աղճատված ձևով, այսինքն «գտելոյն» դարձած է «գրելոյն»։ Այս խոսքերն աղճատված ձևով նշանակում են Դանիելը «հանկարծ» (պատահարար) գրել է նշանագրեր»։ «Որը թագավորից պատմվեց նրանց Դանիելից գրվածի մասին», սովորական լեզվով՝ «երբ թագավորը պատմեց նրանց Դանիելի գրածի մասին»։ Բայց անհեթեթություն է ասել, թե Դանիելը հանկարծ (պատահարար) նշանագրեր է գրել, հնարել. հանկարծ պատահար կարելի է գտնել մի բան, ոչ թե հնարելու նշանակությամբ, այլ հայտնաբերելու։ Այնուհետև գրում է, որ «ԳՏԵԼՈՅՆ», «ԳՐԵԼՈՅՆ» դառնալու համար Տ-ի տառերն կարճ մասը չնչվել է և տեղծել շփոթը»[1]։

Բայց եթե «յանկարծ» բառը պատահարար-ի փոխարեն գործածենք «Իբր՝ անկարծ, անկարծելի օրինակաւ, խնդուն, յանակնկալ պահու, յանպատրաստից» բառերից մեկը, ասենք Դանիելը «հանպատրաստից գրել է նշանագրեր», կամ Դանիելը «յանակնկալ պահու գրել է նշանագրեր», ի՞նչ անհեթեթություն կա։ Կամ «երբ թագավորը պատմեց նրանց Դանիելի գրածի մասին», ինչո՞ւ չի լինի, երբ մարդիկ արդեն լսել էին, որ Դանիելի գրածը հայերեն լեզվի նշանագրեր են, ի՞նչն է անհասկանալի։ Մանավանդ որ Կորյունի երկի բոլոր ձեռագրերը այդ են վկայում, իսկ Մեսրոպ Մաշտոցի մյուս աշակերտ Մովսես Խորենացին՝ հաստատում է այդ։ Միշտ ձեռքում Հայոց Վռամշապուհ թագավորին մոտեցած քահանա «ուրումն Հաբել անուն կոչեցեալ խոստանայր հայկական նացս լեզուաց առնել նշանագիր, յարմարեալ ի Դանիէլէ եպիսկոպոսէ, ջիրմէ մերձաւորէ»։ «Յարմարեալ ի Դանիէլէ», և ոչ «գտեալ»։ Իսկ Մովսես Խորենացին Դանիելյան գրերի մասին ոչ միայն Կորյունի Մաշտոցից գիտեր, այլև իր ուսումնասիրության շրջանից, գուցե և ուսուցչի բերանից[2]։

«Եվ վերջապես,— շարունակում է Մ. Աբեղյանը,— թե «գտեալ» բառը պիտի լինի, այդ երևում է նրանից, որ «հանկարծ գ տ ա ծ» լինելու բովանդակությունը քիչ հետո Կորյունը հայտնում է ըստ իր սերած ոճի մի բարդ բառով. «Առեալ հոգաբարձուացն գյանկարծագիւտ խնդրելին»... հանկարծ գտնված ուզածը, այսինքն իրենց ուզած նշանագրերը, որ պատահարար գտնվել էին։ Պետք է հասկանալ Դանիելի հանկարծ (պատահարար) գտածը, և ոչ թե իրենց, քանի որ իրենք հանկարծ (պատահարար) չէին գտել այդ նշանագրերը»։

Ինչպես տեսնում ենք, պատահականորեն այստեղ հայտնված հատվածը այնքան բնական է համարվել, որ նույնիսկ նրա առանձին բառերին համապատասխանացրել-հարմարեցրել են նրանից դուրս և նրա հետ կապ չունեցող բառեր և ազավաղել Կորյունի մտքերը։

[1] Կորյուն, վարք Մաշտոցի, էջ 308—309։

[2] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Եր., 1991, էջ 325։

Դանիել ասացած նշանագրերը ձախողվեցին Վռամշապուհ թագավորի հինգերորդ տարվա կեսերից դրանից քառասուն տարի հետո շարադրում է իր Մատյանը։ Այդ ժամանակ կարո՞ղ էր նա դանիելյան անպետք գրերն անվանել Սահակի և Մեսրոպի «գյանկարծագիւտ խնդրելին», երբ նրանց «խնդրելին գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանելն» էր, և այդ «կանխագոյն խնդրելիի» մասին նրանք քաջավորին տեղեկացրել էին։ Մինչդեռ դանիելյան գրերը քառասուն տարվա հեթավորությունից շատ պարզ երևակել են, որ երբեք խնդրելի չեն եղել Սահակի և Մեսրոպի համար։ Ուրեմն «խնդրելիին» դանիելյան գրերին չի վերաբերվել, տրամաբանորեն նրան չի վերաբերվում նաև «գյանկարծագիւտ»-ը, այսինքն, եթե «խնդրելի» որոշիչը չի վերաբերում դանիելյան գրերին, նրան չի վերաբերում նաև «գյանկարծագիւտ» որոշիչը։

Դանիելյան գրերը պատահական գտնված կամ հանկարծագյուտ չէին, այլ՝ ուրիշ դպրություններից բազմած և հարմարեցված, այսինքն՝ հայանի էին, հարմարեցված հնարավոր նպատակով, որպեսզի առորինների ձեռնամարտությամբ հայերը գիր ունենան, որ նրանց ազդեցությունը ոչ միայն ուժեղացվեր, այլև տևական լիներ։ Բայց Դանիելին ամբողջովին էր հայոց լեզվի հնչյունական հարստությունը, և, բնականաբար, նրա ստեղծած այբուբենը չէր բավարարում հայոց լեզվի պահանջները։

«Յանկարծագիւտ»-ը Մեսրոպյան գրերն են, որ ոչ ոք չգիտեր, թե ինչպիսին են նրանք լինելու, ինչպես պիտք է ստեղծվեն, և հանկարծ, որպես աստվածային պարգև, ղրկվեց Մխիթարին «հայերական չափուն ձևով ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աչովն իւրով, նշանագրաց հայերէն լեզուինս»։

Իսկապես հանկարծագյուտ։

Անհարկի է, նաև «Ասպա առեալ»-ի հաջորդ նախադասությունը. «Հայեցեին նա ի յարջապէտ մանկունս ուստերաց նշանակեալ է Սահակը և Մեսրոպը Վռամշապուհ թագավորից մի պանդամ հայցել էին տանկունս մատռաց», և նորից մանուկներ էին խնդրում նշանագրերը փորձելու համար։ Ընդհ է եղել առաջին խնդրանքը։ Մինչև այս հատվածի ընթերցումը «Վարքի» մեջ այդպիսի գեպք չի հիշվում, քանի որ այդպիսի բան չի եղել։ Բայց ահա, քաջավորից մանուկներ խնդրելու փաստի հանդիպում ենք նաև Դանիելյան գրերը սուտ գտնվ գալուց հետո, երբ «երանելի Մաշտոցը ապրայի հրամայեցին մանուկներ առավ հետը... և գնաց նով և սուրբ Սահակի համաձայնությամբ՝ մի խումբ մանուկներ առավ հետը... և գնաց հասավ Արամի կոմսերքը»։ Ուրեմն առաջին անգամ «մանկունս մատռաց Հայոց յարքայից Արամի կոմսերքը»։

«Յանկարծագիւտ» բառը միայն Կորյունի մոտ է հանդիպում։ Համեմատաբար դեպի հինգերորդ դարում միայն երա մոտ է գործածվում, այն էլ երեք անգամ, ուրեմն ևս է տեղծել այդ բարդությունը։ Առաջին դեպքում Աբրահամի հավատն է համարում «յանկարծագիւտ»—(Աբրահամ) յ ա ն կ ա ր ծ ա գ ի ւ տ հաւատովք արդարացեալ աստուածամերձ, աստուածախօս դաշնաւոր կանայեալ, և գաւեթիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ»։

Երկրորդ դեպքում նշանագրերը «Ընդ առեալ երանելի հոգաբարձուացն գյանկարծագիւտ խնդրելին», և վերջապես Ս. գրքի առաջին անգամ հանդիպած շտապովի բարգմանիչների «Գարձեալ յետ այնորիկ (երանելւոյն Սահակայ) առեալ հանդերձ եղբայրութեանն գյանկարծագիւտ գիրս նշանագրացն հայերէն լեզուի հաստատէր ճշմարտագոյն գրչութեամբ» (տես Հայկազեան լեզուի, Ս. Բ, էջ 326։ Հմմտ. մարիա օրինակը՝ խնդրելիքն (նոր Տեղիրք Հայկազեան լեզուի, Ս. Բ, էջ 326։ Հմմտ. Ս. գրքի պատմագրքերի համարարանները։ Վարք Մաշտոցի, էջ 72, 92, 124)։ Այս երեք կիրառությունները, մեր կարծիքով, Դանիելի հարմարեցրած կիսատ-պռատ նշանագրերի հետ հավասարեցնելու ոչ մի հնար չունեն։

յէ» հայցել են Միջագետք գնալիս։ Իսկ երբ վերադարձել են Միջագետքից Մեսրոպյան նշանագրերով, այժմ էլ Վաղարշապատում Սահակն ու Մեսրոպը Վռամշապուհ արքայից խնդրում են «եւս մանկունս մատաղս», «նորոգ», «յանկարծագիտս» նշանագրերը մայրաքաղաքում, թագավորի մոտ գործադրելու համար։ Հաջողությամբ է պսակվում Մեսրոպի գործը, շատերն են սովորում հայոց գիրը։ Այս տեսնելով թագավորը «հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել»։ Այդ էլ է արվում, Հայաստանի տարբեր վայրերում դպրոցներ են բացվում և Մեսրոպը իր գրերը իր գրչության ուսմունքով սովորեցնում է հայ ժողովրդին, «որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, եւ իբրեւ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր նովին նշանագրովք տանէր»։

Ահա թե ում գրերի համար է թագավորը մանուկներ տվել, ում նշանագրերով են Վաղարշապատում և «ամենայն ուրեք» դպրոցներ բաց արել, և ինչու է «Մեսրոպը վարդապետության գեղեցիկ աստիճան ստացել»։ Եվ այս գեղեցիկ գործունեությունը տևել է երկու տարի։

Այդ ժամանակ արդեն վաղուց մոռացվել էին դանիելյան անպետք, օտարներից մուրացած նշանագրերը, որոնց փորձելու համար ոչ թե երկու տարի, այլ շատ կարճ ժամանակ է հարկավոր եղել։

Այսպես բառ առ բառ, բան առ բան կարելի է քննել փորձարկման երկու տարիների, Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարին երկու անգամ հիշվելու և այլ ծեծված հարցեր,[1] կրկին ցույց տալու համար, որ «Ապա առեալ» հատվածը իր տեղում չէ։ Արդ, «Ապա առեալ» հատվածը հանելով իր այժմյան տեղից, վերացնում ենք նրանից առաջ և հետո եղած հատվածների միջև ընկած արհեստական խոչընդոտը և միացնում հատվածներն իրար, որոնք իրար ձուլվում են ոչ միայն բնագրային անմիջական շարահարությամբ, այլև պատմական և տրամաբանական ճշգրտությամբ, վերականգնելով Կորյունի հեղինակային շարադրանքը։

Քանի որ Դանիելը «գրել» է և ոչ «գտել» ուրեմն դրանց աղբյուրը որևէ մատյան է կամ մատենագրություն, որից քաղված, ժողոված, ընտրված են գրերը, և ոչ՝ թաղված, որ գտել է։ Հետևաբար «թաղեալք և հարուցեալքը» պետք է լինի «քաղեալք և հարուցեալք» ինչպես հնագույն օրինակներում։

Նախ ինչ է նշանակում «դպրութիւն»։ Կորյունի ժամանակ այն նշանակում էր ա) ուսումն, դպրոց, գրագիտութիւն կամ կարդացողութիւն, բ) իբր գիրք, մատեան։ Ուրեմն «յայլոց դպրթեանց քաղեալք» նշանակում է ուրիշ մատյաններից քաղված։ Որ այս այսպես է, հաստատում է Մովսես Խորենացին՝ ըստ որի Դանիելն իր խոստացած նշանագրերը համարեցրել է «ի ձեռյ աւիրնակի յունականին վաղնջուց գրեալ շարագիրս տառից»։ Շարագիր նշանակում է՝ ա) շարագրող, հեղինակ, բ) շարագրած, նշանագիրք՝ դրոշմեալ, շարադրած բան, մատեան։ Այստեղ էլ՝ մատյաններից կարգված, հորինված։ Իսկապես, Քրիստոսի ծննդից առաջ երրորդ դարում փոխվեցին և նման չէին հինգերորդ դարի հունական գրին։

Ներկայացվող բնագրում, նրանից առաջ և հետո ընկած հատվածներում վերականգնել ենք հեղինակային և ձեռագրային «գ ր ե ա լ նշանագիրս», «գ ր ե լ ո յ ն ի Դանիէլէ» և «ք ա ղ ե ա լ ք և յարուցեալք» բառերը, որոնք համեմատական բնագրում ներկայացված են «գ տ ե ա լ նշանագիրս», «գտելոյն ի Դանիէլէ» և «թաղեալք և յարուցեալք» ձևով։ Ահա այդ հատվածը իր նախնական վիճակում (աշխարհաբար)։

[1] Տե՛ս էջ 150 Ն. Ակինյանի պատճառաբանությունները։

«Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու՝ Դանիել անունով մի ազնվա-
կան ասորի եպիսկոպոսի մասին, որ հանպատրաստից գրել է հայերեն լեզվի ալփաբե-
ներ՝ նշանագրեր։ Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գրածի մասին, արքային
հորդորեցին, որ հոգ տանի այն պիտույքի համար։ Նա էլ Վահրիճ անունով մեկին հրո-
վարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս
Դանիելի մերձավորն էր։
Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ, և նախ ինքը Դանիելից
տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքային Հայոց երկիրը։
Նրա թագավորության հինգերորդ տարում հասցրեց նրան։ Իսկ արքան՝ սուրբ Սահակի
և Մաշտոցի հետ միասին՝ նշանագրերն ստանալով Հաբելից՝ ուրախացան։
Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբա-
ները՝ կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ
իսկապես ուրիշ դպրություններից քաղված և հարություն առած հանդիպեցին, ապա
դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին
փնտրում դրան։
Դրա համար երանելի Մաշտոցը՝ արքայի հրամանով, Սուրբ Սահակի համաձայ-
նությամբ՝ մի խումբ մանուկներ առավ հետը, և սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ
տալուց հետո, ճանապարհ ընկավ, գնաց հայոց արքա Վռամշապուհի հինգերորդ տա-
րում, և գնաց, հասավ Արամի կողմերը»։
Ինչպես տեսնում ենք Դանիելյան գրերը բերելը, փորձելը, մերժելը և Միջագետք
գնալու որոշում հանելն ու գնալը արվում է Հայոց Վռամշապուհ թագավորի հինգերորդ
տարում։ Այսպիսով այստեղից դուրս է գալիս «ամս երկու» առեղծվածային ժամանակը,
որի շուրջ այնքան ենթադրություններ են հորինվել և հարցը մնացել էր անլուծելի և
շփոթեցնող։

* * *

Իսկ այժմ տնավորենք «Ապա առեալ» հատվածը իր հեղինակային տեղում։ Այդ
անելու համար նախ հարկավոր է նրա պատշաճ տեղն ապատել այն հատվածից, որը
Ակինյանի կարծիքով, «այլուստ մոլորած եկած է հոս»։ Ներկայացնենք բնագրական
այն միջավայրը, ուր պետք է տեղադրվի «Ապա առեալ» հատվածը։
«Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին
և սրբոյ եպիսկոպոսին։ Որոց առեալ զամենայն նախարարազունդ աւագանւոյն ամբոխ,
ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելւոյն զափամբ Ռահ գետոյն։ Եւ զցանկալի ողջոյնն
միմեանց տուեալ, ուստի և բարբառոք ցնծութեան և երգօք հոգեւորօք և բարձրագոյն
օրհնութեամբ ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցա-
նէին։
Յայնմ ժամանակի վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ
գխուժադուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն
ճիւաղութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժվարամատոյց էին։
Առ ի յարդարել և զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարզախօսս, հռետորա-
բանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին»[1]։
[1] Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 102։ Հաջորդ նախադասությունը. «Եւ այնպէս մի-
ջամուխ եղեալ ճանգամանօք օրինապատգամացն, մինչև բնաւ առաւօոյ իւրեանց բնա-
կութեանն զերծանել» պետք է թողնել իր տեղում, չպետք է տեղափոխել այս հատված
հետ, որովհետև այն կից է նախորդ հատվածին և շարունակությունն է «Ապա առեալ

Աստվածատուր իմաստուրյանը ծանոթ դարձրին Մարաց կողմերում ապրող շատ տարիների ծեռնոններին, ժողովրդին, որի համար էլ գնացել էին նրանք միայն ձանապարհորդելու, բայց հանգամանորեն խորամուխ լինել օրենքների ու պատգամների մեջ, ոչ այլևս եման չլինելին իրենց բնիկ ազգակիցներից, հնարավոր չէր: Այն պատճառում է Վաղարշապատի դպրոցի շրջանավարտներին, որոնք սովորում էին Մեսրոպի ձեռքի տակ, հասունանում և այնքան էին խորամուխ լինում աստվածատուր իմաստության, օրենքների ու պատգամների մեջ, որ, իսկապես, այլևս նման չէին իրենց ազգակիցներին գիտությամբ, և գնում էին նրանց ու նրանց նմաններին ազգակիցներին ու պատգամները, կամ մասնակցում ավետարանական արվեստին, այսինքն թարգմանելու և սովորեցնելու գործին, ինչպես կարդում ենք այդ նախադասություններից հետո (տե՛ս էջ 103; Ասո՛ էջ 44 և 92):

Այս վերջին նախադասությունը Ն. Ակինյանը «Յայնժամ վաղվաղակի» հատվածին դիտ է պահել, և միանգին տեղափոխել Աղվանից աշխարհում Մեսրոպի գործունեության վերջում, Վրաց աշխարհ անցնելուց առաջ, որն անհարիր է հատվածին և պատճառում է իր հին տեղին, ասած Քողնում ենք տեղում: (Կորյուն, Վարք Ս. Մաշտոցի, էջ 33):

«Ու այնպես միջամուխ եղեալ հանգամանօք օրինադատությանն, մինչեւ թնու արտաքոյ իւրեանց բնակութեանն զերծանել»

Ու [ձեռն առեալ] այնուհետեւ առատաւատերժ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել, մանաւանդ հայեցեալ ի տեսանելս քաջին հրամանացն բարձրութիւնն, որ ան ետրանելին Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն ընդ[ունելոյ]...» «Ոմանք» հատվածը ընդհատված է,

«Քաղաքն ընդունելիս այսպիսի պատիւ ընծա առնեն,

«Հայերեն լեզվի նշանագրերի հնձման մասին, հոգևոր վեհաշուք քաղաքին ու Սահակ Պարթև կաթողիկոսը նախաձեռնեցին ավագանու բազմության ներկայությամբ, մեծ հանդիսավորությամբ Ուստի ըստ ամենայնի ուսումնասիրում են Մեսրոպին, ստուգում նրանից իրենց «խնդրելին»՝ հայերեն լեզվի նշանագրերը, նրանցով կազմված պարզ տեքստեր և հայերեն գրված առաջին մատյանը՝ ցնծությամբ վերադարձնում են վարդապետ քաղաք՝ օրհնյալ տոնական ուրախություններ են կատարում շատ, ամենքը քաջալերում են Մեսրոպ Մաշտոցին «սիրելու հավիտենից» Մարաց խուժադուժ կողմերում Ապրելն, ոչ թե վարդապետում, քաղաքի ու հասարակաց ներկայությամբ ու ժամանակությամբ, այլ Մարաց խուժադուժ կողմերում, Մեսրոպը միևնույն ձևն է պարզում հայ գրի ու գրության սկզբնավորմանը, որից հետո շարունակում է բնագիրը ճաստվածային գործի մշակությանն անելով՝ ավետարանական արվեստը—թարգմանել, գրել և սովորեցնել» Բայց «թեև, Մարաց աշխարհո՛ւմ, նրանց «խեցգեղագործ և կոշտ ու կոպիտ» լեզվո՛վ, Մաշտոցի ճեռո՛վ, Մեսրոպ վարդապետում: Այստեղ էլ՝ առանց Մեսրոպ Մաշտոցի՛, առանց դպրոցի, աշակերտների պատճանաշության, չէ որ նույնիսկ Սահակ Պարթև հայերեն գրերին, գրության արվեստին ծանոթ չէրը

Այս անհարիրության ու թյուրիմացության պատճառը հիշյալ հատվածն է, որ անհարիր է այստեղ:

Մեսրոպ Մաշտոցը իրականում, Միջագետքից վերադառնում է մայրաքաղաք և հատվածի, որ տեղադրվելու է այստեղ, իր բնական տեղում Մ. Աբեղյանը հատվածում նկատելիս, թյուրիմացաբար այն դրել է (ժ) հատվածին կից, համարելով նրա շարունակությունն (էջ 102):

մի քանի տարի դադար չի գալիս այնտեղից Կորյունի մոտ որոշակի վկայություն անենք Մաշտոցի Վաղարշապատից դուրս գալու, Վասիլապուհ թագավորից և Սահակ Պարթևից թաժանվելու, ինչպես նաև բաժանվելու նպատակի մասին, որը տեղի է ունեցել գրերի գյուտից տարիներ անց: Բանն այն է, որ Մեսրոպ Մաշտոցը նախ պետք է Քաղավորին, կաթողիկոսին ցույց տար իր գրածի արդյունքը, նրանց ապացուցեր, որ ինքը գտել է հայոց լեզվի սիղոբանները և կապերը լրիվ արտահայտող նշանագրեր, նրանց համոզելու համար պետք է փորձով ցույց տար, գրածի գներ իր գյուտը: Ուստի, «Ապա առեալ երանելի հոգաբարձուցն գյանկարծագիւտ քննդրելին, հայկին եւս յարքայէ մանկունս մպտաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթացեն...» և այլն:

Ավելի լավ է տեղադրենք հատվածն իր տեղում և ընթերցենք (աշխարհաբար):

«Նվ արդ, երբ հիշելին եկավ, մոտեցավ Քաղավորական քաղաքին, իմաց տվեցին Քաղավորին և սուրբ եպիսկոպոսին: Նրանք նախաբարեգուդ ավագանու բոլոր բազմությունն առնելով՝ քաղաքից դուրս եկան, Ծահ գետի ափին դիմավորեցին երանելիին: Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո՝ այնտեղից ցնծության ձայներով և հոգևոր երգերով ու բարձր-ձայն օրհնություններով նա դարձան քաղաքը, և տոնական ուրախությամբ անցկ[րին] օրերը:

Ապա երանելի հոգաբարձուներն (իրենց) հանկարծագյուտ ուզածն առնելով էլի խնդրեցին արքայից մասնագահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել: Եվ երբ նրանցից շատերը սովորեցին, ապա (թագավորը) հրամայեց ամեն տեղ նույն (նշանագրերով) կրթել, որով և երանելին հասավ նույնիսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ:

Եվ այնպես հանգամանորեն խորամուխ եղան նրանք օրենքների ու պատգամների մեջ, որ մինչև անգամ բոլորովին դուրս եկան իրենց ազգակցությունից: Եվ այնուհետև աստվածային գործի մշակությունն անելով, սկսեցին ավետարանական արվեստը թարգմանել, գրել և սովորեցնել, մանավանդ, որ աչքի առաջ ունեին Տիրոջ տված բարձր պատգամները, որը տվել էին երանելի Մովսեսին բոլոր եղած բաների մասին...»[1]

Այժմ մտածենք «Յայնժամ վաղվաղակի» տեղահանված հատվածը տեղադրելու մասին: Այն, բնականաբար գտնվում է սույն հատվածից բավական հեռու և ժամանակով, և իրագործությամբ: Ուստի շարունակենք բնագիրը և հետևենք Մեսրոպ Մաշտոցի հետագա գործունեությանը: Սրանից հետո Վաղարշապատում «Ընդ իրերի հաստատուելոյն փոքձին, ապա ավելի շատ էին ժողովում նորագյուտ ուսման համար աշակերտներ՝ սովորեցնելու և անգետ մարդկանց քարոզելու համար պատրաստելու: Նրանք իրենք էլ հենց Հայաստան աշխարհի զանազան կողմերից ու գավառներից բազմությամբ վեր կենում գալիս հասնում էին աստվածային գիտության բացված աղբյուրը: Որովհետև Այրարատյան գավառում, Քաղավորների և քահանայապետների նստավայրում՝ (Վաղարշապատում—Ա. Մ.) բխեց հայերի համար աստծու պատվիրանների շնորհքը...

Եվ իսկապես՝ եկեղեցու սյուներն (Սահակը և Մեսրոպը) սկսեցին... Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկել ճշմարտության աշակերտներին, գիտության մեջ կատարելության հասցվածներիս՝ կարող համարելով ուրիշներին էլ սովորեցնելու: Եվ իրենք աստվածային իմաստությամբ կրթեցին հենց այնտեղ իրենց մոտ եղած արքունիքը բոլոր ազատագունդ բանակի հետ...»[2]:

Ինչպես տեսնում ենք Վաղարշապատ վերադառնալով երանելի հոգաբարձուները

1 Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 103:

2 Նույն տեղում, էջ 107:

գրերը փորձելուց հետո դպրոց են բացում Վաղարշապատում, որտեղ երկու տարի Մաշ-
տոցը ուսուցչություն է անում, սկսում են նաև թարգմանություններ կատարել։ Ուսու-
ցիչներ են պատրաստում երկրի տարբեր գավառներում ուսուցանելու համար, իրենք էլ
դպրոցի և թարգմանությունների հետ միաժամանակ արքունիքն ու ազատանիներին են
սովորեցնում։ Այստեղ կրկին խոսքը տանք Կորյունին. «Դրանից հետո, երանելի Մաշ-
տոցը համաձայնություն ստացավ, որ Տեր եպիսկոպոսը՝ կայենականների մեջ, իսկ ինքը՝
հեքանոսների սփյուռում սերմանեն կյանքի խոսքը: Եւ բաժանվեց նրանից իր օգնա-
կանների հետ...» Ահա թե երբ է Մաշտոցը թողնում մայրաքաղաքը՝ երկար ժամա-
նակով։ Եվ առաջին անգամ... «գնաց իջավ Գողթնի Ռոստաակը, իր առաջվա դաստա-
կերտը... և գավառի բոլոր գյուղերում կարգեց սուրբ վանականների դասեր»[1]։
Մաշտոցը մի տեսակ ուխտագնացության է գնում այնտեղ, որտեղ հղացել էր
հայերեն գրեր ունենալու գաղափարը և մայրաքաղաքից հետո, ինքն առաջին անգամ
այդտեղ է շարունակում ուսուցանել, այս անգամ իր գրերով։ Եվ միայն այդտեղ.
«Այն ժամանակ քաղավարից շուտով հրաման ստացավ՝ սկսելու (սովորեցնել)
Մարաց խուժադուժ կողմերը, որոնք դժվար մատչելի էին ոչ միայն իրենց դիվական,
սատանայակիր, ճիվաղական բարքի, այլև խեցբեկագույն և կոշտ ու կոպիտ լեզվի
պատճառով: Ձեռք զարնելով և նրանց շատ տարիների ծնունդներին կոկելու՝ դարձրին
(նրանց) պարզախոս, ճոետորաբան, կրթված, աստվածատուր իմաստության ծանոթ»:
Ապա դրանից հետո եկավ սահմանակից Սյունական աշխարհը։ Այնտեղ էլ աստ-
վածասեր հնազանդությամբ ընդունեց նրան Սյունիքի իշխանը, որի անունը Վաղինակ
էր» և այլն։
Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտներով Մարաց կողմերը սովորեցնելու է գնում
Գողթան գավառից հետո։ Մարաց կողմերը դժվար մատչելի էին ոչ միայն իրենց դի-
վական, սատանայակիր, ճիվաղական բարքի, այլև խեցբեկագույն և կոշտ ու կոպիտ լեզ-
վի պատճառով։ Եվ ահա Մաշտոցը իր «սուրբ և աչքաբաց» Տիրայր Խորձենացու, Մուշե
Տարոնացու և ավետարանի սպասավոր մյուս աշակերտների հետ նրանց դարձնում է
«պարզախոս, հռետորաբան, կրթված, աստվածատուր իմաստության ծանոթ»։ Այսքան։

* * *

Այժմ այդ երկու հատվածների տեղերը փնտրենք հնագրագիտության ու ձեռա-
գրագիտության օժանդակությամբ։ Դրա համար անհրաժեշտ է վերստեղծել ձեռագրի
հեղինակային օրինակ, այն Մատյանի նմանակը (մակետ), որտեղ սույն հատվածները
գտնվել են իրենց հեղինակագիր տեղում։ Ուստի, նախ խախտված օրինակից կգնանք
նրա նախադաղափար օրինակը, այդ օրինակի վրա ցույց կտանք խախտումը, որից
կատարվել են մեզ հայտնի և անհայտ բոլոր խախտված ընդօրինակությունները։
խախտված օրինակից են համառոտված նաև Տոնականների տարբերակները։
Հեղինակային օրինակի մակետը վերստեղծելու համար անհրաժեշտ են հնագրա-
կան և ձեռագրական որոշակի հիմքեր։ Այդպիսի հիմքեր կան։
Ձեռագիրը պատմամշակութային հուշարձան է. ունի իր ստեղծման օրենքներն ու
օրինաչափությունները։ Այն ոչ միայն այս կամ այն գիրն ու բնագիրը պարունակող
մատյան է, այլ ինքը, որպես պատմահասարակական, մշակութային երևույթ, ունի
իր առանձնահատկություններն ու օրինաչափությունները, որոշակի բաղադրիչներն ու
միավորները, որոնց ներդաշնակ համադրությամբ դառնում է ձեռագիր։ Նույնաչափ

[1] Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 109։

պետք է լինեն բոլոր թերթերը՝ հաստատուն տողաքանակով։ Նույն մեծությունը պետք
է ունենա գրադաշտը՝ լինի միասյուն թե երկսյուն, սյունակները՝ նույն մեծության,
հավասար միջնալուսանցքով և եզրային լուսանցքներով։ Վերջապես հավասար քանակի
թերթեր պետք է ունենա ձեռագրի ամեն մի պրակ։ Ձեռագիրը պետք է գրվի նույն
գրատեսակով։ Իհարկե մասնակի խախտումներ լինում են, կապված զանազան՝ ներ-
քին և արտաքին հանգամանքների հետ, որոնց մասին գրիչները, երբեմն պատճառա-
բանում են հիշատակարաններում։
Երկու իրար կից թերթերը կոչվում են թուղթ։ Այս թղթերը իրար վրա դասավոր-
վելով, ապա ծալելով՝ ստացվում է պրակ կամ տետրակ։ Պրակը կարող է կազմվել 8,
10, 12, 14, 16 և այլն, թերթերից, կամ՝ 4, 5, 6, 7, 8 թղթերից։ Եթե կայուն է ձեռա-
գրի տողաքանակը, ապա նույնը չի կարելի ասել տողերի մեջ տառաքանակի մասին,
քանի որ տառեր կան, որոնք ավելի լայն տեղ են գրավում, և այդպիսի տառերի հա-
ճախակի գործածությունը մի տողում՝ նվազեցնում է տառաքանակը տողի մեջ։ Բացի
դրանից գրչի ձեռքի հոգնածությունը երբեմն խախտում է տառերի միաչափությունը։
Տառաքանակը կախված է նաև բառանջատումից, կետադրությունից, տողադարձից
(երբ ավելացվում է ը ձայնավորը) և այլ հանգամանքներից։ Իսկ երբ համառոտա-
գրություն է կիրառում գրիչը՝ խախտումը արդեն շատանում է[1]։
Ձեռագրի ստեղծման ամեն մի մասնակից (գրիչ, սրբագրիչ, ծաղկող, կազմող
և այլք) աշխատում է սրբությամբ պահպանել գրչության կանոնները։ Սակայն ձեռա-
գիրն անցնում է դարերի միջով, ենթարկվում է բնական և անբնական արհավիրքների,
արտագրվում, կազմվում է տարբեր մակարդակի մարդկանց ձեռքով և այդպես հասնում
մեզ։ Ուստի ձեռագրի հետ պետք է վարվել այնպես, ինչպես հնագետը՝ հնավայրի,
որովհետև, եթե դարեր են անցնում հնավայրի վրայով, ապա ձեռագիրն ինքն է անց-
նում դարերի միջով, ինքն է շարժվում և մաշվում (եթե՝ չի կորչում)։
Կորյունի երկը մեզ է հասել «Պատմագիրք» կոչվող ժողովածուներում, որոնց
մեջ պատմիչների երկերն են։ Բոլոր մեզ հայտնի տարբերակներում Կորյունի բնագրի
սույն հատվածները խախտված են։
Մենք գտնում ենք, որ «Ապա առեալ» և «Յայնժամ վաղվաղակի» հատվածներից
յուրաքանչյուրը մի առանձին թերթ է եղել Կորյունի Մատյանում, նախքան նրանց
խախտվելը, այդպես էլ (այսինքն, որպես մեկական թերթ) մնացել են խախտումից
հետո։ Այս հատվածներն ունեն հավասարաչափ բնագիր, տողերի, տառերի հավասար
քանակով։ Սույն բնագրերը ձեռագրում գրված են եղել մի-մի թերթի երկու էջերում,
հավասար տողաքանակով։ Այս առաջին հաստատուն հիմքն է. երկու կայուն թերթ՝
իրենց պարունակությամբ։
Երկրորդ հիմքն այն է, որ այս թերթերը եղել են իրար կից թերթեր, ասել է պրա-
կի մի թուղթ՝ երկու թերթով։ Եվ ահա թե ինչու։ Ամեն մի պրակ ունի առաջին թուղթ,
որը դրվում է բոլորից առաջ կամ բոլորից ներքև, և նրա վրա դրվում են հաջորդ թղ-
թերը, 2, 3, 4, և այլն, և մի անգամ ծալվելով՝ ստեղծում պրակ։ Պրակի առաջին

[1] Վաղ շրջանի ձեռագրերում պահպանվում էր ընդօրինակության օրինակելի ձև,
այսինքն ընդօրինակվում էր տողը տողի, էջը էջի, թերթը թերթի պատճենավորմամբ,
մեծ մասամբ նաև՝ նույն գրատեսակով։ Այս դրությունը թյուրիմացություններից զերծ
մնալու, ձեռագիրը միաժամանակ տարբեր գրիչների ընդօրինակել տալու հնարավորու-
թյուններ էր տալիս, և որով կարճացնում էր ձեռագրի գրության ժամկետը։ Մեզ հա-
սած հնագույն ձեռագրերի մեծ մասը երկու գրչի գործ է։

Քննության առարկա Քղի գույգ Քերների բնագրերը իրար անմիջական շարունակություն չեն կազմում, չունեն դեպքերի պատմության տրամաբանական կապ։ Ունի նակություն չեն կազմում, չունեն դեպքերի պատմության տրամաբանական կապ։ Ունի այն պրակի մեջտեղի (կամ վերջին) Թուղթը չէ, ընդհակառակը, նրանց բնագրերը իրարից շատ հեռու են ընկած, և ամենայն հավանականությամբ, այլ պրակի առաջին Թուղթը պետք է լինի, ինչպես երևում է նրանց միջև տեղավորված բնագրից, որը կարող է զբաղեցնել մի քանի Թուղթ։ Սովորաբար պրակի Քղթերից շփոթելու, խախտելու, կորչելու ավելի շատ հակվածություն ունեն առաջին և վերջին, այսինքն երկու ծայրերի Քղթերը։ Եվ քանի որ հիշյալ Թուղթը մեջտեղինը չէ, մնում է հավատալ, որ այն պրակի առաջին Թուղթն է։ Եթե մեր այս ենթադրությունը հաջողություն բերի, կնշանակի ճիշտ է մեր որդեգրած քննության եղանակը։

Մենք, արդեն բնագրի քննությամբ տեսնենք, որ այս Թուղթը իր տեղում չէ, նշանակում է այն իր հարևան՝ նախորդ կամ հաջորդ պրակի առաջին Թուղթն է, որ Թղթելիմացաբար, կազմելու ժամանակ դրվել և կարվել է այս պրակի հետ, որի մասն է կազմել ու ընդօրինակվել հետագայում, օրինականացնելով Քղթելիմացությունը։

Ամեն դեպքում մենք ունենք մի պրակի առաջին Թուղթը, որը միաժամանակ պրակի առաջին և վերջին Քերթերն են։ Այս էլ երրորդ հիմքն է, այսինքն՝ «Ապա առեալ»-ը պրակի առաջին Քերթն է. «Յայնժամ վաղվաղակի»-ն վերջին Քերթը։

Այս երկու Քերթերի տողերի ու տառերի քանակը իմանալով, մեզ հայտնի կդառնա ձեռագրի յուրաքանչյուր Քղթի տողերի ու տառերի քանակը։ Այս չորրորդ հիմքն է։ Ն

12 թերթանոց 5 պրակ և վերջում՝ 8 թերթանոց մի պրակ։ Հերթական համարով նշանակենք նախորդ և այս հինգ պրակները.

Ա-12 Բ-12 Գ-12 Դ-14. ե-10. Զ-12. է-12. Ը-12. Թ-12. ժ-12, ԺԱ-8։

Վերջին պրակի թերթերի քանակը կախված է նախորդ ամբողջական պրակներից դուրս մնացած բնագրի ծավալից։ Այստեղ 8 թերթում ավարտվում է Կորյունի երկը, ուստի պրակը պետք է լինի 8 թերթանոց պրակ։ Անկանոնը Դ և ե պրակներն են։

Նույն հաշվումները կատարենք Մ. Աբեղյանի պատրաստած բնագրի վրա։ Մեզ հետաքրքրող թերթերն ունեն 6-ական տող, այսինքն՝ թուղթն ունի 12 տող, որովհետև գրքի տպագրությունը մանրատառ (պետիտ) է։ Այդ թերթերի մեջ ամփոփված պրակն ունի 87 տող, որ բաժանենք 6-ի, կստանանք 14 թերթ (3 տող ավելի)։ Սույն պրակի պարունակությունը, որ հասնում է մինչև ԺԳ հատվածի վերջը՝ 62 տող է, որ բաժանենք 6-ի, կստանանք 10 թերթ (և երկու տող)։

Բնագիրը սկզբից մինչև խախտված պրակը, այսինքն՝ «Ապա առեալ»-ով սկսվող պրակը պարունակում է 212 տող, որը բաժանում ենք 6-ի, ստանում ենք մոտ 36 թերթ։ Քանի որ գիտենք պրակի թերթի քանակը, 36 թերթը բաժանենք 12-ի, կստանանք 3 պրակ։ Այսպիսով ունենք Ա-12, Բ-12, Գ-12 թերթանոց երեք պրակ և Դ-14, ե-10 թերթանոց մեկական պրակ։

ե-10 թերթանոց պրակից հետո բնագրի տողերը մինչև վերջ 409 է, բաժանեցինք 6-ի՝ 68 թերթ, բաժանած 12-ի՝ 5,8 պրակ։ Այսինքն՝ Զ-12, է-12, Ը-12, Թ-12, ժ-12, ԺԱ-8։ Եվ Ֆնտգլյանի, և Աբեղյանի պատրաստած բնագրերում մենք ունենք լիակատար համընկնում։ Կորյունի Վարք Մաշտոցի պատմության նախագաղափարը 12 թերթից կազմված տասնմեկ պրականոց ձեռագիր է եղել, որի պրակներից երկուսը խախտված են։ Այսպես.

Ա-12, Բ-12, Գ-12, Դ-14, ե-10, Զ-12, է-12, Ը-12, Թ-12, ժ-12, ԺԱ-8։

Վերջին պրակի թերատությունը տրամաբանական է, քանի որ բնագիրը այդտեղ վերջացել է։ Անտրամաբանական է Դ-14 և ե-10 պրակների անհավասարությունը։ Այստեղի թյուրիմացությունը նույնպես տրամաբանական է։ Պարզապես ե-10 պրակի թղթերից մեկը թյուրիմացաբար միացվել է Դ-պրակին։ Անջատում ենք այդ թերթը, որը միացել է Դ-ին սկզբից, որովհետև ինչպես տեսանք այդ թղթի զույգ թերթերի բնագրերը իրար շարունակություն չեն կազմում, այլ միմյանցից բավական հեռու են և միացնում ենք ե. պրակին՝ սկզբից, վերը նշված պատճառաբանությամբ, և Դ ու ե պրակները նույնպես դառնում են 12-ական թերթերով պրակներ։ Հարթվում է Կորյունի նախագաղափար ձեռագրերի պրակային անհավասարությունը։

Ձեռագրերում թերթերի կամ թղթերի, նույնիսկ պրակների շփոթ հաճախ է պատահում, որը մեծավ մասամբ կապվում է կազմարարության հետ։ Մատենադարանի № 2679 ձեռագիրը գրված 981 թ., հայտնի հնագույն թղթյա ձեռագիր ժողովածու է։ 1585 թ. Սիմեոն Ապարանցի ռարունապետը քայքայված ձեռագիրը կարգավորում է, դասդասում է ըստ պրակների, նշանակում է պրականիշերը և հանձնում կազմարարին։ Որովհետև բոլոր թերթերը ոչ թե իրար կից, այլ թիկնամասերը քայքայվելու պատճառով առանձին-առանձին էին, կազմամարը նախ ամեն մի պրակ՝ բոլորակարով պետք է իրար կարեր-միացներ, ապա՝ պրակները իրար հետ կազմեր։ Այդպես էլ անում և վերադարձնում է ռարունապետին։

Կազմարարը ոչ միայն թերթեր, այլև պրակներ էր խառնել։ Սիմեոն Ապարանցին սկսում է լուսանցքներում նշել խառնված տեղերը. «Ով եղբայր, ժ թղթով առաջ գնա և գտանես» (39 բ)։ «Ով եղբայր, դարսիր ՈԳ համար» (40 բ)։ Նյութերի համարը նա-

տի ունի։ «Ով եղբայր, ԻԱ թղթով յետ դարձիր, գտանես» (50 բ)։ «Ով եղբայր, զսոյայ պակասն ՃԼ համարն տես» (61 ա) և այլն։ Ճարահատյալ ռաբունապետը 273 բ էջում հուսադրում է. «Տասը թղթով յառաջ գնա, մինչ որ զգիրքս գտանէ տամ, որ յիւր շարն ընկնի»։ Այդպես էլ Ապարանցուն չհաջողվեց ձեռագիրը «յիւր շարն» գցել։ Այդ ձեռագիրն ընդօրինակողները արտագրում էին լուսանցքների ցուցումների համապատասխան և խուսափում թյուրիմացությունից։

Հաղպատի Ավետարանի կազմողը ոչ միայն պրակներից երկուսն է հետևաբար՝ կազմել, այլև հիշատակարանի երկու թղթերը։ Գլխավոր հիշատակարանի կից թերթերի մեջտեղում տեղադրել է հետագա ստացողի կից թերթերի վրա գրված հիշատակարանը և կազմել, հաշվի չի առել նույնիսկ հիշատակարանների գրերի տարբերությունը։ Այժմ գլխավոր հիշատակարանը տեղավորված է 357ա—357բ և 360ա—360բ էջերում, իսկ հետագա ստացողինը՝ 358ա—358բ և 359ա—359բ էջերում։

Սրանք բացատրվում են կազմարարների բնագրին անծանոթությամբ կամ անգրագիտությամբ։

Նույն կարծիքին ենք նաև Կորյունի Մատյանի կազմարարի մասին։ Կազմողը ե պրակի առաջին թուղթը ե-ի փոխարեն Դ-ի վրա է դրել, իսկ սխալը նկատելու առիթ չի տվել, ինչպես տեսանք, նախորդ թերթի և սխալի բովանդակության թվացող բնականությունից։ Այնպես որ այդ սխալադրությունից հետո դարերի ընթացքում Մատյանն ընդօրինակող ոչ մի գրիչ, իսկ մեր ժամանակներում՝ Կորյունով զբաղվող ոչ մի բանասեր չի կասկածել, բացառությամբ Ն. Ակինյանի։

Բանն այն է, որ Գ պրակի վերջին թերթն ավարտվում է «Իսկ արքային հանգերձ միաբան սրբովքն Սահակա և Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն, ուրախ լինէին» նախադասությամբ. իսկ շփոթած թուղթն սկսվում է նույն մարդկանց հիշատակությամբ. «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն...» նույն սրբերն են Սահակը և Մաշտոցը, և նշանագրեր... Այս հանգամանքը բացառել է ամեն տեսակի կասկած, և նրանք հետագա շարադրանքի վրա էլ չեն կասկածել և աշխատել են պատճառաբանել։ Թղթի վերատեղադրումից հետո Կորյունյան շարադրություններն այսպիսի տեսք ունեն, ինչպիսին տեսնում ենք սույն հրատարակության մեջ։

Այսպիսով, ձեռագրագիտական, հնագրագիտական քննության մեր ընտրած եղանակը հաստատեց պրակաթղթի մասին մեր ենթադրությունը, և վերականգնելով պրակը, մենք հասանք այն ցանկալի արդյունքին, որը մինչ այդ հաստատել էինք նաև պատմաբանասիրական քննությամբ։ Համաքննությունը միմյանց լրացնելով, արդարացրեց Կորյունի Մատյանի ե պրակի առաջին թղթի վերաբերյալ մեր կասկածների իրավացիությունը, իսկ վերատեղադրմամբ՝ ճշմարտացիությունը, որով վերացվում է դարավոր թյուրիմացությունն՝ իր ծնած հետևանքներով։

Վերատեղադրման ճշմարտացիությունն է հաստատում նաև Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»։

Կորյունի և Ագաթանգեղոսի երկերում Մեսրոպ Մաշտոցի և Գրիգոր Լուսավորչի գործունեության վաղարշապատյան շրջանը (և այնուհետև) հարմարեցված է միմյանց և «Ապա առեալ» հատվածի բովանդակությունն ու «Յայնժամ վաղվաղակի» հատվածը համարյա նույնությամբ գտնվում են այն տեղերում, ինչը ճշտել ենք մենք Կորյունի մոտ մի թերթի տեղափոխությամբ։

Մեսրոպ Մաշտոցը Միջագետքից Վաղարշապատ է վերադառնում և արքայական ու համաժողովրդական ընդունելության արժանանալուց հետո, ծավալում է իր դպրոցական, դաստիարակչական, քարոզչական վարդապետությունը նախ՝ մայրաքաղաքում։

Գրիգոր Լուսավորիչը Աթաթաշատից վաղարշապատ է գալիս և ծավալում իր վարդապետական գործունեությունը, մայրաքաղաքում հիմնում է նահատակների հիշատակին եկեղեցիներ, որոնցում ամփոփում է նրանց մասունքները։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ

(Կորյուն, տես՝ աստ, էջ)

92... եւ ի ձեռն առեալ յմխոհական տա-
տուածագործ մշակութեամբ պատեաց-
նական արուեստն ի քարափանիկ խորիկ
և յստուգանել...

98 Անդ էր աստուածեան տրտալիր ուրա-
խութիւնն և ակնավայել տեսիլ հայեցեալ
Քանզի երկիր, որ համբառնացաւ անդամ
օտար էր կողմանցն այնոցիկ...

Իսկ իբրև զլափ առեալ զիրացն հատա-
ւատութեանն՝ զմամռնակապտին և առա-
քելական զաշակերտութենն նորոգիւրա-
ւատութեանն, և հանդերձագործն վա-
ռաւելագոյն զաշակերտութենն նորոգեալ
զեւս վարդապետութեանն քաջէին ոտա-
ցանել...

Քանզի յԱյրարատեան գաւառին ի գեղ Գողթ
Քաղաւորանիստ կայինն Հայոց տանն Բագրատունի
րոլնեցին Հայոց շնորհք պատրիարքանալ
Վաւուժոյ...

Առաջ երանելոյն Մեսրոպայ զմատենա-
նեան տեսլեան ի գործս գրոց պատրաստե-
քեան պարապեցուցեալ, որոց առաջ-
նոյն վարդապետն էր

94 Յետ այնորիկ առնոյր հալանութիւն
երանելին Մաշտոց ի սիրեալ հնեաց
նոցա զրանն կենաց սերմանիցն

Որովք յամէն եղեալ երանելին շնորհացն
Աստուծոյ, երթեալ իջանէր յԱրտաշատայն
Գողթան...

Իսկ երանելոյն վարդապետին զաւետարա-
նական արուեստն ի մէջ առեալ, ձեռն
արկեալ զգաւառան, հանդերձ միամիտ
աստուածասիրեալ քաղաւորին գերիր զա-
ւեննեան ի հայրենեաց ազանդոցն, ի
սատանայապաշտ դիւական ի պաշտա-
րութենէն ի հնազանդութիւն Քրիստոսի
մատուցանէր։

Եւ յորժամ ի նոսա զրանն կենաց սեր-
մանեալ, յայտնի իսկ բնակիւց գաւա-
ռին նշանք մեծամեծք երևէին, կերպա-
կերպ նմանութեամբ դիւացն փախստա-
կան լինելով՝ անկանէին ի կողմանն
Մարաց։

Յայնժամ վաղվաղակի հրամանն առեալ
ի քաղաւորէն՝ սկիզբն առնէին գլխա-
ծացած կողմանն Մարաց, որք ոչ միա-
այն վանն դիւական սատանայակիր բար-
րացն ճիւաղութեանն, այլ և վասն խեղ-
եկագոյն և խորհրդակոյն լեզուին դժուա-
րամատոյցք էին առ ի յարդարել եւ
զնոցա հարուստ ամայն ծառնդս առեալ՝
պարզախօսս, հեռատեսեալս, երկեալս,
աստուածաւորս իմաստութեանն ծանօթս
կացուցանէին։

Ապա յետ այնորիկ ի սահմանակից
ի Սիւնական աշխարհն ելանէր...
(Այստեղից Մ. Մաշտոցը վերադառնում
է Վաղարշապատ)։

Եւ յորժամ ի նոսա զրանն կենաց սեր-
մանեաց... որ և յայտնի իսկ բնակիւց
գաւառին նշանք մեծամեծք երևեալ,
կերպակերպ նմանութեամբ դիւացն
փախստական լինելով, անկանէին ի կող-
մանս հարաւոյ։

411 Ապա փութացեալ հասանէր ի գա-
ւառն Դերջան, զի և անդ յառաջացի
լոյս զաւաքելական քարոզութեանն
զարտեաւ մշակութեանն երկոքիւք, և
զերծուցանել զնոսա ի գարշելի դիւաց-
կան սատանայակիր բարուցն ճիւաղու-
թենէ, զխուժադուժ կողմանն աշակեր-
տելով, զխոշորագոյն և զխեցգեկագոյն
բարս հեթանոսութեան շրջել ի գաւա-
ռութիւն աստուածուսոյց իմաստութեանն,
և ծանօթս աւետարանական աւետեաց
յարդարեալս ընդելս կացուցանէր։

[408. Եւ ապա յետ այնորիկ անդէն ի
սահմանակից գաւառն Եկեղեաց ելանէր]
(Այստեղից Ս. Գրիգորը վերադառնում
է Վաղարշապատ)։

Ինչպես տեսնում ենք ով ումից ընդհիջարկելը չի խանգարում համոզվելու, թ Կորյունի ձեռագրում

ա. «Ապա առեալ» հատվածը հաշորդել է Մաշտոցի Միջագետքից Վաղարշապատ վերադառնալու նկարագրությանը, իսկ «Յայնժամ վաղվաղակի» հատվածը՝ Վաղարշապատից դեպի գալուց ու Գողթան գավառում իր վարդապետությունը գործարկելուց հետո։

բ. Մինչև ընդհիջարկություններ կատարվելը Կորյունի և Ագաթանգեղոսի մոտ եղել է հատվածների այնպիսի համապատասխանություն, ինչպիսին պահպանվել է վերջինիս մոտ և մեր կողմից վերականգնվել Կորյունի մոտ։ Ուստի ընդհիջարկությունը կատարվել է մինչև Գողթի խախտումը։

գ. «Յայնժամ վաղվաղակի» հատվածի վերջին նախադասությունը, որ Կորյունի քննագրի Արեղյանական հատվածում նրան կից էր և Ն. Ակինյանը այդպես էլ տեղափոխել է այլ տեղ. Ագաթանգեղոսի մոտ չկա, քանի որ այն եղել է «Ապա առեալ» հատվածի շարունակությունը և վերաբերում է Վաղարշապատի Մեսրոպյան վարժարանի առաջին շրջանավարտներին։ Ուստի պետք է մնա իր տեղում, ինչպես մենք ենք կարծում։

դ. Ագաթանգեղոսը ծանոթ էր Մովսես Խորենացուն, Կորյունը՝ նույնպես, բայց միայն Գողթի խախտումից հետո։ Ուստի Գողթի խախտումը եղել է պատմահոր «Հայոց պատմության» ավարտից (474 թվականը) առաջ։

✿ ✿ ✿

Ինչ է տալիս հայագիտությանը, մասնավորապես՝ մեսրոպագիտությանը Կորյունի «Վարք Մեսրոպ Մաշտոցի» երկի սույն քյուրիմացության վերացումը, խախտված քղքի բուն տեղում վերահաստատումը։

Վերականգնվում է Մեսրոպ Մաշտոցին և Հայոց գրերին նվիրված Կորյունի պատմության հեղինակային շարադրանքը երեք հատվածներում։

Առաջին դրվագում (41) վերացվում է հայոց գրերի գյուտի ստեղծման ճանապարհին հանդիպած դանիելյան գրերի մասին պատմության երկու հատվածների միջև պատահականորեն ստեղծված զորեղ խոչընդոտ հատվածը։ Դարեր շարունակ անկասկածելի քվալով, հատվածը խախտել էր Կորյունի ոսկեղենիկ Մատյանի պատմական տրամաբանությունը և պատճառ դարձել դանիելյան գրերին ոչնչով չհիմնավորված զորություն հաղորդելուն, նրան վերագրվել հավերժական գոյության առաքելություն։ Այն Մեսրոպյան սեփական գյուտի՝ Հայոց գրերի ստեղծման հնագրական հիմք է համարվել և մեսրոպյան 36 գրերից՝ 29-ի արարիչ, իսկական արարչին թողնելով միայն 7 ձայնավորներով լրացնելու «պատիվը»։

Շուրջ հազար հինգ հարյուր տարի պղտորվել են Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գյուտի հստակ, ազգային ակունքները, և որոշ ուսումնասիրողների աշխատություններում՝ Մեսրոպի հետ կիսել Հայոց գրի և դպրության սկզբնավորման մեծագործության դափնիները. Դանիելյան նշանագրերով սկիզբ էին դնում հայ դպրության։ Մինչդեռ ըստ վերականգնած քնագրի, որտեղ սկսվում և վերջանում է դանիելյան գրերի մասին Կորյունի պատմությունը, այնտեղ էլ վերջանում է դանիելյան գրերի կյանքը։

Դանիելյան գրերի Հայաստան բերելը, փորձարկելը, մերժելը և Մեսրոպին Միջագետք ուղարկելը տեղի է ունենում Վռամշապուհ թագավորի հինգերորդ տարում,— գրում է Կորյունը։ Դանիելյան գրերի առասպելից ազատվելով, Հայոց գրի արարչագործությունը մնում է նրա արարչին՝ Մեսրոպ Մաշտոցին։ Հայոց գրերի ստեղծման հանգամանքների մասին Կորյունի հստակ վկայությունը բացառում է օտար այբուբեններից գիր վերցնելու հնարավորությունը։

Կորյունի բնագրի առանձին բառերի սրբագրություններն ու քղքի վերատեղադրությունը նոր դյուրություն են ստեղծում հարցի հստակ լուծման համար։ Դանիելյան գրերը փորձարկելուց հետո պարզվում է, որ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սղորաները, կապերն ամբողջությամբ արտահայտելու համար։ Այս հանգամանքը լրիվ բավարար էր, որպեսզի գրերը մերժվեն և մերժվում են։ Բայց կար մի մեծ պակասություն ևս. «մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք և յարացեալ դիպեցաւ»։

Այս նշանակում է, որ նորաստեղծ Հայոց գրերը, որ ուզում էին հայերն ունենալ, նախ պետք է համապատասխաներ հայոց լեզվի հնչյունական համակարգին, (առաջին նախապայմանը) և, ապա՝ չպետք է լիներին ուրիշ դպրություններից քաղված, (երկրորդ նախապայմանը)։ Ուրեմն հայոց այբուբեն ստեղծելիս ուրիշ դպրություններից գիր չքաղելը եղել է Հայոց գրերի ստեղծման հիմնական նախապայմաններից մեկը, որով և առաջնորդվել են գիր ստեղծելու ժամանակ։

Հարց է ծագում. եթե այդպես է, ինչո՞ւ դանիելյան գրերը բերել տվեցին Հայաստան։ Բանն այն է, որ Հաբելը Հայոց արքային ասել էր, թե Դանիելի մոտինը հայերեն լեզվի նշանագրեր էին։ Դրա համար բերեցին Վաղարշապատ և փորձելով համոզվեցին, որ այդ գրերը հայերին չեն, պարզվում է նրանց «յայլոց դպրութեանց քաղուած» լինելը։

Հայերը միշտ էլ կարող էին իրենց ցանկացած այբուբենը հարմարեցնել իրենց լեզվին, բայց որոշված էր «մուրացված գծագրությամբ» գրեր չունենալ, այլ՝ սեփական հայերեն գիր։

Հավատարիմ սեփական գիր ունենալու հրամայական պահանջին, թագավորն ու կաթողիկոսը Մեսրոպ Մաշտոցին ուղարկեցին Միջագետք, ուր և նա ստեղծեց հայերեն նշանագրեր։ Կորյունի միայն սույն վկայությունը, (թեպետ կան և այլ վկայություններ), ինչպես և Մեսրոպաստեղծ այբուբենի տառակերտման հատուկ սկզբունքը[19] բացառում է Հայոց գրերը որևէ ժողովրդի այբուբենից ու գրերից սերելու հնարավորությունը և բացահայտում այդ տեսակետը որդեգրող մատենագիրների և մանավանդ ուսումնասիրողների դարավոր անհաջող, անհուսալի փորձերի սնանկությունը։ Պատահական չէ, որ Հայոց գրերի ծագումնաբանությանն անհարիր այդ տեսակետի կողմնակիցները դարերի ընթացքում միմյանց ժխտելով երբեք դրական արդյունքի չեն հասել, և չեն հասնի։

Երկրորդ դրվագում, (44) այն քերթը կամ հատվածը, որն իր տեղում խոչընդոտ էր, այստեղ դառնում է Մեսրոպյան գրերի ստեղծման և գործադրման ճշմարիտ պատմության ոսկե օղակ։ Մեսրոպը ինքնաստեղծ գրերով, այբուբենով, հայագիր առաջին մատյանով, նոր ուսմունքի առաջին կրողների՝ գրչության արվեստին տիրապետող աշակերտների հետ վերադառնում է քաղաքամայր Վաղարշապատ, նրան արքայական ընդունելություն է ցույց տրվում, և օրեր ու շաբաթներ տոնախմբություններ են կատարվում։ Ապա, նշանագրերը ստանալով թագավորն ու կաթողիկոսը Մեսրոպի հետ փորձում են տեսնելու, համոզվելու, թե նրանք բավարա՞ր են արդյոք հայերենի հնչյունները արտահայտելու համար, կարո՞ղ են նրանցով աշակերտները սովորել։ Եվ Մեսրոպը թագավորից մանուկներ խնդրելով՝ նրան և կաթողիկոսին ապացուցում է, որ հայոց լեզվի լիակատար այբուբեն է ստեղծել ինքը, որով երեխաները կարողանում են սովորել։ Դրանից հետո է, որ Վռամշապուհ թագավորը հրամայում է ամեն տեղ նույն նշանագրերով դպրոցներ բաց անել, իսկ Մեսրոպը երկու տարի դպրոցներ է բաց անում, աշակերտներ է դաստիարակում և այդ ամենի համար ստանում է վարդապետական գեղեցիկ աստիճան, որի հետ, ամենայն հավանականությամբ նաև Մաշտոց պատվանունը, որպես ուսացանող Հայոց։ Եվ այնպես է դաստիարակում իր աշակերտներին, որ նրանք այլևս նման չեն լինում իրենց ազգակիցներին. իմաստնանում են «և այնուհետև աստվածային գործի մշակությունն անելով սկսում են ավետարանական արվեստը — թարգմանել, գրել և սովորեցնել» (44)։

Փաստորեն այստեղ մենք վերագտնում ենք Վաղարշապատի առաջին հայագիր Մեսրոպաստեղծ դպրոցի երկու տարվա պատմությունը, Մեսրոպի դպրոցական գործունեության հաջող սկիզբը. Կորյունը իր Մատյանի սկզբում խոստանում է գրել նաև «վասն նորին (Մեսրոպի) լուսաւոր վարդապետութեան և հրեշտակաբար կրօնից առաքինութեան» (83)։ Նախարանից հետո Կորյունը ուսուցչի լուսավոր վարդապետության մասին առաջին անգամ խոսում է «Ապա առեալ» հատվածի մեջ, որը քյուրիմացաբար հայտնվելով դանիելյան գրերի պատմությանը կից, ակամայից վերաբերվել է նրան, իբր երկու տարվա վարդապետություն, ուսուցում։ Այժմ, երբ վերականգնված է ճշմարտությունը, կարելի է խոսել Մեսրոպ Մաշտոցի լուսավոր վարդապետության, մանավանդ, սկզբնավորման մասին։

---

[19] Ա. Մաթևոսյան, «Ա-Ֆ» տառերը, Հայկական Սովետական հանրագիտարան, հ. հ. 1—12, Եր., 1974—1986։

«Վարդապետություն, քան Հայկազյան թուրմանը եղանակում է ուսումն, և ասուցանելն, քան ուսուցչի, դիրուքին, խրատ, հնազանդ խոնարհութիւն և պաշտօն վարդապետական» (հ. Բ 792)։ Այս բոլորը Մեսրոպ Մաշտոցի լուսավոր վարդապետության բաղադրիչներն են։

Լուսավոր վարդապետությունը Քրիստոսի ուսմունքն է, որն Հայաստանում պետական կրոն էր հռչակված արդեն հարյուր տարի, բայց դժվարությունների էր հանդիպում։ Դրանցից մեկն էր ուսուցման ու քարոզչության գիրն ու լեզուն — հունարենն ու ասորերենը, որոնք անհասկանալի էին ունկնդիրների մեծամասնության։

Հայաստան ազգին պետք էր հայերեն գիր և հայերեն քարոզ։ Մեսրոպ Մաշտոցն սրբագծում է այն։ Վաղարշապատի արքայահիմն դպրոցում հայերենի առաջին ուսուցիչը աշակերտներին սովորեցնում է Հայ գրչության արվեստը հայ նորաստեղծ գրերով ու Հայոց լեզվով, կարգավորում է կրթությունը, հրահանգավորում, կազմում համապատասխան գրքեր ու ձեռնարկներ ուսուցման, ընդօրինակության, քարգմանության, քարոզելու, ծիսակատարության և այլ պիտույից համար, և ստեղծում է իր վարդապետությունը։

Ուսուցչի հետ Մշչագիտքում գտնված աշակերտները նախկինում և միամտաբար ծանոթանում են նաև այդ դպրոցների առարկաներին ու նրանց դասավանդման եղանակին։ Սրանց հեշտությամբ համաձայն են հայ գրչության նորաստեղծ արվեստին, գրում, քարգմանում, ուսուցանում և դասնում են ուսուցչի օգնականներ։

Հայոց գրի, հայերեն լեզվի ու գրականության հայ դպրոցի ու ուսուցչի, հայերեն ուսման ու դաստիարակության միջոցով Մեսրոպ Մաշտոցը «Վարդապետությունն կենաւ բարին մերոյ» որպես իր լուսավոր վարդապետությունը աջմխրավորում է Հայաստանում և վաղարշապատում հաստում վարդապետական գեղեցիկ աստիճանին։

Սահակն ու Մեսրոպը ամեն համարձակ տրամ են Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել, Հայաստան աշխարհի, ազգի զանազան կողմերը գավառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկել իրենց աշակերտներին, որոնք գիտությամբ մեծ կատարելության էին հասել և կարող էին ուրիշներին սովորեցնել։ Սահակն ու Մեսրոպը նրանց հանձնար էին և նրանց հետ որպես գնում և օրինակ դնում էին իրենց վաստակը և պատվիրում նույն գնացքի մեջ մնալ (46)։ Մեծ ուսուցիչների վաստակը Քրիստոսի լուսավոր վարդապետության իրենց ցուցադրանքն էր, իսկ օրինակը՝ գաստիարակության եղանակն ու միջոցը։ Այս աշակերտները, որ ստացել էին Վաղարշապատի մայր վարժարանում և ղրկվում էին Հայաստանի զանազան աշխարհներ մեկ-մեկ։

Աշակերտներին գավառներն ուղարկելուց հետո, ինքը ևս Վաղարշապատից դուրս գալով, անցնում է Գողթան գավառ, իր առաջին գաստակերտ Ծառաստակը իր օծած կանանների հետ, գավառի իշխանի և նրա որդու ընկերությամբ իր մշտական ազդեցությամբ, իր վարդապետությունը բանեցնելով գավառը լուսավորում է Քրիստոսի Ավետարանի ուղուլնով» (46)։ Իր աշակերտների հետ ամենուր իր վարդապետությունը գործածում էր հայոց գրերով ու հայերեն լեզվով։

Գողթան գավառում Մաշտոցը քաղավորից հրաման է ստանում իջնել Մարաց կողմերը և սովորեցնել նրանց, ովքեր իրենց հինավուրց բարքի և կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով դժվար մտնելի էին։ Ուսուցիչն իր աշակերտներով նրանց մոտ դարձնում է «պարզախօսս հռետորաբանս կրթեալս՝ աստուածատուր իմաստութեամբն ծանեալս, այնոքիք զոչս ոտ կոպիտ լեզուի փոխարկեն Ազեանաստանի պարզաբնակ լեզուով, հայ գրերով և գրչության արվեստով (որոնք մտնում էին Ազեանոսյան արքունի մեջ, այրից՝ և հեծելարշաւս), գրչության գործածությանն իմաստասիրաց ծեռնդնեալ 67)։

Մարաց կողմերից անցնում է Սյունյան աշխարհը։ Նյութեհան, և Քայլատոնի հունական բնակություն, և ժողովուրդը քաղաքակրթության ուրանների վարդապետությունն իրենց գործ սրկեալ և մոլորվելով քաղքրացուցանելը՝ ամեն տեղ այնպիսի կապ ձեալ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետությամբ՝ սկսեալ երանելոյն Մաշտոցի ճառք սրանչելագործեալ, դիրարպետութեամբ, շնորհագիրով քաղքաքիմիա, ի յուսաւորութիւնն և ի վերին գրոց մատրարկութեանդ կարգել և յօրինել զի սահմանն ճաշակեալ ճառատուցն ճշմարտութեանն» (54, 100)։

Ով ոչ միայն Քաղաքաստանում, վերջ և ապրանքից յեզուներով ու նրանց հարմար իր աստիճանապարհն գործով քրիստոնեական ուսմունքը, որպես լուսավոր վարդապետության ուսուցանում է մրցանք ձեղքանից աշխարհներում։ «Ով այսպես Հայաստանյաց վիճաստանի վանդակների բոլոր վայրերում իր ամրողջ կյանքի ընթացքում անհատ ուսմամբ, գիրքեր եւ գործիքի անվեճ ձեռքով ուսուցանելով բնավ հաւատացելու, իր իսկ ամենաուրախ գնան հղչասիրատուն վարքով ամենագործիչ Հիսուսի սեռնոր կրնց իր անձի վրա քաղաքներ, գիշխանների, մշտնջ հնչմանուածքի առանց և առանց ընդդիմության հակառակորդներ կողմից Ով ամեն վարդու պարտադրեց Քրիստոսի պետության ու հոգեպես, և շատ բանաստեղծներ ուսուցանելով գանգրելով ապրելով՝ Քրիստոսի աշխարհ գորությամբ հրամանով հրամանների ձեռքից՝ ով շատ անհրաժեշտ մուրհակներ պատճենելով և շատ ազգերի ու ճեմարանների մէջ ձեռնարկեալ վարդապետությամբ պահպանելով ուսուցանելով՝ ամենքին ազգային վարդապետությունն այս էլ լուսավոր վարդապետության մասն կրկնելով։

Սկիզբ անելով Քրիստոսի գնդապարների հայերեն թանկագին քարոզչությունից, Մեսրոպ Մաշտոցի լուսավոր վարդապետությունը ծավալվում ու խորանում է իր իսկ ստեղծած հայ գրի, գրչության ու դպրության ուսուցման գործընթացում, վարդապետների վարժարաններում, որ կատարելության է հասցնում աշակերտների սքանչելի սեռնունդներ, որոնց գործունեությամբ Հայաստան աշխարհը լուսավորում է Քրիստոսի գաղափարներով՝ ամենատևական արդեսը գործի դնելով։

Այս տեսակետը մենք հիմնում ենք նաև «Սկզբ առեալ հաւատոյ, որ Մաշտոցի լուսավոր վարդապետության գլխավոր սկիզբն է ներկայացնում, ուստի նրա գործունեությունը պատմական հշմարտության վերականգնումն է։

Մեսրոպ Մաշտոցի լուսավոր վարդապետության մասին կորյունի վկայությունները Ագաթանգեղոսի «Հայոց Պատմության» «Սուրբ Գրիգորի վարդապետությունը» ինքնուրույն բանի հեղինակային պատկանելության հարցի Բ. Սարգիսյանի, Ն. Ակինյանի և Մ. Աբեղյանի տեսակետի օգտին են խոսում։ «Մ. Գրիգորի վարդապետության» հեղինակային պատկանելության և գրության ժամանակի հարցով հիմնավորապես զբաղվել են երկու հետազոտողներ՝ Բ. Սարգիսյանը և Ն. Թումանը.— գրում է է. Տեր-Պետրոսյանը։ Բ. Սարգսյանի կարծիքով՝ «Վարդապետությունը» գրվել է 425—431 թվականների միջև Ս. Մաշտոց վարդապետի կողմից։ Այս տեսակետը հիմնավորված է հետևյալ փաստերով և կռվաններով.

ա) Կորյունը, համառոտակի անդրադառնալով Մաշտոցի գրած «յաճախագոյն» ճառերին, հիշատակում է, որ նրանցում արծարծված էր նաև մեռյալների հարության հարցը՝ համեմված բազմաթիվ օրինակներով. «Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի բանս ճշմարտութեան ասաց, ազատելագոյն վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալն՝ յերիւրեալ կազմել» (էջ 78)։ Եվ քանի որ «Հաճախապատում ճառերում» մեռյալների հարությանը նվիրված ճառ չկա, իսկ «Ս. Գրիգորի վարդապետության» մեջ, ընդհա-

կառակն, այդ նյութը գրավում է կենտրոնական տեղերից մեկը, ուստի Մաշտոցը գրեթե ոչ թե «Հաճախապատում ճառերի» ժողովածուն, այլ «վարդապետությունը».

բ) Շահապիվանի ժողովի կանոնների առաջաբանում նշված է. «Հոգելից ճշմարտասէր վարդապետին Մեսրովբայ, որ լուսաւորեաց զերկիրս Հայոց Վարդապետութեամբ».

գ) Եզնիկի տեղեկությունն այն մասին, որ Մաշտոցը նորոգել է «կարգք գործոցն Գրիգորի», ամենայն հավանականությամբ վերաբերում է նաև «Վարդապետությանը».

դ) Եվ վերջապես, Մաշտոցն իր քարոզչական բուռն և երկարատև գործունեության ընթացքում չէր կարող բավականանալ առանց գրավոր վարդապետության[1]։

Բերված փաստարկներից առաջինը ամբողջությամբ կորյունից է։ Երկրորդի՝ «Շահապիվանի ժողովի կանոնների առաջաբանի «Հոգելից ճշմարտասէր վարդապետին Մեսրովբայ, որ լուսաւորեաց զերկիրս Հայոց Վարդապետութեամբ» վկայությունը կորյունը հաստատում է. «Վասն Նորին (Մաշտոցի) լուսաւոր վարդապետութեան», «ամս երկու կարգեալ զվարդապետութիւն», «Նորա իւր», «նորոգիւտ վարդապետութիւնն» և այլ վկայություններով։

Չորրորդ փաստարկը, որ Մաշտոցը չէր կարողանա իր գործունեության ընթացքում առանց գրավոր վարդապետության, կորյունը հաստատում է, գրելով, որ «Սահակն ու Մաշտոցը սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի աշակերտների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկել

Դանան 50, 97
Դանիել մրգ. 36, 84, 85
Դանիել եպս. Ասորի 41, 64, 71, 89, 110, 117
Դավթի տուն 46, 93
Դավիթ Հրեա թագ. 36, 45, 79, 84, 92, 111
Դերչան գավ. 49, 96
Դստրիկ իշխանակին Վարդան Մամիկոնյանի 57, 78, 104, 124

Եգիպտոս 36, 84
Եդեսիա, Եդեսացւոց քղ. 41, 42, 53, 65, 74, 90, 99, 110, 119
Եզնիկ Կողբացի, 53, 74, 99, 100, 119
Եկեղեաց գավ. 42, 65, 67, 90, 111
Եկեղեսիկտիկոս, Մաշտոցին շնորհված պատվանուն 73, 119
Ենովք 50, 97
Եպիփան Հռոփանոսի ուսուցիչ 72, 118
Երեմիա եպս. Աղվանից 51, 98
Երեմիա աշ. Մաշտոցի 57, 78, 104, 124
Եփեսոս քղ. 53, 77, 100, 123
Եփեսոսական կանոններ 53, 100

Թաբորական լեռ 56, 102
Թադիկ 59, 60, 69, 79, 80, 105, 114, 115, 125, 126
Թեոդորոս Հռոմոց կայսր 49, 72, 73, 96, 118
Թեոդորոս Մոպսուեստացի 57, 67, 77, 103, 113, 123
Թոդիկ, տես՝ Թադիկ

Իսրայել երկիր 37, 85

Խորձենական գավ. 46, 94
Խուրս իշխան Գարդմանի 52, 99

Կարապետ Առաջընթաց 36, 85
Կողբ գյուղ 53, 99
Կոստանդնուպոլիս, Կոստանդնիական քղ. 49, 53, 96, 100
Կորյուն, 34, 53, 62, 70, 74, 83, 100, 108, 116, 120

Հաբել երեց 41, 64, 89, 110
Հազկերտ Ա, Պարսից թագ. 57, 61, 68, 78, 103, 107
Հազկերտ Բ, Պարսից թագ. 57, 61, 68, 78, 103, 107
Հայաստան 50, 54, 57, 67, 72, 79, 97, 101, 103, 118, 120, 124
Հայաստան աշխարհ երկիր, կողմեր 34, 41, 43, 45, 48, 53, 60, 62, 64, 65, 66, 70, 73, 75, 80, 83, 87, 90, 93, 96, 97, 100, 106, 108, 111, 116, 118, 121
Հայոց Մեծաց աշխարհ, Մեծ Հայաստան 39, 40, 43, 50, 52, 59, 62, 66, 69, 70, 87, 89, 99, 105, 108, 109, 111, 116
Հակոբոս Տեառնեղբայր 38, 86
Հանդիստ, տես՝ Ակօհիշտոն
Հացեկաց գյուղ 32, 62, 70, 87, 110
Հովսեփ Մամիկոնյան 59, 69, 79, 80, 105, 114, 125
Հոր Բրանելի 36, 38, 85, 86
Հոռոր 36, 85
Հովհան Եկեղեցացի 42, 65, 67, 69, 72, 74, 79, 80, 89, 90, 105, 106, 111, 114, 115, 119, 125, 126
Հովհան Խոստովանող 60, 74, 106, 111
Հովնաթան քհ. 51, 89
Հովսեփ Գեղեցիկ 36, 84
Հովսեփ Խողոցմեցի երեց 34, 53, 59, 60, 67, 69, 79, 80, 87, 90, 105, 106, 126
Հովսեփ Պաղնացի 36, 59, 60, 65, 67, 84, 114, 125
Հռոմոնների երկիր 48, 96
Հռոփանոս, Ռուփինոս 42, 63, 72, 90, 111

Ղևոնդ Վանանդեցի 49, 53, 74, 96, 100, 120
Ղուկաս Ավետարանիչ 37, 38, 86

Ջիքենյաց, Ջիքաստանյաց լեռ 56, 102

Մակեդոնիա 38, 86
Մամիկոնյան մարդիկ 46, 93
Մամիկոնյան տոհմ 59, 69, 79, 80, 105—109, 114, 125
Մաշտոց 39, 41, 46, 47, 54, 57, 58, 60, 62, 64, 67, 87, 89, 100, 103, 104, 108, 110
Մարերի կողմեր 40, 47, 63, 71, 88, 94, 109
Մեսրոպ 34, 62, 64, 66, 77, 83, 108, 110, 111, 113, 115—120, 122—124
Մելիտինե քղ. 49, 76
Մերուժան 73, 118
Միջագետք 71, 117
Մովսես 36, 43—45, 66, 85, 91—93, 111
Մովսես եպս. Վրաց. 48, 65
Մովսիսական պատմություն 35, 84
Մուշեղ եպս. Բաղասական կողմերի 51, 98
Մուշեղ Տարոնացի 46, 94
Նաթանաել Գալիլեացի 37, 85
Ներսովք 36, 84
Նեստո 77, 123
Նիկեա քղ. 53, 100
Նոր Քաղաք 43, 50, 59, 66, 68, 79, 91, 98, 104, 111, 114, 124

Շաբաթ, Շաբիթ իշխան Գողթնի 40, 46, 63, 71, 88, 94, 109, 117

Ջաղա վրաց լեզվի Քարգմանիչ 48, 95

Ռահ գետ 44, 92
Ռոտաստակ գյուղ 46, 94

Սահակ կթ. Հայոց 40, 41, 46, 48, 51—53, 57, 59, 64, 65, 67, 68, 71—74, 77—79, 89, 93, 94, 99, 100, 104, 109, 110, 113, 114, 117—120, 123, 124
Սաղմոսերգու 72, 124
Սամոս 72, 118
Սամոսատ, Սամոսատական քղ. 42, 65, 90, 110, 111
Սամսոն 36, 84
Սամվել Վրաց. արքունի եպս. 48, 95
Սամվել Տաշրացիների եպս. 52, 99
Սինա, Սինեական լեռ 43, 61, 91, 111
Սինհոդոս 57, 67, 103, 113
Սիսական Վասակ, տես Վասակ Սյունի
Սյունիք, Սյունյաց երկիր, Սյունական աշխարհ 47, 95
Սոդոմ քղ. 36, 85
Սողոմոն Հրեա թագ. 42, 65, 72, 90, 111, 118
Ստեփանոս Նախավկա 57, 78, 103, 123

Վահան Ամատունի, Հայոց Հազարապետ 59, 60, 69, 70, 80, 105, 114, 125, 126
Վահրիճ 41, 64, 89, 110
Վաղինակ Սյունյաց իշխան 47, 94
Վասակ Սյունի իշխան 47, 95
Վարդան Երանելի, հայր Մեսրոպի 39, 62, 70, 87, 108, 116
Վարդան, Վարդկան Մամիկոնյան սպարապետ 46, 57, 73, 78, 93, 104, 124
Վռամ Կուման, Պարսից թագ. 57, 64, 67, 78, 103, 107
Վռամշապուհ Հայոց թագ. 41, 43, 62, 64, 66, 71, 72, 89, 90, 109, 110, 111, 117, 118
Վռամ Պարսից թագ. 57, 68, 103, 107
Վրաստան 48, 52, 54, 101
Վրաց աշխարհ կողմեր 48, 52, 54, 66, 72, 75, 95, 99, 101, 111, 118

Տաշիրք, Տաշիրցիների գավ. 52, 99
Տարոն, Տարոնական գավ. 39, 46, 58, 62, 70, 78, 87, 94, 104, 108, 116, 124
Տիբերական ծով 56, 102
Տիգրոն 60, 80, 106, 126
Տիմոթեոս 58, 104
Տիրամայր 36, 84
Տիրայր Խորձենացի 46, 94

Րահաբ 35, 84

Օշական, Աւշական 59, 69, 80, 105, 114, 125

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչության կողմից 3
Նախագիր 4
Մատենագիտություն 9
Առաջաբան 20
Կորյուն
Վարք Մեսրոպ Մաշտոցի 32
Ա.
Երանելի մարդու, մեր Թարգմանիչ Սուրբ Մեսրոպ Վարդապետի վարքի և մահվան պատմությունը նրա աշակերտ Կորյուն վարդապետից 34
Բ.
Պատմություն Սուրբ Մեսրոպ վարդապետի վարքի մասին, որ արարել է սուրբ Կորյունը
Գ.
Պատմություն երանելի սուրբ վարդապետ Մեսրոպի կյանքի, որ գրել է նրա աշակերտ Կորյունը 70
Ա.
Պատմություն վարուց եւ մահուան առն երանելիոյ Սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ Թարգմանչի ի Կորիւին վարդապետէ յաշակերտէ նորին . . . 83
Բ.
Ի յիշատակի Սրբոյն Մեսրովպայ վարդապետի զոր արարել է Կորեան սրբոյ յաղագս վարուց նորա 108
Գ.
Ի յիշատակ պատմութեան վարուց երանելիոյ Սուրբ վարդապետին Մեսրովբայ զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան 116
Ծանոթագրություններ 127
Հավելված 148
Անվանացանկ 173

Հայոց մատենագիրներ
մատենաշար
ԿՈՐՅՈՒՆ
ե ԴԱՐ
Վարք Մեսրոպ Մաշտոցի

Խմբագիր՝ Ա. Կարապետյան, *նկարիչ՝* Խ. Հակոբյան
Գեղ. *խմբագիր՝* Գ. Հովհաննիսյան, *տեխն. խմբագիր՝* Գ. Նահապետյան, *վերստուգող սրբագրիչ՝* Լ. Գևորգյան
ՀԲ 7661
Հանձնված է շարվածքի 5. 04. 1992 թ.։ Ստորագրված է տպագրության 22. 09. 1993 թ.։ Չափսը՝ 60×84¹/₁₆։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Դրբի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 10,23 պայմ. տպագր. մամ.։ 10,66 հրատ. մամ.։ Պատվեր՝ 241։ Տպաքանակ՝ 7.000։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Ավ. Իսահակյան 28։
ՀՀ կառավարությանն առընթեր հրատարակչական գործերի վարչության «ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ։
Երևան-9, Տերյան 91։